



Հաշվետվություն Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի համակարգի վերլուծության եւ զարգացման ծրագիր

urbanlab **EVN**
ԵՐԵՎԱՆ 2013



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

COUNTERPART
INTERNATIONAL



Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի, և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով՝ ուրբանլաբ Երևան ՀԿ-ի միջոցով:

Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակներին՝ ուրբանլաբ Երևան ՀԿ-ին և ծրագրում ներգրավված անձանց, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետերի հետ:



ուրբանլաբ Երևան - Քաղաքաշինության ժողովրդավարացման ինստիտուտ ՀԿ
www.urbanlab.am /// **we think**

Ծրագրի ղեկավար՝
Սարհապ Պետրոսյան

Փորձագետներ՝
Բորիս Քոչարյան, bmkocharian@mail.ru
Սարգիս Թովմասյան, tosar@mail.ru

Ծրագրի համակարգող՝
Աննա Ակոբյան, www.urbanlab.am

Հարցումների անցկացում՝
Պերսոնա Գրափա ՍՊԸ, www.personagrata.am

Թարգմանություններ (անգլերեն)՝
Գայանե Մելքոմ Մելքոմյան

Հաշվետվության առանձին գլուխներում արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են դրանց հեղինակներին:

Հաշվետվությունում արտահայտված մտքերի ամբողջական կամ մասնակի օգտագործումը թույլատրվում է պատշաճ հղման դեպքում միայն: Այն պետք է ունենա հետևյալ բովանդակությունը. “Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի համակարգի վերլուծության և զարգացման ծրագիր, ուրբանլաբ Երևան, www.urbanlab.am, Երևան, 2013”:

Բովանդակություն

Ներածություն	4
1. Առկա խնդիրների բացահայտում	9
Ընդհանուր նկատառումներ	9
Իրավական խնդիրներ	11
Համակարգի կառուցվածքին ներկայացվող պահանջներ.....	13
Ոլորտի կառավարումը	16
2. Համակարգի հիմնական դրույթները	19
Համակարգի նպատակն ու կարգավորման տրամաբանությունը.....	19
Տերմինաբանություն	21
Համակարգի կառուցվածքը	24
Օրենսդրական դաշտի զարգացում	26
Քաղաքաշինական նորմատիվային դաշտի հստակեցում	27
Ոլորտի կառավարումը	29
Մասնակցային կառավարման գործուն մեխանիզմների մշակում	30
3. Քաղաքաշինական գործունեության իրավական կարգավորման համակարգի առանձնահատկությունները	31
Քաղաքաշինական պլանավորման արդի միտումները.....	31
ՀՀ Օրենքով սահմանված Համակարգի վերլուծությունը.....	37
Քաղաքաշինական գործունեության սուբյեկտները և կառավարումը.....	50
Եզրակացություն և առաջարկություններ	52
4. Տարածական պլանավորման ծրագրային փաստաթղթերի համակարգ	57
Ընդհանուր դրույթներ	57
Համակարգը կանոնակարգող ակտերն ու դրանց հիմնախնդիրները	58

Նկատառումներ անկախության տարիների փաստաթղթերի վերաբերյալ	75
Ընդհանուր բնույթի եզրակացություններ և առաջարկություններ	76
Ամփոփում	80
Ամփոփում (անգլերեն) / Summary	85
Գրականության ցանկ	89

Հավելված 1՝	Քաղաքաշինության ոլորտի հետ կապված հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (հետազոտության արդյունքներ) իրականացվել է «Պերսոնա Գրատա. Մարքեթինգային լուծումներ» ընկերության կողմից ուրբանլաբ Երևան պատվերով
Հավելված 2՝	Հողերի հիման վրա դասակարգման ստանդարտներ (ՀԴՍ)* ԱՄՆ քաղաքաշինարարների ասոցիացիային (American Planning Association) <u>Ոչ պաշտոնական թարգմանություն</u>
Հավելված 3՝	Եվրամիության տարածքային օրակարգ 2020, Դեպի շրջանների բազմազանությամբ, ընդգրկում, խելացի և կայուն Եվրոպա* համաձայնեցված է ԵՄ տարածական հատակագծման և տարածքային զարգացման հարցերով նախարարների ոչ պաշտոնական հանդիպմանը, 2011 թվականի մայիսի 19-ին, Գոդոլո, Հունգարիա <u>Ոչ պաշտոնական թարգմանություն</u>
Հավելված 4՝	Տարածական զարգացման բառարան, Տարածք և լանդշաֆտ, No. 2* Տարածական/Տարածքային հատակագծման հարցերով նախարարների Եվրոպական խորհրդաժողով (CEMAT) <u>Ոչ պաշտոնական թարգմանություն</u>

*-ով նշված մասերը առկա են միայն էլեկտրոնային (առցանց) տարբերակում,
այն կարելի է ներբեռնել www.urbanlab.am/prd_planning.pdf հղմամբ:

Ներածություն

Հիմնախնդրի ձևակերպում և հիմնավորում

Քաղաքաշինության ոլորտում առկա խնդիրներն այսօր գտնվում են հանրային ուշադրության կենտրոնում: Դրա ականատեսն ենք լինում հետևելով տեղական մամուլին. հանրության տարբեր ներկայացուցիչներ բարձրաձայնում են իրենց անմիջական շրջապատող միջավայրում տեղի ունեցող փոփոխությունների մասին, որտեղ անտեսվում են հասարակության պահանջմունքներն ինչ-ինչ պատճառներով: Այս իրավիճակն իր արտահայտությունը գտավ նաև Երևանի ավագանու վերջին ընտրությունների ընթացքում հատկապես քաղաքաշինական խնդիրների վերաբերյալ նախընտրական հայտարարություններում ու խոստումներում: Այս ամենի լուծումները, ինչպես նաև առհասարակ դրանց արտահայտումը իրավական հարթությունում, համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության, արտացոլվում է քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով:

Չնայած այն փաստին, որ վերջին տասնամյակում Հայաստանի գրեթե բոլոր քաղաքների ու մի շարք գյուղերի համար մշակվել են Համակարգի մաս կազմող փաստաթղթեր, սակայն ինչպես ժամանակը ցույց տվեց, դրանք ի վիճակի չեն լուծել քաղաքաշինական գործընթացների կառավարման հետ կապված ներկա մարտահրավերները: Երևանը միակն է որի համար այդ Համակարգում ամրագրված բոլոր ծրագրային փաստաթղթերը առկա են, սակայն այստեղ ևս չենք կարող խոսել իրավիճակի էական բարելավման մասին: 1998 թվականին ընդունված, մի քանի անգամ փոփոխությունների ենթարկված, Քաղաքաշինության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի և կառավարության մի շարք որոշումների միջոցով կարգավորվող Համակարգը կարիք ունի վերլուծության, ինչպես նաև զարգացման՝ միջազգային ու եվրոպական փորձի համադրմամբ:

Համակարգը պետք է հավասարակշռի հանրային ու մասնավոր շահերը, կարևորելով ժառանգության, բնապահպանական, անվտանգության և համընդհանուր գոյակցության այլ խնդիրներ: Դրա բաղկացուցիչներից մի քանիսը թե՛ հասարակությանը, թե՛ մասնագիտական հանրությանը ծանոթ են դեռևս խորհրդային տարիներից, սակայն շուկայական տնտեսության պայմաններում դրանց ներկայացվում են նոր խնդիրներ ու պահանջներ: Այդ Համակարգի վերջին և հասարակության լայն շերտերի կողմից կիրառման ենթակա գոտիավորման նախագծերը (zoning plan կամ regulations) լինելով նորահայտ բաղկացուցիչ պետք է որ հանդիսանային քաղաքացի – կառուցապատող – հանրային կառավարում – նախագծող “քառախոսության” հարթակը: Վերջինիս մշակման և կիրառման համար անհրաժեշտ է մի շարք մեթոդական ու նեղ մասնագիտական մոտեցումների ամրագրում, որոնք պետք է

իրենց արտահայտությունը գտնեն նաև օրենսդրական և նորմատիվային փաստաթղթերում:

2012 թվականին **ուրբանլաբ Երևանը**, Քաունթերփարթ ինթերնեշնլի ֆինանսավորմամբ, նախաձեռնեց Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանությանն առնչվող օրենսդրական հենքի ուսումնասիրման, վերլուծության և առաջարկությունների մշակման ծրագիրը: Դրա արդյունքները զետեղվեցին ավելի քան 200 էջանոց հաշվետվությունում, որը պատշաճ ուշադրության արժանացավ մասնագիտական շրջանակներում, ինչպես նաև կառավարման տարբեր օղակներում:

2013 թվականի օգոստոսին ԱԺ պատգամավորներ Դավիթ Հարությունյանը և Արփինե Հովհաննիսյանը նախաձեռնեցին «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխությունը, որով նախատեսվում է օրենքի շրջանակում հուշարձանների տեղափոխման և փոփոխման պահանջների հստակեցում և համապատասխանեցում 2008 թվականին վավերացված Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիայի դրույթներին: Չնայած այն փաստին, որ նշված փոփոխության մեջ որևէ կերպ նշված չէ նախաձեռնության դրդապատճառներն ու նախապատմությունը, սակայն թե՛ մասնագիտական հանրության շրջանում, թե՛ հասարակական սեկտորում հայտնի է, որ այդ անհամապատասխանությունն առաջինը բացահայտվել է Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանությանն առնչվող օրենսդրական հենքի ուսումնասիրման, վերլուծության և առաջարկությունների մշակման ծրագրի շրջանակում, և հանդիսացել 22 առաջարկություններից մեկը: Օրենքի փոփոխության նախաձեռնությունը 2013 թվականի սեպտեմբեր ամսին հավանության է արժանացել կառավարության կողմից և այժմ գտնվում է ԱԺ-ի օրակարգում չընդգրկված նախագծերի թվին:

Այդ ինչ որ տեղ ոգևորիչ առաջխաղացումը, ինչպես նաև հաշվի առնելով նաև քաղաքաշինության ոլորտում առկա խնդիրների շարունակական գոյության իրողությունը, 2013 թվականին նախաձեռնվեց Հայաստանի Հանրապետություն օրենսդրությամբ սահմանված **Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի համակարգի վերլուծության և զարգացման ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) իրականացումը:

Ծրագրի էությունը

Ծրագրի նպատակն է ուսումնասիրել և վերլուծել Հայաստանի Հանրապետությունում գործող քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի համակարգը և մշակել մի շարք առաջարկություններ դրա բարեփոխման համար: Դրա արդյունքում նախատեսվում է՝ բացահայտել Համակարգի կիրառության հետ կապված խնդիրները, վերլուծել դրանք՝ համադրելով ծրագրի մասնակիցների փորձառությունը միջազգային ու եվրոպական առկա փորձի

հետ, մշակել առաջարկություններ միտված Համակարգի զարգացմանն ու արդյունավետության բարձրացմանը և ապահովել առաջարկությունների տարածումը մասնագիտական հանրույթի և այլ շահառուների շրջանում:

Ծրագիրը բաղկացած է երեք հիմնական փուլերից: Դրանցից առաջինի **ուսումնասիրական փուլի** ընթացքում իրականացվել են.

- քանակական և որակական հարցումներ շուրջ 40 մասնագետների շրջանում դեմ առ դեմ հարցազրույցների միջոցով (հաշվետվությունը ներկայացված է հավելված 1-ում),
- առկա օրենսդրության քաղաքաշինությանը վերաբերող ողջ հենքի, ինչպես նաև ստանձնած և ստանձնելիք միջազգային ու եվրոպական պարտավորությունների ուսումնասիրություն (ամբողջական ցանկը ներկայացված է գրականության ցանկում, էջ 89),
- միջազգային ու եվրոպական համարժեք փորձի ուսումնասիրություն, դրանց կիրառման հնարավորությունների բացահայտում (թարգմանությունները ներկայացված են հավելվածներ 2-4-ում),
- ոլորտում ներգրավված մասնագետների հետ քննարկման անցկացում, որի ընթացքում բացահայտվեց ոլորտում առկա խնդիրների բազմությունն ու մատնանշվեց անհրաժեշտ ակնկալվող բարեփոխումները:

Հաջորդ **վերլուծական փուլի** ընթացքում ծրագրում ներգրավված անձանց հետ (ծրագրի ղեկավար, համակարգող, փորձագետներ) անցկացվել են մտքային գրոհներ, նպատակ ունենալով քննարկել և վերհանել ուսումնասիրության արդյունքներն ու վերլուծել դրանք: Դրա արդյունքում **առաջարկությունների մշակման և ամփոփման փուլում** պատրաստվել է ամփոփիչ հաշվետվությունը, որն ինչպես և նախատեսված էր ներկայացվել է ծրագրի բոլոր շահառուներին, մասնավորապես ոլորտին առնչվող պետական՝ գործադիր ու օրենսդիր, տեղական ինքնակառավարման մարմիններին, ոլորտի հետ առնչվող մասնագետներին (ճարտարապետներ, քաղաքաշինարարներ և այլն), հասարակական տեղական ու միջազգային կազմակերպություններին, ինչպես նաև մասնագիտական միավորներին (Հայաստանի ճարտարապետների միություն, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան և այլն): Այն հասանելի է լինելու կազմակերպության կայքում՝ www.urbanlab.am/prd_planning.pdf հղմամբ, որը կարող է օգտակար նյութ հանդիսանալ նաև քաղաքացիական ոլորտի ակտիվիստների և այլ հետազոտողների համար:

Ուսումնասիրության սահմանները

Ուսումնասիրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության առկա օրենսդրության և ստանձնած միջազգային ու եվրոպական պարտավորությունների շրջանակում մարդածին միջավայրում կայուն զարգացմանը միտված օրենսդրական ու դրանից բխող նորմատիվային փաստաթղթերի ուսումնասիրությունն ու ծրագրում ներգրավված անձանց

մասնագիտական կարծիքի հիման վրա առաջնահերթությունների հստակեցմամբ առաջարկությունների մշակումը: Այն չի հավակնում լուծել ոլորտի առջև ծառացած բոլոր խնդիրները, սակայն իր տեսակով և ընդգրկմամբ լինելով առաջիններից, ենթադրաբար, ունենալու է շոշափելի ազդեցություն ոլորտի զարգացման գործընթացներում:

Հաշվետվության կառուցվածքը

Հաշվետվության առանձին գլուխներում Ծրագրում ներգրավված տարբեր անձինք փորձել են ներկայացնել իրենց նկատառումներն ու առաջարկությունները միտված ոլորտի զարգացմանը, հատկապես ուշադրություն դարձնելով տվյալ գլխի վերնագրում մատնանշված բաղադրիչների վերաբերյալ: Հաշվի առնելով ոլորտի բազմաշերտությունն ու բարդ կառուցվածքն, ինչպես նաև ծրագրի ժամանակային սահմանափակումները (չորս ամիս) փորձ է արվել հնարավորության սահմաններում մոտեցնել ծրագրում ներգրավված անձանց պատկերացումներն ու դիրքորոշումները ոլորտի հետագա զարգացման վերաբերյալ: Սակայն ինչպես և ողջ աշխարհում, այնպես էլ փոքրաքանակ աշխատանքային խմբում առկա են եղել մի շարք շեշտադրումների և մոտեցումների վերաբերյալ տարակարծություններ, որոնք հնարավոր է նկատել նաև հաշվետվության տարբեր գլուխներում: Այդ “անհամապատասխանությունը” լիովին համապատասխանում է ուրբանլաբ Երևանի ղեկավարության մոտեցումներին, ինչպես նաև ծրագրի ղեկավարության մեթոդաբանությանը: Քանի որ ծրագիրը նախ և առաջ նպատակ ունի ոլորտում առկա խնդիրները դարձնել լայն մասնագիտական ու հանրային քննարկման առարկա, առանց հավակնելու ներկայացնել բացարձակ ճշմարտությունն, եթե առհասարակ այդպիսին գոյություն ունի:

Հաշվետվության առաջին գլխում ծրագրի համակարգող ճարտարապետ Աննա Ակտարյանը փորձել է ներկայացնել ծրագրի առաջին՝ ուսումնասիրական փուլի ընթացքում իրականացված գործողությունների՝ հարցումներ, մասնագիտական քննարկման և ծրագրում ներգրավված անձանց կողմից մտքային գրոհների արդյունքում բացահայտված ոլորտում առկա խնդիրներն ու մարտահրավերները:

Երկրորդ գլխում ներկայացված են Համակարգի հիմնական դրույթները հատկապես ուշադրություն դարձնելով դրա նպատակներին ու առաջադրված խնդիրներին, ինչպես նաև մի շարք այլ հիմնարար առաջարկություններ միտված Համակարգի զարգացմանը: Ճարտարապետ, քաղաքաշինարար Սարհատ Պետրոսյանը փորձել է ներկայացնել ոլորտին վերաբերող ընդհանուր բնույթի առաջարկություններ, որոնց մի մասը հաշվետվության հետագա գլուխներում մանրամասնվել են ծրագրում ներգրավված փորձագետների կողմից:

Երրորդ գլխում ներկայացված են քաղաքաշինության ոլորտին ու մասնավորապես Համակարգին վերաբերող օրենսդրական հենքի

վերլուծությանն ու դրա զարգացմանը միտված առաջարկություններ, որի արդյունքում հնարավոր է նվազեցնել բացահայտված խնդիրների պատճառով առաջացած մարտահրավերները: Ճարտարապետ Բորիս Քոչարյանը վերլուծելով ոլորտում առկա օրենքներն ու ենթաօրենսդրական այլ փաստաթղթերը մատնանշում է մի շարք սկզբունքային առաջարկներ զարգացնելու համար առկա համակարգը՝ վերաբնակեցնելով քաղաքաշինական գործունեության նպատակներն ու ոլորտի հանրային կառավարումը:

Չորրորդ գլխում քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բուն համակարգի վերլուծության արդյունքում ճարտարապետության թեկնածու Սարգիս Թովմասյանը վերլուծելով Հայաստանի Հանրապետությունում առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի համակարգն ու դրա բաղկացուցիչները ներկայացրել է մի շարք առաջարկություններ, որոնք կարող են նպաստել դրանցում առկա կրկնություններին ու բարելավել համակարգի կիրառելիության աստիճանը:

Ամփոփիչ գլխում հակիրճ կերպով ներկայացված է ծրագիրն, ինչպես նաև ամփոփվել են հաշվետվությունում մատնանշված հիմնական առաջարկությունները: Այն թարգմանվելու է նաև անգլերեն լեզվով նպաստելու համար հաշվետվության մատչելիությանը ու կիրարկելիության բարձրացմանը:

Առանձին հավելվածներում ներկայացված են ծրագրի շրջանակում Պերսոնա Գրատա կազմակերպության կողմից իրականացված հարցման արդյունքները: Ինչպես նաև առանձին հավելվածների տեսքով ներկայացված են այն բոլոր թարգմանությունները, որոնք կատարվել են ծրագրի շրջանակում և հասանելի են ազատ ներբեռնման և օգտագործման համար:

Հեղինակային և հարակից իրավունքները

Սույն հրատարակության բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են ուրբանլաբ Երևան ՀԿ-ին և ծրագրում ներգրավված անձանց: Հաշվետվության 3-րդ (էջեր 31-56) և 4-րդ (էջեր 57-79) գլուխներում արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են դրանց հեղինակներին՝ համապատասխանաբար Բորիս Քոչարյանին և Սարգիս Թովմասյանին:

Հաշվետվությունում արտահայտված մտքերի ամբողջական կամ մասնակի օգտագործումը թույլատրվում է պատշաճ հղման դեպքում միայն: Այն պետք է ունենա հետևյալ բովանդակությունը. “Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի համակարգի վերլուծության և զարգացման ծրագիր, ուրբանլաբ Երևան, www.urbanlab.am, Երևան, 2013”:

1. Առկա խնդիրների բացահայտում

Հեղինակ՝ Աննա Ակտարյան

Ընդհանուր նկատառումներ

Քաղաքաշինության ծրագրային փաստաթղթերի համակարգում առկա խնդիրների և մարտահրավերների վերլուծությունը, առանց ոլորտի համընդհանուր դիտարկման, մեթոդական, ինչպես նաև կիրառական առումով, անհնար է: Այդ իսկ պատճառով, Ծրագրի շրջանակում իրականացված ուսումնասիրական աշխատանքների առարկան է հանդիսացել մարդածին միջավայրում ընթացող գործընթացների ամբողջությունը:

Կատարված ուսումնասիրությունները ներառել են.

- մասնագիտական շրջանակների հետ հարցումներ (այսուհետ՝ Հարցում),
- մասնագիտական հանրույթի մասնակցությամբ քննարկում (այսուհետ՝ Քննարկում),
- ծրագրի աշխատանքային խմբում ներառված անձանց, մասնավորապես փորձագետների մասնակցությամբ մտքային գրոհներ:

Իրականացված միջոցառումները նպատակ ունեին վեր հանել քաղաքաշինության ոլորտում առկա առաջնային կարևորության խնդիրներն ու ձևակերպել դրանց հաղթահարման համար հնարավոր միջոցառումները՝ առաջարկելով ավելի կենսունակ և ինքնակառավարվող համակարգ:

Նախկին նմանատիպ ուսումնասիրության (Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանությանն առնչվող օրենսդրական հենքի ուսումնասիրման, վերլուծության և առաջարկությունների մշակման ծրագիր, 2012թ.) փորձը հաշվի առնելով, որոշվեց, քաղաքաշինության ոլորտի նեղ մասնագիտական շրջանակին ներկայացնել մտորումներն ու նկատառումները քննարկման ֆորմատով դեռևս ուսումնասիրական փուլում: Դրանով նպատակ ունենալով համոզվել կատարվող աշխատանքների նպատակային ուղղվածության մեջ, ինչպես նաև Ծրագրի աշխատանքային խմբի հետ միասին ներառել նախապես բացահայտված ցանկում չընդգրկված նոր հիմախնդիրներ՝ ապահովելով ուսումնասիրությունների ամբողջականությունը:

2013 թվականի հուլիսի 26-ին “Այգեծոր” հյուրանոցում տեղի ունեցած Քննարկման առաջին մասը ընթացավ համակարգի ընդհանուր կառուցվածքում ու փաստաթղթերի մշակման գործընթացներում նախանշված թերացումների ներկայացմամբ՝ ավելի աշխատունակ Համակարգի ձևավորմանը նպաստելու համար: Զեկուցումներով հանդես եկան ծրագրի ղեկավար Սարհատ Պետրոսյանը, ծրագրում ներգրավված փորձագետներ Սարգիս Թովմասյանն ու Բորիս Քոչարյանը:

Ինչպես զեկուցման ընթացքում բազմաթիվ անգամ նշվեց, քաղաքաշինության ոլորտը բազմադիսցիպլինար է, և այն մեծապես կախվածության մեջ է ոչ միայն քաղաքաշինական քաղաքականությունից, այլ մի շարք բնագավառներից.

մասնավորապես տնտեսական, սոցիալական և այլ գործոններից: Ելնելով այդ իրողությունից, կարգավորման լծակները ևս տարաբնույթ են, հետևաբար հեռանկարային զարգացումների ազդեցությունը կանխատեսելի, կառավարելի ու միասնական դարձնելու համար անհրաժեշտ են մանրամասն ու բազմաշերտ ուսումնասիրություններ ու փոխկապակցված առաջարկների ձևավորում (Սարգիս Թովմասյան):

Տարածքային զարգացումը, որպես պետական քաղաքականության իրականացում, պետք է ապահովված լինի բյուջեի հետ անմիջական կապով, տնտեսական ու սոցիալական քաղաքականությունները արտահայտող, զարգացման ուղղությունները և գերակայությունները ընդգրկող ու փոխգործակցություն ապահովող փոխկապակցված համակարգով (Սարգիս Թովմասյան): Դրանում, մեկը մյուսին լրացնող լուծումների և տարածաշրջանային մակարդակի մշակված փոխադարձ կապերի մեկտեղմամբ համապարփակ մոտեցում ձևավորելով հնարավոր է ունենալ գործող մեխանիզմներ՝ հստակ բաժանելով պարտականությունները մասնավոր ու պետական հատվածների միջև:

Ծավալված առարկայական Քննարկումը ընդգրկեց առաջարկություններ կրթական համակարգի փոփոխությունների մակարդակից մինչև տարածական պլանավորման փաստաթղթերի համակարգ: Հայաստանի Հանրապետությունում գործող տարածական պլանավորման համակարգը վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար բաղկացած է չորս հիմնական փաստաթղթերից՝

- տարաբնակեցման գլխավոր նախագիծ,
- մարզերի և այլ տարածքներ ընդգրկող տարածքային հատակագծման նախագծեր,
- բնակավայրերի գլխավոր հատակագծեր,
- քաղաքաշինական գոտիավորման նախագծեր:

Բացի նշված պարտադիր մշակման ենթակա փաստաթղթերից գոյություն ունեն նաև ոչ պարտադիր, ըստ անհրաժեշտության մշակվող փաստաթղթեր՝ բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության գոտիների, գործառական համակարգերի տարածքային կազմակերպման, արտադրական կարողությունների, կոմունալ և սոցիալական այլ ենթակառուցվածքների տեղաբաշխման նախագծեր:

Քննարկման գրեթե բոլոր մասնակիցները ընդգծեցին մշակվող փաստաթղթերի կենսունակություն բարձրացման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով մշտապես փոփոխվող սոցիալ-տնտեսական պայմանները: Ձևավորված համակարգը պետք է ունակ լինի ներմուծել ճյուղային և համայնքային ծրագրերն ու օժտված լինի բավական ճկունությամբ զարգացման նոր տեղական ու միջազգային միտումները, կայուն զարգացման ծրագրերն ու նոր

ուրբանիզացիայի մոտեցումները ներառելու և կիրառելու, և շարունակաբար թարմացվելու (Արփիար Պետրոսյան):

“Հարկ է հստակեցնել նաև, որ քաղաքի զարգացման գործընթացը բացարձակապես բազմադիսցիպլինար խնդիր է, որի մեջ հավասարապես (եթե ոչ առավել) կարևորություն ունեն լինում են տնտեսագիտությունը, հասարակագիտությունը, տեխնիկական մասնագիտությունները (ճարտարագիտության զանազան ոլորտներ): Մի անգամ և ընդմիշտ, մենք ճարտարապետներս վերջապես պիտի ընդունենք, որ ճարտարապետությունը քաղաքի խնդիրների լուծման շա-տ սահմանափակ մասնագիտություն է, որը կարելի է կիրառել միայն քաղաքի զարգացման “վերջին” փուլում...” (Էդուարդ Բալասանյան):

Իրավական խնդիրներ

Համաձայն քաղաքաշինության ոլորտում հիմնախնդիրների վերաբերյալ Հարցման, օրենսդրական դաշտը առանձնացվել է որպես քաղաքաշինության ոլորտի առավել թույլ օղակ, որը պայմանավորված է ինչպես դաշտի անկատարությամբ, այնպես էլ օրենսդրական կարգերի կիրառման ցածր մակարդակով: Սակայն “մասնագետները, որպես առավել կարևոր հիմնախնդիր առանձնացրել են օրենսդրական կարգերի կիրառման ցածր մակարդակը՝ նշելով, որ օրենքներ որպես այդպիսին առկա են, սակայն ցածր է գնահատվում այդ օրենքների կիրառման մակարդակը: Որպես առավել նշանակալի հիմնախնդիր մասնագետների 82%-ը առանձնացրել է օրենսդրական ակտերի կիրառման ցածր մակարդակը, և միայն 38%-ն է նշել օրենսդրական դաշտի անկատարությունը” [հավելված 1, էջ 6]: Թեև օրենսդրական դաշտը մշակված է, սակայն կիրարկման ցածր մակարդակի, մի շարք ոչ միաբերական սահմանումների ու ձևակերպումների պատճառով հաճախ որոշ շահագրգիռ խմբեր կարողանում են օգտվել դրա անկատարությունից՝ ծառայեցնել իրենց նպատակներին ի հակառակ հանրային շահի:

Թեև իրավական ակտերը մշակված և կիրառության մեջ դրված փաստաթղթեր են, համաձայն կատարված Հարցման արդյունքների, որոնց մասնակցել են ոլորտի ակտիվ մասնագետները, իրավական գործող ակտերից ոչ բոլորն են լավատեղյակ: Մասնագետները առավել հաճախ առնչվել են Քաղաքաշինության մասին օրենքին և Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգին: Առավել թույլ է տեղեկացվածության աստիճանը Հողային օրենսգրքին, Տեղական ինքնակառավարման մասին և Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին օրենքներին: Ընդ որում հարցվողների քառորդ մասը ընդհանրապես տեղյակ չէ Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիային: Այն դեպքում, երբ վերոնշյալ կոնվենցիան Հայաստանը վավերացրել է 2004թ. մարտի 9-ին և ստանձնել մի շարք

պարտավորություններ, մասնավորապես բնական ու մարդածին լանդշաֆտների պահպանության ու զարգացման ուղղությամբ՝ նոր քաղաքականության մշակման և իրացման շրջանակներում:

Ինչպես արդեն նշվեց, համաձայն Հարցմամբ ստացված արդյունքների, քաղաքաշինական հիմնախնդիրներից առավել կարևորվում են օրենսդրական կարգերի կիրարկման ցածր մակարդակը, անարդյունավետ կառավարումն ու պարտականությունների սխալ բաշխումը: Կարևոր գործոն է համարվել նաև կոռուպցիան, այնինչ նյութական միջոցների անբավարար լինելը, կտրուկ ամենաքիչ նշանակալից գործոնն է համարվել: Առավել կարևոր, քաղաքաշինական գործունեության հետ կապված վիճակը մեղմող հիմնախնդիր է նշվել կառավարման համակարգի բարեփոխումներին ուղղված գործունեությունը և մասնագիտական հանրային դերի կարևորումը քաղաքաշինական գործընթացներում ու գործող մեխանիզմների մշակում գործում [հավելված 1, էջ 6]:

Սրանում իր դերն է խաղում նաև օրենքներում առկա մի շարք խրթին ձևակերպումները: Առահասարակ ոլորտում (նույնիսկ միջազգային ու եվրոպական մակարդակներում) կիրառության մեջ եղած **տերմինաբանական եզրույթները** հանդիսանում են կարևորագույն խնդիր (Սարիատ Պետրոսյան): Դրանց մեկնաբանությանը հաճախ շփոթեցնող են, ոչ միանշանակ է ընկալվում, օրինակ կիրառության մեջ եղած “հատակագծում” – “պլանավորում” եզրույթները, հանդիպում են տարբեր փաստաթղթերում առանց հստակ տարանջատման, նվազեցնելով այդ փաստաթղթերի կարգավորիչ դերը:

Օրենսդրության մոտարկումը վավերացված միջազգային ու եվրոպական փաստաթղթերին, հանդիսանում է Համակարգում առկա կարևորագույն մեկ այլ խնդիր, որի մասին բարձրաձայնվեց նաև Քննարկման ժամանակ (Բորիս Քոչարյան): Հարցումների ընթացքում հավաքագրված կարծիքները կարևորում են նաև մոտարկմանը զուգահեռ Ազգային օրենսդրության և քաղաքականության զարգացման գործում տեղական առանձնահատկությունների և առկա տնտեսական իրավիճակի հետ համապատասխանեցումը [հավելված 1, էջ 9]: Հատկապես եվրոպական համաձայնագրերի փորձի տեղայնացումը կարող է ապահովել և զարգացնելով արդեն կիրառության մեջ գտնվող Համակարգը, միաժամանակ հավելելով արդի զարգացման միտումներով և այլ դեռևս տեղ չգտած պահանջները (Սարիատ Պետրոսյան): Սա իր հետ բերում է տարածության կազմակերպման ուղենիշային սկզբունքների վերանայման պահանջ, օրինակ տեղային կենտրոններ բազմակենտրոն (պոլիցենտրիկ) զարգացում՝ համաչափ զարգացում ապահովելու համար (Սարգիս Թովմասյան):

Որոշ մասնագետներ նաև առանձնացրել են քաղաքաշինության ոլորտում գործող նորմատիվների իրականությանը անհամապատասխանելիության հարցը, քանի որ դրանք ներկայացնում են խորհրդային ժամանակշրջանում

գործող նորմատիվները, սակայն ներկա պայմաններում չեն գործում (Արտյոմ Ալոյան):

Ի հավելումն, առաջարկվում է տարածական պլանավորումից մինչև շենքերի ու շինությունների շահագործումն ընդգրկող՝ կարգավորելի դարձնելու ոլորտը առաջարկվում է **Քաղաքաշինական օրենսգրքի ստեղծում**, ինչի մասին մանրամասն կխոսվի գլուխներ 2-ում և 3-ում:

Համակարգի կառուցվածքին ներկայացվող պահանջներ

Մշակվող փաստաթղթերը, դրանց ներկայացվող նորմատիվային պահանջներն ու նախագծային փաթեթի կազմի հաստատման կարգը, թեև ներկայումս գործող համակարգ է, սակայն հակասություններն ու թերի, ոչ միանշանակ նկարագրությունները հաճախ վիճելի իրավիճակների ու հակասությունների պատճառ են դառնում՝ կիրարկելիության ցածր մակարդակի հետ միասին:

Դեռևս քաղաքաշինության մասին օրենքի և բուն փաստաթղթի մշակման և հաստատման կարգի բացակայության պայմաններում սկսված առաջին և դեռևս միակ **տարաբնակեցման գլխավոր նախագծի** մշակումը պատճառ հանդիսացավ փաստացի մշակված փաստաթուղթը՝ որում արտացոլվեցին արդեն մշակված նախագծի մոտեցումները:

Իսկ **տարածքային հատակագծման նախագծերի**, որ մինչև այսօր մշակվել է միայն երեք տարածքների համար ներկայացվող պահանջները լիարժեք չեն կարող բավարարվել, պայմանավորված սահմանված մասշտաբներով, բացի այդ նույն պահանջների մի մասը ամրագրված է նաև փաստաթղթերի ստորին մակարդակի կազմում (Սարգիս Թովմասյան): Հերիերիսիայի սկզբունքի խախտման դեպքում մեջանկյալ օղակի բացակայության դեպքում առաջանում է խզում, որի արդյունքում այն փաստատուղթը որը պիտի ծառայի իբրև հենակետային հաջորդի համար փաստացի բացակայում է:

Համայնքների **գլխավոր հատակագծերը**, կոչված են սահմանելու հողերի նպատակային և գործառնական նշանակությունն ու դրանց օգտագործման ռեժիմներն ու սահմանել կառուցապատման առաջնահերթություններն ու հեռանկարային զարգացման հայեցակարգեր մշակել՝ փաստացի իրավիճակի ուսումնասիրության և գնահատականի հիման վրա: Դրանք, փաստացի ոչ միշտ են արտացոլում գոյություն ունեցող պետական բյուջետային հնարավորությունները: Մասնավորապես, քանի դեռ գլխավոր հատակագծի ընդգրկումը և դրա ընկալումը իբրև հիմնական կարգավորող փաստաթուղթ է, կարելի է պարզեցնել կազմի պահանջները՝ կախված քաղաքի չափերից, խնդիրների հրատապությունից, համայնքի նյութական կարողություններից: Գլխավոր հատակագիծը տեսականորեն քաղաքի զարգացման հիմնական փաստաթուղթն է և շատ հեռու է գործնական օգտագործման միջոց լինելուց (Էդուարդ Բալասանյան):

Երկար քննարկարկումների արդյունքում, նվազագույն պարտադիր պահանջները պարզեցվեցին, ինչը հնարավորություններ տվեց հանրապետության համայնքների սահմանափակ կարողությունների սահմաններում պատվիրել **պարզեցված գլխավոր հատակագծեր**: Սակայն նույնիսկ պարզեցված տարբերակում, ամրագրված անհրաժեշտ ելակետային նյութերի կազմը հաճախ գերազանցում է համայնքների սեփական ֆինանսական միջոցների հնարավորությունները: Բացի այդ բացակայում է մեկից ավելի համայնքների համար հատակագծերի մշակման մեխանիզմ, այն դեպքում երբ Հայաստանի վարչատարածքային բաժանումների շրջանակում, ոչ միշտ է նպատակահարմար մշակել առանձին գլխավոր հատակագիծ փոքր բնակավայրերի համար, մասնավորապես տնտեսապես կամ հատակագծորեն միմյանց փոխկապակցված համայնքներում: Միացյալ բնակավայրերի և համայնքների համար միասնական պարզեցված հատակագծի մշակումը ընդունելի տարբերակ կարող է լինել (Սարգիս Թովմասյան), որոնք չեն սահմանափակվում բնակավայրերի վարչական սահմաններով, այլ ընդհանուր տարածքային խնդիրներ են լուծում:

Քննարկման ընթացքում նշվեց նաև որ վերջին տարիներին կատարված փոփոխությունների և մշակվող փաստաթղթերի արդյունավետության բարձրացման համար կազմավորվել է միջգերատեսչական հանձնաժողովը, որտեղ բոլոր շահագրգիռ կառույցները ներկայացված են: Թեև այն թողել է իր դրական ազդեցությունն, այնուհանդերձ, վերոնշյալ խնդիրների առկայության պայմաններում այն չի կարող ունենալ շոշափելի ազդեցություն արդյունքների վրա (Սաշուր Քալաշյան):

Անհրաժեշտություն է նկատվում, նաև մշակել գլխավոր հատակագծում տեղ գտած միջոցառումների իրականացման համար ուղիներ, նյութական և ոչ նյութական ռեսուրսները ըստ փուլերի, հերթականության և պատասխանատուների, մասնավորապես տարբերակելով պետական և մասնավոր ներդրումների ոլորտները:

Ինչ վերաբերում է պարտադիր մշակման **գոտիավորման նախագծերին**, որը կոչված է հողի սեփականատերերին, կառուցապատողներին և ընդհանրապես, շահագրգիռ կողմերին հասանելի լինելով տրամադրել անհրաժեշտ ամբողջ հողօգտագործմանը վերաբերող տեղեկատվությունը, ներկայումս լավագույն ձևով չի ծառայում իր նպատակին: Մասամբ անկատար լինելու, մասնավորապես հողային ֆոնդի ըստ նպատակային և գործառնական նշանակության պատկանելիության դասակարգման սկզբունքների անկատարության, հաճախ ոչ տեղին նույնացման, որոնցով էլ պիտի պայմանավորված լինեն առանձին իրավական (թույլատրելի օգտագործման ձևերը) սահմանող գոտիների պատճառով: Բացի այդ, նման համակարգը իրական հնարավորություն չի տալիս տարբեր նշանակության հողերի իրական ծավալների մասին պատկերացում կազմելու համար:

Գոտիավորման նախագծերը, իբրև ներկայիս շուկայական պայմաններում հիմնական կարգավորիչ և սեփականության սահմանման փաստաթուղթ, կարիք ունեն ուժեղ լիազորություններով նախագծի կարգավիճակ ստանալու ձեռք բերելու համար՝ բաց հասանելիության և ընթերցելիության ոչ միայն մասնագետների նեղ շրջանի համար, ինչը էականորեն կբարձրացնի փաստաթղթի գործանական կիրարկելիության աստիճանը (Սարհատ Պետրոսյան): Ամրագրելով գոտիավորման փաստաթղթի նման դերը այն կարող է ստանձնել հիմնական վերահսկողության իրականացման համար հիմնարար փաստաթղթի կարգավիճակով: Դրանում անհրաժեշտ է ներառել տարբեր տեսակի չափորոշիչներ և սահմանափակումներ՝ օգտագործման նպատակները, կառուցապատման ընդհանուր մակերեսի հարաբերություն հողամասի մակերեսի նկատմամբ, շինության առավելագույն հարկայնություն և բարձրություն, հարևան հողամասերից տարածություն տարբեր կողմերից և այլն (Էդուարդ Բալասանյան): Որոշակի դեպքերում դրանք կարող են ավելի խիստ միջավայրային սահմանափակումներ ունենալ, ինչպես օրինակ շինանյութի ընտրությունը (Աշոտ Կանայան):

Ելնելով վերընշվածից, անհրաժեշտ է վերանայել Համակարգի բաղկացուցիչների նախագծային առաջադրանքին, կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջները՝ լրամշակելով ու հստակեցնելով դրանք, քանի որ առկա են բազմաթիվ կրկնություններ, հակասություններ և պահանջներ որոնք այդ շերտի խնդիրներն չեն և անհնարին է նշված մասշտաբում մշակել: Օրինակ, մարզի մասշտաբում սանիտարական պաշտպանիչ գոտիների և պատմամշակութային հուշարձաններ պահպանության գոտիները նպատակահարմար է տեղափոխել գլխավոր հատակագիծ և այլն (Սարգիս Թովմասյան):

Համանման արդյունքներ են լուսաբանվում նաև Հարցման արդյունքում: Որպես քաղաքաշինական զարգացման և վերահսկողության իրականացման առավել կարևոր ուղենիշ, հարցվողները առավել հաճախ նշել են գոտիավորման նախագիծը և գլխավոր հատակագիծը: Իսկ հաստատված գոտիավորման նախագծերի տեքստային և գրաֆիկական մասերը հասանելիության հարցին, միակարծիք ընտրել են բոլորի համար դրա մատչելի ու հասանելի լինելը [հավելված 1, էջ 21]: **Քաղաքաշինական կադաստրի** և այլ երկրատեղեկատվական համակարգերի բացակայության պայմաններում սահմանված տարածքի գոտիավորման սկզբունքները, բազային գոտիների նպատակային նշանակությունը և ռեժիմի սահմանումը առաջացնում է տարատեսակ խնդիրներ, որոնց մասին անհրաժեշտ է մշակել մի շարք առաջարկություններ: Նման միասնական համակարգի ձևավորումը քաղաքաշինական գոտիավորման նախագծի հիման վրա, հնարավորություն կտա անընդհատ թարմացնել հողօգտագործման համար անհրաժեշտ և առկա ամբողջ տեղեկատվությունը և կպարտավորեցնի հետևել դրա իրականացմանը: Այն նաև կարող է

հավաքագրել հետևողականության դեպքում ապահովել շարունակական մշտադիտարկումը (Գուրգեն Մուշեղյան):

“Քաղաքաշինությունը, ոչ միայն քաղաքաշինարար մասնագետների, այլև բազմաշերտ “կախվածություններով” երկարաժամկետ զարգացման ռազմավարական ծրագիր է, և դրա իրականացման վերահսկման փաստաթուղթ, որը հաշվի առնելով պատմական ու ժամանակային համալսարանը, տեղական ու միջազգային գործընթացները առաջադրում է զարգացումներ: Այս գործում կարևոր է գնահատել քաղաքաշինության գործոնը իբրև սերտ միավորում ապահովող ու համակարգող գործիք” (Էդուարդ Բալասանյան):

Դաշտի կարգավորումը նպաստավոր ներդրումային դաշտ ձևավորելու և հանրապետության ամբողջ տարածքում համաչափ և կայուն զարգացում ապահովելու, հանրապետության տարածքում առկա պաշարների ռացիոնալ օգտագործման, բնության և մշակույթի պահպանության ու անվտանգության իրավունքի իրացման համար անկյունաքարային դեր ունի (Սերգեյ Ամիրաղյան): Այս բազմաշերտ փոխկապակցվածությունը գործի դնելը իր հերթին կբարձրացի ներկայումս գործող Համակարգի կիրարկման մակարդակը՝ ապահովելով երկարաժամկետ ծրագրերի համաձայնեցված իրականացում:

Կարևորելով քաղաքաշինական գործունեության մեջ քաղաքական գործընթացների ազդեցությունն ու կարևորությունը, այն պետք է ընդգրկի պետական ծրագրերը, ժամանակի ու հասարակության պահանջները՝ միաժամանակ փոփոխվելու ու հարմարվելու հնարավորություն ունենա, զարգացող պահանջներին հարմարվելու համար և կենսագործունեության համար բարենպաստ միջավայր ստեղծելու համար:

Ոլորտի կառավարումը

Վերջին երկու տասնամյակների ընթացքում **կառավարման պետական համակարգում** անընդհատ ժամանակավոր բնույթի հրատապ և հատվածային կերպով փոփոխություններ են իրականացվել, որոնք հաճախ հակասության մեջ են մտնում գործող օրենսդրության ոգու ու կարգերի հետ՝ թողնելով իրենց բացասական ազդեցությունը: Վերջին տասնամյակում Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է մի շարք միջազգային ու եվրոպական պարտավորություններ, որոնցում ամրագրված են նոր մոտեցումներ մարդածին միջավայրում տեղի ունեցող գործընթացների կառավարման վերաբերյալ: Համեմատելով այդ պարտավորություններով վավերացված փաստաթղթերը առկա օրենսդրության հետ բացահայտվում է, որ Հայաստանը լիարժեք ներագրավված չէ արդի ոլորտային գործընթացներին (Բորիս Քոչարյան):

Քաղաքաշինության ոլորտի նորմատիվ դաշտով սահմանված դրույթների և դրա առանձին մասեր համարվող գործառույթների իրականացումը կառավարության և մի շարք պետական ու տեղական կառավարման

մարմինների կողմից իրականացվող գործառույթ է: Այս բարդ ու փոխկապակցված, անընդհատ համալրման ու զարգացման կարիք ունեցող համակարգը պետական ու տեղական մակարդակներում պարտավորությունների ու լիազորությունների վերաբաշխման և վերահսկողությունների լծակների կիրառման բացեր ունի: Դրանց թվին է պատկանում նաև քաղաքաշինական նախագծային գործունեությամբ զբաղվող անհատների ու կազմակերպությունների լիցենզավորման հարցը (Բորիս Քոչարյան): Տարածական պլանավորման փաստաթղթերը ներառված չեն լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների մեջ և այսօր դրանք կարգավորվում են ընդհանուր ճարտարապետական նախագծման համար անհրաժեշտ լիցենզավորման գործընթացների շրջանակում:

Քաղաքաշինական ծրագրային պլանավորման փաստաթղթերը հանդիսանում են պետական և իրավական կարգավորման միջոց: Այստեղ առկա են հակասություններ թե՛ սահմանումների, և թե՛ քաղաքաշինական ընթացակարգերը նկարագրող հասկացությունների միջև: Դրանք անցումային, ձևավորման ու կարգավորման, փուլում հարուստ են ժամանակավոր որոշումներով, և հիմնականում իրավական կարգավորման տեսանկյունից կատարյալ չեն (Բորիս Քոչարյան):

Ներկայումս գործող օրենսդրական դաշտում պատասխանատվությանը վերաբերող դրույթներ գրեթե առկա չեն և անհրաժեշտ է վարչական օրենսգրքում առկա պատժման մեթոդների կիրառման ու խստացման վերաբերյալ քննարկումներ անցկացնել (Սաշուր Քալաշյան):

Մասնակցային կառավարման մեխանիզմների մշակումը նույնպես առաջնահերթ կարևորության խնդիրներից է (Արմեն Վարույան): Հարցումների արդյունքների համաձայն, համակարգի արդյունավետության բարձրացման համար, առաջարկվեց նաև նոր կադրերի պատրաստում՝ հեղափոխական մոտեցումներով, հին կառավարման մտածելակերպը թարմացնելու համար: Նման ներուժի առկայության դեպքում կարևորագույն պաշտոններում բարձր մասնագիտական կարողություններով մասնագետներով լրացնելու անհրաժեշտությունն և առհասարակ պարտականությունների և լիազորությունների վերաբաշխումն այսօր կարևորագույն խնդիրներ են:

Քաղաքաշինություն մասնագիտությունը դինամիկ մասնագիտություն և գործնական աշխատանքների համար չկա կիրառելի դաշտ, քանի որ ոլորտը համապատասխանաբար չի փոփոխվում՝ տալով հնարավորություն օգտագործելու նոր մոտեցումներ: Կառավարման ոլորտի խնդիրներից է նաև, կոռուպցիան, ինչը ցավոք հատկանշական է ոչ միայն քաղաքաշինության ոլորտի համար: Կարևոր է նշել, որ ներկայիս բարդ տնտեսական պայմաններում, նյութական ռեսուրսների սահմանափակությունը չի գնահատվում որպես առավել նշանակալից հանգամանք: Հիմնախնդիր է նաև ֆինանսական միջոցների արդյունավետ բաշխումն ու հետևումը նպատակային

նշանակությամբ օգտագործելու համար անհրաժեշտ վերահսկողությունը [հավելված 1, էջ 20]:

Մասնագիտական հանրույթի դերի բարձրացումը, համաձայն Հարցման նույնպես էական դերկիսադա ընդհանուր համակարգի բարեփոխման գործում՝ հանրությանը գրագետ տեղեկատվություն ապահովելով, մատնանշելով ու բարձրաձայնելով ոլորտային խախտումների մասին [հավելված 1, էջ 7]: Քննարկման ընթացքում ծավալվեց նաև քաղաքաշինական նախագծային գործունեության և ճարտարապետական նախագծային գործունեության միջև առկա տարբերությունների մասին, հատկապես կարևորելով ճարտարապետ-քաղաքաշինարարների դերը քաղաքաշինական գործընթացներում (Էդուարդ Բալասանյան):

Հանրության տեղեկացվածության ցածր մակարդակը նվազեցնում է նրա մասնակցությունը որոշումների կայացման գործում, ինչը կարևորագույն կարգավորիչ մեխանիզմներից է և ժողովրդավար քաղաքականության անքակտելի բաղկացուցիչներից: Համաձայն հարցման, մասնագիտական հանրույթը, որի շրջանակում անցկացվել են հարցումները, հանրության մասնակցությունը առավել կարևորվում է քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման գաղափարի հղացման ընթացքում, հիմնադրույթների հաստատման և առաջադրանքի կազմման ընթացքում [հավելված 1, էջ 22]:

2. Համակարգի հիմնական դրույթները

Հեղինակ՝ Սարհատ Պետրոսյան

Համակարգի նպատակն ու կարգավորման տրամաբանությունը

Քաղաքաշինությունը, որպես գործունեության ոլորտ անհրաժեշտ է դիտարկել դրա պատմական զարգացման համատեքստում: Այն, ճարտարապետական մտքի հետ համընթաց կրելով համաշխարհային քաղաքական մտքի զարգացման անմիջական ազդեցությունը, ձևավորվել է որպես գործունեության ոլորտ ու այսօր այն հանդես է գալիս իր զարգացման ընթացքի ամենաընդգրկուն ու բազմադիսցիպլինար ձևաչափով: Դրա պատմական զարգացումը չի մտնում այս հաշվետվության խնդիրների մեջ, սակայն ինչպես արդեն նշվեց այն անտեսել հնարավոր չէ, քանի որ մեծապես կախված լինելով հասարակական քաղաքական իրավիճակից, այն մշտապես կրել է ժամանակի մտածողության ազդեցությունն ու ունեցել տարբեր նպատակներ:

Սակայն անփոփոխ է ամենահիմնարար նպատակը՝ մարդկության համար առողջ և ապահով կենսամիջավայր ստեղծելը: Հայաստանի Հանրապետությունում առկա քաղաքաշինական մտածողությունն ու ընկալումները կայանալով Խորհրդային միության պլանային տնտեսության տարիներին այսօր ինչ որ առումով դեռ պահպանում են դրա ոգին, ինչ որ տեղ՝ մտածողությունը: Այն ապահովում է առողջ ու անվտանգ միջավայր ունենալու հնարավորությունները, սակայն դրանում զգացվում է երկու անկյունաքարային նշանակություն ունեցող իրողությունների պակասը՝ շուկայական համակարգ, ի տարբերություն Խորհրդային տարիների պլանային տնտեսության, և ժողովրդավարություն՝ վարչահրամայական կամ ավտորիտար կառավարման փոխարեն: Հաշվի առնելով նաև “առողջ ու անվտանգ” ապրելու արդի ընկալումները կարելի է նշել որ այսօր Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության նպատակն է ազատ մրցակցային համակարգի պայմաններում ապահովել բաց ու ժողովրդավարական կառավարում մարդածին միջավայրում կայուն զարգացման ապահովման համար:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հոդված 33.2-ի առաջին պարբերությամբ սահմանվում է, որ “*Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը*” [1]: Ինչպես նշվեց այս իրավունքի իրացման ոլորտը համաձայն ներկա օրենսդրության հանդիսանում է քաղաքաշինությունը, որը մեր օրերում ունի ավելի լայն ընդգրկում քան նախկինում: Այն որպես մարդածին միջավայրում տեղի ունեցող փոփոխությունների ընկալման ու կառավարման ոլորտ, փորձում է պատասխանել ընթացող գործընթացների վերաբերյալ առաջացող մտահոգություններին ու հարցերին՝ միաժամանակ առաջադրելով

լուծումներ դրանց համար: Սա վկայում է այն իրողությունը, որ ի սկզբանե ճարտարապետական նպատակներ ունեցող, ավելի ուշ՝ ճարտարագիտական բազմաթիվ դիսցիպլինների համախումբ հանդիսացող քաղաքաշինությունը այսօր կարելի է համարել նաև սոցիալական գիտություն, որում բազմաթիվ նոր չափողականություններ են համադրվում ունենալով մեկ նպատակ՝ որակյալ միջավայրի արժևորում և կայացում:

Արդի քաղաքաշինությունը, կամ ավելի ճիշտ տարածական պլանավորումը, համաձայն Տարածքային պլանավորման եվրոպական խարտիայի *“արտահայտում է հասարակության տնտեսական, սոցիալական, մշակութային և էկոլոգիական քաղաքականությունների աշխարհագրական արտահայտությունը”* [5] (Քաղաքաշինության նախարարության տրամադրած ոչ պաշտոնական թարգմանությունում այն թարգմանվել է այսպես՝ *“ցանկացած հասարակության մեջ տնտեսական, սոցիալական, մշակութային և էկոլոգիական քաղաքականությունների տարածական արտահայտությունը”*):

Համաձայն քաղաքաշինության մասին Հայաստանի Հանրապետության մասին օրենքի, որը հանդիսանում է քաղաքաշինության ոլորտի մայր օրենքը, *“քաղաքաշինությունը Հայաստանի Հանրապետությունում կենսագործունեության համար բարենպաստ տարածական միջավայրի ստեղծման կամ փոփոխման նպատակով պետության, ֆիզիկական, իրավաբանական անձանց և դրանց միավորումների գործողությունների համախումբ է, որն ընդգրկում է՝*

ա) Հայաստանի Հանրապետության, նրա վարչատարածքային միավորների և դրանց բաղկացուցիչ մասերի սոցիալ-տնտեսական զարգացման համալիր ծրագրերի, տարաբնակեցման համակարգերի ձևավորման, տարածքների կայուն զարգացման և դրանց նպատակային օգտագործման ուղղությունների և գերակայությունների, արտադրական կարողությունների տեղաբաշխման, ինժեներապորանսպորտային և այլ ենթակառուցվածքների կազմակերպման, կանխատեսման, ծրագրման և նախագծման բոլոր տեսակները.

բ) շենքերի, շինությունների նախագծման և շինարարության, վերակառուցման (ներառյալ՝ քանդման), վերականգնման, ուժեղացման, արդիականացման, ինչպես նաև տարածքների բարեկարգման բոլոր տեսակները.

գ) շենքերի, շինությունների շահագործումը՝ իրավական ակտերի, քաղաքաշինական և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան” [16, հոդված 2]:

Փաստորեն քաղաքաշինությունը համաձայն Ազգային օրենսդրության ներառում է նաև շենքերի ու շինությունների կառուցման ու դրանց շահագործման գործառույթների կարգավորումը: Ոլորտի ավելի լայն ընդգրկումը կարող էր նպաստել առհասարակ մարդածին միջավայրում նոր որակական չափանիշներ սահմանելուն, սակայն մեզ շրջապատող միջավայրում առկա բազմաթիվ խնդիրներն ու մարտահրավերները, ինչպես նաև միջազգային ու եվրոպական փորձը հուշում են, որ դրանց միմյանցից առանձին դիտարկումը

կարող է նպաստել առկա խնդիրների լուծմանը: Այդ իսկ պատճառով առաջարկվում է վերանայել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինությանը վերաբերող օրենսդրությունն ու տարանջատել ծրագրային մոտեցումները օպերատիվ գործառույթներից: Այդ մասին առանձին ներկայացվելու է թե՛ այս բաժնում, թե՛ հաշվետվության գլուխ 3-ում:

Տերմինաբանություն

Քաղաքաշինական փաստաթղթերի համակարգում և առհասարակ քաղաքաշինական գործունեության ոլորտում կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում տերմինաբանության հստակեցումը: Քաղաքաշինության որպես մասնագիտության զարգացման գործընթացներն ու դրա արդյունքում առաջնահերթությունների փոփոխությունները վերջին երկու տասնամյակներում, ինչպես նաև Խորհրդային տարիների հետ համեմատելիս ոլորտում առկա անկյունագծային փոփոխությունները հայկական մասնագիտական հանրույթի շրջանակում առաջացրել են մի շարք տարընթերցումներ, որոնք էլ իրենց ազդեցությունն են թողել ոլորտում տարվող քաղաքականության մշակման և իրականացման վրա:

Առաջին նկատառումը վերաբերում է հենց “քաղաքաշինություն” տերմինին: Այն հայերենով բառացի նշանակում է քաղաք - շինել (կառուցել), որը համապատասխանում է ռուսերեն “градоостроительство” տերմինին: Այս առումով հետաքրքիր է ԱՄՆ-ում քաղաքաշինություն բառի կիրառելիության զարգացումը: Եթե 1970-ականներին հանդիպում էին “town planning” (բնակավայրերի հատակագծում) կամ “city planning” (քաղաքների հատակագծում) տերմինները ապա ավել ուշ կիրառվում էր միայն “urban planning” (ուրբանիզացված տարածքների հատակագծում), իսկ այսօր այն հիմնականում “planning” (հատակագծում կամ ծրագրավորում) կերպով է կիրառվում: Այս զարգացումը շատ լավ բնորոշում է մասնագիտության զարգացումը ԱՄՆ-ում: Եթե նախկինում կախված բնակավայրի չափերից, բնակավայր՝ գյուղական կամ ավան իմաստով, իսկ քաղաք՝ քաղաքային իմաստով, կիրառվում էին տարբերակված մոտեցմամբ, ավելի ուշ այն դիտարկվում էր բոլոր ուրբանիզացված կամ մարդու կողմից փոփոխության ենթարկված տարածքները մեկ հարթությամբ: Ավելի ուշ 1990-ականներին լանդշաֆտների կարևորման միտումների արդյունքում երբ քաղաքաշինական կարգավորումն իր մեջ ներառեց երկրի տարածքն ամբողջությամբ այն առհասարակ սկսեց կոչվել “planning”: Ֆրանսիական մոդելի դեպքում այն ավելի վաղ փոխում հենց “urbanism(e)” կոչվելով ի սկզբանե ճիշտ կերպով է մտել կիրառության մեջ, չնայած կիրառության մեջ են եղել “la planification de la ville” (քաղաքի հատակագծում) հասկացությունը:

Հայերենում կիրառվող “շինություն” արմատի գոյությունն այն դարձնում է քաղաքների շինարարություն, ինչը չի արտահայտում ազատ տնտեսական

համակարգերում մարդածին միջավայրում գործունեության կարգավորման գործառույթը: Այդ իսկ պատճառով տերմինի վերանայումն այսօր արդիական խնդիր է: Այն կարող է իր մեջ ներառել “ուրբան”, “քաղաք”, “բնակավայր” արմատներից մեկն ու “կարգավորում”, “ծրագրավորում”, “նախագծում”, “պլանավորում” արմատներից մեկը: Ավելի լայն համատեքստում (տարածքային ընդգրկմամբ) քաղաքաշինությունը նաև օգտագործվում է տարածական պլանավորում (հատակագծում) հասկացությամբ, որն այս օրերին շատ ավելի արդիական է քանի որ քաղաքաշինական գործունեությունն արդեն դիտարկում է առհասարակ լանդշաֆտների զարգացում ու պահպանում՝ անկախ դրանց քաղաքային կամ ոչ քաղաքային (գյուղական) կամ առհասարակ բնական լինելուց (եթե այդպիսիք դեռ առկա են): Այդ իսկ պատճառով կիրառելի կարող է լինել նաև “տարածական պլանավորում” տերմինը որը կարող է փոխարինել առհասարակ քաղաքաշինության տերմինին, որպես միջավայրերի ուսումնասիրման և կառավարման ոլորտ:

Հատկանշական է նաև “պլանավորումին” տրվող նախապատվությունը քան “հատակագծմանը”: Շուրջ մեկ տասնամյակ առաջ Հայաստանի Հանրապետությունում “տարածական պլանավորում” տերմինի կիրառության մեջ մտնելով “պլանավորում” տերմինը շրջանառվեց այն դեպքում երբ առկա է դրան համարժեք “հատակագծում” հայերեն տերմինը, որը մի քիչ ավելի նեղ է քան “պլանավորումը” քանի որ այն չի ներառում “ծրագրում” կամ “նախագծում” բառերի հիմքում դրված ինչ որ տեղ ծրագրային կամ օրենսդրական տարրեր ունեցող գործընթացները: Այն ենթադրում է որոշակի ճարտարապետական, ասել է թե գրաֆիկական վերջնարդյունք, որը հակասության մեջ է մտնում օրեցօր ուրբանիզացվող մարդկության ու այդ գործընթացի բազմաշերտ անկառավարելիության ընկալման առկայության պայմաններում:

Առկա են կարծիքներ, որ անհրաժեշտ է կիրառության մեջ դնել “քաղաքակարգավորում” տերմինը, որը հանդիսանում է ռուսերեն համարժեքի թարգմանությունը “градостроительство” որի մասին խոսվելու է գլուխ 3-ում: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ լեզվական ընկալումները ենթակա են փոփոխության ուստի թե՛ “քաղաքակարգավորում”, թե՛ “տարածական հատակագծում” տերմինները ժամանակի ընթացքում կարող են մտնել կիրառության մեջ ցանկության և հետևողականության դեպքում:

Միջազգային փորձի ուսումնասիրության առումով կարևոր է հատկապես խորհրդային համակարգի փորձ ունեցող սակայն եվրոպական արժեհամակարգի ու միության անդամ հանդիսացող մերձալքային երկրների փորձը: Օրինակ Լատվիայում առհասարակ բացակայում է քաղաքաշինություն տերմինը և ողջ օրենսդրությունը դիտարկում է այն որպես տարածական պլանավորում, թե՛ Ազգային մակարդակով (Հայաստանի դեպքում տարաբնակեցման նախագիծ), թե՛ ռեգիոնալ (տարածքային), թե՛ համայնքների մակարդակով [39. էջ 23], իսկ հիմնական կարգավորիչ օրենքը կոչվում է

Տարածական պլանավորման մասին օրենք (Law on Spatial Planning) [40, էջ 1]: Նման իրադրություն է նաև Լիտվայում, որտեղ հիմնական օրենքը կոչվում է Տարածքային հատակագծման մասին (Law on Territorial Planning) [38, էջ 2]:

Ելնելով վերոգրյալից առաջարկվում է քաղաքաշինություն տերմինի փոխարեն շրջանառության մեջ դնել տարածական պլանավորում տերմինը որն էականորեն կփոխի ոլորտին ներկայացվող պահանջներն, ինչպես նաև կունենա դրական ազդեցություն դրա քաղկացուցիչ ծրագրային փաստաթղթերի համակարգի վրա, որի մասին ավելի մանրամասն կխոսվի գլուխներ 3-ում և 4-ում:

Կարևոր է նաև գործող համակարգի ամենավերջին մակարդակում գտնվող փաստաթղթի՝ գոտիավորման նախագծի տերմինաբանության վերաբերյալ քննարկում ծավալել: Դա հանդիսանալով ազատ շուկայական համակարգում քաղաքաշինական կարգավորման դեռևս հայտնի ամենաարդյունվետ գործիքը, հանդիսանում է տարածական պլանավորման համակարգի ստացվող վերջնաարդյունքը, որն իրականացնում է կոնկրետ տարածքներում կարգավորումը: Սա հանդիսանալով հայաստանյան քաղաքաշինական համակարգում նորույթ, դեռևս կարիք ունի մանրամասն քննարկման ու զարգացման, որի մասին ավելի մանրամասն խոսվելու է հաջորդիվ, սակայն դրանում առկա են տերմինների հետ կապված տարրնկալումներ: “Գոտիավորում” (օրենսդրական դաշտում⁴ ինչպես նաև մասնագիտական շրջանակներում⁴ կիրառվում է նաև “գոտևորում” կերպով, որը քերականական առումով ավելի ճիշտ է) իրականացվում էր և այժմ էլ իրականացվում է տարբեր քաղաքաշինական նախագծերում տարբեր նպատակներից ելնելով: Դրանցից հատկապես գործառնական գոտիավորման ուրվագիծ (ֆունկցիոնալ զոնավորման կամ գոտիավորման սխեմա) հիմնարար նշանակություն ունեցող գծագրի կամ այլ գոտիավորման ուրվագծերի և գոտիավորման նախագիծ հասկացությունների միջև առաջանում են անհասկանալի իրավիճակներ: Գոտիավորման նախագիծ փաստաթուղթը, որը համապատասխանում է ԱՄՆ-ում և այլ երկրներում կիրառվող “zoning”-ին մինչև այս պահը տարբեր բնակավայրերի ու Երևանի տարբեր համայնքների (այժմ վարչական շրջաններ) համար մշակված օրինակների հետ շատ քիչ ընդհանրություններ ունի, քանի որ այն իր մեջ ներառում է գործառնական գոտիավորման ուրվագծի տարրեր: Դրանում հատկապես պակասում են շատ ավելի մանրամասն նկարագրություններ տարբեր տեսակի գոտիներում առկա կարգավորիչ սահմանափակումներ ներառող իրավական ռեժիմների վերաբերյալ: Հաշվի առնելով նաև, որ դեռևս խորհրդային տարիներին գլխավոր հատակագծերին հաջորդող, ամենավերջին քաղաքաշինական փաստաթուղթը համարվում էր “մանրամասն հատակագծման նախագիծը” (ՄՀՆ, ռուսերեն՝ “проекта детальное планирование”, ПДП) առաջարկվում է գոտիավորման նախագիծ փաստաթուղթը վերանվանել “մանրամասն գոտիավորման հատակագիծ” (ՄԳՀ): Դրանով ինչպես արդեն նշվեց այն կմոտեցվի մասնագիտական շրջանակներին ծանոթ քաղաքաշինական համակարգի ամենաստորին

մակարդակի փաստաթղթին և կվերաժվի ավելի մանրամասն կարգավորիչ գործիքներ ունեցող փաստաթղթի: Կարևոր է նաև որպեսզի այն չդիտարկվի որպես “նախագիծ” այլ “հատակագիծ”, քանի որ այն ողջ համակարգում հանդիսանում այն միակ փաստաթուղթը որով սահմանվում է իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականության բացարձակ համարվող իրավունքի վրա սահմանափակում և այն կարող է փոփոխվել հատկապես խստացվել բացառիկ դեպքերում միայն: Այս մասին ավելի մանրամասն խոսվելու է թե՛ գլուխ 3-ում, թե՛ գլուխ 4-ում:

Տերմինաբանության վերաբերյալ քննականների շրջանակում արժանահիշատակ է նաև այն փաստը որ Սահմանադրության 33.2 հոդվածի սահմանումից բացի որևէ այլ հիշատակում գրեթե առկա չէ քաղաքաշինության հետ առնչվող գործունեությանը: 2005 թվականի հանրաքվեի արդյունքում կատարված Սահմանադրության փոփոխության արդյունքում ավելացված հոդված 89, կետ 4.1-ը, որով. *“Կառավարությունը՝...իրականացնում է տարածքային զարգացման պետական քաղաքականությունը”* [1, հոդված 89]: Այսինքն Մայր օրենքի շրջանակում “տարածքային զարգացումն” է հանդիսանում պետական կարգավորման առարկա: Սա ենթադրել է տալիս որ միգուցե տարածքային զարգացումն է տարածքային պլանավորման համարժեքը “տերմինը”, որը կարող է իր մեջ ներառել մարդածին միջավայրում առկա ողջ գործընթացները: Տեղին է նշել նաև որ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության անգլերեն թարմանությունը “Ministry of Urban Development” (քաղաքային զարգացման նախարարություն) է, իսկ օրինակ Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում “Federal Ministry of Transport, Building and Urban Development” (Տրանսպորտի, շինարարության և քաղաքային զարգացման ֆեդերալ նախարարություն), կամ Լատվիայի Հանրապետությունում “Ministry of Regional Development and Local Government” (Տարածքային զարգացման և տեղական կառավարման նախարարություն): Նման մոտեցում կիրառվել է նաև Հայաստանում երբ 1990-ականներին շատ կարճ ժամանակահատվածում ոլորտի լիազոր մարմին է համարվել Տարածքային կառավարման և քաղաքաշինության նախարարությունը: Սա դեռ չի կորցրել իր առօրեականությունն ու հաճախ են հնչում նման գաղափարներ [36], որը բացահայտվեց նաև ծրագրի ուսումնասիրական փուլում [հավելված 1, էջ 12]:

Համակարգի կառուցվածքը

Ոլորտի զարգացման առանցքային խնդիրներից մեկը հանդիսանում է ոչ լիարժեք, բայց բնույթով եռաստիճան, կառավարման համակարգի (ազգային – մարզային – համայնքային) մակարդակների առկայության պայմաններում չորս նախագծերից բաղկացած համակարգի առկայությունը, որի բաղկացուցիչներն են.

- Տարաբնակեցման նախագիծ՝ ազգային մակարդակ,
- Տարածքային պլանավորման հատակագծեր՝ մարզային (տարածքային) մակարդակ,
- Գլխավոր հատակագծեր՝ համայնքային մակարդակ,
- Գոտիավորման նախագծեր՝ համայնքային ընդգրկում կամ քաղաքաշինական զարգացման առաջնահերթ տարածքներ:

Չնայած այն փաստին որ գլուխ 4-ում խոսվելու այս փաստաթղթերի համակարգի մասին սակայն կան ընդհանուր նկատառումներ որոնք ենթակա են դիտարկման ընդհանրական համատեքստում:

Առաջին երեք նախագծերը տեսակով իրենցից ներկայացնում են “տարածական պլանավորման” (Spatial Planning) փաստաթղթեր, որոնք կախված իրենց ընդգրկումից ներկայացնում են տարբեր մանրամասնությամբ երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրային խնդիրներ՝ հատկապես կարևորելով դրանցում տնտեսական, սոցիալական, միջավայրային (բնապահպանական) ու մշակութային բաղադրիչները: Այս փաստաթղթերը մշակվել են նաև խորհրդային տարիներին, այդ իսկ պատճառով մասնագիտական հանրության մոտ առկա են համընդհանուր համաձայնություն դրանց վերաբերող պահանջներին շուրջ: Չնայած նրան, որ դրանց մշակման համար առկա են ենթաօրենսդրական ակտեր, որոնք լուծելով հիմնական խնդիրները սակայն ևս կարիք ունեն զարգացման:

Գոտիավորման նախագիծը ինչպես արդեն նշվեց հանդիսանում են այս համակարգի ամենաթույլ զարգացած փաստաթուղթի տեսակը: Դրանք մի քանի բացառություններից բացի հիմնականում կատարվում են գլխավոր հատակագծերի կազմում: Նշվեց նաև, որ հենց գոտիավորման նախագծերն են հանդիսանում ազատ շուկայական տնտեսության պայմաններում այն հիմնական իրավական հասանելի փաստաթուղթը որը կարող է կիրառվել քաղաքացի - համայնք հարաբերությունների մակարդակում: Չնայած այն փաստին, որ առկա են Երևան քաղաքի նախկին համայնքների (այժմ վարչական շրջաններ) համար առանձին գոտիավորման նախագծեր, սակայն դրանք հիմնականում գլխավոր հատակագծերի հետ մշակվելու պաճառով հաճախ ընկալվում են որպես գլխավոր հատակագծերի մասերից մեկը: Այդ է վկայում նաև ծրագրի շրջանակում իրականացված հարցումների ժամանակ բացահայտված իրավիճակը երբ մասնագետների մեծամասնությունը հենց գլխավոր հատակագիծն է դիտարկում որպես հիմնական ուղենիշային փաստաթուղթ [հավելված 1, էջ 21]: Ծրագրի շրջանակում առաջադրված առաջարկություններում զգալի ուշադրություն է դարձվելու գոտիավորման նախագծերին որն ինչպես արդեն առաջարկվեց նպատակահարմար է համարվում անվանափոխել Մանրամասն գոտիավորման հատակագիծ, նպաստելու համար դրա կարևորմանն ու կիրառական նշանակության բարձրացմանը: Այսպիսով ծրագրի առաջարկությունները ենթադրում են հետևյալ համակարգը (փաստաթղթերի անվանումները պայմանական են).

- Ազգային տարածական պլանավորման ուրվագիծ (մշակվում է որոշ Հանրապետության համար),
- Տարածքային պլանավորման հատակագծեր (մշակվում է մարզերի, հատակագծային գոտիների համայնքներ խմբերի և այլ միավորների համար),
- Գլխավոր հատակագծեր (մշակվում են ոչ բոլոր բնակավայրերի համար),
- Մանրամասն գոտիավորման հատակագծեր՝ ՄԳՀ (մշակվում են անխտիր բոլոր համայնքների և տարածքների համար որտեղ նախատեսվում է ցանկացած կառուցողական գործունեություն):

ՄԳՀ-ներին ներկայացվող պահանջները կախված քաղաքի կարգավիճակի բնակչությունից ու տարածքից կարող են ունենալ նաև պարզ կառուցվածք ինչպիսին այսօր նախատեսված է պարզեցված գլխավոր հատակագծերի դեպքում:

Գոտիավորման հատակագծերին ներկայացված պահանջները կարիք ունեն խորքային վերանայման և կանոնակարգման: Չնայած այն փաստին որ ավելի ուշ դրանց վերաբերյալ լինելու են մանրամասն առաջարկություններ, սակայն դրանցում հատկապես անհրաժեշտ է կարևորել հետևյալ բաղադրիչները.

- Հողային օրենսգրքում ամրագրված հիմնական (բազային)՝ նպատակային նշանակության և գոտիավորման նախագծերում (օժանդակ) գոտիների՝ ըստ գործառնական նշանակության համատեղելիության հետ կապված խնդիրներ:
- Թույլատրելի օգտագործման ձևերին ներկայացվող պահանջներն ու դրանց հստակ ցանկերի վերանայում և նորմավորված ստանդարտացում:
- Գոտիավորման նախագծերի վերջնական արդյունք հանդիսացող փաստաթղթերի կիրառելիության բարձրացում, որը պետք է նպատակ ունենա դրանք դարձնել ընթեռնելի նաև ոչ մասնագետների համար:
- Գոտիավորման արդյունքում մատնանշվող կառուցապատման մանրամասների հստակեցում, բարձրություն և կառուցապատման խտության հետ շինանյութ, ծավալատարածական կառուցվածք և այլ բնութագրիչների հստակեցում:

Օրենսդրական դաշտի զարգացում

Օրենսդրական դաշտի ուղղությամբ շարունակական աշխատանքը ոչ միայն հնարավորություն է տալիս զարգացնել այն և նվազեցնել դրա վերաբերյալ տարրընթերցումները, այլև այն լրացուցիչ ազդակ է հանդիսանում առհասարակ դրա վերաբերյալ հանրային ու մասնագիտական ուշադրության ու իրազեկման աստիճանի բարձրացման համար:

Քաղաքաշինություն տերմինաբանության և կարգավորման նպատակների մասին խոսակցության ընթացքում մատնանշվեց հետևյալը, որ քաղաքաշինությունը դիտարկվում է մարդածին միջավայրում տեղի ունեցող

փոփոխությունների ծրագրավորման և կարգավորման ոլորտ: Հաշվի առնելով այս փաստը ինչպես նաև ոլորտին ներկայացվող արդի պահանջները ոլորտին վերաբերող միակ օրենքի՝ Քաղաքաշինության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա առաջարկվում է Քաղաքաշինության (կամ Տարածական զարգացման) օրենսգրքի ստեղծումը, որն իր մեջ անհրաժեշտ է ներառել հետևյալ բաղադրիչները (բաժինները).

- Տարածական պլանավորում.
- Մանրամասն գոտիավորման հատակագծում.
- Ճարտարապետական գործունեություն.
- Շինարարություն.
- Վերահսկողություն.
- Շենքերի և շինությունների շահագործում:

Բոլոր անվանումները պայմանական են և ենթակա են քննարկման կամ փոփոխման, սակայն համապատասխան մասերի առկայությունն է որ կարող է ապահովել ողջ ոլորտին վերաբերող խնդիրներից ձերբազատվելու կամ էական կերպով մեղմելու:

Սրանով կարելի է ասել, որ ամբողջանում են քաղաքաշինական գործունեության թե՛ մեր իրականությունում առկա, թե՛ արդի ընկալումների համար անհրաժեշտ գործունեության տեսակները: Այն ամենալայն ընկալում ունեցող՝ երկիր տարածք, մակարդակից անցում է կատարում ճարտարապետական կոնկրետ օբյեկտների նախագծման ու սահմանում շահագործմանը վերաբերող դրույթները: Բնականաբար այս առաջարկությունն իրենից ներկայացնում է տեսական առաջարկություններ և չեն հավակնում պատասխանել ոլորտում առկա բոլոր խնդիրներին սակայն այն մատնանշում է ոլորտին ներկայացվող պահանջները և հնարավորություն տալիս կատարել թե՛ համատեղումներ, թե՛ այլ մասնատումներ: Զեկույցի գլուխ 3-ում առանձին կերպով անդարադարձ է արված գործող Քաղաքաշինության մասին օրենքին ինչպես նաև դրա կապերին հողային օրենսգրքի, տեղական ինքնակառավարման մասին օրենքներին, որոնց վերաբերող մի շարք առաջարկություններ հնարավորություն են տալիս զարգացնել առկա օրենքները և մատնանշել լայն ընդգրկում ունեցող ֆունդամենտալ մի շարք դիտարկումներ:

Քաղաքաշինական նորմատիվային դաշտի հստակեցում

Այսօր Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են մի շարք նորմատիվային ակտեր, որոնք կարգավորում են քաղաքացիների անվտանգությանն ու առողջությանը վերաբերող տեխնիկական պահանջները: Քաղաքաշինության ոլորտին վերաբերող ակտերի թիվը մոտ երկու հարյուրն են [33], որոնք ներառում են շինարարական ու տեխնիկական պահանջների բավականին լայն շրջանակ: Սակայն դրանցից մի քանիսն են որոնք վերաբերելի են ծրագրի շրջանակում դիտարկվող քաղաքաշինական գործունեությանը,

այսինքն տարածական պլանավորմանը: Ներկա պահին Հայաստանի Հանրապետությունում կիրառության մեջ է մտած 1989 թվականին մշակված “Քաղաքաշինություն՝ քաղաքային ու գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում” (СНП 2.07.01-89, Градостроительство. планировка и застройка городских и сельских поселений), որը մեղմ ասած տարրինակ է քանի որ մշակվել է շուրջ քարրորդ դար առաջ բոլորովին այլ համակարգի պայմաններում... Հայտնի է նաև որ 2011 թվականին Ռուսաստանի Դաշնությունում կիրառության մեջ է մտել նույն նորմատիվային փաստաթղթի խմբագրված տարբերակը՝ “СНП 2.07.01-89*, Градостроительство. планировка и застройка городских и сельских поселений, Актуализированная редакция”, որն ենթադրաբար մոտ ապագայում կիրառություն կգտնի նաև Հայաստանում: Հայտնի է նաև, որ անկախության շրջանում մի քանի անգամ նախաձեռնվել է Ազգային քաղաքաշինական նորմատիվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ: Դրանց թվին է պատկանում դեռևս շրջանառության մեջ գտնվող “Քաղաքաշինության համակարգերի հուսալիության հիմնական դրույթներ ՀՀՇՆ II-5.01-98” [35. էջ 2] փաստաթուղթը, ինչպես նաև 2000-ականներ սկզբին մշակված քաղաքաշինական նորմաներին համարժեք նախագիծը (հեղինակ՝ Ա. Ալոյան), որն երբեք չի հաստատվել:

Ուսումնասիրական աշխատանքներում փորձ արվեց ուսումնասիրել միջազգային ու եվրոպական համարժեք փորձը, որի արդյունքում պարզվեց որ նման փաստաթուղթ առկա է դիտարկված մեկ տասնյակը գերազանցող երկրներից (ԱՄՆ, Գերմանիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Լատվիա, Լիտվա, Էստոնիա, Ռուսաստան, ԱՄԷ, ԵՄ և այլն) միայն Ռուսաստանում: Մնացյալ դեպքերում դրանք կամ ներառված են այլ տեխնիկական նորմատիվային փաստաթղթերում (Գերմանիա, Լատվիա, ԵՄ), կամ ինքնակարգավորվող ոլորտի շրջանակում դիտարկվում են դրա համար պատասխանատու մարմնի առաջարկությունների թվին և պարտադիր կիրառման ենթակա չեն պետական մակարդակով (ԱՄՆ, ԱՄԷ):

Ծրագրում ներագրավված մասնագետների հետ քննարկումների ընթացքում պարզվեց, որ քաղաքաշինությանը վերաբերող նորմատիվային փաստաթուղթ մշակելու վերաբերյալ համընդհանուր դիրքորոշում գոյություն առկա չէ: Սակայն ինչպես և տարբեր ուղղություններով մատնանշված առաջարկությունները, այս դեպքում ևս կա ցանկություն պահպանել ոլորտում առկա ավանդույթներն ու դրա հիման վրա զարգացնել օրենսդրությունն ու կառավարման համակարգը: Այդ իսկ պատճառով առաջարկվում է գործող նորմատիվային փաստաթղթի հիման վրա ստեղծել հայկական քաղաքաշինական (տեխնիկական) նորմատիվային փաստաթուղթ, որում հատկապես ուշադրություն պետք է դարձնել մեր օրերում ոլորտում առկա սուր խնդիրներին և համալրել դրանք ոլորտում նորույթ համարվող մասերը, ինչպիսիք են գոտիավորման նախագծերին վերաբերող դրույթները (օգտագործման ձևերի դասակարգումն ու անվանումներ, թույլատրելի օգտագործման համատեղումները և այլն),

շարժունակության հետ կապված արդի առաջնահերթությունները (սակավարշարժության հետ կապված դրույթներ, այլընտրանքային տրանսպորտային համակարգեր) և այլն:

Ոլորտի կառավարումը

Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական պետական քաղաքականությունն իրականացվում է կառավարության կողմից, հանձնիս պետական լիազոր մարմնի, տեղական մակարդակում այն իրականացվում է համայնքների ղեկավարների կողմից:

Պետական կառավարման համակարգում լիազոր մարմին հանդիսացող քաղաքաշինության նախարարությանը զուգահեռ մի շարք պետական կառավարման մարմիններն իրականացնում են քաղաքաշինական գործունեության բաղադրիչներ հանդիսացող գործառույթներ, օրինակ մշակույթի նախարարությունն իրականացնում է ժառանգության պահպանության հետ առնչվող տարածքների հետ կապված միջավայրերի պահպանությունը, բնապահպանության նախարարությունը իրականացնում նման գործառույթներ բնության հատուկ պահպանվող տարածքներում և այլն: Դրանք երկուսն էլ իրականացնում են թե՛ դրանց պահպանման, թե՛ զարգացման, թե՛ վերահսկման գործառույթները: Քաղաքաշինական գործունեության կարևորագույն կողմ է հանդիսանում նաև տարածքային կառավարման նախարարությունը, որն իրականացնում պետական կառավարում հանրապետության ողջ տարածքում:

Այս ինչ որ տեղ բարդ համակարգին Ծրագրի ուսումնասիրական աշխատանքների ընթացքում ավելացավ ևս մեկը՝ Հայաստանի Հանրապետություն կառավարությանն առընթեր ճարտարապետության պետական կոմիտեն, որի վերաբերյալ հաշվետվության վերջնական տարբերակի հրատարակման օրերին (7 հոկտեմբեր 2013թ.) դեռևս որևէ պաշտոնական փաստթուղթ չի հրապարակվել: Դեռևս 2011 թվականի ապրիլ ամսին “Անկախ” թերթում ուրբանլաբ ՀԿ-ի հիմնադիր Սարիատ Պետրոսյանի հրապարակած հոդվածում [36] հնչեցվել է քաղաքաշինության, մշակույթի և բնապահպանության նախարարություններից վերահսկողական գործառույթների տարանջատման և նոր մարմնում զետեղման գաղափարի մասին:

Ինչպես հայտնի է ներկա օրենսդրությամբ քաղաքաշինական գործունեությունը հիմնականում հանդիսանում է տեղական մակարդակի գործառույթ, սակայն դրանում առկա ռիսկերը երևան են գալիս գրեթե բոլոր ընդգրկման ուսումնասիրություններում: Դրանցից հատկապես ակնառու է մասնագիտական կարողություններ ու մարդկային ռեսուրսների պակասը [հավելված 1, էջ 21]: Ոլորտի զարգացման բոլոր տեսակի առաջարկությունները պետք է զուգորդվեն հատկապես տեղական մակարդակում մասնագիտական վերապատրաստումներին ու փոխադարձ կապերի զարգացմանը:

Ինչպես և նախկինում այս անգամ ևս կարևորվում է ոլորտում մասնագիտացված նախագծային միավորների՝ անհատների ու կազմակերպությունների լիցենզավորումը, որը հանդիսանում է օրենսդրական պահանջ և իրականացվում ոչ ամբողջական: Լիցենզավորման մասին օրենքում առկա է միայն մեկ լիցենզիա՝ քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության համար: Այսինքն կրպակի նախագծման և Երևան քաղաքի գլխավոր հատակագծի մշակման համար անհրաժեշտ է ստանալ նույն լիցենզիան: Չնայած այն փաստին, որ քաղաքաշինության նախարարությունը փորձում է այս մարտահրավերը լուծել համապատասխան փորձ չունեցող կազմակերպություններին պետական գնումների մասնակցությանը բացառելով, սակայն դա շարունակում է մնալ օրենսդրական բացերից մեկը: Ավելին, արդեն իսկ շրջանառության մեջ դրված ճարտապետական գործունեության ինքնակարգավորման գաղափարի շրջանակում առաջարկվում է քաղաքաշինական նախագծման մասնագետներին ևս ընձեռել նման հնարավորություն սահմանելու համար մասնագիտական հանրույթի ներքին կարգավորիչ գործիքները և դրա հավատարմագրման (լիցենզավորում, արտոնագրում, որակավորում և այլն) գործընթացը թողնել մասնագիտական հանրույթին:

Մասնակցային կառավարման գործուն մեխանիզմների մշակում

Քաղաքաշինության նպատակների ու առաջնահերթությունների փոփոխությունը հետ անկախության շրջանում կայանում է ոչ միայն պլանային տնտեսությունից անցմամբ ազատ շուկայականի այլև ժողովրդավարական կարգերի հաստատմամբ, որի առանցքային տարրերից մեկն է հանդիսանում որոշումների ընդունման գործընթացներում հանրության մասնակցության ապահովմանը հատկապես տեղական մակարդակով քաղաքացիների անմիջական միջավայրում նախատեսվող փոփոխությունների ծրագրային ու նախագծային էտապներում:

Չնայած այն փաստին, որ թե՛ քաղաքաշինության մասին օրենքի 4-րդ գլխով [16], թե՛ մի շարք այլ կարգերով ամրագրված են հանրության իրազեկման և հանրային քննարկման գործիքները, սակայն դրանք այդպես էլ չեն կայանում որպես ինստիտուտ կամ ավանդույթ: Ծրագրի աշխատակազմը նախատեսում է ապագայում այդ ուղղությամբ իրականացնել լրացուցիչ աշխատանքներ, լրացուցիչ ուսումնասիրելով ու զարգացնել դրա համար անհրաժեշտ գործողությունները, որի ակնհատես կլինեն մասնագիտական հանրույթի ու հանրային սեկտորի ներկայացուցիչները:

3. Քաղաքաշինական գործունեության իրավական կարգավորման համակարգի առանձնահատկությունները

Հեղինակ՝ Բորիս Քոչարյան

*Այնպես է ստացվել, որ իրերի այս բնական ընթացքի մեջ մենք
իրապես կորցրել ենք երկու սերնդի աշխատանք, որոնք տևական
ժամանակ զրկված էին համաշխարհային մարքի տարածքում գործելու
հնարավորությունից: Դրանով իսկ առավել անհրաժեշտ է զգալի
աշխատանք տանել այդ տարածքի հնարավորինս արագ յուրացման
համար:*

Վյաչեսլավ Գլազիլև [43]

Քաղաքաշինական պլանավորման արդի միտումները

“Քաղաքաշինության մասին” ՀՀ օրենքի (այսուհետ՝ ՀՀ Օրենք) [16] 17-րդ հոդվածը սահմանում է քաղաքաշինական փաստաթղթերի համակարգը, որն ըստ օրենքի բաղկացած է երկու խմբից՝

1. Քաղաքաշինական ծրագրային/ կամ տարածական պլանավորման/ փաստաթղթեր,
2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր:

Նշված հոդվածի առաջին մասի սահմանման համաձայն՝ “Քաղաքաշինական փաստաթղթերը քաղաքաշինական գործունեության պետական կարգավորման միջոց են...”:

ՀՀ Օրենքի 1-ին հոդվածի համաձայն կարգավորման առարկա են քաղաքաշինական գործունեության հետ կապված հարաբերությունները, իսկ կարգավորիչ իրավասություններով օժտված սուբյեկտները (իրավաստեղծ մարմինները) տարբեր մակարդակների պետական, տեղական ինքնակառավարման և այլ լիազոր մարմիններ են, հետևաբար քաղաքաշինական փաստաթղթերը ոչ թե պետական, այլ իրավական կարգավորման միջոց են:

Կարգավորման (քաղաքաշինական կարգավորման) անհրաժեշտությունն անխուսափելիորեն ծագում է, երբ այլևս հնարավոր չէ հրամայել, այլ հնարավոր և անհրաժեշտ է խրախուսել մասնավոր սուբյեկտներին, դրդելով նրանց ազատ գործունեության, երաշխավորելով նրանց տիրապետման և օգտագործման իրավունքը, միաժամանակ կիրառելով որոշակի սահմանափակումներ:

Սա ազատ տնտեսավարման համակարգի՝ շուկայական տնտեսության առանձնահատկությունն է, անշարժ գույքի շուկայի և նրա ազատ շրջանառության առկայությամբ:

Ռուսաստանի Ֆեդերացիայի տեսաբան մասնագետների կողմից շրջանառության մեջ է դրվել “градорегулирование” - քաղաքակարգավորում տերմինը, որն առանձնանում է “градостроительство” - քաղաքաշինություն հասկացողությունից և իր մեջ ներառում է ոլորտի կարգավորմանն ուղղված գործողությունների ամբողջական բովանդակությունը, որը բխում է գործող օրենսդրության ոչ միայն ամրագրված դրույթներից, այլև ոգուց ու տրամաբանությունից: Ավելին՝ համակարգն ամբողջացնելու նպատակով նկարագրվում են նաև կարգավորման գործողությունների սուբյեկտները, այդ գործողություններով պայմանավորված ընթացակարգերը (պրոցեդուրաները):

Ընդ որում, օրինակարգ ընթացակարգեր նկարագրելիս օգտագործվում է “правовое градорегулирование” - իրավական քաղաքակարգավորում հասկացությունը, ի հակադրություն այլ կարգավորիչ գործողությունների, որոնք “իրավական” համարվել չեն կարող, սակայն ձևականորեն չեն հակասում օրենսդրությանն այնքանով, որքանով դեռևս լիովին չեն համապատասխանեցվել նոր օրենքներին: Գիտնականին հատուկ անաչառությամբ նշում են երեք պատճառ, որոնցից առաջինը հենց ձևական (ֆորմալ) բնույթ ունի՝ օրենսդրության անկատարությունը և հակասականությունը: Երկրորդը՝ բովանդակային բնույթի է. անցումային շրջանի իրադրության երկակիության պատճառով հնարավոր է լինում ձևավորել երկու իրարամերժ համակարգեր, որոնցից առաջինը հիմնված է ՌԴ Քաղաքաշինական օրենսգրքի (Градостроительный Кодекс РФ, ГкРФ) [46] նորմերի վրա և ապահովում է անցումը քառսից դեպի կարգավորվածություն, տարածքների կազմակերպման համակարգային մոտեցումով: Մյուսը, որպես հակահամակարգ հիմնվում է անցողիկ, ժամանակավոր բնույթի փաստաթղթերի վրա, իբր թե լուծում է հրատապ հարցեր, բայց արդյունքում ունենում է քայքայիչ ազդեցություն, քաղաքների, այլ բնակավայրերի ու տարածքների ծրագրային կարգավորված զարգացման տեսակետից: Խոսքը վերաբերում է իշխանության մարմինների անհատական, “սիտուատիվ” իրավական ակտերին, որոնք ընդունվում են իբր “բոլորի համար լավ լինի” սկզբունքով, բայց իրականում խախտում են “բոլորին՝ հավասար հնարավորություններ” հիմնարար սկզբունքը:

Փաստորեն հակահամակարգը դուրս է մղում համակարգին, ձգտելով լիովին փոխարինել նրան և, ինչպես ամեն մի ժամանակավոր բան՝ հավերժանալ: Նրա պատճառած վնասները հաճախ չեն նկատվում, երբեմն նույնիսկ որպես փրկարար բարիք են ընդունվում: Եվ վերջապես երրորդ պատճառը՝ անվանում են տեխնոլոգիական: Իմաստը կայանում է ոլորտի մասշտաբայնության ու կարգավորման դժվարություններով պայմանավորված որոշակի իներցիոն գործելակերպի մեջ, որի հիմնական բնութագրիչը արհեստավարժ մասնագետների նվիրվածությունն է մեկընդմիջտ յուրացված “նախագծման մաքուր տեխնոլոգիային”, որը սակայն ձևավորվել է իրավական հարցերի իսպառ բացակայության և վարչա-հրամայական կառավարման պայմաններում: Արդեն ավելի քան 15 տարի նման նախագծման անհրաժեշտությունը վերացել է,

սակայն ադմինիստրատիվ համակարգի իներցիոն գործունեության արդյունքում շարունակում են “արտադրվել” փաստաթղթեր, որոնք իրավական կարգավորման առումով պիտանի չեն:

Ինչպես նշում է Ալեքսանդր Վիտկովսկին. *“Փոփոխությունների նկատմամբ իր դիմադրողականության աստիճանով (ռեզիստենտություն) քաղաքաշինական համակարգը զիջում է միայն կրթական համակարգին”* [51]:

Հատկանշական է, որ ՄԱԿ-ի ՀԱԲԻԹԱԹ (UN Habitat) ծրագրի փորձագետների վերլուծության համաձայն “նախագծման մաքուր տեխնոլոգիան” հատուկ է եղել նաև արևմտյան զարգացած երկրների քաղաքաշինությանը, իհարկե միանգամայն այլ հիմքերով և պատճառներով: Ժամանակակից քաղաքաշինության (ավելի ճիշտ՝ քաղաքների պլանավորման) սկիզբը համարվում է 19-րդ դարի երկրորդ կեսը և կապվում է արդյունաբերական հեղափոխության ու քաղաքների բուռն աճի հետ: Պլանավորման սկզբնական նպատակը հենց արդյունաբերության և ուրբանիզացիայի նեգատիվ հետևանքների չեզոքացումն էր: Պետության և հարուստ դասակարգի կողմից այն օգտագործվում էր անշարժ գույքի շուկայի կարգավորման և այդ միջոցով քաղաքների դեմոգրաֆիական խնդիրների լուծման նպատակով, անհնար դարձնելով չունևոր խավի համատեղ բնակեցումը հարուստ թաղամասերում կամ շենքերում:

Վերոհիշյալ փորձագետները այդ քաղաքաշինությունն անվանում են “մոդեռնիստական պլանավորում” և նշում են երեք հիմնական առանձնահատկություն.

- պլանավորումը դիտարկվում էր միայն որպես տարածքների հատակագծման և բնակավայրերի նախագծման տեխնիկական առաջադրանքի իրագործում, հետևաբար՝ չնայած որ նրա միջոցով լուծվում էին որոշակի սոցիալական, տնտեսական և քաղաքական հարցեր, համարվում էր, որ պլանավորումը չպետք է խորանա այդ հիմնախնդիրների մեջ,
- պլանավորումը ենթադրում էր քաղաքների գլխավոր հատակագծերի և կառուցապատման նախագծերի այնպիսի մանրամասն մշակում, ինչպիսի տեսք դրանք պիտի տեսականորեն ստանային իրականացումից հետո,
- պլանավորումը դիտարկվում էր որպես տեխնիկական առաջադրանքի կատարում՝ մարդու կեցության միջավայրի իդեալական պատկերացումների վրա հիմնված արժեհամակարգից բխող նորմերի ու կանոնների պահպանմամբ:

Տարբեր երկրներում առաջացան մոդեռնիստական քաղաքի տարբեր մոդելներ. Անգլիայում, ուտոպիական սոցիալիզմի գաղափարների ազդեցության տակ առաջացավ և առավել ճանաչում ձեռք բերեց Էբենեզեր Հովարդի “քաղաք-այգին”

Ֆրանսիայում առավել ճանաչվածը Կորբյուզիեյի “Ճաճանչափայլ քաղաքն” էր, իսկ ԱՄՆ-ում Ֆրենկ Լոյդ Ռայթի ցածր խտության ցածրահարկ կառուցապատումը՝ “ամեն ընտանիքին սեփական հողակտոր” սկզբունքով:

Առաջարկվող տարածական մոդելները տարբեր են, սակայն ընդհանուր սկզբունքը մեկն է՝ պլանավորումը ենթադրում է իրականացնել քաղաքի կառուցումը որպես մեկ միասնական ճարտարապետական ստեղծագործություն: Հետագայում Աթենքի խարտիայի միջոցով (1933 թվականին) հռչակվեցին ընդհանուր սկզբունքներ, որոնք մի շարք երկրներում կենսունակ են մինչև այժմ: Եվ ահա 1960-ականների սկզբին, երբ սովետական քաղաքաշինությունը թթափել էր ստալինյան հրահանգների ազդեցությունը և ակտիվորեն ներդնում էր Աթենքի խարտիայի սկզբունքները, Արևմուտքում ավելի ու ավելի համառորեն էին հնչում դրանց վերանայելու կոչերը: Մի շարք քաղաքաշինարար մասնագետներ (Ռեյներ Բենեմ, Էլիսոն և Պիտեր Սմիտսոններ, Ալոո վան Էյկ և այլք) հանդես եկան այդ սկզբունքների առարկայական քննադատությամբ, սակայն ամբողջ աշխարհում իշխող քաղաքաշինական գաղափարախոսությունը փոխվեց ոչ թե մասնագիտական հանրույթի քննադատական դիրքի պատճառով, այլ քաղաքացիական հզորացող շարժումների շնորհիվ, որոնք ակտիվորեն պայքարում էին իշխանությունների կողմից ծրագրված՝ քաղաքների վերակառուցման նախագծերի/ մասնավորապես արագընթաց մայրուղիների/ իրականացման դեմ: Այդ պայքարի սիմվոլներից մեկը ամերիկուհի Ջեյն Ջեկոբսն էր, որը հետագայում փաստացի դարձավ նոր քաղաքաշինական մտքի հիմնադիրը: Նրա ամենահայտնի գիրքը՝ “Ամերիկյան Մեծ քաղաքների կյանքն ու մահը” (The Death and Life of Great American Cities) լույս է տեսել 1961 թվականին: Ջեկոբսի և նրա հետևորդների գաղափարները հսկայական փոփոխությունների հիմք դարձան քաղաքաշինական որոշումների ընդունման նոր ընթացակարգերի համար: Դրանք տարբեր են և ձևավորվում են ըստ կոնկրետ վայրի և լուծման ենթակա հիմնախնդիրների, բայց բացառիկ սկզբունքը հասարակության ակտիվ ու անմիջական մասնակցությունն է: Օրինակներից մեկը ԱՄՆ-ում կիրառվող “համատեղ պլանավորում” (collaborative planning) գործառույթն է, որը երկու խոսքով նշանակում է քաղաքաշինական միջավայրի նախագծում մասնագետների ու համայնքի հանրության անմիջական մասնակցությամբ, ուղղակի երկխոսության ու փոխգործակցության միջոցով, բարձրացնելով շահագրգիռ կողմերին մինչև որոշում ընդունողների մակարդակ [44]: Գործնականում իրականացված օրինակները բազմաթիվ են՝ Պորտլենդ, Սիեթլ, Պիտսբուրգ, Բրոնքսը Նյու Յորքում և այլն): Գործառույթի իրականացման մեխանիզմները մանրամասն մշակված են, յուրաքանչյուր մասնակից հրաշալի պատկերացնում է իր և մյուսների իրավունքների ու հնարավորությունների սահմանները: Մասնագետները, որոնք ընդհանուր անվանումով պլանավորողներ (planners) են կոչվում, տիրապետում են մշակված տեխնոլոգիաների, որոնց միջոցով իրականացնում են հարցումները, կազմակերպում բազմափուլային քննարկումներ, ստանում փոխհամաձայնեցված լուծումներ և որոշումներ: Չափազանց հետաքրքիր է այս աշխատանքների կազմակերպման ամբողջ ընթացքը, դրանց նախաձեռնելու, համակարգելու, ժամկետներն ու փուլերը

սահմանելու, տեղեկատվության մշակման, տեսակավորման սկզբունքները մշակելու և այլ մանրամասներով հանդերձ: Աշխարհի զարգացած և զարգացող երկրներում առանց ժողովրդի, քաղաքացիների մասնակցու թյան որևէ քաղաքաշինական ծրագիր իրականացվել չի կարող: Շատ տարբեր են նաև քաղաքացիական հանրության մասնակցության ձևերն ու մեթոդները: “Համատեղ կամ մասնակցային պլանավորման” թեման բավական ծավալուն ու բազմաբովանդակ է, ուստի հասարակության համար ընկալելի դարձնելու և մեզանում այդ սկզբունքների ներդրումը իրականացնելու տեսակետից առավել արդյունավետ կարող է լինել նրա առանձին քննարկման առարկա դարձնելը:

Վերադառնալով մասնագիտական հանրույթին, նշենք, որ 1998թվականի մայիսին Աթենքում կայացած միջազգային կոնֆերանսում, Եվրոպայի քաղաքաշինարարների խորհրդի (European Council of Town Planners) կողմից ընդունվել է Աթենքի Նոր խարտիան: Միաժամանակ որոշվել է, որ այն պետք է վերանայվի յուրաքանչյուր չորս տարին մեկ: Եվ ահա 2003 թվականի նոյեմբերի 20-ին Լիսաբոնում ընդունվում է նույն կազմակերպության նոր փաստաթուղթը, որը կոչվում է “Աթենքի Նոր խարտիա 2003” [42]: Փաստաթուղթն այս անվանմամբ գործում է մինչ այժմ: 2012 թվականի հունիսին Ստամբուլի հանդիպման ընթացքում ընդունվեց մի փաստաթուղթ [37] հավելվածի տեսքով, որը մի շարք նոր դրույթներ է պարունակում, մասնավորապես՝ վերահաստատելով, որ “Աթենքի Նոր խարտիա 2003”-ը շարունակում է մնալ ակտուալ, նշվում է, որ այն վերաբերում է ոչ միայն Եվրամիության 27 երկրներին, այլ՝ Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր 47 երկրներին:

Աթենք 2003-ին միանգամայն համահունչ փաստաթուղթ է նաև “Եվրոպական քաղաքների II խարտիան - Նոր ուրբանիզմի հռչակագիրը” (European Urban Charter II Manifesto for a new urbanity), որն ընդունվել է Եվրախորհրդի Տեղական և ռեգիոնալ իշխանությունների 15-րդ կոնգրեսի կողմից 2008 թվականի մայիսի 29-ին [45]: Բայց սա արդեն ոչ թե մասնագետների այլ իշխանությունների պատրաստակամությունն է՝ նոր մարտահրավերների պայմաններում աշխատել նոր մեթոդներով, առաջադրել և լուծել նոր խնդիրներ: Ժամանակակից քաղաքի տեսլականները շարադրված են չորս ընդհանրացված խմբերում (21-79-րդ կետեր)։

1. Այնպիսի քաղաքներ են, որոնք ամենից առաջ գոյություն ունեն իրենց բնակիչների (քաղաքացիների) համար, որոնք կոչված են միաժամանակ լինել քաղաքացիներ:
2. Քաղաքներ, որոնք հիմնված են կայուն զարգացման վրա և գիտակցում են տեղական և գլոբալ շրջակա միջավայրի պաշտպանության կարևորությունը:
3. Քաղաքներ, որոնք ձգտում են զարգացնել իրենց ներքին համերաշխությունը և նույնը իրենց շրջապատի հետ:
4. Գիտելիքի և մշակույթի քաղաքներ, որոնք դեպի ապագան ընթանալու համար ձգտում են իմանալ իրենց անցյալը և հասկանալ իրենց ներկա բազմազանությունը:

Համաշխարհային միտումները բացահայտող և ուղղորդող փաստաթուղթ է հանդիսանում ՄԱԿ-ի 1996 թվականի Ստամբուլի դեկլարացիան “Բնակավայրերի վերաբերյալ կամ Հաբիթաթ Օրակարգ” (Habitat II) [41] , որը վերահաստատվեց և լրացվեց 2001 թվականին ՄԱԿ-ի հատուկ նստաշրջանում ընդունված “Դեկլարացիա քաղաքների և այլ բնակավայրերի վերաբերյալ նոր հազարամյակում” [52] փաստաթղթով:

ՄԱԿ-ի Բնակավայրերի ծրագրի (ՄԱԿ Հաբիթաթ) շրջանակներում հրապարակվել են մի շարք գլոբալ զեկույցներ և նպատակային ծրագրեր, որոնք արժեքավոր տեղեկություններ, վերլուծություններ և հանձնարարականներ են պարունակում. նշենք դրանցից մի քանիսը այն լեզվով, որով մեզ հասանելի են եղել՝

- “Планирование устойчивых городов: глобальный доклад о населенных пунктах 2009”
- “Города и изменение климата: Глобальный доклад о населенных пунктах 2011 года”
- “Международные руководящие принципы децентрализации и доступа к базовым данным 2009 года”
- Всемирный форум городов Рио-де-Жанейро 2010 “Право на город: ликвидация неравенства в городах”
- UN-Habitat Global Activities Report 2013
- State of the World’s Cities 2012/2013
- Urban Planning for City Leaders 2013

Այս փաստաթղթերում քաղաքաշինական մտքի և իրականացված ծրագրերի վերլուծությամբ բացահայտվում են և որպես հանձնարարականներ ներկայացվում նոր մոտեցումներ տարածքների, բնակավայրերի, քաղաքների նախագծման, պլանավորման ուղղությամբ:

Ժամանակի ընթացքում պլանավորման սահմանումը տարբեր երկրներում տարբեր նշանակություններ է ձեռք բերել: Այսօր գոյություն ունեցող սկզբունքները, ճանաչելով կատարված փոփոխությունները, անցում են ապահովում տիրապետման մտածողությունից դեպի կառավարման մտածողություն:

Քաղաքաշինական պլանավորումը այսօր դիտարկվում է որպես գիտակցված համատեղ գործունեություն, որն ուղղված է քաղաքների, նրանց առանձին շրջանների կամ ավելի ընդարձակ տարածքների ստեղծմանը կամ վերափոխմանը, դրանց իրականացման ընթացքում գերակայությունների ծրագրավորումով, որոնք վերաբերում են ներդրումային միջավայրի ստեղծմանը, բնապահպանական միջոցառումներին, ենթակառուցվածքների զարգացմանը և տարածքների օգտագործման կարգավորման սկզբունքներին: Այսօր բոլորն են ընդունում, որ պլանավորումը լոկ մասնագետների ու մասնագիտացված մարմինների գործը չէ, ուստի ավելի ճիշտ կլինի ընդունել “պլանավորման համակարգ” եզրը: Խոսքը իհարկե քաղաքաշինական, քաղաքային պլանավորման մասին է, որի առարկան տարածքն է, ինչպես

հաստատուն, այնպես էլ փոփոխական (զարգացման) վիճակում: Իսկ նպատակը ոչ թե կարճաժամկետ նպատակահարմար զարգացումների ծրագրումը և իրականացնումն է, այլ անցյալից եկող և դեպի ապագան միտված հեռանկարային զարգացման պլանավորումն է, մի քանի սերնդի հաշվարկով, բնական և մարդածին միջավայրերի, ենթակառուցվածքների պահպանման ու ռացիոնալ օգտագործման նոր եղանակների ստեղծմամբ, կյանքի որակի դրական աճի հեռանկարով: “Պլանավորում” տերմինը նաև կառավարում, կառավարման մեթոդ է ենթադրում, որը պայմանավորված է համատեղ որոշումների նախապատրաստման և ընդունման, ինչպես նաև դրանց իրականացման և իրականացման ընթացքի վերահսկման քաղաքականությամբ:

ՄԱԿ-ի Հաբիթաթ ծրագրի փորձագետներն, ուսումնասիրելով համաշխարհային պրակտիկայում տեղ գտած միտումները, ընդհանրացված և խմբավորված ներկայացրել են քաղաքային պլանավորման նոր մեթոդները.

1. Ռազմավարական/ստրատեգիական/ պլանավորում,
2. Տարածքային պլանավորման ինտեգրումը պետական թե հանրային սեկտորի ֆունկցիաների մեջ,
3. Հողօգտագործման կարգավորման ու կազմակերպման նոր մեթոդներ,
4. Հասարակության հետ համագործակցության զարգացում,
5. Միջազգային կազմակերպությունների աջակցությամբ հատուկ ծրագրերի իրականացում,
6. Պլանավորում և հատակագծում “ներքևից-վերև” սկզբունքով,
7. Տարածքների իրացման նոր ձևեր, ինչպես “կոմպակտ քաղաքային կառուցապատումը” և “նոր ուրբանիզմը”:

Սույն ուսումնասիրության շրջանակում մեր քննարկման առարկան առավելապես քաղաքաշինական պլանավորման իրավական կարգավորման հիմնախնդիրն է, ուստի վերը շարադրվածով սահմանափակենք պլանավորման ընդհանուր խնդիրների մասին տեղեկանքը և ստորև փորձենք վերլուծել ՀՀ օրենսդրությամբ ընձեռնված միջոցները, համեմատելով դրանք այլ օրենսդրական համակարգերի հետ:

ՀՀ Օրենքով սահմանված Համակարգի վերլուծությունը

“Տարածական պլանավորման փաստաթղթեր” տերմինը ՀՀ Օրենքի մեջ ներմուծվել է 2005թ. Հուլիսի 8-ին ընդունված “Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ օրենքով (ՀՕ-167-Ն):

Ըստ այդմ 17-րդ հոդվածի 1-ին մասը հետևյալ շարադրանքն ունի.

“1. Քաղաքաշինական փաստաթղթերը քաղաքաշինական գործունեության պետական կարգավորման միջոց են և բաժանվում են երկու խմբի՝ քաղաքաշինական ծրագրային (կամ տարածական պլանավորման)

փաստաթղթեր և ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր:”

Ավելի վաղ՝ 2002թ. ՀՕ-494-Ն ՀՀ Օրենքով ընդունված փոփոխությունների համաձայն այդ նույն հոդվածի 1-ին մասի շարադրանքը հետևյալն էր.

“Քաղաքաշինական փաստաթղթերը քաղաքաշինական գործունեության պետական կարգավորման միջոց են և բաժանվում են երեք խմբի՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր, գոտիավորման փաստաթղթեր և ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր:”

Ակնառու է, որ ՀՀ Օրենքի նախագիծը մշակողների մոտ որոշակի գաղափարական խմորումներ են եղել, սակայն դրանք լիարժեք որակական ելքի չեն հանգեցրել. պլանավորում բառը բացի այդ արտահայտության մասը լինելուց որևէ այլ իմաստային ձևով չի օգտագործվում Օրենքում: Թվարկվող փաստաթղթերը կոչվում են հայեցակարգ, ուրվագիծ, նախագիծ, հատակագիծ, բայց ոչ պլան կամ պլանավորում: Ուստի այդ եզրույթի (տերմին) ներմուծման միակ տրամաբանական բացատրությունը կարող է լինել “քաղաքաշինական ծրագրային” բառերը հասկանալի և համադրելի դարձնել օտարալեզու գրականությունից օգտվողների համար:

Փաստն այն է, որ Հայաստանի Հանրապետությունը միացել է “Տարածքային պլանավորման եվրոպական խարտիային” [5], սակայն բավարարվել է փաստաթղթի անվանումը ՀՀ Օրենքի տեքստում ընդգրկելով, իսկ բովանդակային առումով փաստորեն չի կատարել ստանձնած պարտավորությունները:

Եվրոպական երկրներում, ԱՄՆ-ում և մի շարք այլ երկրներում տարածքային պլանավորումը գործունեության առանձին տեսակ է, գոյություն ունեն մասնագիտական ինքնուրույն միավորումներ՝ պլանավորողների (planners) միություններ, ասոցիացիաներ: Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ տարածքային պլանավորումը (территориальное планирование) թվարկվում է քաղաքաշինական գործունեության տեսակների շարքում, ի թիվս քաղաքաշինական գոտևորման, տարածքների հատակագծման, ճարտարապետաշինարարական նախագծման, շինարարության, կապիտալ վերանորոգման, վերակառուցման և շենքերի ու շինությունների շահագործման [46, գլուխ 1, հոդված 1]: Իր բովանդակությամբ այս թվարկմանը կարծես թե համանման է ՀՀ Օրենքի 2-րդ հոդվածը, սակայն էական տարբերությամբ. մեր ՀՀ Օրենքը պարզապես սահմանում է “քաղաքաշինություն” առարկայի բովանդակությունը, իսկ ՌԴ օրենսգիրքը հստակ թվարկում է որպես քաղաքաշինական գործունեության որոշակի ինքնուրույնությամբ առանձնացող տեսակներ: Դրանցից յուրաքանչյուրի կազմն ու բովանդակությունը ներկայացվում են Օրենսգրքի առանձին գլուխներով:

“Գլուխ VI-1. Տարածքների գոտիավորումը” բաժինը ՀՀ Օրենքում որպես լրացում ավելացվել է 2002թ. դեկտեմբերի 11-ին ընդունված ՀՀ օրենքով (ՀՕ 494-Ն): Սա ՀՀ Օրենքի ընդունումից հետո առաջին կարևոր ու սկզբունքային

փոփոխությունն է, որը քաղաքաշինական նախագծման տեխնոլոգիական նորամուծություն լինելուց բացի, առավել կարևորվում է ոլորտի կարգավորման ազատական (շուկայական) մեթոդների ու մեխանիզմների ներդրման առումով: Հատկանշական է, որ միաժամանակ փորձ էր արվել գոտիավորման փաստաթղթերն առանձնացնել որպես քաղաքաշինական փաստաթղթերի ինքնուրույն խումբ: Օրենքի հետագա փոփոխություններով դրանք ընդգրկվել են պլանավորման փաստաթղթերի կազմում և կոչվում են “քաղաքաշինական գոտիավորման նախագծեր” (հոդված 17-ի 4-րդ մաս, կետ “դ”): Իհարկե նախորդ մոտեցումն ավելի առաջադեմ է, քանի որ տարածքների գոտիավորումը տարածքային պլանավորմանը հաջորդող փուլն է և իր առանձնահատկությունների շնորհիվ հստակ կարող է առանձնանալ որպես քաղաքաշինական նախագծման առանձին տեսակ: Առաջին իսկ ապացույցը հենց Օրենքում առանձին գլխի տեսքով կատարված լրացումն է :

Օրենքի հոդված 14-1-ի առաջին և երրորդ մասերում հանդիպում ենք ևս մի նոր արտահայտության **“իրավական ռեժիմ (հողամասի)”**: Ցավոք սրտի այս արտահայտությունն էլ, ինչպես “պլանավորումը”, չունի իր մեկնաբանությունն Օրենքի հետագա շարադրանքում: Մինչդեռ քաղաքաշինական օրենսդրության առաջնային նշանակությունը հենց իրավունքների սահմանումն է անշարժ գույքի սեփականատերերի և(կամ) գույք ձեռք բերելու կամ նորն ստեղծելու մտադրություն ունեցողների համար՝ հողամասերի թույլատրված օգտագործումների կամ անշարժ գույքի վերափոխումների պարամետրերի ընտրության մասով: Այսինքն անշարժ գույքի նկատմամբ երեք հիմնական իրավունքներից (տիրապետում, տնօրինում, օգտագործում) քաղաքաշինական օրենսդրությամբ կարգավորվում է միայն օգտագործման իրավունքը: Դա իրականացվում է, որպես կանոն, սահմանափակումներ (իրավական ռեժիմ) կիրառելու միջոցով: Քաղաքաշինական կարգավորումը ոչ այլ ինչ է քան սահմանափակումների կիրառում սեփականության բացարձակ իրավունքի նկատմամբ:

Պատմականորեն քաղաքաշինական գործունեության իրավունքի (որպես իրավունքի նոր տեսակի) ծագումը կապվում է 20-րդ դարասկզբին արդյունաբերության և ուրբանիզացիայի բուռն զարգացման հետ, երբ անշարժ գույքի օգտագործման և ստեղծման (շինարարության) ոլորտում գործունեություն ծավալող սուբյեկտները (անշարժ գույքի սեփականատերերը) կամավոր գիջում են իրենց իրավունքների մի մասը տեղական իշխանություններին, և վերջիններս հնարավորություն են ստանում իրավական ակտերի միջոցով հավասարակշռել բոլոր անհատների իրավունքները տվյալ ոլորտում: Պատահական չէ իրավունքների գիջելը տեղական իշխանություններին, քանի որ մանրամասն մշակվածությունն ու կոնկրետությունը հատուկ է տեղական (մունիցիպալ) մակարդակի իրավական ակտերին:

Այդ իրավական ակտերի համակարգման (սիստեմատիզացիա) արդյունքում ձևավորվում է քաղաքաշինական օրենսդրությունը: Իհարկե տարբեր

երկրներում տարբեր են դրանց ձևավորման և կիրառման սկզբունքները, սակայն առնվազն երկու սկզբունք կա, որ ընդհանուր է բոլորի համար: Առաջինը քաղաքաշինական գոտևորումն է, իսկ երկրորդը՝ գոտևորման փաստաթղթերով սահմանված նորմերի անխախտելիությունը՝ անկախ կառուցապատողի մտադրությունից կամ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կամ սեփականատիրոջ փոփոխությունից:

Չարգացած երկրներում գործում է քաղաքաշինական փաստաթղթերի երկաստիճան համակարգ.

1. Տարածական պլանավորման փաստաթղթերն են, որոնք ամրագրում են բնակավայրի զարգացման հեռանկարային, ռազմավարական ծրագրերն ու լուծումները, հողերի նպատակային նշանակությունները:
2. Քաղաքաշինական (իրավական) գոտևորման փաստաթղթերն են, առավել մանրամասն մշակված դրույթներով, որոնց միջոցով առանձնացվում են տարբեր տարածքային գոտիներ՝ տարբեր սահմանափակումներով ու թույլատրելի օգտագործումներով, ինչպես նաև տարբեր սահմանային չափերով ու կառուցապատման խտությունով:

Միտված լինելով լուծելու տարբեր բնույթի խնդիրներ, այս երկու փաստաթղթերն ունեն նաև տարբեր իրավական կարգավիճակ և իրավաբանական ուժ: Դա առաջին հերթին պայմանավորված է նրանով թե ում են նրանք հասցեագրված:

Տարածական պլանավորման փաստաթղթերը հասցեագրված են տեղական իշխանություններին: Նրանց ընդունումով մասնավոր անձանց՝ անշարժ գույքի սեփականատերերի նկատմամբ անմիջական իրավական հետևանքներ չեն ծագում:

Գոտևորման փաստաթղթերն ուղղված են բոլորին՝ և վարչական մարմիններին, և սեփականատերերին, և վարձակալներին: Նրանք բոլորը պարտավոր են կատարել այդ փաստաթղթերի պահանջները: Գոտևորման փաստաթղթերը (ռեգլամենտների հետ միասին) հաստատվում են տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի կողմից և ձեռք են բերում տեղական օրենքի ուժ: Այդ փաստաթղթերը սահմանում են նորմեր, որոնք անմիջական իրավական հետևանքներ են պարունակում քաղաքաշինական գործունեության մասնավոր սուբյեկտների համար:

Երկաստիճան փաստաթղթերի համակարգի համար օրենսդրորեն սահմանվում են դրանց բովանդակային փոխկապվածության և փոխազդեցության հարցերը: Սակայն համաձայնեցվածության աստիճանը տարբեր երկրների օրենսդրություններում խիստ տարբեր է և շատ լայն ընդգրկում ունի:

ՀՀ Օրենքով նույնպես ընդունվել է տեղական մակարդակի փաստաթղթերի երկաստիճան համակարգը: Տարածքային պլանավորման փաստաթուղթն այս մակարդակում բնակավայրի գլխավոր հատակագիծն է (հոդված 17, 4-րդ մաս կետ “գ”):

Հաջորդը՝ քաղաքաշինական գոտիավորման նախագծերը (հոդված 17, 4-րդ մաս կետ “դ”) “տեղական մակարդակ՝ տարածական պլանավորման մանրամասն պայմանները սահմանող գործադրական (օպերատիվ) բնույթի փաստաթուղթ”:

Սակայն երկու փաստաթղթերի կազմին ու բովանդակությանը ներկայացվող պահանջները ցույց են տալիս, որ նրանք շատ չեն հեռացել սովետական տիպի քաղաքաշինական փաստաթղթերից, որը մեզ արդեն հայտնի քաղաքաշինական տեխնոլոգիական նախագծման ձևն է:

Հասկանալու համար թե Հայաստանի քաղաքաշինական օրենսդրությունը ինչ փոփոխությունների կարիք ունի, որոնք անհրաժեշտ են շուկայական տնտեսությանը բնորոշ իրավական կարգավորման լիարժեք գործադրման համար, կարևոր ենք համարում դիտարկել այն Ռուսաստանի Դաշնության օրենսդրության հետ համեմատության մեջ: Իսկ ինչու՞ ոչ այլ երկրի: Որովհետև՝ նախ մեր երկրների իրավական մշակույթները ժառանգվել են նույն աղբյուրից, մենք մինչև հիմա էլ գտնվում ենք միևնույն նորմատիվային դաշտում, և երկրորդ՝ ուսումնասիրելով տարբեր երկրների օրենսդրությունները պարզել ենք, որ ՌԴ օրենքների վերջին տարիների փոփոխությունները կատարվել են հաշվի առնելով միջազգային փորձը, որը համադրվել է նախկին խորհրդային համակարգի մասնագիտական փորձի հետ, գիտակցաբար ընտրվել են օրենսդրական շեշտադրումներ, որոնք կարող են նպաստել գործնական կիրառությանը և ապահովել անցումը հին վարչահրամայական կարգավորման համակարգից դեպի ազատական, իրավական կարգավորման համակարգ:

1. ՀՀ Օրենքը քաղաքաշինական գործունեությունը ներկայացնում է որպես երեք մասերից բաղկացած գործողությունների համախումբ.

1. տարածքային պլանավորման փաստաթղթերի նախագծման բոլոր տեսակները,
2. ճարտարապետաշինարարական նախագծման և շինարարության բոլոր տեսակները,
3. շենքերի, շինությունների շահագործումը:

Այստեղ միանգամից նշենք որ 3-րդ կետի վերաբերյալ ՀՀ Օրենքը ոչ մի իրավական նորմ կամ որևէ դրույթ, նույնիսկ հղում չի պարունակում: Ավելին՝ 2002թ. փոփոխությամբ ուժը կորցրել է մայր օրենքի 2-րդ գլուխը՝ “Անշարժ գույքը քաղաքաշինության բնագավառում”, մինչդեռ քաղաքաշինության (անկախ նրանից թե ինչ տերմին կգործածվի՝ planning, zoning կամ այլ) իրավական կարգավորման ամբողջ ուղղվածությունը բոլոր երկրներում հողի և անշարժ գույքի օգտագործման ու զարգացման հարաբերություններն են:

ՌԴ օրենսգիրքը սահմանում է գործունեության խմբավորված տեսակներ որոնց վերաբերյալ իրականացվում է իրավական կարգավորում.

1. տարածքային պլանավորում,
2. քաղաքաշինական գոտևորում,

3. տարածքների հատակագծում,
4. ճարտարապետաշինարարական նախագծում,
5. շինարարության բոլոր տեսակները,
6. շենքերի, շինությունների շահագործում:

2. Քաղաքաշինական նախագծումով, ըստ ՌԴ օրենսգրքի, մշակվում են չորս տեսակի փաստաթղթեր.

1. տարածքային պլանավորման փաստաթղթեր (ՌԴ , ՌԴ սուբյեկտների և մունիցիպալ շրջանների տարածքային պլանավորման սխեմաները, բնակավայրերի և քաղաքային օկրուգների գլխավոր հատակագծերը),
2. տարածքային պլանավորման փաստաթղթերի կատարողական պլաններ (планы реализации),
3. հողօգտագործման և կառուցապատման կանոններ,
4. տարածքների հատակագծման փաստաթղթեր:

Տարածական պլանավորման փաստաթղթերի մասով ՀՀ Օրենքի դրույթները գրեթե նույնական են, բայց կատարողական պլաններ չեն նախատեսված: Կարծում եմ այդ հարցը կարելի է քննարկել հետագայում, ոչ այս փուլում, քանի որ այդ փաստաթղթերը տարբեր մակարդակներում տարբեր խնդիրներ են լուծում, առնչվում են ֆինանսա-տնտեսական հաշվարկների և բյուջետային պլանավորման հարցերին: Նշենք միայն, որ ՀՀ քաղաքաշինական օրենսդրության բարեփոխումների գաղափարական ուղղվածություններից մեկն էլ անպայման պետք է լինի տարածքների զարգացման քաղաքաշինական պլանավորումը փոխկապակցել իրական տնտեսական զարգացման և բյուջետային պլանավորմանը, ընդ որում՝ բոլոր մակարդակներում:

3. Քաղաքաշինական գոտևորում (градостроительное зонирование). այսպես է կոչվում ՌԴ քաղաքաշինական օրենսգրքի 4-րդ գլուխը: Իսկ փաստաթուղթը, որի միջոցով կատարվում է գոտևորումը կոչվում է “հողօգտագործման և կառուցապատման կանոններ” (правила землепользования и застройки): Կարծում ենք ամենևին զուգահեռություն չէ, որ ՀՀ Օրենքի հոդված 11-ի երկրորդ մասում տեղ է գտել նույն արտահայտությունը. “Տեղական ինքնակառավարման մարմինները կարող են ընդունել համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, որը, ելնելով տեղական առանձնահատկություններից, չհակասելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի և տարածքների գոտիավորման պահանջներին, սահմանում է քաղաքաշինական նպատակներով հողօգտագործման և կառուցապատման կանոնները տվյալ համայնքում” (ընդգծումը Բորս Քոչարյանի):

Այո, պատահական չէ նաև մյուս արտահայտության՝ քաղաքաշինական կանոնադրության հայտնվելն այդ տեքստում: Եվ ահա թե ինչու.

ՌԴ քաղաքաշինական օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով [46] սահմանվում է.

Հողօգտագործման և կառուցապատման կանոններն ընդգրկում են.

1. նշված կանոնների կիրառման և նրանցում փոփոխություններ մտցնելու կարգը,
2. քաղաքաշինական գոտևորման քարտեզը,
3. քաղաքաշինական ռեգլամենտները,
(թարգմանությունը՝ Բորիս Քոչարյանի, բնագիրը՝

Правила землепользования и застройки включают в себя:

- 1) *порядок их применения и внесения изменений в указанные правила;*
- 2) *карту градостроительного зонирования;*
- 3) *градостроительные регламенты.*)

36-րդ հոդվածով սահմանվում է “градостроительные регламенты” փաստաթղթի բովանդակությունը, իսկ նույն հոդվածի 1-ին մասով՝ նրա իրավական նշանակությունը. “Քաղաքաշինական ռեգլամենտով սահմանվում է իրավական ռեժիմ հողամասերի, ինչպես նաև այն ամենի համար, ինչ գտնվում է հողամասերի մակերևույթին և նրանց տակ և օգտագործվում է նրանց կառուցապատման և կապիտալ շինարարության օբյեկտների հետագա շահագործման ընթացքում (թարգմանությունը՝ Բորիս Քոչարյանի, բնագիրը՝ “Градостроительным регламентом определяется правовой режим земельных участков, равно как всего, что находится над и под поверхностью земельных участков и используется в процессе их застройки и последующей эксплуатации объектов капитального строительства”):

Այլ երկրների քաղաքաշինական օրենսդրության մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գոտևորման հիմնական առաքելությունը հենց հողամասերի օգտագործման իրավական ռեժիմի սահմանումն է ռեգլամենտների միջոցով:

Ռեգլամենտ բառի հայերեն համարժեքներն են՝ ժամակարգ, աշխատակարգ, կանոնակարգ: Կարծում եմ մեզ համար միանգամայն ընդունելի կարող է լինել “քաղաքաշինական կանոնակարգ” եզրույթը, նրա կազմի և բովանդակության հստակ սահմանման պայմանով: Նույն կերպ կարող է օգտագործվել նաև “տեխնիկական կանոնակարգ” (технический регламент) արտահայտությունը:

Միանգամայն ակնհայտ է, որ բնակավայրի քաղաքաշինական կանոնադրություն արտահայտությունը ՀՀ Օրենքում հայտնվել է ռեգլամենտ հասկացության թյուրըմբռնման հետևանքով, հավանաբար նպատակ ունենալով որևէ կերպ իրավական կարգավորման ինչ-որ ակտ ստեղծել: Մանավանդ, որ 1998թ. ընդունված մայր Օրենքում գոտևորման սկզբունքը ներդրված չէր, պարզապես քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի 10 տեսակների մեջ թվարկվում էր նաև “ե) տարածքների գոտևորման նախագծեր” կետը, ընդ որում “գ) բնակավայրերի գլխավոր հատակագծերի նախագծեր”-ից առաջ:

Բավական տարօրինակ է, որ ՀՀ Օրենքի սահմանմամբ կանոնադրության ընդունումը կարծես պարտադիր չէ՝ “կարող են ընդունել”, նրա ընդունման

մասին որևէ խոսք չկա ՀՀ Օրենքի 14-3 “Քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը համայնքի վարչական սահմաններում” հոդվածում, իսկ ահա ՀՀ կառավարության 2001թ.մայիսի 14-ի N 408 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետով՝ “քնակավայրի գոտևորման նախագիծը և քնակավայրի քաղաքաշինական կանոնադրությունը մշակվում են միաժամանակ”:

Ընդարձակ բացատրություններից խուսափելով ուղղակի նշենք, որ անհապաղ պետք է վերացնել քաղաքաշինական կանոնադրություն հասկացողությունը ՀՀ օրենսդրությունից, քանի որ ոչ մեկը այդ փաստաթղթի մշակման մեթոդական նկարագիրը տալ չի կարող, և իրավական կարգավորման ակտերի մեջ չի կարող լինել նման անորոշ կարգավիճակով փաստաթուղթ: Փոխարենը պետք է ներդնել քաղաքաշինական ռեգլամենտը (առայժմ կօգտագործենք այս բառը, չնայած հայերեն կանոնակարգ համարժեքն առաջարկել ենք): Եթե քնակավայրի քաղաքաշինական կանոնադրության իմաստը հասկանանք որպես քաղաքացուն (կառուցապատողին) ճիշտ գործողությունների ողողողելու մոտադրություն, ապա ավելի օգտակար կլինի մշակել և հրապարակել քնակավայրի տարածքում քաղաքաշինական գործունեություն իրականացնելու մեթոդական ուղեցույց, քայլերի ճշգրիտ հերթականության, տարբերակների ընտրության հնարավորությունների նկարագրմամբ, նշելով նաև իրավական հետևանքները սխալ գործողությունների դեպքում:

Ըստ Է.Կ. Տրուտնևի [45]՝ միայն մեկ քաղաքաշինական փաստաթուղթ կա, որի ընդունումով իրավական հետևանքներ են ծագում բոլոր սուբյեկտների, անձանց համար: Դա հողօգտագործման և կառուցապատման կանոններն են (մենք կարող ենք անվանել գոտևորման նախագիծ), որոնց միջոցով ամրագրվում են քաղաքաշինական ռեգլամենտներ, որոնք էլ իրենց հերթին հողերի և նրանց վրա տեղակայված օբյեկտների օգտագործման իրավական ռեժիմի հենքն են հանդիսանում: Այս հանգամանքով էլ որոշվում է հողօգտագործման և կառուցապատման կանոնների (մեր դեպքում՝ գոտևորման նախագծի) ավելի բարձր կարգավիճակը մյուս քաղաքաշինական փաստաթղթերի համեմատ, ներառյալ համայնքի գլխավոր հատակագիծը: Եվ սա ճշմարիտ է բոլոր երկրների համար, որտեղ գործում է քաղաքաշինական կարգավորման գոտևորման սկզբունքը, անկախ նրանից թե ինչ անվանում ունի այդ սկզբունքներն ամրագրող փաստաթուղթը՝ zoning (ԱՄՆ), detal plan (Շվեդիա), Local Planning Authorities (Մեծ Բրիտանիա), plan local d'urbanisme (Ֆրանսիա) և այլն:

4. ՌԴ օրենսդրությամբ գոտևորման փաստաթղթերը տարածական պլանավորման համակարգի ամենաստորին մասը չեն: Փաստաթուղթը, որը գտնվում է տարածական պլանավորման և ճարտարապետաշինարարական նախագծման սահմանում, կոչվում է **“տարածքի հատակագծում”** (планировка территории): Հայերեն թարգմանությունը ճշգրիտ արտահայտում է “план” բառի այն իմաստը, որը տվյալ դեպքում նկատի են ունեցել ՌԴ օրենսդիրները: Այս

փաստաթուղթն իրենից ներկայացնում է տարածքի հատակագծման նախագիծ, որի կազմում գծագրեր են և բացատրագիր, որն իր հերթին կազմված է գրաֆիկական և տեքստային մասերից: Կազմին ներկայացվող պահանջներն սպառիչ տրված են ՌԴ օրենսգրքի 42-րդ հոդվածում:

ՌԴ քաղաքաշինական օրենսգիրքը նորմեր չի պարունակում “կառուցապատման նախագծերի” (проект застройки) վերաբերյալ, որոնք նախկինում կիրառվում էին և որպես տարածքների հատակագծման, և որպես ճարտարապետաշինարարական նախագծման միջոց: Այդ բացը կարծես թե կոչված է լրացնել տարածքի հատակագծման նախագիծը:

ՀՀ Օրենքով նախատեսված գոտիավորման նախագիծը, ըստ ՀՀ կառավարության N 408 որոշմամբ հաստատված կարգի՝ “3. Գոտևորման նախագծերը կարող են մշակվել բնակավայրերի, դրանց առանձին հատվածների, ինչպես նաև բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող՝ քաղաքաշինական նպատակներով նախատեսված տարածքների համար՝ մանրամասն հատակագծման նախագծերի փոխարեն (ընդգծումը՝ Բորիս Քոչարյանի):” [24]: Պարբերության վերջին ընգծված արտահայտությունը հավաստում է, որ գոտևորման փաստաթղթերի մասին ՀՀ օրենսդրության պատկերացումները հիմնված են ոչ թե իրավական ռեժիմներ սահմանելու համար նրանց կարևորության գիտակցման, նախորդ և հետագա փաստաթղթերի հետ նրանց կապերը բացահայտելու և նրանց բովանդակությունն ու գործիքակազմն այդ գիտակցմամբ սահմանելու պատրաստակամության վրա, այլ ուղղակի շարունակում են սովետական տիպի “տեխնոլոգիական” նախագծման ավանդույթները, որոշակի “շուկայական” տարրերի ու նոր տերմինների ներմուծմամբ:

Գոտևորման նախագիծը որպես լիարժեք իրավական փաստաթուղթ ունենալու պարագայում ավելի տրամաբանական է թվում տարածքի հատակագծման նախագծի անհրաժեշտությունը: Կարծում ենք հնարավոր է նաև հանձնարարելի համարել նրա մշակման հնարավորությունը բնակավայրի ցանկացած հատվածի համար: Ամերիկյան պրակտիկայում օգտագործվում է Area plan կամ Area Master plan տեսակը, որը կարծում են՝ ընդհանուր առմամբ համադրելի է վերը նշված փաստաթղթի տեսակին:

Եվս մի հետաքրքիր առանձնահատկություն է նշվում ՌԴ օրենսգրքում.

“ՏԻ մարմնի ղեկավարի կողմից հաստատված տարածքի հատակագծման նախագծի հիման վրա ՏԻ ներկայացուցչական մարմինը իրավունք ունի փոփոխություններ կատարել գոտևորման նախագծում՝ ռեզլամենտով սահմանված՝ շինարարության և վերակառուցման սահմանային չափերի մասով” (թարգմանությունը՝ Բորիս Քոչարյանի) [46]:

5. Տարածքի հատակագծման նախագծի հիմնավորումներով, նրա կազմում (կամ որպես ինքնուրույն փաստաթուղթ) մշակվում է **տարածքի սահմանազատման նախագիծը** (проект межевания территории): Այն կարող են

պատվիրել նաև կառուցապատողը (developer), որով էլ այն արդեն դուրս է գալիս պլանավորման փաստաթղթերի այն առանձնահատկության շրջանակից, ըստ որի դրանց պատվիրատու կարող են լինել միայն պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինները:

6. Կա ևս մի փաստաթուղթ՝ հողամասերի քաղաքաշինական հատակագծերը (градостроительные планы земельных участков), որոնք պատրաստվում են տարածքի սահմանազատման նախագծի կազմում կամ որպես առանձին փաստաթուղթ (այս մասին ավելի մանրամասն՝ հաջորդիվ):

Տարածքի կամ հողամասի սահմանազատման ՌԴ օրենսգրքի սահմանած գործողությունն ընդհանուր գծերով համընկնում է ԱՄՆ պլանավորման համակարգում կիրառվող հողաբաժանման գործողությունների հետ՝

“Subdivision” (հողերի բաժանում, առանձնացում) և “plat” (քարտեզ կամ կադաստրային քարտեզ): Սա ավելի շուտ տեղագրական, գեոդեզիական աշխատանք կամ գործողություն է, սակայն պատրաստվող նյութը, նախագիծը կամ հատակագիծը կիրառական կարևոր նշանակությունից բացի ոչ պակաս կարևոր իրավական նշանակություն ունեն, որը ձեռք են բերում համապատասխան մարմնի հետ համաձայնեցումից, կամ նրա հաստատումից հետո: Նմանատիպ գործողություններ և համապատասխան փաստաթղթեր կան նախատեսված նաև ֆրանսիական (lotissement) և գերմանական (Grundstücksteilung, Flurkarte) պլանավորման համակարգերում: Հայաստանում գրեթե նույն փաստաթղթերը պատրաստվում են կադաստրային քարտեզագրման, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, ինչպես նաև նախագծային աշխատանքների նախապատրաստական կամ ելակետային նյութերի հավաքման շրջանակներում: Սակայն մեր կարծիքով օրենսդրորեն բավարար պատշաճությամբ ամրագրված չեն այդ փաստաթղթերի տերմինաբանական որոշակիություն ունեցող անվանումները, բովանդակությանն ու տեխնիկական ճշգրտությանը ներկայացվող պահանջները, իրավաբանական ազդեցության շրջանակը և այլն: Պակաս կարևոր չէ նաև, թե որ ոլորտի օրենսդրությամբ է կարգավորվում տվյալ խնդիրը: Այս դեպքում ակնհայտ է, որ ՀՀ քաղաքաշինական օրենսդրությունն այս հարցերը չի կարգավորում:

Հողամասերի քաղաքաշինական հատակագծերը (градостроительные планы земельных участков) հողվածով ավարտվում է ՌԴ քաղաքաշինական օրենսգրքի՝ տարածքային պլանավորմանը, քաղաքաշինական գոտևորմանը և տարածքների հատակագծմանը վերաբերող մասը (3-րդ, 4-րդ և 5-րդ գլուխները):

Հողամասը, ըստ Է.Կ.Տրուտնևի [45], կարելի է համեմատել այն սերմի հետ, որից ծլում է ծառը՝ քաղաքը: Մյուս կողմից, անտեսելով որոշ պայմանականություններ, կարելի է համարել, որ քաղաքը հողամասերի

կանոնակարգված կազմակերպման ու համադրման ավարտին հասցված ձևն է (форма упорядоченной организации совокупностей земельных участков):

ՀՀ օրենսդրության մեջ հողամասի սահմանումը տրված է ՀՀ հողային օրենսգրքի հոդված 5-ի 1-ին մասով՝

“Հողամասը հողի վերգեղնյա և ստորգեղնյա տարածքի մասն է, որն ունի ամրագրված սահմաններ, տարածք (մակերես, ծածկագիր), գտնվելու վայր, իրավական կարգավիճակ՝ օրենքներով նախատեսված սահմանափակումներով հանդերձ, որոնք գրանցված և արտացոլված են անշարժ գույքի պետական միասնական կադաստրում (ընդգծումը՝ Բորիս Քոչարյանի):”

Նույն կերպ, փոքր-ինչ ավելի պարզեցված սահմանում է տրված ՌԴ հողային օրենսգրքում՝ հոդված 11.1-ը. *“Հողամաս է հանդիսանում երկրի (հողի) մակերևույթի մասը, որի սահմանները որոշված են ֆեդերալ օրենքների համաձայն”* (թարգմանությունը՝ Բորիս Քոչարյանի): Այս սահմանումը հնարավոր է դարձրել, որպեսզի ՌԴ քաղաքաշինական օրենսգրքով տրվի հողամասի սահմանների որոշման իրավունքը (հոդված 44, 3-րդ մաս):

ՀՀ քաղաքաշինական օրենսդրության որևէ ակտով “հողամաս” հասկացությանը տերմինաբանական նշանակություն և գործառույթային առանձնահատկություն տրված չէ: Իսկ իրական կյանքում գործածվում են երկու տեսակի փաստաթղթեր.

1. ՀՀ կառավարությանն առընթեր կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2011թ. հոկտեմբերի 20-ի N 284-Ն հրամանը “Հողամասի, շինությունների հատակագծերի օրինակելի ձևերը և այդ հատակագծերին ներկայացվող պարտադիր պահանջները հաստատելու մասին”, որը փաստորեն տեխնիկական նորմատիվ է “քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեություն իրականացնող՝ համապատասխան որակավորում ունեցող անձանց” համար:

2. համայնքների քաղաքաշինության և ճարտարապետության վարչություններում գործողության մեջ է “հողահատկացման գլխավոր հատակագիծ” անվանումով փաստաթուղթը, որը ստորագրվում է բոլոր իրավասու պաշտոնյաների կողմից և վավերացվում համայնքի ղեկավարի կնիքով: Վերջին տարիներին այս փաստաթղթի կատարման տեխնիկական մասը համապատասխանեցվել է վերը նշված հրամանի նորմերին, սակայն քաղաքաշինական օրենսդրության մեջ իր արտացոլումը չունի: Այն իրականում նախկին համակարգից “ավանդաբար” փոխանցված ձև է, որի իմաստը եղել է “քաղվածք քաղաքի գլխավոր հատակագիծ” և ծառայել է հողահատկացման փաստաթղթերի ձևակերպման համար: Նրանում հողամասի սահմանները և չափերը ընտրվել են շինարարության իրականացմանը հարմար լինելու նկատառումով, հետագայում ենթակա լինելով ճշտման:

ԱՄՆ պլանավորման և գոտևորման համակարգում (Planning and Zoning System) գոյություն ունի “Site Plan” փաստաթուղթը, որը պարզապես տեղագրական քարտեզ (գծագիր) լինելուց զատ պարունակում է բազմաշերտ

ինֆորմացիա. (մեր դիտարկած օրինակում՝ ա) տեղագրական, բուսածածկույթի, մակերևութային և ստորերկրյա ջրերի, գոյություն ունեցող և նախատեսվող այլ պայմանների մասին; բ) շենքերի, ճանապարհների, բարեկարգման տարրերի և այլնի մասին; գ) ցանկացած այլ տեղեկություն, որը “կարող է խելամիտ անհրաժեշտություն ներկայացնել” փաստաթուղթը պլանավորման հանձնաժողովում (Planning Board) քննարկելու և հաստատելու համար):

“Site Plan”-ն իր բովանդակությամբ ինչ որ չափով կարող է համեմատվել ՌԴ “տարածքի հատակագծման նախագծի” հետ, քանի որ կարող է պարունակել մեկ կամ մի քանի հողամաս (Lot): Բայց նկարագրվող պահանջները և կառուցապատողի համար նրա ունեցած նշանակությունը համեմատելի են դարձնում նաև “հողամասի քաղաքաշինական հատակագծի” հետ:

Ինչևէ՝ գոտևորման (Zoning) փաստաթղթերից ճարտարապետաշինարական նախագծման փուլին անցնելու համար իրավական տեսակետից ճանաչելի փաստաթղթերով ապահովելու առումով ՌԴ օրենսդիրներն անկասկած օգտագործել են ամերիկյան փորձը: Արդյունքում ստացվել է հետևյալը՝

ՌԴ օրենսգրքից հանվել է ճարտարապետահատակագծային առաջադրանքը (архитектурно-планировочное задание, АПЗ) և նրա փոխարեն կառուցապատողին տրվում է հողամասի քաղաքաշինական հատակագիծը (градостроительный план земельного участка, ГПЗУ):

“АПЗ”-ը համարվում է անցումային շրջանի փաստաթուղթ, որը կիրառվել է քանի դեռ լիազոր մարմինները իրենց տրամադրության տակ չեն ունեցել լիարժեք ձևավորված պլանավորման, գոտևորման փաստաթղթեր և չէին տիրապետում քաղաքաշինական ռեգլամենտների միջոցով հաստատված իրավական ինֆորմացիային: Առանձին օբյեկտների նախագծման համար տրամադրելով АПЗ, լիազոր մարմինները փաստորեն իրականացնում էին նախագծերի հաստատման ֆունկցիան, որը հակասում է իրավական համակարգի սկզբունքներին: “ГПЗУ”-ն իրավական փաստաթուղթ է, լիովին զուրկ է “АПЗ”-ին հատուկ սուբյեկտիվ դրսևորումներից: Այն անբաժան է օբյեկտից նրա գոյության ամբողջ ընթացքում, ի հակադրություն “АПЗ”-ի, որը ժամանակավոր, մեկանգամյա փաստաթուղթ է, սահմանում է ոչ թե իրավական ռեժիմ, այլ նախագծման ու շինարարության տեխնիկական պարամետրերի շրջանակը:

Հայաստանի Հանրապետությունում ճարտարապետաշինարարական նախագծման կապը պլանավորման փաստաթղթերի հետ, առկա հիմնախնդիրներն ու բարեփոխման հնարավորությունները մեր կարծիքով առանձին ուսումնասիրության կարիք ունեն: Դա կարող էր հնարավորություն ստեղծել քաղաքաշինական նախագծման բոլոր փուլերի տրամաբանական ամբողջացման և իրավական փոխկապակցման համար:

Վերը շարադրվածից ելնելով ՀՀ Օրենքում 2011թ. հունիսի 23-ի ՀՕ-226-Ն օրենքով կատարված լրացումը՝ “Հոդված 22.1. Ճարտարապետահատակագծային առաջադրանքը” պետք է գնահատել որպես

լուրջ հետքայլ քաղաքաշինության իրավական կարգավորման համակարգի կայացման ճանապարհից:

7. Քաղաքաշինական գործունեության և **հողային հարաբերությունների** կարգավորման իրավական մեխանիզմները ամենասերտ առնչություններն ու փոխկապվածությունն ունեն, որով և կարևորվում է համապատասխան օրենսդրական համակարգերի կապն ու փոխազդեցությունը:

Հայաստանի Հանրապետության.

- Հողային օրենսգիրքն ընդունվել է 2001թ. մայիսի 2-ին,
- “Քաղաքաշինության մասին” ՀՀ օրենքն ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին:

Ռուսաստանի Դաշնության.

- Հողային օրենսգիրքը (Земельный кодекс Российской Федерации, ЗК РФ) այժմ գործող խմբագրությամբ ընդունվել է 2001թ. հոկտեմբերի 25-ին [49],
- Քաղաքաշինական օրենսգիրքը (Градостроительный кодекс Российской Федерации, ГрК РФ) առաջին անգամ ընդունվել է 1998թ. մայիսին, այժմ գործող տարբերակն ընդունվել է 2004թ. դեկտեմբերին [46]:

Ինչպես տեսնում ենք ՀՀ հողային օրենսգիրքն ավելի բարձր իրավաբանական ուժ ունի և, “Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի հոդված 9-ի 6-րդ մասի համաձայն հողային հարաբերությունների կարգավորման գերակայությամբ է օժտված՝ *“Օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին”* [18]:

Հողերն ըստ նպատակային և գործառական նշանակության դասակարգելու բազմաստիճան սկզբունքը գրեթե անիմաստ է դարձնում քաղաքաշինական (իրավական) գոտևորման սկզբունքի կիրառումը, քանի որ ՀՀ հողային օրենսգրքի հոդված 7-ի 6-րդ մասն ասում է.

“Հողերի իրավական ռեժիմը սահմանվում է օրենքների և նորմատիվ իրավական ակտերի հիման վրա:

Հողատերերի և գործառնական նշանակության հողերի դասակարգումն իրականացնում են լիազորված պետական մարմինները [17]”:

Նույնիսկ հողամասերի թույլատրված օգտագործումը սահմանում է հողային օրենսգիրքը (հոդված 8):

2002թ. ՀՀ Օրենքում գոտևորման սկզբունքի ներդրումից հետո ՀՀ հողային օրենսգրքում այդ առումով որևէ փոփոխություն չի կատարվել, տարածքների գոտևորման նախագծերի մշակման պայմանները հարմարեցվել են նրանում ամրագրված կոշտ սկզբունքներին:

Իսկ ամենաանհասկանալին ու անտրամաբանականն է ՀՀ հողային օրենսգրքի սահմանումով բնակավայրի ներսում բոլոր 9 կատեգորիաների նպատակային նշանակության (այս տերմինն ի դեպ՝ ՌԴ 1991թ. Հողային օրենսգրքի “Ժառանգությունն” է) հողամասերի առկայությունը: Տեսականորեն

անհնար չէ պատկերացնել, որ համայնքի գրագետ և նպատակային աշխատանքի դեպքում մեկ կամ մի քանի իրավական ակտերով դրանք ամբողջովին հնարավոր է տեղափոխել բնակավայրերի հողերի կատեգորիա: Ինչևէ՝ քաղաքաշինական իրավական գոտևորման համակարգի կայացման համար անհրաժեշտ է վերանայել ՀՀ հողային օրենսգրքի համապատասխան հոդվածները ՀՀ հողային ֆոնդի դասակարգման վերաբերյալ:

ՌԴ երկու օրենսգրքերով այդ խնդիրը լուծվում է հետևյալ կերպ.

1. երկու օրենսգրքերն (ՅԿ ՔՓ և ԴԿ ՔՓ) ունեն հավասար իրավաբանական ուժ,
2. բնակավայրի սահմանից ներս գոյություն ունի միայն մեկ կատեգորիա՝ բնակավայրերի հողեր.
3. 1998թ. ՌԴ Քաղաքաշինական օրենսգիրքում ամրագրված գոտևորման սկզբունքի համաձայն 2001թ. ՌԴ հողային օրենսգիրքում նույնպես մտցվել է տարածքների գոտևորման սկզբունք, որը վերաբերում է միայն բնակավայրերի հողերին՝ ՌԴ հողային օրենսգիրքի 85-րդ հոդվածը սահմանում է բնակավայրի հողերի կազմը և տարածքային գոտիները քաղաքաշինական գոտևորումը ամբողջությամբ և մանրամասնորեն կարգավորվում է քաղաքաշինական օրենսգրքով [46, հոդված 85, կետ “դ”]՝ Քաղաքաշինական օրենսգիրքի հոդվածներով, առանձին գլխով, որի մեջ սահմանվում են տարածքային գոտիների առանձնացման կարգը, նրանց տեսակները և կազմը, քաղաքաշինական ռեգլամենտները, թույլատրված օգտագործումները

Քաղաքաշինական գործունեության սուբյեկտները և կառավարումը

Քաղաքաշինության իրավական կարգավորման առարկան մասնավոր անձանց շահերի և հանրային շահերի միջև մշտապես ծագող հարաբերություններն են: Կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է հենց մասնավոր շահերի գոյությամբ և գիտակցված է մասնավոր անձանց կողմից, որոնց շահերի հանրագումարն էլ հանդես է գալիս որպես հանրային շահ: Այն ապահովելու միակ եղանակը մասնավոր անձի էգոիստական ցանկությունների ու բացարձակ իրավունքի նկատմամբ սահմանափակումներ կիրառելն է: Եվ այստեղ հանդես է գալիս այն սուբյեկտը, որը սահմանափակումներ կիրառելու իրավասությամբ է օժտված: Դա մասնավորների հանրության կողմից ձևավորված օրինական իշխանությունն է:

Այսինքն կա կարգավորող սուբյեկտ, որն իշխանության մարմիններն են և կա կարգավորվող սուբյեկտ, որը մասնավոր անձն է (կամ ցանկացած անձ, որը քաղաքաշինական գոտևորություն է իրականացնում):

Ժամանակակից քաղաքաշինական օրենսդրությունների, այդ թվում՝ ՀՀ Օրենքի համաձայն.

Կարգավորող սուբյեկտներն են՝

1. իշխանության մարմինները,
2. հասարակությունը, կամ քաղաքացիները, որոնք հանրային լսումների միջոցով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ներգործում են իշխանությունների կողմից ընդունվող որոշումների վրա:

Կարգավորվող սուբյեկտներն են.

1. մասնավոր անձինք, որոնք իրականացնում են քաղաքաշինական գործունեություն և ենթակա են կարգավորման իշխանության մարմինների և հասարակության (այլ մասնավոր անձանց) կողմից
2. իշխանության մարմինները և իշխանության այլ մարմինների և հասարակության(այլ մասնավոր անձանց) կողմից:

Այսինքն կարգավորման իրավական համակարգը շրջանաձև փակ համակարգ է, որտեղ կարգավորող սուբյեկտները փոխադարձաբար ենթակա են կարգավորման կարգավորվող սուբյեկտների կողմից:

Բնականաբար իրավական համակարգում կարգավորումը կարող է իրականացվել բացառապես օրինակարգ (լեգիտիմ) միջոցներով: Դրանք նախորդ բաժնում նկարագրված միջոցներն են, կամ՝ քաղաքաշինական կարգավորման գործիքները:

Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրները, այդ թվում Հայաստանի Հանրապետությունը, արևմտյան փորձագետների կողմից կոչվում են անցումային տնտեսություն ունեցող երկրներ: Այդ երկրների քաղաքաշինության բնագավառը նույնպես որոշակի “անցումային առանձնահատկություններ” ունի: Նախ՝ ավելի ճիշտ կլինի ասել քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառ, քանի որ այդպես են կոչվում մարզային և համայնքային իշխանության այդ հարցերով զբաղվող վարչական ստորաբաժանումները, դրանց առաջատար աշխատակիցները մասնագիտական պատրաստվածությամբ ճարտարապետներ են, ղեկավարներն էլ կոչվում են գլխավոր ճարտարապետներ: Եվ պատահական չէ, որ շատ-շատերը կարծում են, թե նրանց գործունեության հիմնական իմաստը քաղաքի կառուցապատումը կազմակերպելն է: Այդ գործունեությունը կարող ենք պայմանականորեն կոչել ուլտրա կառավարում, քանի որ ոլորտի դանդաղ վերափոխման պատճառով նախկին վարչա-հրամայական համակարգի գործելակերպի իներցիոն շարունակությունն է, դեռևս զգալիորեն հեռու է իրավական կարգավորման հիմնարար սկզբունքներից, ավելին՝ դրա կայացման հիմնական խոչընդոտներից մեկն է: Այսինքն սա հակահամակարգ է, որն օգտվելով հանգամանքից, երբ լիարժեք կայացած չեն տեղական ինքնակառավարումը, համայնքները ձեռք չեն բերել ինքնուրույն գործելու ուժ և հմտություններ, հանրության ինքնակազմակերպման գիտակցությունն ու ակտիվությունը ցածր է, իշխանությունն ու հանրությունը համագործակցության փոխարեն հակամարտության վիճակում են, ձեռք է բերել իր համար որոշակի արտոնություններ. փակ է պահում տեղեկատվությունը, որն ըստ օրենքի պետք է հրապարակվեր, ձևական կոլեգիալ քննարկումներ կազմակերպելով, ըստ

էության ընդունում է “փակ” որոշումներ և պարտադրում դրանք հանրությանը, բոլորի համար հավասար գործելու հնարավորություն ստեղծելու փոխարեն հանդես է գալիս որպես մասնավոր ներդրողի բիզնես-գործընկեր կամ անմիջականորեն և ուղղակի կերպով (“մեկ աղբյուրից գնումներ կատարելու ձևով”) մատուցում առևտրային ծառայություն:

Այստեղ անկասկած առկա է անցումային շրջանի այն հիմնական վտանգը, երբ սովորական են ընկալվում գործընթացների կազմակերպման կեղծ իրավական մեթոդներն ու միջոցները, կորսվում է “անցումայնության”, ժամանակավորության զգացողությունը, և իրադրությունը օրինաչափ, անփոփոխ ու հաստատուն է թվում:

Ցավոք սրտի ևս երկու կարևոր հանգամանքներ կան ի լրացում վերը նշվածների.

1. քաղաքաշինական գործունեության տեղեկատվական համակարգը, որն անկյունաքարային նշանակություն ունի ոլորտի իրավական կարգավորման համար, Հայաստանում գոյություն չունի: ՀՀ Օրենքով, ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ և ՀՀ նորմատիվային փաստաթղթով նախատեսված քաղաքաշինական կադաստրը 15 տարիների ընթացքում չձևավորվեց: Գործնականում դրա ստեղծման հիմքերն էլ դրված չեն:

2. Հայաստանը երևի միակ երկիրն է աշխարհում, այդ թվում ԱՊՀ երկրների մեջ, որը չունի գոնե “Ճարտարապետական գործունեությունը” կարգավորող օրենք:

Գրեթե բոլոր երկրներում ճարտարապետների (շատ տեղերում նաև՝ պլանավորողների) գործունեությունը իրականացվում և կարգավորվում է ինքնակազմակերպման սկզբունքով, համապատասխան ինստիտուցիոնալ իրավասություններով օժտված մասնագիտական միավորումների միջոցով: Հայաստանում նմանատիպ օրենսդրական նախաձեռնությունը դեմ է առել չհասկացվածության աներևույթ պատի:

Մասնագիտական նշված միավորումներն անգնահատելի դերակատարում ունեն բնագավառի բոլոր գործառույթների մշտական կատարելագործման և զարգացման գործում, լինի դա ստեղծագործական, գիտամեթոդական, մշտական ուսուցման, իրավական կարգավորման, մասնագիտական էթիկայի և այլ հարցերում:

Եզրակացություն և առաջարկություններ

“Քաղաքաշինության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքը, նրա կիրարկմանն ուղղված՝ ՀՀ կառավարության մի շարք որոշումներ և այլ իրավական ակտեր 2000-ական թվականների սկզբին ստեղծել էին օրենսդրական մի ամբողջական փաթեթ, որը նոր տնտեսավարման պայմաններում քաղաքաշինական գործունեության կազմակերպման և կարգավորման հիմքերը դրեց, ներառելով իր ժամանակի առաջադեմ

սկզբունքները, բայց կրելով նաև նախորդ շրջանի որոշ առանձնահատկություններ, որոնք օբյեկտիվորեն կամ մարտավարական նկատառումներով հասկանալի և կիրառելի էին անցումային շրջանում:

Այժմ, հողի և անշարժ գույքի շուկայի կայացմանը զուգահեռ, առաջ են եկել մի շարք հակասություններ վերը նշված օրենսդրական ակտերում, նկատելիորեն նվազել է նրանց կիրառելիությունը հատկապես հետևյալ առումներով.

3. հողամասերի և անշարժ գույքի օգտագործման սահմանափակումների (իրավական ռեժիմների) սահմանման և կիրառման,
4. պլանավորման և գոտևորման փաստաթղթերի իրավաբանական նշանակության և կարգավիճակի հստակ տարբերակման,
5. նշված փաստաթղթերի գործնական կիրառելիության (առկա ռեսուրսներին համապատասխանության և այլ առարկայական խնդիրներին լուծումներ տալու նպատակով ավելի ճկուն սկզբունքներ և միջոցների օգտագործում):

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հասարակության ձևական մասնակցության վիճակից անցում կատարել իրական մասնակցային պլանավորման սկզբունքներին և գործելակերպին, առանց որի այսօր զարգացած և զարգացող երկրներում անհնար է որևէ արդյունքի հասնել, և հնարավորինս շտապ ձերբազատվել անցման շրջանի “թողությունից”՝ վարչական սուբյեկտիվ, կամ ավելի ճիշտ՝ ընտրողական, խտրական միջամտություններից, կամ ինչպես մասնագետներն են ասում՝ “կետային ճարտարապետությունից”:

Վերը նշվածից հետևում է, որ օրենսդրական բարեփոխումները հրատապ անհրաժեշտություն են, քանի որ նույնիսկ դրանց հաջող իրականացման դեպքում գործնական արդյունքներն անմիջապես տեսանելի լինել չեն կարող. կպահանջվի որոշ ժամանակ:

Բարեփոխումները նախաձեռնելու համար կան բավարար նախադրյալներ, այդ թվում՝ իրավական ակտերի տեսքով: Զեկույցի այս մասի նախաբանում բերել ենք միջազգային մի շարք փաստաթղթեր որոնք առնվազն մեթոդական հիմք կարող են ծառայել: Բայց կան նաև փաստաթղթեր, որոնք ստորագրվել են ՀՀ կողմից և որոշակի պարտավորություններ են ստանձնվել: Դրանք բերված են Զեկույցի հավելվածում: Ես կառանձնացնեմ մեկը՝ “ԱՊՀ քաղաքաշինական խարտիան”, որը Հայաստանն ստորագրել է 1999թ. և վավերացրել՝ 2001թ.-ին:

Մեջ բերենք մի հատված.

“ նկատի առնելով,

“XXI դարի օրակարգ” գործողությունների ծրագիրը (բնակելի վայրերի հաստատված զարգացման մասով), որն ընդունվել է շրջակա միջավայրի և զարգացման հարցերով ՄԱԿ-ի Միջազգային կոնֆերանսի ժամանակ (Ռիո դե Ժանեյրո, 1992 թվական),

“Բնակավայրերի հարցերով Ստամբուլի Հռչակագիրը” և “ՀԱԲԻԹԱԹ-ի օրակարգը”, որոնք ընդունվել են բնակավայրերի հաստատված զարգացման հարցերով ՀԱԲԻԹԱԹ II ՄԱԿ-ի Միջազգային կոնֆերանսի ժամանակ (Ստամբուլ, 1996 թվական),

“Բնակավայրերի հարցերով ՄԱԿ-ի Հանձնաժողովի հանդիպումների նյութերը” (Նայրորի, 1997 թվական) և ԵՏԿ բնակավայրերի հարցերով Կոմիտեի նստաշրջանների նյութերը (Ժնև, 1996 և 1997թթ.),

“ՄԱԿ-ի ԵՏԿ բնակավայրերի հաստատված զարգացման պլանավորման ղեկավար սկզբունքները” (1996 թվական) և ԵՏԿ բնակավայրերի հարցերով Կոմիտեի դիրսարկումը “ԵՏԿ տարածաշրջանում բնակավայրերի հաստատված զարգացման համար” (1996 թվական)...”(թարգմանությունը Բորիս Քոչարյանի):

Սա վկայում է, որ Հայաստանի Հանրապետությունը մտադիր է գործել միջազգային գործընթացների համատեքստում:

Իսկ ի՞նչ ինքնուրույն քայլեր են ձեռնարկվել (նույն Հաբիթիթի փորձագետներն, օրինակ, ԱՊՀ երկրների կառավարությունների գլխավոր թերությունը համարում են անհետևողականությունը): ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշմամբ ընդունվել է մի փաստաթուղթ, որը կոչվում է “Կայուն զարգացման ծրագիր”:

Ծրագրի 12.6 գլուխը վերնագրված է՝ “Քաղաքաշինություն”, որի 12.6.2 մասը կոչվում է “Տարածական զարգացում և պլանավորում”: Ուղղակի մեջբերենք երկու հատված.

“781.Ներդաշնակ և անվտանգ կենսամիջավայրերի ստեղծման հենքը ձևավորվում է քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի միջոցով՝ դրանց մշակման գործընթացին հասարակության լայնածավալ մասնակցությամբ: Ուստի ազգային, տարածքային և տեղական մակարդակների պլանավորման փաստաթղթերի լիարժեք բազայի ձևավորումը, գնահատվելով որպես կառուցապարման ծրագրերի և կառավարման գործառույթների իրականացման հիմք և երաշխավոր, անհրաժեշտ է պետության կայուն զարգացման առավելագույնս հիմնավորված , կոնկրետ պայմանների հետ փոխկապակցված և առկա նախադրյալներից բխող, հետևաբար նաև՝ արդյունավետ և շարունակական ընթացքն ապահովելու համար:”

“784.Տարածական զարգացման/պլանավորման նպատակների իրականացման հիմնական միջոցառումների թվին են դասվում՝

- I. ՀՀ տարածքային կազմակերպման գլխավոր նախագծի մշակումը
- II. ՀՀ տարածքային հատակագծման նախագծերի մշակումը
- III. ՀՀ համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի/գոյրիավորման նախագծերի մշակումը
- IV. Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը
- V. ՀՀ միջպետական/հանրապետական նշանակության պետական ավտոմոբիլային ճանապարհների հարող տարածքների կառուցապարման սխեմաների մշակումը
- VI. Հայաստանի բնակավայրերի պարմական կառուցապարման, ճարտարապետական/բնական ժառանգության քաղաքաշինական վերականգնողական ծրագրերի մշակումը

- VII. ՄԱԿ-ի “Հաբիթաթ” գործընթացի սկզբունքների, Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի իրագործումը Հայաստանում
- VIII. Պետական քաղաքաշինական կադաստրի ներդրման ծրագրի իրականացումը
- IX. Քաղաքաշինության բնագավառի օրենսդրական բազայի կատարելագործումը, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի բարեփոխումը: (ընդգծումները Բորիս Քոչարյանի)՝

Ծրագրի ևս մի բաժնի մասի կուլեբինք նշել: Այն կոչվում է. “5.8.Երկրի ինստիտուցիոնալ արդիականացումը”: Նրա բովանդակությունը մեզ հետաքրքրում է մասնագիտական ինքնակարգավորման հանրային ինստիտուցիոնալ կառույցի ստեղծման տեսակետից: Ահա օրինակ այս կետը.

“279. ...Ելնելով ԵՄ-10-ի փորձից՝ երկրի ինստիտուցիոնալ արդիականացման հիմնական բաղկացուցիչներն են հանդիսանալու.

- I. ՀՀ օրենսդրության մոտարկումը ԵՄ համապատասխան օրենսդրությանը
- II. Ինստիտուցիոնալ մոտարկումը՝ պետական, հանրային և այլ ինստիտուցիոնների ձևավորումը կամ վերափոխումը ԵՄ ստանդարտներին և պահանջներին համապատասխան, որոնք անհրաժեշտ են ԵՄ համապատասխան օրենսդրությանը արդյունավետ մոտարկման համար
- III. Ինստիտուցիոնալ կարողությունների ավելացումը, որը նպատակ ունի մոտեցնել նոր ստեղծված կամ վերափոխված ինստիտուցիոնների կարողությունները՝ ԵՄ երկրների համապատասխան ինստիտուցիոնների կարողություններին:՝

Վերը շարադրվածը մեզ հիմք է տալիս պնդելու, որ քաղաքաշինության բնագավառը կարգավորող օրենսդրության մեջ սկզբունքային փոփոխություններ պետք է կատարել:

Այդ նպատակով առաջարկում ենք կազմել եռամյա պետական ծրագիր ՀՀ հողային օրենսգրքում, “Քաղաքաշինության մասին” ՀՀ օրենքում և այլ օրենսդրական ակտերում համալիր փոփոխություններ կատարելու, նոր սկզբունքների համաձայն օրինակելի տարածական փաստաթղթեր մշակելու և զուգահեռաբար ներդնելու համար, այն հաշվով, որ ծրագրի ավարտին ունենանք լիարժեք աշխատող և նախնական փորձարկում անցած քաղաքաշինության իրավական կարգավորման համակարգ:

Համալիր օրենսդրական փոփոխությունները պետք է լուծեն հետևյալ սկզբունքային խնդիրները.

1. ռացիոնալ և կիրառելի դասակարգմամբ վերանայել ՀՀ հողերի կազմը: Բնակավայրի սահմաններից ներս բոլոր հողերը դասակարգել մեկ կատեգորիայով: Բնակավայրի հողերի կազմը բաղկացած է տարածքային գոտիներից, որոնց թվարկումը ավարտուն չէ:

2. ապահովել որպեսզի քաղաքաշինական պլանավորման և գոտևորման փաստաթղթերի մշակման բոլոր փուլերի գործողությունները կարգավորվեն քաղաքաշինական օրենսդրությամբ, առանց այլ օրենքների վրա հղումների: Դրա համար անհրաժեշտ կլինի ընդունել Քաղաքաշինության կամ Տարածքային պլանավորման օրենսգիրք:
3. օրենսդրորեն լիարժեք բացահայտել գոտևորման(ի դեպ՝այս եզրը համարում եմ նախընտրելի քան գոտ-ի-ավորումը) նախագծի իրավական կարգավիճակը, որպես հողամասերի և անշարժ գույքի օգտագործման կանոնները և իրավական ռեժիմները սահմանող հիմնական փաստաթուղթ
4. օրենսդրորեն սահմանել և կիրառել քաղաքաշինական ռեգլամենտը՝ կանոնակարգը (որի առանձին տարրերի համար կարող է օգտագործվել նաև կարգորոշիչներ բառը) գոտևորման նախագծերի կազմում:
5. գյուղական բնակավայրերի քաղաքաշինական կարգավորումը պարզեցնել ոչ թե փաստաթղթերի կազմի մեխանիկական պարզեցման այլ պլանավորման ռեգիոնալ և միկրոռեգիոնալ մակարդակներում նրանց ռազմավարական զարգացման հարցերի ընդգրկմամբ տեղական խնդիրները պարզեցնելու միջոցով: Հնարավոր է պարտադիր համարել միայն գոտևորման նախագիծը:
6. օրենսդրորեն սահմանել տարածքի տարրական միավորի՝ հողամասի քաղաքաշինական-իրավական կարգավիճակը և նրա փաստաթղթավորման կարգը:
7. Օրենքից հանել “բնակավայրի քաղաքաշինական կանոնադրություն” և “ճարտարապետահատակագծային առաջադրանք” հասկացությունները: Վերջինիս փոխարեն կիրառելի դարձնել “հողամասի քաղաքաշինական հատակագիծը”:
8. գույքագրել բոլոր օրենսդրական կամ այլ իրավական ակտերում օգտագործված քաղաքաշինական օբյեկտ, սուբյեկտ, գործառույթ բնորոշող տերմինները և հստակ ու միարժեք սահմանել նրանց նշանակությունը և կարգավիճակը, օրինակ՝
 - հերթապահ հատակագիծը իրավական թե՞ աշխատանքային փաստաթուղթ է,
 - ի՞նչ է իրենից ներկայացնում կադաստրի վարման կարգի մեջ նշված՝ քաղաքաշինական անձնագիրը,
 - ՀՀՇՆ I-2.03-03 “ՀՀ պետական քաղաքաշինական կադաստր” նորմերի մեջ իր բացատրությամբ հանդերձ տեղ է գտել “քաղաքաշինական կանոնակարգեր” տերմինը, որն անկասկած մեր կողմից նոր առաջարկվող ռեգլամենտն է, բայց որ՝ օրենքից է այն վերցված,
 - և այլն:

4. Տարածական պլանավորման ծրագրային փաստաթղթերի համակարգ Հեղինակ՝ Սարգիս Թովմայան

Ընդհանուր դրույթներ

Քաղաքաշինության բնագավառին առնչվող նախագծային փաստաթղթերը, ըստ “Քաղաքաշինության մասին” ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի [16], քաղաքաշինական գործունեության պետական կարգավորման միջոց են և բաժանվում են երկու խմբի՝ քաղաքաշինական ծրագրային (կամ տարածական պլանավորման) փաստաթղթեր և ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր:

Տարածական պլանավորման փաստաթղթերը մշակվում են Հայաստանի Հանրապետության տարածքի, վարչատարածքային միավորների (մարզերի, համայնքների), դրանց խմբերի կամ առանձին հատվածների համար:

Տարածական պլանավորման փաստաթղթեր են՝

1. Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման և տարածքային կազմակերպման գլխավոր նախագծերը (ազգային մակարդակ)։
2. Հայաստանի Հանրապետության մարզերի (տարածքային/ռեգիոնալ մակարդակ), ինչպես նաև մեկից ավելի համայնքների տարածքներ ընդգրկող (միկրոռեգիոնալ մակարդակ) տարածքային հատակագծման նախագծերը։
3. Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերը (տեղական մակարդակ՝ տարածական պլանավորման ռազմավարական փաստաթուղթ)։
4. քաղաքաշինական գոտիավորման նախագծերը (տեղական մակարդակ՝ տարածական պլանավորման մանրամասն պայմանները սահմանող գործադրական (օպերատիվ) բնույթի փաստաթուղթ)։

Թվարկված փաստաթղթերը հանդիսանում են պարտադիր մշակման ենթակա: Դրանցից զատ, սահմանված են նաև ըստ անհրաժեշտության մշակվող տարածական պլանավորման փաստաթղթեր՝ բնակավայրերի պատմամշակութային հիմնավորումների, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության գոտիների, բնության հատուկ պահպանվող տարածքների նախագծերը, լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն, գործառական այլ համակարգերի տարածքային կազմակերպման, ինչպես նաև արտադրական կարողությունների, ինժեներական, տրանսպորտային, կոմունալ և սոցիալական ենթակառուցվածքների տեղաբաշխման նախագծերը՝ հանրապետության և առանձին վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար:

Հաստատված տարածական պլանավորման փաստաթղթերի դրույթները պետք է հաշվի առնվեն ճյուղային, պետական նպատակային և համայնքային սոցիալ-տնտեսական և տարածքային զարգացման ծրագրերի մշակման ընթացքում՝ տվյալ ծրագրին առնչվող մասով:

Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր են կառուցապատման նախագծերը, ինչպես նաև քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով գործառական տարածքների հատակագծման և բարեկարգման նախագծերը, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների կառուցման, դրանց վերակառուցման (ներառյալ՝ քանդման), վերականգնման, ուժեղացման, արդիականացման նախագծերը, ինչպես նաև ինժեներական և տրանսպորտային ենթակառուցվածքների և դրանց մասերի նախագծերը:

Քաղաքաշինական փաստաթղթերի համակարգի կառուցվածքը ներկայացված է 1-ին գծապատկերում:

Համակարգը կանոնակարգող ակտերն ու դրանց հիմնախնդիրները


Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման գլխավոր նախագիծ

Նկատի ունենալով, որ նշված փաստաթղթի հիմնական նպատակը համընդհանուր քաղաքաշինական զարգացման, տարաբնակեցման համակարգի կատարելագործման ռազմավարական ուղղությունների ընտրությունն է՝ փոխկապակցված անվտանգ ու առողջ կենսամիջավայրի ստեղծման, բնակավայրերի կայուն զարգացման, բնական և պատմամշակութային ժառանգության պահպանման հետ, այն մշակվում է հանրապետության ամբողջ տարածքի համար և դրանում ամրագրված հիմնադրույթները ոչ միայն մեկնակետային են տարածական պլանավորման այլ փաստաթղթերի մշակման ժամանակ, այլև պետք է պարտադիր կարգով հաշվի առնվեն պետական, ճյուղային ու համայնքային նշանակության այլ ծրագրերում՝ քաղաքաշինության բնագավառին առնչվող խնդիրների մասով:

Համաձայն կառավարության սահմանած կարգի [29], տարաբնակեցման նախագծային փաստաթղթերը մշակվում են երկու փուլով՝ տարաբնակեցման գլխավոր ուրվագիծ և նախագիծ: Ընդ որում, ուրվագծով նախանշվում են ոլորտի պետական քաղաքականության հայեցակարգային հիմնադրույթները, տարաբնակեցման կատարելագործման հիմնական ուղղությունները՝ համատեղված ռեսուրսային պոտենցիալի գնահատման, բնապահպանական իրավիճակի, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների բարելավման միջոցառումների հետ, իսկ նախագծով (երկրորդ փուլ) հստակեցվում են ուրվագծի հայեցակարգային դրույթները:

Ինչ վերաբերում է նախագծի կազմին ու բովանդակությանը ներկայացվող նորմատիվային պահանջներին, դրանց շրջանակը պայմանավորվել է ստորև ներկայացվող հանգամանքով:

Գծապատկեր 1. Քաղաքաշինական փաստաթղթերի համակարգը



Հանրապետության տարաբնակեցման գլխավոր նախագծի մշակման աշխատանքներն սկսվել էին դեռևս 1990-ական թվականների կեսերից, երբ դեռևս ընդունված չէր “Քաղաքաշինության մասին” ՀՀ օրենքը, ավելին, դեռևս սահմանված չէին նաև այդ փաստաթղթի մշակման ու հաստատման կարգը, դրա կազմին ու բովանդակությանը ներկայացվող պահանջները: Վերջիններս կառավարության կողմից ընդունվեցին 2002 թվականի դեկտեմբերին, իսկ տարաբնակեցման գլխավոր նախագիծը հաստատվեց 2003 թվականի գարնանը, ինչից կարելի է եզրակացնել, որ նախագծի մշակման՝ գործնականում ամբողջ ժամանակահատվածում աշխատանքներն իրականացվել են բացառապես նախագծողների պրոֆեսիոնալիզմի և նախորդ՝ խորհրդային համակարգում կուտակած փորձի հիման վրա:

Եվ ամենևին պատահական չէր այն հանգամանքը, որ կառավարության կողմից հաստատված կարգում տարաբնակեցման գլխավոր նախագծի կազմին ու բովանդակությանը ներկայացվող գործնականում բոլոր պահանջների հիմքում ընկած են արդեն փաստորեն մշակված նախագծի հիմնադրույթները:

Թերևս, իրադարձությունների նման ընթացքով է պայմանավորված այն հանգամանքը, որ ինչպես նախագծին ներկայացվող պահանջներում, այնպես էլ դրա հաստատման կարգում առկա են որոշ բացեր և հիմնախնդիրներ, մասնավորապես՝

- ի տարբերություն տարածքային հատակագծման նախագծերին ու համայնքների գլխավոր հատակագծերին առնչվող կարգերի, բացակայում են նախագծման առաջադրանքին և ելակետային տվյալներին ներկայացվող պահանջները,
- ՀՀ վարչատարածքային բաժանումը, բնակավայրերն ըստ կարգավիճակի դասակարգումը հանրապետության հատակագծային կառուցվածքի առկա իրավիճակի գծագրում պատկերելը (կարգի 13-րդ կետի “բ” ենթակետ) որևէ խնդրի չի ծառայեցվում, եթե նախագծում դրանց փոփոխության վերաբերյալ առաջարկություններ չեն ամրագրվելու,
- հստակեցված չեն հանրապետության տարածքի քաղաքաշինական վերլուծության ու համալիր գնահատականի գծագրում և տեքստային մասում ռեսուրսային պոտենցիալի (հողային, ջրային, ռեկրեացիոն, հումքային) որակական ու քանակական ցուցանիշների և դրանց վերլուծության շրջանակները (կարգի 13-րդ կետի “գ” ենթակետ), ինչի արդյունքում դրանք կարող են դիտարկվել որպես տնտեսության այլ ոլորտների կարգավորման առարկա,
- սահմանված չեն նախագծի իրականացման մոնիտորինգային ուղղությունների գնահատման չափորոշիչները, ուստի պարզ չէ, թե տարածական ու ժամանակային կտրվածքով դրանք փոփոխությունների ենթարկվելու (ճկունության) ինչպիսի թույլատրելի մակարդակ պետք է ունենան (կարգի 26-րդ կետ),
- վերջապես, ինչ իմաստ կարող է ունենալ ՀՀ վարչատարածքային

բաժանումը, բնակավայրերի դասակարգումն ըստ կարգավիճակի, ռեսուրսային առկա պոտենցիալի որակական ու քանակական ցուցանիշներն ու դրանց գնահատականը, իրավիճակի ուսումնասիրությունները, վերլուծությունները և այլն կառավարության կողմից հաստատելը, եթե դրանց մի մասը ենթակա է օրենքով կարգավորման, մի մասը զուտ նկարագրական բնույթի է, որոշ մասերն էլ այլ բնագավառների կարգավորման խնդիրներ են:

Ըստ այդմ, ՀՀ կառավարության որոշման մեջ և համապատասխան կարգում անհրաժեշտ է կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1. սահմանել նախագծման առաջադրանքի կազմն ու բովանդակությունը,
2. սահմանել նախագծի մշակման համար անհրաժեշտ ելակետային տվյալների կազմը,
3. “բեռնաթափել” նախագծի կազմին և բովանդակային լուծումներին ներկայացվող պահանջները, մասնավորապես, այլ նորմատիվ ակտերով կամ փաստաթղթերով կարգավորվող խնդիրների մասով,
4. հստակեցնել և նեղացնել համալիր գնահատականի ենթակա ոլորտների շրջանակը,
5. սահմանել նախագծի իրականացման մոնիտորինգային ուղղությունների գնահատման չափորոշիչները,
6. նախագծի ամբողջական կազմից կառավարության հաստատմանը ներկայացնել միայն այն հիմնադրույթները և միջոցառումների ժամանակացույցը, որոնք ենթակա են ֆինանսավորման պետական բյուջեից կամ դրան հավասարեցված այլ աղբյուրներից:

Տարածքային հատակագծման ուրվագծեր և նախագծեր

Համաձայն սահմանված կարգի [30], տարածքային հատակագծման ուրվագծերն ու նախագծերը մշակվում են տարաբնակեցման գլխավոր նախագծով սահմանված դրույթներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության մարզերի կամ դրանց հատվածների (համայնքների խմբերի) համար և սահմանում են դրանց կայուն զարգացմանը, բնական և պատմամշակութային ժառանգության պահպանմանը և բարենպաստ միջավայրի ձևավորմանը միտված այլ գործոնների հիմնական դրույթները:

Եթե տարածքային հատակագծման նախագիծը մշակվում է երկու փուլով, ապա առաջին փուլում (ուրվագծի մշակում) այլընտրանքային տարբերակների համեմատական վերլուծության արդյունքում հիմնավորվում են տարածքային զարգացման հիմնական սկզբունքներն ու գերակա ուղղությունների հայեցակարգային մոտեցումները, իսկ երկրորդ փուլով (նախագծով) սահմանվում են դրանց իրականացման առաջնահերթ միջոցառումները՝ տարաբնակեցման գլխավոր նախագծի դրույթները մանրամասնելու միջոցով:

Հիշատակված սկզբունքային մոտեցումները կարելի է միարժեքորեն

հիմնավորված համարել, մինչդեռ նախագծի կազմին և բովանդակությանն առնչվող մի շարք պահանջներ (կարգի 2-րդ հավելված) գործնականում չեն կարող ներառվել փաստաթղթում՝ հաշվի առնելով նախագծի գրաֆիկական մասի համար սահմանված մասշտաբները (1:25'000 - 1:100'000), մասնավորապես,

- արտադրական օբյեկտների սանիտարապաշտպանական գոտիների ընտրությունը, ջրամատակարարման ակունքների պահպանական գոտիները, (հավելվածի 3-րդ կետի է. և ը. ենթակետեր),
- օգտակար հանածոների տեղադիրքի սահմանները, բնական և տեխնածին պրոցեսների պաշտպանական կառույցները, պատմամշակութային հուշարձանների պահպանական գոտիները (հավելվածի 4-րդ կետի գ., ե., ը. ենթակետեր),
- տարածքի գոտևորումն ըստ գործառնական նշանակության (հավելվածի 6-րդ կետ),

ըստ էության, հանդիսանում են տարածական պլանավորման փաստաթղթերի հաջորդ աստիճանով՝ համայնքների գլխավոր հատակագծերով կարգավորման ենթակա խնդիրներ և արդեն իսկ ներառված են նաև այդ փաստաթղթերի կազմին ու բովանդակությանը ներկայացվող պահանջներում:

Նշված պարագայում ևս ակնհայտ է խնդրո առարկա փաստաթղթերին ներկայացվող պահանջների շրջանակի անհարկի ընդլայնումը, ինչն իր հերթին (ինչպես տարաբնակեցման գլխավոր նախագծի պարագայում) կարող է շոշափելիորեն նվազեցնել փաստաթղթի ճկունության ու գործնական կիրարկելիության աստիճանը:

Ասվածից հետևում է, որ անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել խնդրի կարգավորմանը միտված հիմնական նորմատիվ ակտում՝ վերացնելով նշված բացերը, ինչպես նաև նախագծի ամբողջական կազմից կառավարության հաստատմանը ներկայացնել միայն այն հիմնադրույթները և միջոցառումների ժամանակացույցը, որոնք ենթակա են ֆինանսավորման պետական բյուջեից կամ դրան հավասարեցված այլ աղբյուրներից:

Միաժամանակ այստեղ ևս անհրաժեշտություն կա սահմանել նախագծի իրականացման մոնիթորինգային ուղղություններն ու դրանց գնահատման չափորոշիչները:

Համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծեր

Տարածական պլանավորման փաստաթղթերի համակարգի երրորդ հորիզոնականում համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծն է, ինչը, համաձայն “Քաղաքաշինության մասին” ՀՀ օրենքի 14.3 հոդվածի, համայնքի տարածական զարգացման հիմնադրույթներն ամրագրող ռազմավարական բնույթի փաստաթուղթ է, որը **հիմնական (բազային) գոյիավորմամբ** սահմանում է համայնքի վարչական սահմաններում քաղաքաշինական գործունեության օբյեկտ հանդիսացող հողերի նպատակային և գործառնական

նշանակությունը, դրանց օգտագործման ռեժիմներն ու պարտադիր պահանջները, ինչպես նաև տարածքների կառուցապատման առաջնահերթ, միջնաժամկետ և հեռանկարային փուլերը՝ քաղաքաշինական նպատակներով հողօգտագործումը կանոնակարգելու և արդյունավետ կառավարումն ապահովելու նպատակով:

Գլխավոր հատակագծով տարածքային ռեսուրսների ու կառուցապատման փաստացի վիճակի վերլուծության և համալիր գնահատականի հիման վրա՝

- սահմանվում են համայնքի տարածական զարգացման հիմնական ուղղությունները,
- ամրագրվում են սոցիալական, մշակութային, արդյունաբերական, գյուղատնտեսական, բնապահպանական, ինժեներական և տրանսպորտային ենթակառուցվածքների տեղադրման ու զարգացման փոխկապակցված լուծումները,
- ամրագրվում են նաև բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանության, քաղաքացիական պաշտպանության, լանդշաֆտների, բնական ու պատմամշակութային ժառանգության պահպանման միջոցառումները՝ պաշարների կայուն և արդյունավետ օգտագործման պայմանների պարտադիր ապահովմամբ:

Նույն հոդվածով սահմանված է նաև, որ մինչև 15 հազար բնակիչ ունեցող համայնքների համար գլխավոր հատակագծի կազմում մշակվում է գոտիավորման նախագիծը՝ բնակավայրի և կառուցապատված կամ կառուցապատման ենթակա այլ տարածքների համար, իսկ 15 հազարից ավելի բնակիչ ունեցող համայնքների դեպքում այդ նախագիծը մշակվում է գլխավոր հատակագծով առաջնահերթ կառուցապատման ենթակա տարածքների համար:

Հոդվածի 4-րդ կետի համաձայն, գյուղական համայնքների համար մշակվում է պարզեցված գլխավոր հատակագիծ, որը սահմանում է նվազագույն պարտադիր պահանջներ՝ մարդկանց անվտանգության, շենքերի, շինությունների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների կայունության ու երաշխավորված շահագործման, քաղաքաշինական և բնական միջավայրերի միջև ներդաշնակության ապահովման համար:

Հարկ է նշել, որ օրենքի 14.3 հոդվածում 2011 թ. շոշափելի փոփոխություններ և լրացումներ են կատարվել և ինչպես վերը նշված, այնպես էլ հետայսու ներկայացվող դրույթները հիմնականում այդ փոփոխությունների արդյունք են: Բացի այդ, ՀՀ կառավարությունը նշված փոփոխությունների և լրացումների հիման վրա 2011 թ. վերջին հաստատեց գլխավոր հատակագծերի մշակմանն առնչվող նոր կարգ՝ ուժը կորցրած ճանաչելով նախկին կարգերը [28]:

Գլխավոր հատակագծերի մշակմանն աջակցելու և գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՀ վարչապետի որոշումով 2009 թ. արդեն իսկ կազմավորված է միջգերատեսչական հանձնաժողով՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի նախագահությամբ և պետական

կառավարման շահագրգիռ մարմինների ներգրավմամբ: Միջգերատեսչական հանձնաժողովն ապահովում է քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի կազմում ներառված դրույթների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջներին՝ պետական կառավարման շահագրգիռ մարմինների կանոնադրական նպատակներին և խնդիրներին առնչվող մասով:

Հանձնաժողովի կազմում ընդգրկվել են ՀՀ տրանսպորտի և կապի, ՀՀ տարածքային կառավարման, ՀՀ բնապահպանության, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ մշակույթի, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության, “ՀՀ ճարտարապետների միավորում” և “ՀՀ շինարարների միություն” հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները և Երևանի գլխավոր ճարտարապետը:

Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են նաև համապատասխան մարզպետը և համայնքի ղեկավարը:

ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվել են հատակագծի մշակման առաջադրանքին, ելակետային նյութերին, նախագծի կազմին ու բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջները, ինչպես նաև տեխնիկատնտեսական ցուցանիշների կազմը:

Ընդհանուր առմամբ, նշված կարգով ամրագրված դրույթները համապարփակ ու հիմնավոր են, սակայն այստեղ ևս առկա են որոշ նրբերանգներ՝ կապված հատկապես նախագծի գրաֆիկական կազմին ներկայացվող պահանջների հետ, որոնցից հարկ է առանձնացնել հետևյալ դրույթները.

1. “Տարածքի փաստացի օգտագործման հատակագծին”, “Տարածքի համալիր գնահատման հատակագծին”, “Տրանսպորտի ուղևագծին”, “Ինժեներական ենթակառուցվածքների և տարածքի ինժեներական նախապատրաստման ուղևագծին” և “Լանդշաֆտի կազմակերպման ուղևագծին” առնչվող կետերում (կարգի 4-րդ հավելված, 1-5-րդ կետեր) առկա են անհարկի կրկնություններ, մասնավորապես՝
 - տրանսպորտային կապերին և ճանապարհային ցանցին առնչվող պահանջը կրկնվում է 1 և 3 կետերում,
 - ինժեներական ենթակառուցվածքներին առնչվող պահանջը՝ 1 և 4 կետերում,
 - բնության հատուկ պահպանվող տարածքներին և լանդշաֆտի պահպանության միջոցառումներին առնչվող պահանջները՝ 1, 2 և 5 կետերում:
2. “ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված հողհատկացումներին” (1 կետի ժ. ենթակետ) առնչվող պահանջը գլխավոր

հատակագծերի մշակման փուլում որևէ խնդրի լուծմանը չեն կարող ծառայել, քանի որ համայնքի հատակագծային կառուցվածքում առկա հողերի կազմն ինքնին ենթադրում է պատմականորեն ձևավորված և սահմանված կարգով կատարված հողհատկացումների հանրագումարը:

3. Չնայած գլխավոր հատակագծերի մշակման ելակետային նյութերի կազմում (կարգի 3 հավելված) առկա էնախկինում մշակված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (այդ թվում՝ գլխավոր հատակագծերի) մասին հղում, սակայն փաստաթղթի կազմին ու բովանդակությանը ներկայացվող պահանջներում (կարգի 4-րդ հավելված) բացակայում է որևէ պահանջ այդ փաստաթղթերով սահմանված դրույթների իրականացման աստիճանի և արդիականության վերլուծության կամ դրանց փոփոխության հիմնավորումների վերաբերյալ:
4. 5-րդ հավելվածով սահմանված՝ տեխնիկատնտեսական ցուցանիշների ներկայացման փուլերը (ելակետային տարի, առաջնահերթ ծրագրային փուլ և հեռանկարային փուլ) չեն համապատասխանում կարգի 3-րդ կետով սահմանված՝ կառուցապատման փուլերին (առաջնահերթ, միջնաժամկետ և հեռանկարային):

Թվարկված խնդիրներից զատ, գլխավոր հատակագծերին առնչվող նորմատիվային պահանջներում բացակայում է նախատեսվող գործողությունների կամ միջոցառումների տարանջատումն ըստ դրանց ֆինանսավորման աղբյուրների (այդ բացն առկա է նաև քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթերի պարագայում): Մինչդեռ այդ խնդրի անտեսումը կարող է շոշափելիորեն ազդել փաստաթղթերի գործնական կիրարկելիության մակարդակի վրա: Ուստի, հաշվի առնելով բազմաթիվ ոլորտների ազատականացումը, նպատակահարմար է հատկապես գլխավոր հատակագծերի մշակման փուլում նախատեսել այդ խնդրի լուծումը:

Այսուհանդերձ, վերը թվարկված բոլոր խնդիրները կարելի է ընդունել որպես տեխնիկական բնույթի բացեր և ինչպես գլխավոր հատակագծերին, այնպես էլ տարածական պլանավորման այլ փաստաթղթերին առնչվող առանցքային հիմնախնդիրը դրանց կառուցվածքային գաղափարախոսությունն է, ինչը քիչ աղերսներ ունի Հայաստանի առկա իրավիճակի հետ և ենթադրում է բոլոր համայնքների (բնակավայրերի) համար գործնականում նույն բովանդակային կազմով գլխավոր հատակագծերի մշակում:

Հիմնախնդիրը չի լուծում անգամ գյուղական համայնքների համար պարզեցված գլխավոր հատակագծեր մշակելու վերաբերյալ նորմը, քանի որ՝

- Հայաստանի Հանրապետությունում դեռևս օրենսդրորեն սահմանված չեն “քաղաք” և “գյուղ” հասկացությունները և դրանց տարբերակումը դրված է միայն ՀՀ վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքում [19] և հանրապետությունում առկա են քաղաքներ, որոնց բնակչությունը պակաս է 1000 մարդու (Դաստակերտ և Շամլուղ) և գյուղեր, որոնք ունեն մոտ 10 հազար բնակիչ (Փարաքար, Վարդենիկ, Ախուրյան),

- նույնիսկ պարզեցված տարբերակում ամրագրված նորմերի քանակը հնարավորություն չի ընձեռնի հատկապես փոքր համայնքներին՝ սեփական միջոցներով մշակելու գլխավոր հատակագծեր: Պարզեցված գլխավոր հատակագծի կազմին ներկայացվող պահանջների թուցիկ դիտարկումն անգամ բավարար է՝ դրանում համոզվելու համար: Կարգի 1-ին հավելվածի 3-րդ կետի համաձայն, պարզեցված գլխավոր հատակագիծը մշակվում է հետևյալ բովանդակությամբ և կազմով.

“1) դիսկերի և սահմանափակումների քարտեզ (համալիր գնահատման հաշվարկագիծ), որում տարածքի փաստացի օգտագործման (ներառյալ առկա հողօգտագործումները և կառուցապատումներն՝ ըստ սեփականության ձևերի) հիմքի վրա արտահայտվում են՝

ա. ինժեներակրթական շրջանացման և սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզագրական նյութերը,

բ. բնածին ու հնարավոր տեխնածին վրանգավոր երևույթների պատճառով կառուցապատման նպատակներով հողօգտագործման համար անբարենպաստ տարածքները,

գ. համայնքի վարչական սահմանում, ինչպես նաև դրանից դեպի դուրս առնվազն 1000 մետր լայնությամբ տարածքային գոտում առկա օբյեկտների սանիտարապաշտպանիչ և պահպանական գոտիները (շրջակա միջավայրն աղտոտող օբյեկտներ, ջրամբարներ, ջրամատակարարման ակունքներ, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների տարածքներ և ուղեգծեր (ծրագծեր), Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պահանջներ և սահմանափակումներ,

դ. երկրաբանական ֆոնդում պետական գրանցում ստացած հանքավայրերի լեռնահատկացման ակտով սահմանված եզրագծերը, ինչպես նաև շահագործվող հանքավայրերի նախագծով նախատեսված պոչամբարների սահմանները (առկայության դեպքում),

ե. բնության հատուկ պահպանվող տարածքները և դրանց պահպանման գոտիները (առկայության դեպքում),

զ. բնության, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանական գոտիները (առկայության դեպքում),

է. տարածքների կառուցապատման վրա ազդող այլ գործոններ ու սահմանափակումներ (այդ թվում՝ սերվիտուտներ),

ը. սույն ենթակետի “գ” պարբերությամբ նշված՝ համայնքների վարչական սահմանին կից սանիտարապաշտպանիչ գոտի պահանջող օբյեկտների տեղադրման առաջարկների առկայության դեպքում գլխավոր հաշվարկագիծն աշխատանքային կարգով պետք է համաձայնեցվի համապատասխան կից համայնքի (համայնքների) ղեկավարի հետ:

2) համայնքի տարածական զարգացման հաշվարկագիծ (հիմնական գծագիր), որը համալիր գնահատման հաշվարկագծի վերլուծության արդյունքներով տարածքի փաստացի օգտագործման հիմքի վրա ամրագրում է՝

ա. համայնքի տարածական զարգացման քաղաքաշինական ծրագրային հիմնադրույթները, ինչպես նաև ինժեներական ենթակառուցվածքի տարածքներն ու մայրուղային ուղեգծերը և տրանսպորտային (արտաքին տրանսպորտ և ճանապարհային ցանց) ենթակառուցվածքների կապարելագործման վերաբերյալ նախագծային առաջարկությունները,

բ. լանդշաֆտների պահպանման, վերականգնման կամ կազմավորման (ստեղծման) վերաբերյալ նախագծային առաջարկությունները,

գ. հողերի օգտագործման սխեման՝ սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերի դրույթների հիման վրա, հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները (հողամասերի կապեգորիայի տրանսֆորմացիան)՝ հողամասերի կոորդինատային նշահարմամբ և կից աղյուսակներով,

դ. հատակագծի իրականացման հերթականությունը՝ առաջնահերթ (մինչև 5 տարի), միջնաժամկետ (5-10 տարի), երկարաժամկետ (10-15 տարի) միջոցառումները.

3) գոյնորման քարտեզ (կից աղյուսակներով), որը ներառում է կառուցապատված և կառուցապատման ենթակա տարածքների գոյնորումը՝ “սահմանված գույն-թույլատրելի օգտագործում (կառուցապատում)” սկզբունքով:

Գոյնորման նախագիծը մշակվում է պարզեցված կազմով և ներառում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի “Բնակավայրերի տարածքների գոյնորման նախագծերի, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին” N 408 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերով և հավելվածի 3-րդ կետի “ա”-“զ” ենթակետերով, 4-րդ կետի “բ” և “գ” ու 7-րդ կետով սահմանված պահանջները.

4) սույն կետով սահմանված գծագրական նյութերը մշակվում են՝

ա. 1-ին և 2-րդ ենթակետերի մասով՝ 1:10000 կամ 1:5000 մասշտաբով,

բ. 3-րդ ենթակետի մասով՝ 1:2000 կամ 1:1000 մասշտաբով.

5) բացատրագիր (տեքստային մաս)՝ սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով ներառված դրույթների վերլուծությունը, ընդունված լուծումների հիմնավորումները, ինչպես նաև տարածքների փաստացի օգտագործման և նախագծային հաշվեկշիռները”[34]:

- վերջապես, օրենքում և կարգում բացակայում են մեկից ավելի համայնքների համար միավորված (պարզեցված) հատակագծերի մշակման մեխանիզմներ, ինչը, մեր կարծիքով, պակաս կարևոր խոչընդոտ չէ վերը թվարկվածներից:

Բացի վերը նշվածը, մեր կարծիքով, էական բաց կարելի է համարել գլխավոր հատակագծի մշակման գործընթացներում համայնքի բնակիչների հանրային իրազեկման խնդիրը արդեն մշակված նախագծի փուլ տեղափոխելը (նշված մոտեցումն առկա է նաև այլ փաստաթղթերի պարագայում): Կարծում ենք, որ համայնքի բնակիչների կարծիքը անհրաժեշտ է հաշվի առնել դեռևս նախագծային առաջադրանքի մշակման փուլում, երբ կանխորոշվում են համայնքի զարգացման հայեցակարգային մոտեցումները և

գերակայությունները, ինչը թույլ կտա հետագայում բացառել նախագծում էական փոփոխություններ կատարելը և ապահովել բնակչության աջակցությունը դրա իրականացման գործընթացներում:

Պակաս կարևոր խնդիր չէ գլխավոր հատակագծի և համայնքի մակարդակում մշակվող և իրականացվող այլ զարգացման կամ ներդրումային ծրագրերի (օրինակ՝ համայնքի զարգացման քառամյա ծրագիրը, ինչը համայնքի ղեկավարի պարտադիր լիազորություն է) փոխադարձ առնչությունների և կապերի շրջանակի սահմանումը: Օրենքով այդ շրջանակը սահմանափակվում է միայն գլխավոր հատակագիծ չունեցող համայնքների քառամյա ծրագրում այդ խնդրի ներառումը (14.3. հոդվածի 28-րդ կետ), իսկ գլխավոր հատակագծով նախատեսված միջոցառումներն այդ ծրագրում ընդգրկելու վերաբերյալ որևէ նորմ սահմանված չէ:

Այսպիսով, համայնքների գլխավոր հատակագծերի ոլորտը կարգավորող իրավական ակտերը կարիք ունեն վերանայման՝ ըստ մեզ, հետևյալ խնդիրները կանոնակարգելու նկատառումով.

1. հնարավորինս պարզեցնել և “բեռնաթափել” նախագծերի կազմն ու բովանդակությունը՝ վերացնելով անհարկի կրկնվող պահանջները և առանձին բաժինները ներկայացնել հայեցակարգային մոտեցումների տեսքով՝ դրանց նախագծային լուծումները վերապահելով ըստ անհրաժեշտության մշակվող փաստաթղթերի համակարգին,
2. ձևավորել օրենսդրական հիմքեր՝ գյուղական համայնքների միավորված (պարզեցված) գլխավոր հատակագծերի կամ տարածքային հատակագծման նախագծերի միկրոռեգիոնալ մակարդակի փաստաթղթերի մշակման համար,
3. գլխավոր հատակագծի մշակման պարտադիր պայմանը դիտարկել միայն տարաբնակեցման համակարգի տարածաշրջանային և տեղային կենտրոններ հանդիսացող կամ որպես այդպիսին նախատեսվող բնակավայրերի համար,
4. հանրային իրազեկումը և քննարկումները կազմակերպել նախագծման առաջադրանքի մշակման փուլում,
5. գլխավոր հատակագծով նախատեսված միջոցառումները տարանջատել ըստ դրանց ֆինանսավորման աղբյուրների՝ խոշորացված գնահատականներով,
6. հաստատման ներկայացնել ոչ թե նախագծի ամբողջական կազմը, այլ դրա հիմնադրույթները և միջոցառումների ժամանակացույցը, իսկ գրաֆիկական մասից՝ հիմնական գծագիրը և դրա առանձին շերտերը,
7. ձևավորել օրենսդրական հիմքեր՝ գլխավոր հատակագծով նախատեսված միջոցառումները համայնքին առնչվող ինչպես տեղական, այնպես էլ տարածքային ու համապետական այլ ծրագրերում, ինչպես նաև տեղական ու պետական բյուջեում արտացոլելու վերաբերյալ:

Գոտիավորման նախագծեր

Անկախ իրավական կարգավիճակից կամ բովանդակային տարբերություններից, գոտիավորման տարրեր առկա են ցանկացած մակարդակի ու տիպի տարածական պլանավորման փաստաթղթում: Տարածքների գոտիավորման սկզբունքն էր դրված նաև խորհրդային համակարգում ընդունված նախագծային փաստաթղթերում՝ բնակավայրերի գլխավոր հատակագծերում, մանրամասն հատակագծման նախագծերում, ինչպես նաև հողաշինարարական փաստաթղթերում՝ հողերի բնական գյուղատնտեսական շրջանացման, միջտնտեսային ու ներտնտեսային հողաշինարարական հատակագծերում: Այդ փաստաթղթերին բնորոշ էին հետևյալ առանձնահատկությունները՝

- դրանք մշակվում էին կենտրոնացված պլանավորման և հողի միայն մեկ սեփականատիրոջ (պետության) պայմաններում.
- դրանցում ամրագրված դրույթներն իրենց “կոշտությամբ” որևէ տեղ չէին թողնում կառուցապատողին՝ սեփական հայեցողությամբ փոփոխության ենթարկելու իր գույքը, և ցանկացած այդպիսի փոփոխություն, ինչպես նաև տեղական մակարդակում որևէ այլ փոփոխություն պետք է անցներ վարչարարության տարբեր ատյաններով.
- դրանք, ըստ էության, “փակ” փաստաթղթեր էին, որոշ դեպքերում կրում էին “գաղտնի” կամ “ծառայողական օգտագործման համար” նշագրումը և անհասանելի էին բնակչության լայն խավերի համար, քանի որ դրանց ինչպես մշակումը, այնպես էլ քննարկումը և հաստատումը կազմակերպվում էր առանց բնակավայրի (համայնքի) բնակչության անմիջական մասնակցության.
- տեղական (համայնքային) մակարդակում քաղաքաշինական գործունեությանն ու հողօգտագործմանն առնչվող խնդիրների լուծումը ենթադրում էր առնվազն երեք փաստաթղթի՝ գլխավոր հատակագծի, մանրամասն հատակագծման նախագծի և հողաշինարարական հատակագծի առկայություն:

Ի տարբերություն խորհրդային համակարգի, երբ գլխավոր հատակագծերից հետո որպես պարտադիր մշակման ենթակա փաստաթղթեր էին սահմանված մանրամասն հատակագծման նախագծերը, անկախ պետականության պայմաններում վերջիններս փոխարինվել են գոտիավորման նախագծերով, որոնց կիրարկումը թույլ է տալիս, որ՝

- ցանկացած կառուցապատող կամ ներդրող նախապես լիարժեքորեն տեղեկացված լինի տվյալ գոտում քաղաքաշինական գործունեության և անշարժ գույքի հետ կապված հնարավոր փոփոխությունների (թույլատրված օգտագործումների) շրջանակներին և, ըստ այդմ, ինքնուրույն վճիռներ կայացնելու բավականին լայն հնարավորություններ ստանա,
- տեղական ինքնակառավարման մարմինները ձերբազատվեն հողօգտագործմանն ու կառուցապատմանը առնչվող հարցերը պետական

(տարածքային և հանրապետական) մարմինների հետ համաձայնեցնելու անհրաժեշտությունից և ստանան ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորություն՝ գոտիավորման փաստաթղթերով սահմանված նորմերի շրջանակներում:

Բացի այդ, գոտիավորման փաստաթղթերի “բաց” բնույթը թույլ է տալիս, որ դրանցով սահմանված պահանջների խախտումները անմիջականորեն տեսանելի և հասանելի դառնան բնակչության շահագրգիռ շերտերին:

Այսուհանդերձ, տարածքների գոտիավորման ներկայիս մոդելում առկա են մի շարք հիմնախնդիրներ՝ պայմանավորված հողային ֆոնդի դասակարգման սկզբունքներով

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի [17] 6-րդ հոդվածի, հողային ֆոնդը, ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների), դասակարգվում է՝

- գյուղատնտեսական նշանակության.
- բնակավայրերի.
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության.
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների.
- հատուկ պահպանվող տարածքների.
- հատուկ նշանակության.
- անտառային.
- ջրային.
- պահուստային հողերի:

Յուրաքանչյուր նպատակային նշանակության հող, ըստ օգտագործման բնույթի, դասակարգվում է հողատեսքերի կամ գործառնական նշանակության հողերի, որոնց թիվը, ըստ օրենսգրքի 2-րդ գլխով սահմանված դասակարգման սկզբունքների, հասնում է 37-ի (Աղյուսակ 1): Ըստ էության, դասակարգման հիմքում ընկած է խորհրդային համակարգի մոդելը՝ կատեգորիաների թվի ավելացումով (7-ից հասնելով 9-ի):

Ըստ “Քաղաքաշինության մասին” ՀՀ օրենքի (հոդված 14.2), ինչպես նաև կառավարության սահմանած կարգի [16], տարածքների գոտիավորումն իրականացվում է հիմնական (բազային) և օժանդակ գոտիների առանձնացման սկզբունքով: Որպես հիմնական գոտիներ են սահմանված հողամասերի գոտիավորումն ըստ նպատակային նշանակության և ըստ քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային, գյուղատնտեսական, ինժեներատեխնիկական և այլ բնույթի սահմանափակումների: Ըստ նպատակային նշանակության հիմնական գոտիները չեն կարող համատեղվել (ծածկել մեկը մյուսին), իսկ ըստ առանձին սահմանափակումների գոտիները կարող են համատեղվել ինչպես փոխադարձությամբ, այնպես էլ տարբեր նպատակային նշանակության հիմնական գոտիների հետ: Նման դեպքերում

համատեղված (միմյանց ծածկող) գոտիներում գործում են առավել խիստ իրավական ռեժիմ պարունակող սահմանափակումները:

Աղյուսակ 1. ՀՀ հողային ֆոնդի դասակարգումն ըստ ՀՀ հողային օրենսգրքի		
	Բազային գոտիներ (կապեցորհաներ)	Օժանդակ գոտիներ (գործառական նշանակ. կամ հողատեսք)
1	Գյուղատնտեսական հողեր	1.1 Վարելահողեր 1.2 բազմամյա տնկարկներ 1.3 խոտհարքներ 1.4 արոտներ 1.5 այլ
2	Բնակավայրերի հողեր	2.1 բնակելի կառուցապատման 2.2 հասարակական կառուցապատման 2.3 խառը կառուցապատման 2.4 ընդհանուր օգտագործման 2.5 այլ
3	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	3.1 արդյունաբերական օբյեկտների 3.2 գյուղ.արտադրական օբյեկտների 3.3 պահեստարանների 3.4 ընդերքի օգտագործման
4	Էներգետիկայի, կապի տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների	4.1 Էներգետիկայի 4.2 Կապի 4.3 տրանսպորտի 4.4 կոմունալ ենթակառուցվածքների
5	Հատուկ պահպանվող տարածքների	5.1 բնապահպանական 5.2 առողջարարական 5.3 հանգստի 5.4 պատմական և մշակութային
6	Հատուկ նշանակության	6.1 պաշտպանական 6.2 սահմանային 6.3 ռազմական 6.4 օրենքով պաշտպանվող
7	Անտառային	7.1 պաշտպանական նշանակության 7.2 հատուկ նշանակության 7.3 արտադրական նշանակության
8	Ջրային	8.1 գետեր 8.2 լճեր 8.3 արհեստական ջրամբարներ 8.4 հիդրոտեխ. և ջրատնտ. կառույցների
9	Պահուստի	9.1 տնտ. շրջանառությունից հանված 9.2 ավազուտներ 9.3 ճահիճներ 9.4 այլ անօգտագործելի

Քանի որ բազային գոտիները սահմանվում են գլխավոր հատակագծով, գոտիավորման նախագծում բազային գոտիների փոփոխությունները կարող են իրականացվել միայն գլխավոր հատակագծում համապատասխան փոփոխություն կատարելուց հետո:

Որպես օժանդակ գոտիներ են սահմանված հողամասերի գոտիավորումն ըստ գործառնական նշանակություն, ըստ հողատեսքերի և թույլատրված օգտագործումների, ինչպես նաև հողամասերի ծավալատարածական գոտիավորումը՝ ըստ կառուցապատման չափորոշիչների:

Օժանդակ գոտիները նույնպես չեն կարող համատեղվել (ծածկել մեկը մյուսին), դրանցում թույլատրելի օգտագործումները հաստատուն են և կարող են փոփոխվել միայն մեկ գոտուց մյուսին անցնելու դեպքում:

Այսպիսով, հիմնական և օժանդակ գոտիների սահմանման հիմքում դրված են Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով (2-9-րդ գլուխներ) սահմանված՝ հողերի դասակարգման սկզբունքները՝ հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը, որոնք անլուծելի երկրնտրանքներ են առաջացնում բնակավայրերի գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի մշակման ժամանակ, քանի որ դրանցում առանձին դեպքերում նույնացվել են “հողերի նպատակային նշանակություն” և “հողօգտագործման իրավական ռեժիմ” հասկացությունները, ինչն իր հերթին ոչ միայն թույլ չի տալիս լիարժեք պատկերացում կազմել տարբեր նպատակային նշանակության հողերի (մասնավորապես, անտառային ու ջրային ֆոնդի) իրական ծավալների մասին, այլև ազատական տնտեսության պայմաններում լուրջ հիմնախնդիրներ է ստեղծում թե քաղաքաշինության ու հողային հարաբերությունների բնագավառներում ներդրումային նպաստավոր դաշտի ձևավորման, թե տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման ու կիրարկման գործառույթներում:

Ասվածը հիմնավորելու համար բավարար է բերել անտառային ֆոնդի հողերի օրինակը,- հատուկ պահպանվող տարածքներում ընդգրկված անտառները ներառված չեն անտառային ֆոնդի հողերում և հողային հաշվեկշռի սահմանված ձևում պարզապես “կորչում” են:

Նույն “բախտին է արժանացել” նաև Սևանա լիճը, որի տարածքը ներառված չէ ջրային ֆոնդի հողերի կազմում, քանի որ այն նույնպես դիտարկվում է որպես հատուկ պահպանվող տարածք: Համանման խնդիրներ ծագում են նաև կառուցապատված տարածքներում: Օրինակ, կառավարության շենքի զբաղեցրած հողամասը, որպես վարչական շենքի հողամաս, պետք է ընդգրկվի բնակավայրերի հողերի կատեգորիայում՝ հասարակական կառուցապատման գոտում, բայց, քանի որ այդ շենքը նաև հուշարձան է, դրա զբաղեցրած հողամասը կարող է դիտարկվել որպես հատուկ պահպանվող տարածքի հող՝ պատմամշակութային կառուցապատման գոտում: Միաժամանակ, այդ հողամասը կարող է ընդգրկվել նաև հատուկ նշանակության հողերի կատեգորիայում, քանի որ կառավարության շենքը նաև

օրենքով պահպանվող կառույց է: Ասվածից հետևում է, որ հողամասերի նպատակային նշանակությունը՝ որոշակիորեն ազդելով դրանց իրավական ռեժիմի (հողօգտագործման սահմանափակումների, նորմերի, սերվիտուտների) վրա, չի կարող նույնացվել վերջինիս հետ, մինչդեռ օրենսգրքով սահմանված մոդելում մենք գործ ունենք հենց այդպիսի նույնացման հետ:

Խնդիրն այդքան մանրամասնելու կարիք չէր լինի, եթե այն անմիջականորեն չազդեր քաղաքաշինական փաստաթղթերի բովանդակային լուծումների վրա, քանի որ, ինչպես նշվեց վերևում, “Քաղաքաշինության մասին” ՀՀ օրենքով որպես հիմնական (բազային) գոտիներ սահմանված են հողամասերի գոտիավորումն ըստ նպատակային նշանակության, ինչպես նաև տարբեր բնույթի սահմանափակումներ պարունակող տարածքները, այսինքն, այդ փաստաթղթերը մշակելիս շարունակ ծագելու են անորոշ ելքով երկընտրանքներ՝ կապված տարբեր գոտիների առանձնացման հետ:

Այսպիսով, մի կողմից՝ բազային գոտիների մեծ քանակը ու դրանց փոփոխությունների հետ կապված բարդությունները (շուրջ 10 պետական մարմինների հետ համաձայնեցումներով պայմանավորված՝ վարչական գործառույթների նույն “մաղը”, ինչով անցնում են գլխավոր հատակագծերը՝ մինչև դրանց հաստատումը), մյուս կողմից՝ հողերի նպատակային նշանակության նույնացումը դրանց օգտագործման իրավական ռեժիմի հետ, ինչպես նաև վերջիններս որպես առանձին բազային գոտիներ դիտարկելը, արդյունքում բերում են տարածքների գոտիավորման այնպիսի խճողված համակարգի, ինչը ոչ միայն լուրջ հիմնախնդիրներ ու տարընթերցումներ է առաջացնում նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ, այլև տեղական ինքնակառավարման մարմինների համար՝ այդ փաստաթղթերից օգտվելիս:

Առանձին քննարկման թեմա են գծային ինժեներական ենթակառուցվածքներին և համապատասխան հողամասերին առնչվող խնդիրները, քանի որ նշված ենթակառուցվածքները (ավտոմայրուղիներ, երկաթուղիներ, էներգակիր խողովակաշարեր և մալուխներ, գազատարներ, ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման համակարգեր և այլն) կարող են տեղակայվել ինչպես հողի վրա, այնպես էլ դրա տակ կամ օդում՝ հաճախ “ծածկելով” մեկմեկու կամ “խաչաձևվելով” միմյանց և այլ նպատակային նշանակության հողամասերի հետ:

Պատահական չէ, որ միջազգային պրակտիկայում գծային ենթակառուցվածքներին առնչվող՝ իրավական բնույթի խնդիրները կարգավորվում են սերվիտուտների կիրառումով, քանի որ դրանք անմիջականորեն առնչվում են ինչպես հողի, այնպես էլ համապատասխան ենթակառուցվածքի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքներին:

Ներկայացնելով հողերի դասակարգման մոդելի կիրարկման արդյունքում տարածքների գոտիավորման ժամանակ ծագող հիմնախնդիրները, հարկ է

արձանագրել, որ դրանք անխուսափելիորեն ծագելու էին ու ծագում են այն գործոնի հետևանքով, որ ազատական համակարգերին բնորոշ գոտիավորման մոդելը համատեղվել է խորհրդային համակարգում ընդունված՝ հողերի դասակարգման սկզբունքների հետ:

Միաժամանակ, չնայած գոտիավորման փաստաթղթերի ճկունության բարձր աստիճանին և բովանդակային ընդգրկումների լայն շրջանակին, մեր իրականության մեջ նույնիսկ դրանց առկայության պարագայում արդեն իսկ տեսանելի են միջավայրի ձևախեղումները թե գոյություն ունեցող թաղամասերում իրականացվող վերակառուցման կամ առանձին օբյեկտների շինարարության, թե նոր կազմավորվող թաղամասերի կառուցապատման աշխատանքներում, քանզի դրանցում բոլորովին պատահականորեն են ձևավորվում հատկապես ծավալատարածական հորինվածքները, շենքերի հարկայնությունը, մասշտաբները, համամասնությունները, իսկ ճարտարապետական նկարագրի, արտաքին հարդարման և գունային ներդաշնակության մասին խոսելն արդեն ավելորդ է թվում:

Ի թիվս այլ պատճառների, դա հետևանք է նաև կառուցապատման նախագծերի կամ սխեմաների բացակայության, քանի որ վերջիններս նորմատիվային դաշտում դիտարկվում են որպես ճարտարապետաշինարարական և սահմանված չեն որպես պարտադիր մշակման ենթակա քաղաքաշինական փաստաթղթեր, սակայն, ըստ էության, դրանք հանդիսանում են յուրօրինակ միջին և “կապող” օղակ՝ տարածական պլանավորման և առանձին շենքերի նախագծային փաստաթղթերի միջև: Այդ օղակի բացակայությունը կարող է անցանկալի խզումներ առաջացնել ամբողջական շրջայի տրամաբանության մեջ՝ տեղիք տալով չհիմնավորված, տարերային ու պատահականության դրոշմը կրող որոշումների կայացման և որպես հետևանք՝ միջավայրի անդառնալի խաթարումների:

Վերը նշված հիմնախնդիրները կարգավորելու համար՝

1. Անհրաժեշտ է վերանայել խորհրդային ժամանակներից կիրարկվող՝ հողային ֆոնդի դասակարգման սկզբունքները և դրանք առավելագույնս համապատասխանեցնել ազատական հարաբերություններին: Կարծում ենք, փոփոխությունները ցանկալի է իրականացնել հետևյալ մոտեցումների հիման վրա.
 - հողամասերի նպատակային նշանակության տարանջատում դրանց օգտագործման իրավական ռեժիմներից,
 - հողերի նպատակային նշանակության (կատեգորիաների) թվի կրճատում՝ հասցնելով հնարավոր նվազագույնի (կարող է քննարկման առարկա դառնալ երեք հիմնական կատեգորիաների՝ գյուղատնտեսական, ուրբանիզացված և բնական լանդշաֆտի գոտիների սահմանումը/։ Ավելի արդյունավետ և արմատական լուծում կարող է լինել հրաժարումը խորհրդային մոդելի բարեփոխումներից և անցնել ազատական տնտեսությանը բնորոշ՝ հողերի գոտիավորման մոդելին.

- գծային ենթակառուցվածքների հողերի հետ կապված խնդիրները (բացառությամբ առանձնացված հողային պաստառ պահանջող՝ ավտոմայրուղիների, երկաթգծերի և համարժեք այլ ենթակառուցվածքների) կանոնակարգել սերվիտուտի ինստիտուտի կիրարկման շրջանակներում:
- 2. Կառուցապատման նախագծերը կամ սխեմաներն անհրաժեշտ է սահմանել որպես պարտադիր մշակման ենթակա քաղաքաշինական փաստաթղթեր կամ դրանք ներառել գոտիավորման նախագծերում՝ որպես առանձին բաժիններ:

Նկատառումներ անկախության տարիների փաստաթղթերի վերաբերյալ

Անկախության տարիներին Հայաստանի Հանրապետությունում մշակվել են՝

- ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագիծը, որը հաստատվել է 2003 թ. գարնանը,
- Շիրակի (Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի մշակման շրջանակներում), Գեղարքունիքի (Սևանի ջրհավաք ավազանի ՏՀՆ մշակման շրջանակներում) և Վայոց Ձորի մարզերի տարածքային հատակագծման նախագծերը,
- 111 համայնքի գլխավոր հատակագիծ:

Ակնհայտ է, որ մշակված փաստաթղթերի նշված քանակը չի կարելի բավարար համարել, հատկապես գլխավոր հատակագծերի պարագայում: Անկախության տարիներին հանրապետության 915 համայնքներից գլխավոր հատակագծեր են մշակվել 111-ի համար (Աղյուսակ 2), ընդ որում, դրանցից 36-ը հաստատվել է 1991-1992 թվականներին, ինչից կարելի է ենթադրել, որ դրանց նախագծման առաջադրանքները կազմվել են խորհրդային ժամանակներին բնորոշ տրամաբանությամբ և դրանցում ամրագրված նորմերը չեն համապատասխանում ազատական տնտեսության պահանջներին: Ըստ էության, նման մոտեցումն ավել կամ պակաս չափով բնորոշ է նաև 1993 թվականից հետո մշակված 75 գլխավոր հատակագծերին, ինչի արդյունքում շատ ցածր է դրանց գործնական կիրարկման մակարդակը:

Եղած գլխավոր հատակագծերի մշակմանը հաջորդած ժամանակահատվածը բավարար չէ՝ դրանց գործնական իրականացման արդյունավետությանը սպառիչ գնահատական տալու համար, սակայն հարկ է նշել, որ այդ փաստաթղթերում ամրագրված բազմաթիվ միջոցառումներ, ամենայն հավանականությամբ, չեն կենսագործվի, քանի որ դրանք պայմանավորված չեն ազատական տնտեսության պահանջներով, բացի այդ, չեն հաշվարկվել այդ միջոցառումների իրականացման համար պահանջվող միջոցները և աղբյուրները:

Աղյուսակ 2. Անկախության տարիների մշակված համայնքների գլխավոր հատակագծերի քանակն ըստ մարզերի			
Մարզ	1991-2012թ.թ. մշակված գլխավոր հատակագծեր		
	Ընդամենը	այդ թվում	
		1991-1992 թ.թ.	1993-2012թ.թ.
Արագածոտն	10	3	7
Արարատ	12	5	7
Արարատ	6	3	3
Գեղարքունիք	10	0	10
Լոռի	7	1	6
Կոտայք	17	3	14
Շիրակ	5	2	3
Սյունիք	20	8	12
Վայոց Ձոր	12	7	5
Տավուշ	12	4	8
Ընդամենը	111	36	75

Ընդհանուր բնույթի եզրակացություններ և առաջարկություններ

1. Տարածական պլանավորման ոլորտում միջազգային փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ ամենազարգացած երկրներում տարածքների համաչափ զարգացումը դիտարկվում է որպես պետության քաղաքականության գերակայություններից մեկը, ընդ որում, հիմնական շեշտադրումները կատարելով տարաբնակեցման համակարգերի բազմակենտրոն մոդելի վրա և նպատակաուղղված ծրագրեր իրականացնելով հատկապես գյուղական ու փոքր քաղաքային բնակավայրերի առաջանցիկ զարգացման, կառուցապատման համար ներքին ռեզերվների օգտագործման, բնական ու մշակութային ժառանգության պահպանման, տարածքների խոցելիության նվազեցման ուղղություններով: Հայաստանի Հանրապետության պարագայում կարող են միարժեքորեն կիրառելի լինել ոչ միայն նշված մոտեցումները, այլև տարածական պլանավորման ոլորտում կիրառվող որոշ սկզբունքային դրույթներ, որոնց սեղմ նկարագիրը ներկայացվում է ստորև՝

Միշտ չէ, որ տարածական պլանավորման տարածքները պայմանավորվում են վարչատարածքային միավորների, մասնավորապես, առանձին համայնքների սահմաններով, ինչը թույլ է տալիս տարածական պլանավորման նախագծեր մշակել համայնքների խմբերի համար՝ հաշվի առնելով բնական-աշխարհագրական և տնտեսական կապերի գործոնները:

Հայաստանում առկա են բազմաթիվ տարածաշրջաններ՝ փոքր և զարգացման

ցածր մակարդակ ունեցող համայնքներով (փնջային կամ գծային դասավորությամբ), որոնց դեպքում շատ ավելի արդյունավետ կարող է լինել տարածական պլանավորման միացյալ նախագծերի մշակումը: Նույն մոտեցումը կարելի է կիրառել նաև Արարատյան դաշտավայրի խիտ բնակեցված գոտու այն բնակավայրերի դեպքում, որոնք տարածքային առումով արդեն միախառնվել են:

Հարկ է նշել, որ համայնքների խոշորացումը ևս կարող է շոշափելի դրական ազդեցություն ունենալ՝ տարածական պլանավորման ավելի արդյունավետ համակարգ ձևավորելու առումով:

Զարգացած ժողովրդավարական երկրներում շատ է կարևորվում տարածական պլանավորման բոլոր փուլերում՝ սկսած առանձին ծրագրերի մտահղացումից, մինչև նախագծերի մշակումն ու իրականացումը, հանրության տարբեր շերտերի և շահագրգիռ բոլոր մարմինների մասնակցությունն ապահովելը: Այդ մոդելը թույլ է տալիս ոչ միայն զերծ մնալ անցանկալի լարումներից, այլև ունենալ հանրության վստահությունն ու աջակցությունը ծրագրերի իրականացման գործառույթներում:

Վերջապես, շատ կարևոր է բոլոր տարածաշրջանների և համայնքների զարգացման հայեցակարգերի ընդունումը՝ մինչև կոնկրետ նախագծերի մշակմանն անցնելը, ինչը թույլ է տալիս շատ սեղմ շարադրանքով ձևակերպել համայնքի հեռանկարի տեսլականը, որը հասկանալի է ցանկացած բնակչի համար:

Կարծում ենք, որ Հայաստանի պարագայում ևս կարելի առաջնորդվել այդ սկզբունքով: Հայեցակարգի մշակումը կարող է նախորդել համայնքների զարգացման քառամյա ծրագրերի և գլխավոր հատակագծերի մշակման աշխատանքների մշակմանը, ինչը թույլ կտա հաշվի առնել յուրաքանչյուր բնակավայրի առանձնահատկությունները, տարանջատել առաջնահերթ և հեռանկարային կարիքները և զարգացման գերակայությունները:

Ընդհանուր առմամբ, հայեցակարգի մշակումը կարող է նախորդել տարածական պլանավորման ցանկացած մակարդակի փաստաթղթի մշակմանը:

2. Հայաստանի Հանրապետությունում անկախության տարիներին մշակված տարածական պլանավորման փաստաթղթերի քանակը չի կարելի բավարար համարել: Բացի այդ, արդիական և լուրջ հիմնախնդիր է եղած փաստաթղթերի գործնական կիրարկելիության մակարդակը, քանի որ երկրի տարածքային համաչափ զարգացմանն ուղղված բազմաթիվ հիմնավոր առաջարկություններ իրենց արտացոլումը չեն գտնում պետության ծախսային ծրագրերում: Ըստ այդմ, անհրաժեշտ է ոչ միայն ապահովել տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը՝ հատկապես գյուղական համայնքների համար ներդնելով պարզեցված և միացյալ փաստաթղթերի մշակման սկզբունքը, այլև վերանայել դրանց բովանդակային կազմը և ձևավորել մեխանիզմներ՝ դրանց գործնական կիրարկման մակարդակը բարձրացնելու համար:


3. Տարածական պլանավորման փաստաթղթերում ամրագրված նորմերը

գործնականում չեն իրականացվում, քանի որ դրանք առանձին դեպքերում պայմանավորված չեն արդի իրողություններով (նախկինում պետական բազմաթիվ լիազորությունների փոխանցում տեղական ինքնակառավարման մարմիններին, հողի նկատմամբ համայնքների, քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունք) և հաշվի չեն առնում ազատական տնտեսության առանձնահատկությունները (արտադրության, ծառայությունների և սպասարկումների ոլորտների ազատականացում), ուստի անհրաժեշտ է օբյեկտիվորեն գնահատել փաստաթղթերում նախատեսված միջոցառումները՝ ըստ դրանց ֆինանսավորման աղբյուրների և առաջնահերթությունների.

4. Դեռևս հստակեցված չեն տարածական պլանավորման փաստաթղթերի և սոցիալ-տնտեսական այլ ծրագրերի բովանդակային առնչություններն ու փոխադարձ կապերը, ինչպես նաև դրանց մշակման գերակայությունները, ուստի անհրաժեշտ է պետության մակարդակում ամրագրել այդ առնչությունների շրջանակները՝ նախագծերի և ծրագրերի մշակման համար ներդրված միջոցները չփոշիացնելու համար.
5. Ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերում ամրագրված պահանջները անհարկի ուժեղացված են, առանձին դեպքերում գործնականում չկիրարկելի, դրանցում առկա են նաև բովանդակային կրկնություններ ու հակասություններ և անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել այդ իրավական ակտերում.

Ելնելով վերը շարադրվածից, առաջարկվում է օրենսդրական և կառուցվածքային փոփոխությունների և լրացումների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում կիրարկել տարածական պլանավորման համակարգի՝ 2-րդ գծապատկերում ներկայացված մոդելը:

Գծապատկեր 2. Տարածական պլանավորման համակարգի առաջարկվող մոդել



Ամփոփում

Քաղաքաշինության ոլորտում առկա խնդիրներն այսօր գտնվում են հանրային ուշադրության կենտրոնում: Դրա ականատեսն ենք լինում հետևելով տեղական մամուլին. հանրության տարբեր ներկայացուցիչներ բարձրաձայնում են իրենց անմիջական շրջապատող միջավայրում տեղի ունեցող փոփոխությունների մասին, որտեղ անտեսվում են հասարակության պահանջմունքներն ինչ-ինչ պատճառներով: Ոլորտի կարգավորման կարևորագույն միջոցը քաղաքաշինական ծրագրային (կամ տարածական պլանավորման) փաստաթղթերի համակարգն է (այսուհետ՝ Համակարգ), որի համապատասխան գործիքակազմը հնարավորություն է տալիս քաղաքաշինական գործունեության (հողամասերի և անշարժ գույքի օգտագործման ու փոփոխությունների գործառույթների) իրականացման ընթացքում հավասարակշռել մասնավոր անձանց և հանրության շահերը, կարևորելով միջավայրի կայուն զարգացման, ժառանգության և բնական միջավայրի պահպանության, քաղաքացիների անվտանգության և համերաշխ համակեցության խնդիրները: Համակարգի մասը կազմող փաստաթղթերից որոշ տեսակներ կիրառվել են դեռևս խորհրդային տարիներին և ծանոթ են հասարակությանն ու մասնագետներին: Սակայն ազատական տնտեսության պայմաններում էականորեն փոխվում է դրանց բովանդակությունը և իրավական կարգավիճակը: Համակարգի վերջին փաստաթուղթը, որն իրավական ռեժիմներ է սահմանում քաղաքաշինական գործունեության բոլոր մասնակիցների (սուբյեկտների) համար և հիմք է հանդիսանում ճարտարապետաշինարարական նախագծման համար, գոտիավորման նախագիծն է (zoning), որը լինելով նորահայտ բաղկացուցիչ, պետք է հանդիսանար քաղաքացի – կառուցապատող – հանրային կառավարում – նախագծող «քառախոսության» հարթակը:

Համակարգի բոլոր փաստաթղթերի, հատկապես՝ գոտիավորման նախագծերի արդյունավետ կիրառելիությունն ապահովելու և ընդհանրապես ոլորտի իրավական կարգավորման գործուն մեխանիզմների կայացման համար անհրաժեշտ է մի շարք սկզբունքային իրավական ու մեթոդական ճշգրտումներ կատարել, որոնք պետք է իրենց արտահայտությունը գտնեն համապատասխան նորմատիվ իրավական փաստաթղթերում:

2012 թվականին **ուրբանլաբ Երևանը**, Քաունթերփարթ ինթերնեշնլի ֆինանսավորմամբ, նախաձեռնեց Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանությանն առնչվող օրենսդրական հենքի ուսումնասիրման, վերլուծության և առաջարկությունների մշակման ծրագիրը: Դրա արդյունքները զետեղվեցին ավելի քան 200 էջանոց հաշվետվությունում, որը պատշաճ ուշադրության արժանացավ մասնագիտական շրջանակներում,

ինչպես նաև կառավարման տարբեր օղակներում: Հաշվի առնելով նաև քաղաքաշինության ոլորտում առկա խնդիրների շարունակական գոյության իրողությունը, 2013 թվականին նախաձեռնվեց **Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի համակարգի վերլուծության և զարգացման ծրագիրը** (այսուհետ՝ Ծրագիր): Դրա նպատակն է ուսումնասիրել և վերլուծել Հայաստանի Հանրապետությունում գործող քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի համակարգը ու մշակել մի շարք առաջարկություններ դրա բարեփոխումների համար: Դրա արդյունքում նախատեսվում է՝ բացահայտել Համակարգի կիրառության հետ կապված խնդիրները, վերլուծել դրանք՝ համադրելով ծրագրի մասնակիցների փորձառությունը միջազգային ու եվրոպական առկա փորձի հետ, մշակել առաջարկություններ միտված Համակարգի զարգացմանն ու արդյունավետության բարձրացմանը և ապահովել առաջարկությունների տարածումը մասնագիտական հանրության և այլ շահառուների շրջանում:

Ծրագիրը բաղկացած է երեք հիմնական փուլերից: Դրանցից առաջինի ուսումնասիրական փուլի ընթացքում իրականացվել են հարցումներ շուրջ 40 մասնագետների շրջանում դեմ առ դեմ հարցազրույցների միջոցով, առկա քաղաքաշինությանը վերաբերող օրենսդրության ողջ հենքի, ստանձնած և ստանձնելիք միջազգային ու եվրոպական պարտավորությունների և համարժեք փորձի ուսումնասիրություն, դրանց կիրառման հնարավորությունների բացահայտում, ինչպես նաև կազմակերպվել է ոլորտում ներգրավված մասնագետների հետ քննարկում, որի ընթացքում բացահայտվել են ոլորտում առկա խնդիրների բազմությունն ու մատնանշվել են անհրաժեշտ ակնկալվող բարեփոխումները: Հաջորդ, վերլուծական փուլի, ընթացքում Ծրագրում ներգրավված անձանց հետ (ծրագրի ղեկավար, համակարգող, փորձագետներ) անցկացվել են մտքային գրոհներ, նպատակ ունենալով քննարկել և վերհանել ուսումնասիրության արդյունքներն ու վերլուծել դրանք: Դրա արդյունքում առաջարկությունների մշակման և ամփոփման փուլում պատրաստվել է ամփոփիչ հաշվետվությունը, որն ինչպես և նախատեսված էր, ներկայացվել է ծրագրի բոլոր շահառուներին, մասնավորապես, ոլորտին առնչվող պետական՝ գործադիր ու օրենսդիր, տեղական ինքնակառավարման մարմիններին, ոլորտի հետ առնչվող մասնագետներին (ճարտարապետներ, քաղաքաշինարարներ և այլն), տեղական ու միջազգային հասարակական կազմակերպություններին, ինչպես նաև մասնագիտական միավորներին (Հայաստանի ճարտարապետների միություն, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան և այլն): Այն հասանելի է լինելու կազմակերպության կայքում՝ www.urbanlab.am/prd_planning.pdf հղմամբ, որը կարող է օգտակար նյութ հանդիսանալ նաև քաղաքացիական ոլորտի ակտիվիստների և այլ հետազոտողների համար:

Ուսումնասիրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության առկա օրենսդրության և ստանձնած միջազգային ու եվրոպական

պարտավորությունների շրջանակում մարդածին միջավայրում կայուն զարգացմանը միտված օրենսդրական ու դրանից բխող նորմատիվային փաստաթղթերի ուսումնասիրությունն ու ծրագրում ներգրավված անձանց մասնագիտական կարծիքի հիման վրա առաջնահերթությունների հստակեցմամբ առաջարկությունների մշակումը: Այն չի հավակնում լուծել ոլորտի առջև ծառացած բոլոր խնդիրները, սակայն իր տեսակով և ընդգրկմամբ լինելով առաջիններից, ենթադրաբար, ունենալու է շոշափելի ազդեցություն ոլորտի զարգացման գործընթացներում:

Ստորև ներկայացված են մի շարք առաջարկություններ, որոնք կարևորվել են աշխատանքային խմբի կողմից:

1. Ապահովել քաղաքաշինական պլանավորման և գոտիավորման փաստաթղթերի մշակման բոլոր փուլերի գործողությունների կարգավորումը հիմնականում քաղաքաշինական օրենսդրությամբ, առանց այլ օրենքների վրա հղումների, ինչի համար անհրաժեշտ կլինի ընդունել Քաղաքաշինության կամ Տարածքային զարգացման օրենսգիրք, որի բաղկացուցիչները պետք է հանդիսանան տարածական պլանավորումը, գոտիավորման նախագծերի մշակումը, ճարտարապետական գործունեությունը, շինարարությունը, վերահսկողությունը և շենքերի ու շինությունների շահագործումը:
2. Սահմանել գոտիավորման հատակագծի (նախագիծ) իրավական կարգավիճակը՝ որպես հողամասերի և անշարժ գույքի օգտագործման կանոնները և իրավական ռեժիմները սահմանող հիմնական փաստաթուղթ: Դրա կազմում օրենսդրորեն սահմանել և կիրառել քաղաքաշինական կանոնակարգը (ռեգլամենտ), որի առանձին տարրերի համար կարող է օգտագործվել նաև “կարգորոշիչներ” եզրույթը:
3. Պարզեցնել գյուղական բնակավայրերի տարածական պլանավորման փաստաթղթերին ներկայացվող պահանջները՝ չպայմանավորելով դրանք վարչատարածքային միավորների սահմաններով, ինչը հնարավորություն կտա դրանք մշակել համայնքների խմբերի համար՝ հաշվի առնելով աշխարհագրական, տնտեսական և այլ կապերի գործոնները: Անհրաժեշտ է վերանայել դրանց բովանդակային կազմը և ձևավորել մեխանիզմներ՝ դրանց գործնական կիրարկման մակարդակը բարձրացնելու համար:
4. Դիտարկել օպերատիվ նշանակություն ունեցող գոտիավորման հատակագծերի (նախագծերի) պարտադիր լինելը բոլոր բնակավայրերի համար, մշակելով հատուկ պարզեցված ընթացակարգեր՝ ապահովելու համար Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքների համար հողօգտագործման իրավական հենքը:
5. Մշակել հողամասի քաղաքաշինական-իրավական կարգավիճակն ու նրա փաստաթղթավորման կարգը օրենսդրորեն, որպես տարածքի տարրական կամ առաջնային միավոր, ինչը պետք է փոխարինի ճարտարապետահատակագծային առաջադրանքին (ԱՊՅ): Յուրաքանչյուր

սեփականատիրոջ իրավունքն է գույքի տիրապետման կամ օտարման հետ կապված բոլոր գործընթացների շրջանակում, կամ առհասարակ ցանկացած պահի, բաց ու հասանելի կերպով ստանալ տեղեկատվություն հողամասի նկատմամբ առկա կառուցապատման պայմանների ու բոլոր տեսակի սահմանափակումների վերաբերյալ:

6. Վերանայել քաղաքաշինական մասնագիտական եզրույթները, ինչը թույլ կտա ոլորտային հիմնախնդիրների գնահատականները համահունչ դարձնել միջազգային ընդունված նորմերի հետ և որոշակիորեն դրական հետևանք կունենա Համակարգի առանձին տարրերի շեշտադրումների հստակեցման և առաջնահերթությունների ձևակերպման համար:
7. Գույքագրել բոլոր օրենսդրական կամ այլ իրավական ակտերում օգտագործված քաղաքաշինական օբյեկտ, սուբյեկտ, գործառույթ բնորոշող եզրույթները և հստակ ու միարժեք սահմանել դրանց նշանակությունը և կարգավիճակը:
8. Իրականացնել ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերում ամրագրված անհարկի ուղեգրված պահանջների թեթևացում: Դրանք առանձին դեպքերում գործնականում կիրարկելի չեն և առկա են նաև բովանդակային կրկնություններ ու հակասություններ, ինչից բխում է իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ ու լրացումներ կատարելու անհրաժեշտությունը:
9. Հստակեցնել տարածական պլանավորման փաստաթղթերի և սոցիալ-տնտեսական այլ ծրագրերի բովանդակային առնչություններն ու փոխադարձ կապերը, ինչպես նաև դրանց մշակման գերակայությունները: Դրա արդյունքում անհրաժեշտ է պետական մակարդակում ամրագրել այդ առնչությունների շրջանակները՝ նախագծերի և ծրագրերի մշակման համար ներդրված միջոցները չփոշիացնելու ու նպատակային օգտագործելու համար:
10. Ապահովել մշակվող տարածական պլանավորման փաստաթղթերի գործնական կիրարկելիության մակարդակի բարձրացումը՝ արտացոլելով դրանք պետական ու տեղական ծախսային ծրագրերում: Անհրաժեշտ է օբյեկտիվորեն գնահատել փաստաթղթերում նախատեսված միջոցառումները՝ ըստ դրանց ֆինանսավորման աղբյուրների և առաջնահերթությունների՝ մասնավորապես համապատասխանեցնելով դրանք համայնքային զարգացման (քառամյա) ծրագրերի հետ:
11. Տարածական պլանավորման փաստաթղթերը հաստատման ներկայացնել ոչ թե դրանց ամբողջական ծավալով, այլ հիմնական գծագրով և նախատեսված միջոցառումների ժամանակացույցով:
12. Ստեղծել հայկական քաղաքաշինական (տեխնիկական) նորմատիվային փաստաթուղթ գործող քաղաքաշինական նորմատիվային փաստաթղթի հիման վրա (СНП 2.07.01-89), որում հատկապես ուշադրություն պետք է դարձնել արդի իրողություններին, համալրելով դրանք նորույթ համարվող մասերով, ինչպիսիք են գոտիավորման նախագծերին վերաբերող դրույթները (օգտագործման ձևերի դասակարգումն ու անվանումներ, թույլատրելի

օգտագործման համատեղումները և այլն), շարժունակության հետ կապված արդի առաջնահերթությունները (սակավաշարժության հետ կապված դրույթներ, այլընտրանքային տրանսպորտային համակարգեր) և այլն:

13. Մեկտեղել տարածքային զարգացման և պլանավորման, ինչպես նաև լանդշաֆատների ու դրա բաղկացուցիչ մասը կազմող պատմական միջավայրերի պահպանության, գործառույթները մեկ պետական լիազոր մարմնում:
14. Կարևորել մասնագիտական հանրույթի շրջանակում մասնագիտական կարողությունների զարգացումը տարբեր վերապատրաստման ու կրթական ծրագրերի իրականացմամբ: Այն պետք է հնարավորություն ստեղծի քաղաքաշինական գործունեությամբ զբաղվելու ցանկություն ունեցող ապագա մասնագետների համար՝ ձեռք բերել անհրաժեշտ որակավորում:
15. Ստեղծել օրենսդրական հիմքեր ոլորտի մասնագիտական ինքնակարգավորման հաստատությունների (միությունների, միավորումների կամ ինստիտուտների) ձևավորման և կայացման համար, ինչը հնարավորություն կտա մասնագիտական հանրության ներքին կարգավորիչ հնարավորություններն օգտագործել ի նպաստ ոլորտի կարգավորման և կառավարման որակի բարձրացման:
16. Զարգացնել հանրային իրազեկման և հասարակական քննարկումների օրենսդրորեն ամրագրված գործընթացների մեթոդական և օրենսդրական բազան, նպատակ ունենալով կարճ ժամանակում հասնել մասնակցային կառավարման ձևերի ու եղանակների ներդրմանը և լիակատար կայացմանը:

Ամփոփում (անգլերեն) / Summary

Project on Analysis and Development of the Urban Planning Documentation System

Today, the problems existing in the urban planning sphere are at the centre of public attention. We witness this by following the local media; various representatives of the public voice the changes taking place in their immediate built environment where the demands of society are being ignored for this or that reason. The most important means to regulate the field is the urban planning (or spatial planning) documentation system (hereinafter System) the tools of which enable the balancing of private and public interests during urban planning activities (while carrying out land and real estate use and development functions), while highlighting the importance of issues of sustainable development of the environment, protection of cultural and historical heritage and habitat, safety and peaceful co-existence of citizens. Several of the types of documents comprising the System were being used even in soviet times and are well known both to the public and the professional community. However, in the free market economy their content and legal status is essentially changed. The last document of the System which determines legal regimes for all participants of urban planning activities and is a basis for architectural-construction planning is zoning which, being a new component, should have been a platform for citizen-developer-public administration-designer quadrilateral discussion.

Several principal legal and methodical adjustments are necessary in order to ensure the productive applicability of all System documents, especially zoning, and in general, for the establishment of productive mechanisms of legal regulation. These must be expressed in legislative and normative documents.

In 2012 **urbanlab Yerevan**, initiated the “Study, Analysis and Development Program for Legislative Basis of the Protection of Historical and Cultural Monuments”, with financing from Counterpart International. The results were gathered in a report of over 200 pages which drew proper attention in professional circles and also in various administrative circles. Considering the continually existing nature of issues in the sphere of urban planning, in 2013 the “**Project on Analysis and Development of the Urban Planning Documentation System**” (hereinafter Project) was initiated. Its aim is to study and analyse the urban planning documentation system in force in the Republic of Armenia and to draft several suggestions for its development. As a result it is planned to reveal problems concerning the implementation of the System, and to analyse them by comparing the practice of project participants with existing international and European practices, to draft suggestions aimed at developing the System and raising its efficiency

and to ensure the dissemination of the suggestions amongst the professional community and other beneficiaries.

The Project consists of three phases. During the first study phase a survey was carried out amongst 40 specialists through face to face interviews; a study was carried out on the urban planning framework of the legislation currently in force and on the international and European commitments undertaken and to be undertaken; study of equivalent international and European practices; the identification of the possibilities of implementing the latter and also for the first time a discussion was organised with specialists in this field during which the multitude of problems existing in this field and the expected necessary reforms were pointed out. Brainstorming was conducted with individuals involved in the Project (Project director, coordinator and experts) in the subsequent, analytic phase, aimed at discussing, bringing to light and analysing the results of the study.

As a result a summarizing report was drafted in the phase of developing and summarizing suggestions, which, as planned, was presented to all the beneficiaries of the Project, in particular relevant state, executive and legislative bodies, local self-governing bodies, experts in the field (architects, urban planners, etc.), local and international NGOs in this field, and also professional entities (Union of Architects of Armenia, Yerevan State University of Architecture and Construction, etc.). It will be accessible on the organization's website under the link www.urbanlab.am/prd_planning.pdf. It may also be useful material for civic activists and other researchers.

The research includes the study of legislative and related normative documents aimed at the sustainable development of the built environment within the framework of the current legislation of the Republic of Armenia and undertaken international and European commitments, and also the development of suggestions through identification of priorities based on the professional opinions of people involved in the Project. It does not claim to resolve all the issues facing the sphere, however being one of the first of its kind and coverage it is presumably going to have a tangible impact on the development processes of the sphere.

Below we present several recommendations which have been considered important by the working group:

1. Ensure that the draft work of urban planning and zoning documents in all phases is regulated mainly by urban planning legislation without reference to other laws. For this purpose, it will be necessary to adopt an Urban Planning or Territorial Development Code the components of which must be spatial planning, zoning, architectural activity, construction, supervision, and the exploitation of buildings and structures.

2. Set the legal status of the zoning ground plan as the fundamental document defining the rules and legal regimes for the use of land and real estate. Legislatively define and apply in it the urban planning regulation; the word “regulators” may also be used for the individual elements of the latter.
3. Simplify the requirements presented to rural settlement spatial planning documents, not conditioning them to the borders of administrative-territorial units. This will allow developing them for territorial community groups taking into account geographic, economic and other linking factors. It is necessary to review their substantive form and to shape mechanisms for increasing the level of their practical application.
4. Observe the compulsory nature of zoning plans of operative significance for all settlements, by developing special simplified procedures in order to provide a legal framework for use of land in all settlements (or the total territory) of the Republic of Armenia.
5. Determine the elementary unit of land of an area by legislatively drafting its urban planning-legal status and its documentation procedures, which should replace the architectural planning assignment (ԱՊՅ). It is the right of each landowner, within the framework of procedures relating to the possession or alienation of property or generally, at any time, to openly and conveniently obtain information on the conditions of construction and all forms of limitations concerning the land parcel.
6. Review the specialized urban planning terminology, including the introduction of the term “spatial planning” which will significantly change the requirements being presented to the sphere and will have a positive effect on the constituent planning documentation system.
7. To make an inventory of all terms specifying urban planning objects, subjects, functions used in legislative or other legal acts and clearly and unequivocally define their meanings and status.
8. Realize the easing of all unreasonably inflated demands stipulated in the normative legal acts regulating the sphere. In individual cases they are unenforceable in practice and there are also duplications and inconsistencies in substance, which prompts the necessity to make relevant changes and additions to legal acts.
9. Clarify the substantive connections and mutual links between spatial planning documents and other social and economic plans and also the priorities for their development. As a result it is necessary to set down the framework of these connections at a state level in order not to waste the resources invested in the drafting of plans and projects and to use them in a targeted manner.
10. Ensure the increase in the level of practical applicability of the spatial planning documents being drafted by reflecting them in state and local expenditure plans. It is essential to assess the measures foreseen in the documents objectively according to their sources of financing and priorities, by bringing them into compliance with ongoing (four-year) development projects.

11. For approval, not to present the complete package of spatial planning documents but only the main scheme and action plan.
12. It is recommended that an Armenian urban development (technical) normative document be created based on the existing urban planning normative document (СНП 2.07.01-89) in which particular attention must be paid to the acute problems present in the field nowadays and they must be replenished with parts which are considered to be new in the sphere such as the provisions concerning zoning plans (categorization and naming of forms of use and combining of permissible uses, etc.), the current priorities concerning mobility (provisions regarding low mobility, alternative transportation systems) and so on.
13. Combine the functions of territorial development and planning, protection of landscapes and their constituent historic environments, into one authorized body.
14. Place importance on the capacity building of the professional community through the realization of various training and educational programs. It should also create opportunities for future professionals willing to engage in urban planning activities to attain necessary qualifications.
15. Create legislative bases for the shaping and establishment of professional self-regulation establishments (institutions) which will allow using the internal regulative capacities of the professional community to raise the quality of the regulation and administration of the sphere.
16. Develop the methodical and legislative bases of the legislatively stipulated processes for public awareness and public discussion, with the objective of the introduction and complete establishment of participatory forms and methods of governance within a short period of time.

Գրականության ցանկ

1. ՀՀ Անկախության հռչակագիր
2. ՀՀ Սահմանադրություն

Միջազգային և եվրոպական փաստաթղթեր

3. Եվրոպայի Ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիա, Գրանադա, 1985թ.,
4. Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիա, Ֆլորենցիա, 2000թ.,
5. Տարածքային պլանավորման եվրոպական խարտիա, Տորրեմոլինոս, 1983թ.,
6. European regional/spatial planning Charter, Strasbourg, 1983
7. European rural heritage observation guide, Ljubljana, 2003
8. Guiding principles for sustainable spatial development of the European continent, Hannover, 2000
9. Leipzig Charter on Sustainable European Cities, Leipzig, 2007,
10. Spatial development glossary, Lisbon, 2006
11. Territorial Agenda of the European Union 2020 Towards an Inclusive, Smart and Sustainable Europe of Diverse Regions, Godol, 2011,
12. The Council Of Europe Conference Of Ministers Responsible For Spatial Planning – CEMAT: The Territorial Dimension Of Human Rights And Democracy, Ljubljana, 2005

Օրենքներ

13. ՀՀ օրենքը պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին, ՀՕ-261, ընդունված 11.11.1998թ.,
14. ՀՀ օրենքը բնության հատուկ պահպանվող տարածքների մասին, ՀՕ-5, ընդունված է 02.12.1991
15. ՀՀ օրենք Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին, ՀՕ-5-Ն, ընդունված է 26.12.2008
16. ՀՀ օրենքը քաղաքաշինության մասին, ՀՕ-217, ընդունված 05.05.1998թ.,
17. ՀՀ հողային օրենսգիրք, ՀՕ-185, ընդունված 02.05.2001թ.,
18. ՀՀ օրենքը իրավական ակտերի մասին, ՀՕ-320, ընդունված 03.04.2002թ.
19. ՀՀ օրենքը վարչատարածքային բաժանման մասին, ՀՕ-18, ընդունված 07.11.1995թ.


Կառավարության որոշումներ

20. Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի քննարկմանը

- և որոշումների ընդունմանը հասարակության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին, N 660, 28.10.1998թ.,
21. ՀՀ լանդշաֆտի ազգային քաղաքականության իրագործման հիմնադրույթներ, 17.11.2011թ.
22. ՀՀ կառավարության որոշում Երևան քաղաքում առաջնահերթության կարգով քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներ սահմանելու և ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 26-ի N 792-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին, N 945-Ն, 14.02.2010թ.,
23. ՀՀ կառավարության որոշում պետական քաղաքաշինական կադաստրի վարման և քաղաքաշինական գործունեության մոնիթորինգի անցկացման կարգը հաստատելու մասին, N 802, 31.12.1999թ.,
24. ՀՀ կառավարության որոշումը բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին, N 408, ընդունված 14.05.2011թ.,
25. ՀՀ կառավարության որոշումը պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին, N 438, ընդունված 20.04.2002թ.,
26. ՀՀ կառավարության որոշումը քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի մշակման և հաստատման կարգը սահմանելու մասին, N 351, 26.05.1999թ.,
27. ՀՀ կառավարության որոշումը համայնքների բնակավայրերի գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու ու փոփոխելու և ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ընդունված 29.12.2011թ.:
28. ՀՀ համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին, N 1920-Ն, ընդունված 29.12.2011թ.,
29. ՀՀ Տարաբնակեցման գլխավոր նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման, փոփոխման և մոնիթորինգի անցկացման մասին կարգը հաստատելու մասին, N 2164-Ն, ընդունված 19.12.2002թ.,
30. Տարածքային հատակագծման ուրվագծի և նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման և փոփոխման կարգը հաստատելու մասին, N 997-Ն, 08.08.2003թ.,

Այլ փաստաթղթեր

31. Անկախ պետությունների համագործակցության քաղաքաշինական խարտիա, Մինսկ, 1999թ.,
32. Կայուն զարգացման ծրագիր, Երևան 2008թ.,
33. ՀՀ տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցանկ, Երևան 2013թ.,
34. Տարածական պլանավորումը կարգավորող նորմատիվային ակտերի համակարգի վերլուծություն, Սարգիս Թովմասյան
35. Քաղաքաշինական համակարգերի հուսալիություն, Հիմնական դրույթներ, Երևան, 1999թ.,
36. Քաղաքաշինությունն ու նոր կառավարությունը, Սարիատ Պետրոսյան, Անկախ շաբաթաթերթ, archive.ankakh.com/2012/05/206745/
37. Draft Istanbul Addendum to the New Charter of Athens, Istanbul, 2012.,
38. Promoting Spatial Development by Creating COMMon MINdscapes – COMMIN Lithuania - Planning System, Riga 2002
39. Promoting Spatial Development by Creating COMMon MINdscapes – COMMIN Spatial planning in Latvia, 2007
40. Spatial Planning Law (Latvia), 2005
41. The Charter of European Planning, The Vision for Cities and Regions - Territories of Europe in the 21st Century, Barcelona, 2013
42. The European Council of Town Planners' Vision for Cities in the 21st century, Lisbon, 2003
43. Урбанистика, В.Глазычев, Москва, 2008
44. Глобальный доклад о населенных пунктах. Планирование устойчивых городов: направления стратегии, Лондон • Стерлинг, Вирджиния, 2009
45. Градорегулирование в условиях рыночной экономики, Э.К.Трутнев, М.Д. Сафарова, Москва, 2009
46. Градостроительный кодекс Российской Федерации" от 29.12.2004 N 190-ФЗ (ред. от 05.04.2013)(с изм. и доп., вступающими в силу с 01.07.2013), Москва, 2004
47. Декларация о городах и других населенных пунктах в новом тысячелетии, Стамбул, 1996
48. Европейская хартия городов II Манифест новой урбанистики, Страсбург, 2008
49. Земельный кодекс Российской Федерации от 25.10.2001 N 136-ФЗ (ред. от 23.07.2013) (с изм. и доп., вступающими в силу с 06.09.2013), Москва, 2001
50. основополагающие принципы устойчивого пространственного развития европейского континента и меры по их реализации, Киев 2003
51. Правила землепользования и застройки, А. Высоковский, Бишкек, 2005



**Քաղաքաշինության ոլորտի հետ կապված հիմնախնդիրները
Հայաստանի Հանրապետությունում
(հետազոտության արդյունքներ)**

Հետազոտությունն իրականացվել է «Պերսոնա Գրափա. Մարքեթինգային լուծումներ» ընկերության կողմից՝ «Ուրբանլաբ Երևան» քաղաքաշինության ժողովրդավարացման ինստիտուտի պատվերով

ԵՐԵՎԱՆ 2013

Բովանդակություն

Առաջաբան	3
Հետազոտության իրականացման մեթոդաբանություն	3
Հետազոտության արդյունքների վերլուծություն	4
Իրավիճակի գնահատում	4
Ոլորտային հիմնախնդիրներ	6
Ոլորտի վերահսկողություն	21
Ամփոփում	23
Հավելված 1	24

ԱՌԱՋԱԲԱՆ

«Ուրբանլաթ Երևան» քաղաքաշինության ժողովրդավարացման ինստիտուտը «Քաունթերփարթ ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության ֆինանսավորմամբ իրականացնում է «Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի համակարգի վերլուծության և զարգացման» ծրագիրը: Առկա խնդիրների վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար ծրագրի շրջանակներում իրականացվել է հետազոտություն, որի նպատակն է եղել ավելի խորքային և ուղղակի կերպով վերհանել քաղաքաշինության հետ կապված օրենսդրական խնդիրները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակ



Հետազոտության նպատակն է բացահայտել Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինության ոլորտի հետ կապված հիմնախնդիրները:

Հետազոտության մեթոդ

Հաշվի առնելով «Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի համակարգի վերլուծության և զարգացման» հետազոտության նպատակները՝ տեղեկատվության հավաքման նպատակով կիրառվել են քանակական և որակական մեթոդներ, մասնավորապես, որպես քանական մեթոդ ընտրվել է ընտրանքային խմբի հետ դեմ առ դեմ հարցազրույցի մեթոդը՝ կիրառելով կիսաձևայնացված հարցաթերթ (տես՝ Հավելված 1): Որպես տեղեկատվության հավաքման որակական մեթոդ կիրառվել է ընտրանքային խմբի ներկայացուցիչների հետ անհատական խորին հարցազրույցների մեթոդը՝ կիրառելով ոչ ձևայնացված հարցաշար: Որակական հարցազրույցներ իրականացվել են մինչև տեսական հազեցվածության հասնելը:

Կառուցվել է տեսական ընտրանք, որտեղ որպես թիրախային խումբ են ընտրվել քաղաքաշինության ոլորտային ակտիվ մասնագետները:

Ընդհանուր առմամբ իրականացվել են **34** դեմ առ դեմ հարցումներ և **10** անհատական խորին հարցազրույցներ թիրախային խմբի ներկայացուցիչների հետ:



Գրաֆիկ 1-ում և 2-ում ներկայացված են հարցման ենթարկված ռեսպոնդենտների տարիքային կազմը և զբաղմունքը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իրավիճակի գնահատում

Քանակական հարցման շրջանակներում իրականացվել է իրավական ակտերի մասին թիրախային խմբի ներկայացուցիչների տեղեկացվածության գնահատում, որը ներկայացված է Աղյուսակ 1.1-ում: Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, հարցվողները առավել լավատեղյակ են «Քաղաքաշինության մասին», «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրերի պահպանության մասին» ՀՀ օրենքներին և «Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմանը: Հարցվողների կողմից թույլ տեղեկացվածության աստիճանով առանձնանում են «Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիան», «Տեղական ինքնակառավարման» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքները, ընդ որում հարցվողների 26%-ը ընդհանրապես տեղյակ չէ «Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիային»:

N	Իրավական ակտ	Ընդհանրապես տեղյակ չեք	Ավելի շուտ տեղյակ չեք	Ավելի շուտ տեղյակ եք	Լիովին տեղյակ եք
1	Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիա	26%	15%	29%	29%
2	ՀՀ հողային օրենսգիրք	21%	26%	29%	24%
3	Քաղաքաշինության մասին ՀՀ օրենք	6%	12%	35%	47%
4	Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք	12%	38%	26%	24%
5	Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք	12%	38%	26%	24%
6	Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրերի պահպանության մասին ՀՀ օրենք	0%	12%	41%	47%
7	ՀՀ համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում	12%	15%	18%	56%
8	Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում	9%	9%	35%	47%
9	Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում	15%	21%	35%	29%


Աղյուսակ 1.1

Իրավական ակտերին տեղեկացվածության միջին գնահատականները (Աղյուսակ 1.2) ցույց են տալիս, որ ոլորտային մասնագետները առավել լավատեղյակ են “Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրերի պահպանության մասին” և “Քաղաքաշինության մասին” ՀՀ օրենքներին և “Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին” ՀՀ կառավարության որոշմանը: Առավել թույլ է տեղեկացվածության աստիճանը “ՀՀ հողային օրենսգիրքին”, “Տեղական ինքնակառավարման մասին” և “Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքներին:

N	Իրավական ակտ	Միջին գնահատական
1	Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիա	2.62
2	ՀՀ հողային օրենսգիրք	2.56
3	Քաղաքաշինության մասին ՀՀ օրենք	3.24
4	Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք	2.62
5	Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք	2.62
6	Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրերի պահպանության մասին ՀՀ օրենք	3.35
7	ՀՀ համայնքների (քնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում	3.18
8	Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում	3.21
9	Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում	2.79

Աղյուսակ 1.2

Նախագծային գործընթացում թիրախային խմբի ներկայացուցիչները առավել հաճախ առնչվել են կարմիր գծից հեռավորության, հարևան հողամասից հեռավորության և հողամասի տարածքում կառուցապատման տոկոսի սահմանափակումներին (գրաֆիկ 1.1): Հարցվողները համեմատաբար ավելի քիչ են առնչվել սերվիտուտին և ջրանցիկ և անջրանցիկ մակերևույթների հարաբերության սահմանափակումներին:



ՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Ընդհանուր պատկեր: Թիրախային խմբի ներկայացուցիչների կողմից իրականացվել է Հայաստանում քաղաքաշինության գործունեության հետ կապված հիմնախնդիրների նշանակալիության գնահատում: Աղյուսակ 2.1-ում ներկայացված է գնահատման արդյունքները՝ ըստ տրված պատասխանների հաճախականության: Ըստ արդյունքների, թիրախային խմբի ներկայացուցիչները, որպես առավել նշանակալի հիմնախնդիրներ առանձնացրել են օրենսդրական կարգերի կիրառման ցածր մակարդակը, անարդյունավետ կառավարումը և կոռուպցիան: Որպես հիմնախնդիր առավել հաճախ ոչ նշանակալի է համարվել նյութական միջոցների սահմանափակությունը:

N	Հիմնախնդիր	Ընդհանրապես նշանակալի չէ	Ավելի շուտ նշանակալի չէ	Ավելի շուտ նշանակալի է	Լիովին նշանակալի է
1	Օրենսդրական դաշտի անկատարություն	6%	12%	44%	38%
2	Օրենսդրական կարգերի կիրառման ցածր մակարդակ	0%	3%	15%	82%
3	Անարդյունավետ կառավարում	0%	3%	24%	74%
4	Պարտականությունների սխալ բաշխում	0%	6%	41%	53%
5	Սահմանափակ նյութական միջոցներ	12%	15%	38%	35%
6	Արհեսավարժ կադրերի պակաս	6%	9%	26%	56%
7	Հանրային տեղեկացվածության ցածր մակարդակ	0%	21%	29%	50%
8	Կոռուպցիա	0%	3%	18%	79%

Աղյուսակ 2.1

Աղյուսակ 2.2-ում ներկայացված են հիմնախնդիրների նշանակալիության միջին գնահատականները (գնահատման առավելագույն միավորը՝ 4): Նկատենք, որ բոլոր նշված հիմնախնդիրները թիրախային խմբի կողմից գնահատվել են այս կամ այն չափով նշանակալի, և չկա միջինից ցածր գնահատված հիմնախնդիր:

N	Հիմնախնդիր	Միջին գնահատական
1	Օրենսդրական դաշտի անկատարություն	3.15
2	Օրենսդրական կարգերի կիրառման ցածր մակարդակ	3.79
3	Անարդյունավետ կառավարում	3.71
4	Պարտականությունների սխալ բաշխում	3.47
5	Սահմանափակ նյութական միջոցներ	2.97
6	Արհեսավարժ կադրերի պակաս	3.36
7	Հանրային տեղեկացվածության ցածր մակարդակ	3.29
8	Կոռուպցիա	3.76

Աղյուսակ 2.2

Առավել նշանակալի են գնահատվել օրենսդրական կարգերի կիրառման ցածր մակարդակը (3.79), պարտականությունների սխալ բաշխումը (3.47) և կոռուպցիան (3.76):

Այն հարցին, թե որ գործողությունները կարող են մեղմել քաղաքաշինական գործունեության հետ կապված իրավիճակը, մասնագետները որպես առավել արդյունավետ գործողություն առանձնացրել են հատկապես կառավարման համակարգի բարեփոխումներին ուղղված գործողությունները և մասնագիտական հանրային դերի կարևորումը: Առավել ոչ օպտիմալ գործողություն է որակվել պետական և տեղական մակարդակներում լիազորությունների վերաբաշխումը: Այս արդյունքներն են ցույց տալիս նաև գործողությունների արդյունավետության գնահատման միջին արդյունքները՝ ներկայացված Աղյուսակ 2.4-ում (գնահատման առավելագույն միավորը՝ 4):


N	Հիմնախնդիր	Ընդհանրապես չեն կարող	Ավելի շուտ չեն կարող	Ավելի շուտ կարող են	Լիովին կարող են
1	Օրենսդրական և ենթաօրենսդրական առաջարկությունների մշակում	6%	3%	53%	38%
2	Արհեստավարժ կադրերի պատրաստում և վերապատրաստում	3%	3%	44%	50%
3	Պետական ու տեղական մակարդակներում լիազորությունների վերաբաշխում	12%	9%	41%	38%
4	Քաղաքաշինական գործող մեխանիզմների մշակում	3%	12%	21%	62%
5	Կառավարման համակարգի բարեփոխում	3%	0%	24%	74%
6	Հանրային տեղեկացվածության բարձրացում	3%	9%	44%	44%
7	Մասնագիտական հանրային դերի կարևորում	3%	6%	21%	71%

Աղյուսակ 2.3

N	Հիմնախնդիր	Միջին գնահատական
1	Օրենսդրական և ենթաօրենսդրական առաջարկությունների մշակում	3.24
2	Արհեստավարժ կադրերի պատրաստում և վերապատրաստում	3.41
3	Պետական ու տեղական մակարդակներում լիազորությունների վերաբաշխում	3.06
4	Քաղաքաշինական գործող մեխանիզմների մշակում	3.45
5	Կառավարման համակարգի բարեփոխում	3.68
6	Հանրային տեղեկացվածության բարձրացում	3.29
7	Մասնագիտական հանրային դերի կարևորում	3.59

Աղյուսակ 2.4

Համաձայն քաղաքաշինության ոլորտում հիմնախնդիրների նշանակալիության միջին ցուցանիշների **օրենսդրական դաշտը** առանձնացվել է որպես քաղաքաշինության ոլորտի առավել թույլ օղակ, որը կապված է ինչպես դաշտի անկատարությամբ, այնպես էլ օրենսդրական կարգերի կիրառման ցածր մակարդակով: Սակայն մասնագետները, որպես առավել կարևոր հիմնախնդիր առանձնացրել են օրենսդրական կարգերի կիրառման ցածր մակարդակը՝ նշելով, որ օրենքներ որպես այդպիսին առկա են, սակայն ցածր այդ օրենքների կիրառման մակարդակը: Ինչպես տեսնում ենք գնահատման քանակական արդյունքներից (Գրաֆիկ 2.1), որպես առավել նշանակալի հիմնախնդիր մասնագետների 82%-ը առանձնացրել է օրենսդրական ակտերի կիրառման ցածր մակարդակը, և միայն 38%-ն է նշել օրենսդրական դաշտի անկատարությունը:



Այս մասին նշվել է նաև որակական հարցազրույցների արդյունքում: Մասնագետների մի մասը նշել է, որ միայն կենտրոնանալ օրենսդրական դաշտի անկատարությունների հարթման վրա անարդյունավետ է, քանի որ օրենքները անընդհատ լրամշակվում են և չեն կարող կատարյալ լինել: Փոխարենը պետք է առավել արդյունավետ դարձնել օրենսդրական կարգերի կիրառումը և կառավարման համակարգը:

“Սկզբունքորեն մենք ունենք օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտը, օրենսդրական դաշտը կա, հարցը այն է, մենք ցանկանում ենք օգտվել այդ դաշտից թե ոչ, սակայն փորձը ցույց է տալիս, որ չենք ցանկանում: Սխալ է ասել, որ դաշտը չկա, կարող է և թերի է, ժամանակի ընթացքում լրամշակվում է: Բայց պետք է գոնե ինչ-որ չափով օրենքը պահել: Օրենքը կա բավարար չափով, սակայն պետք է ճիշտ օգտվել”:

(ար. սեռ, 51 տ. և բարձր, քաղաքաշինարար)

“Այնպես չէ, որ օրենսդրական դաշտ ընդհանրապես չկա, սակայն շատ բաներ հստակ չեն, և պետական փորձաքննությունն է որոշում նախագիծը օրենքի սահմաններում է, թե՛ ոչ: Նախագծողը բախտի բերմամբ նախագծում է՝ չիմանալով, դա կանցնի, թե՛ ոչ: Հարցն այն է, որ օրենսդրական դաշտը կա, կարգը կա, սակայն կիրառելիությունը ցածր մակարդակում է: Օրինակ, նախագծեր կան, որ օրենքի սահմաններում

են, պեղք է հաստատվում, սակայն մնում են սեղաններին, սակայն նախագծեր էլ կան, որ լրիվ անօրինական են, սակայն անցնում են, և դա կիրառելիության ցածր մակարդակի պարճառով է”:

(իգ. սեռ, 31-50 տ, նախագծող ճարտարապետ)

Որպես օրենսդրական դաշտի անկատարության վառ դրսևորում մասնագետների մի մասը նշել է օրենքում առկա հակասությունները և թերի նկարագրությունները, ինչը պատճառ է դառնում, որ որոշակի շահագրգիռ խմբեր կարողանան օգտվել այդ հակասություններից և թերություններից՝ դեմ դուրս գալով հանրային շահին:

“Օրենսդրական դաշտի անկատարությունը, իհարկե, նշանակի խնդիր է հայաստանյան իրականությունում, քանի որ բոլոր չարաշահումները դա սահմանային մասերում են կատարվում, որտեղ որ կան հակասություններ օրենքում: Օրենքի մի մասը մի բան է ասում, մյուս մասը՝ այլ բան, և որոշ խմբեր օգտվում են այդ տարածայնություններից, էլ չեն խոսում օրենքի անկատարությունից, երբ որ բացառությունը լիարժեք չի, և կրկին կարողանում են օգտվել դրանից: Դա է նշանակում, որ օրենքի մի փոքր թերի լինելը հնարավորություն է տալիս, որ ինչ-որ խմբեր օգտվեն այդ անկատարությունից”:

(ար. սեռ, 51տ. և բարձր, նախագծող ճարտարապետ)

Որոշ մասնագետներ օրենսդրական դաշտի անկատարությունը կապում են այն հանգամանքի հետ, որ կրկնօրինակվում են այլ երկրներում առկա օրենքները՝ առանց հաշվի առնելու տեղական առանձնահատկությունները և իրավիճակը:

“Ոչ թե գտնում եմ, որ օրենսդրական դաշտը անկատար է, այլ գտնում եմ, որ ինքնին օրենսդրական դաշտը լավ է մշակված, բայց լավ է մշակված օրինակ ունենալով արտերկրի՝ Եվրոպայի, Ամերիկայի օրենսդրական դաշտերը և տեղեր կան, որ կարելի է ասել նույնությամբ արտագրված են: Բնական է, որ մենք օրինակ ենք վերցնում զարգացած երկրներից: Բայց ինչու՞մ է կայանում անկատարությունը: Գտնում եմ, որ այդ օրենսդրական ակտերի մեջ ընդհանրապես հաշվի չի առնված տեղական առանձնահատկությունները, այսինքն այդ օրենքները չեն ադապտացված մեր իրականության համար: Մենք այդ օրինակները վերցրել ենք կայացած դեմոկրատական երկրներից, բայց հաշվի չենք առել, որ մենք դեռևս գտնվում ենք դեմոկրատիայի ոչ շարժարգացած էտապում, ունենք մի շարք թերություններ, ունենք տնտեսական դաշտի թուլություն: Օրենսդրությունը, հատկապես քաղաքաշինության մեջ, առանձին չի հանդիսանում, ինքը միշտ հենվում է տնտեսական իրավիճակի վրա: Իսկ մենք լավ «սիրում» օրենքը վերցնում ենք և արտատպում ենք, սակայն չունենք տնտեսական մեխանիզմներ դրանք կիրառելու, չունենք, քանի որ երկիրը տնտեսական զարգացման ընթացքում է, համապատասխան տնտեսական զարգացում չունի, բնակչության բարեկեցությունը համապատասխան մակարդակի վրա չի, այսինքն օրենքը լավն է, բայց չենք կարող կիրառել, քանի որ մնացած բաղադրիչները բացակայում են: Դա էլ նշանակում է, որ օրենքը մնում է օդի մեջ: Անկատարություն ասելով հենց դա ի նկատի ունեմ”:

(իգ. սեռ, 51տ. և բարձր, նախագծող ճարտարապետ, քաղաքաշինարար, վերականգնող ճարտարապետ, դասախոս)

Մասնագետներից մեկն էլ նշել է, որ բավականին հաճախ են կատարվում օրենսդրական լրամշակումներ և ուղղումներ, և այդ փոփոխությունները շահագրգիռ կողմերին նորմալ չեն մատուցվում: Օրինակ, հրապարակվում են միայն օրենքի կամ որոշումների փոփոխությունները, և լրամշակված օրենքի ամբողջական տեսքը ստանալը բավականին դժվար է դառնում մասնագետների համար: Համաձայն որոշ մասնագետների, քաղաքաշինության ոլորտում բացակայում են երկարաժամկետ ռազմավարական ծրագրերը, ինչը բարձրացնում է


կամայականությունների և անորոշության ռիսկը: Չկա հստակ ծրագիր, որով պետական և համայնքային կառույցները պետք է առաջնորդվեն:

Որոշ մասնագետներ նաև առանձնացրել են քաղաքաշինության ոլորտում գործող նորմատիվների իրականությանը անհամապատասխանելիության հարցը, քանի որ վերջինս ներկայացնում են խորհրդային ժամանակշրջանում գործող նորմատիվները:

“Թվում է՝ անցել ենք շուկայական հարաբերությունների, զարգացել ենք, բայց մեր քաղաքաշինական նորմերը սովետական ժամանակների նորմեր են: Օրինակ, սովետական ժամանակշրջանում կային նորմեր, որ միկրոշրջանների համար պետք է լինի դպրոց, մանկապարտեզ և այլն, սակայն դրանք արտահայտում են տիպիկ սովետական ժամանակների պահանջները և սովետական մրաժողության քաղաքաշինությունը: Այս նորմերը ամրագրված են օրենքով և հեղուկաբար խախտել չի կարելի, սակայն իրականում անհնար է այս նորմերը չխախտել, քանի որ իրականության մեջ դրանք չեն գործում”:

(ար. սեռ, 51 տ. և բարձր, նախագծող ճարտարապետ, դասախոս)

Որպես օրենսդրական դաշտի անկատարության հաղթահարման մեխանիզմ օրենսդրական և ենթաօրենսդրական առաջարկությունների մշակումը գնահատվել է որպես հնավոր իրավիճակը մեղմող գործողություն: Տվյալները ներկայացված են Գրաֆիկ 2.2-ում:




Որոշ մասնագետներ նշել են, որ առավել կարևոր է օրենսդրական և ենթաօրենսդրական առաջարկությունների մշակման փոխարեն անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացել առկա օրենսդրական ակտերի կիրառման աստիճանի և կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման վրա:

“Օրենքների անկատարությունը ես չեմ համարում առաջնային խնդիր, քանի որ օրենքը չի կարող կատարյալ լինել, օրենքը անընդհատ փոփոխվող բան է: Հիմնվել միայն օրենքի կատարյալ լինելու վրա անարդյունավետ է: Բայց պատասխանատվությունը կարող է կոնկրետ լինել: Խնդիրը նրանում չէ, թե օրենքը որքանով է լավը կամ վատը, խնդիրը նրանում է, որ ամեն մի օղակ ունենա իր

պատասխանատվությունը: Արդյունավետ կառավարումը շար ավելի կարևոր է, քան “աշխարհի լավագույն օրենքը” ունենալը: Կառավարումը կախված չէ այդքան օրենքի հետ, կառավարումը կապված է առաձին հերթին պատասխանատվությունների, երկրորդ հերթին ընդհանրապես հասարակական դաշտում աշխատելու մշակույթի հետ: Եթե գոյություն չունի օրենք, կարող է սակայն գոյություն ունենալ արդյունավետ կառավարում, եթե գոյություն ունի հասարակական դաշտում աշխատելու մշակույթ: Մասագետները այն օղակն են, որ կարող են բերել այդ մշակույթը”:

(ար. սեռ, 31-50տ., նախագծող ճարտարապետ, քաղաքաշինարար)

Առանձնացված լինելով որպես ոլորտին բնորոշ առավել նշանակալի հիմնախնդիր՝ **կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումը** գնահատվել է որպես առավել արդյունավետ գործողություն՝ քաղաքաշինության ոլորտում առկա իրավիճակը մեղմելու համար: Գրաֆիկ 2.3-ում ներկայացված է հիմնախնդրի առկայության և բարեփոխման անհրաժեշտության գնահատականները, և ինչպես տեսնում ենք արդյունքներից, մասնագետները արդյունավետ են գնահատում բարեփոխումների իրականացումը:



Որակական հարցազրույցների ընթացքում որոշ մասնագետներ շեշտել են, որ կառավարման համակարգի բարեփոխումը պետք է լինի համակարգային, և ոչ թե «կոսմետիկ, և միայն համակարգային բարեփոխումների արդյունքում է հնարավոր մեղմել առկա իրավիճակը:

“Կառավարման համակարգի բարեփոխումները կարող են մեղմել իրավիճակը, եթե լինեն լուրջ համակարգային փոփոխություններ, սկզբունքային, ոչ թե ինչ-որ կադրային փոփոխություններ: Այսինքն, անհրաժեշտ է ստեղծել նոր կադրեր, վերապատրաստել և լավ որակներ տալ այդ կադրերին, որպեսզի հնարավոր լինի այդ կադրերը ներդնել համակարգի մեջ: Այդպիսի մոտեցումը կլինի հեղափախական, ոչ թե “Ա” կադրին տանեն «Բ»-ի տեղը: Անհրաժեշտ է, որ հին կառավարման մրաժեղակերպով մարդիկ տեղ չունենան համակարգում, այլ թարմ մրաժեղակերպով մարդիկ գան”:

(իգ. սեռ, 51տ. և բարձր, նախագծող ճարտարապետ, քաղաքաշինարար, վերականգնող ճարտարապետ, դասախոս)

Մասնագետները կառավարման համակարգում առկա թերությունները կապում են որակյալ կադրերի բացակայությամբ և լիազորությունների սխալ բաշխմամբ:

“Անարդյունավետ կառավարումը պրոֆեսիոնալիզմի բացակայության հետ կապված խնդիր է, որը, բնականաբար, մեծ նշանակություն ունի, իսկ մեզ մոտ քաղաքների գլխավոր ճարտարապետների մեծ մասը անգամ ճարտարապետներ չեն”:

(ար. սեռ, 51 տ. և բարձր, նախագծող ճարտարապետ)

Լիազորությունների սխալ բաշխումը քաղաքաշինության ոլորտային մասնագետների կողմից առանձնացված առավել նշանակալի հիմնախնդիրներից մեկն է (3,47 միավոր): Ըստ մասնագետների, պարտականությունների սխալ բաշխումը բնութագրական է հայաստանյան իրականությանը և պայմանավորված է երկու կարևոր հանգամանքներով՝ 1. ոչ ֆորմալ կապերի միջոցով կարևոր պաշտոններ են զբաղեցնում թույլ մասնագիտական որակներ ունեցող անձինք 2. առկա է որակյալ կադրերի պակաս:

“Պարտականությունների սխալ բաշխումը նույնպես գալիս է մեր ազգային առանձնահատկություններից: Պարտականությունները մեզ մոտ շատ հաճախ բաշխվում են ոչ թե ով ինչ կարող է անել, այլ 2 սկզբունքով, առաջինը՝ ով ում բարեկամն է, ով ում որպեղից ճանաչում է, 2-ն էլ՝ գալիս է նրանից, որ մեծ թվով արհեստավարժ երտասարդներ, ովքեր և մեր մոտ են կրթություն ստացել, և արտասահմանում շատ որակյալ կրթություն են ստացել, նրանք բացակայում են երկրից, և բնականաբար այդ պարտականությունները բաշխվում են նրանց մեջ ովքեր, որ մնացել են: Իսկ մնում են շատ հաճախ ոչ նրանք ովքեր, որ պետք է կառավարեն, մնում են նրանք ովքեր որ իրենց տեղերում ամրապնդվել են, ինչ-ինչ բաների շնորհիվ: Իրար հետ կապված են: Մենք մեր կադրերի պակասությունն ունենք, ովքեր որ լավագույնները արտասահմանում են, իսկ եղածները իրենց տեղերում շատ հաճախ չեն ցանկանում ընդհանրացնել, սակայն շատ հաճախ նշանակվում են ոչ թե իրենց ունակություններից, այլ ելնելով այլ սկզբունքներից՝ ծանոթությունների շրջանակ, ընտանեկան կապեր և այլն”:

(իգ. սեռ, 51տ. և բարձր, նախագծող ճարտարապետ, քաղաքաշինարար, վերականգնող ճարտարապետ, դասախոս)

“Պարտականությունների սխալ բաշխումը շատ հաճախ կադրերի պակասի պատճառով է լինում, եթե կադրեր չունես, ստիպված ես սխալ կադր դնում: Պետք է լավ կադրեր պատրաստել, ճիշտ մարդ բերել համակարգի մեջ, որ կարողանալ պարտականություններն էլ ճիշտ բաշխել: Սխալ մարդիկ բարձրանում են վերև: Իմ կարծիքով դա չպետք է թույլ տալ”:

(իգ. սեռ, 31-50 տ., նախագծող ճարտարապետ,)

Ըստ մասնագետների, կարևորագույն պաշտոններ շատ հաճախ զբաղեցնում են մասնագիտությամբ ոչ ճարտարապետները, և դա հատկապես բնութագրական է համայնքային կառավարման ոլորտում առկա ճարտարապետների հաստիքների դեպքում: Այնուամենայնիվ, մասնագետները կարծում են, որ պետական և տեղական մակարդակով լիազորությունների վերաբաշխումը չի կարող լինել հիմնախնդրի լուծում, քանի որ այդ դեպքում պարզապես տեղի կունենա ոչ որակյալ կադրերի ներքին հոսք մի պաշտոնից մյուսը, ինչը իրավիճակի լուծում չի կարող:

“Համայնքների ղեկավարները գրագետ չեն ճարտարապետության մեջ, դրա համար ամբողջ համակարգն է սխալ աշխատում: Մարգարետարաններում ճարտարապետների պաշտոնում լինում են ոչ ճարտարապետներ, որը հինքից սխալ է: Համարվում է, որ նրանք պետական ոլորտում քաղաքային են, հանձնում են համապատասխան քննությունը, սակայն ոչ մեկ չի հարցնում թե վերջինս ինչ մասնագիտության տեր է: Իսկ այստեղ պետք է կամ ճարտարապետ լինի, կամ իր գործը իմացող լավ իրավաբան գոնե”:

(ար. սեռ, 51 տ. և բարձր, նախագծող ճարտարապետ)


“Լիազորությունների վերաբաշխումը մեր այսօրվա մակարդակով չի մեղմի քաղաքաշինության հետ կապված խնդիրները, քանի որ այդ լիազորությունները ձևական բնույթ են կրում: Լիազորությունների բաշխումը շատ խոցելի և թույլ տղակ է”:

(ար. սեռ 51 տ. և բարձր, քաղաքաշինարար)

“Քաղաքաշինության վիճակը կարող է մեղմվել միայն գլխավոր ճարտարապետի պաշտոնի վերացման միջոցով: Դա մի հրեշավոր պաշտոն է, որը մարդ է փչացնում և պետք է այն վերացնել: Լինի ամբողջական փաստաթուղթ, որը մասնագետներին ուղղորդող կլինի, որ այս տարածքի համար այսինչ ֆունկցիան է, այսինչ սահմանափակումներն են: Ուղղակի պետք է լինի մի պետական աշխատող, ով ուղղակի փաստաթուղթ է տրամադրում, ոչ թե քեզ թելադրում կամ ամեն անգամ մի կտոր ազատ տեղի համար մերժումների պատրվակներ փնտրի”:

(ար. սեռ, 51 տ. և բարձր, նախագծող ճարտարապետ, դասախոս)

Այսպես, մասնագետների 12%-ը կարծում է, որ լիազորությունների վերաբաշխումը ընդհանրապես չի կարող մեղմել քաղաքաշինության ոլորտում առկա իրավիճակը: Իսկ հարցվածների 53%-ը պարտականությունների սխալ բաշխումը համարում է քաղաքաշինության ոլորտում առկա լիովին նշանակալի հիմնախնդիր, այնինչ միայն 38%-ն է կարծում, որ լիազորությունների վերաբաշխումը կարող է մեղմել առկա իրավիճակը:



Ինչպես արդեն նշվեց, լիազորությունների սխալ բաշխումը մասնագետների հիմնական մասը կապում էր որակյալ կադրերի բացակայության հետ, որը առանձնացված մյուս կարևոր հիմնախնդիրներից մեկն է: Սակայն այստեղ մասնագետների կարծիքները երկատվում են: Մի մասի կարծիքով արհեստավարժ կադրերի պակասը առկա և նշանակալի հիմնախնդիր է, մյուս մասի կարծիքով՝ ոչ այդքան, քանի որ առավել կարևոր և նշանակալի են ոլորտում առկա մյուս հիմնախնդիրները: Ըստ մասնագետների, ոլորտում առկա օրենսդրական կարգերի կիրառման ցածր մակարդակը, անարդյունավետ կառավարումը և այլ հիմնախնդիրներ անմիջական ազդեցություն են ունենում նույնիսկ պրոֆեսիոնալ կադրերի աշխատանքի վրա:

“Մեր ոլորտում երևի թե հայաստանյան մյուս ոլորտների հետ համեմատած ավելի քիչ է պրոֆեսիոնալիզմի պակասը, սակայն այն, որ ոլորտում առկա է օրենսդրական թերություններ, նույնիսկ պրոֆեսիոնալներին էլ չի փրկում: Եթե առկա է պարտականությունների սխալ բաշխում, անարդյունավետ կառավարում, ինչքան ուզում ես դու պրոֆեսիոնալ եղիր, շղթայական ռեակցիայի նման ազդեցություն ունենում է բացասական առումով: Չէի ասի թե արհեստավարժ կադրերի պակաս չկա, սակայն դա չի այս ոլորտի հիմնական և կարևոր թերացումը”:

(իգ. սեռ, 31-50 տարեկան, նախագծող ճարտարապետ)

“Սկզբունքորեն ունենք արհեստավարժ կադրեր, ովքեր բավականին տեղյակ և բանիմաց են, սակայն հարցը այն է, թե ովքեր են կանգնած նախագծերի հետևում, ով է փորձագետը: Թերացումները մյուս ֆիլտրների մեջ, որով պետք է անցնի նախագիծը”:

(ար. սեռ, 51 տ. և բարձր, քաղաքաշինարար)

Սակայն մասնագետների որոշ մասը շեշտում է հատկապես որակյալ կադրերի սղությունը, որը պայմանավորված է երեք հանգամանքներով՝ 1. որակյալ կադրերի արտահոսք արտասահման 2. կրթական համակարգում առկա թերություններ 3. աշխատանքային փորձառություն ձեռք բերելու դժվարություններ: Մասնագետների մի մասը կարևորել են կրթական համակարգում նորամուծությունների ներդրումը, քանի որ կրթական համակարգում դեռևս առկա են սովետական կրթական ծրագրեր: Մասնագետներից մեկը նշել է, որ շատ կարևոր է, որ դասվանդող դասախոսը ներգրավված լինի նախագծային գործընթացներում, քանի որ շատ հաճախ վերջիններս տիրապետում են միայն տեսական գիտելիքների: Մասնագետները կարևորել են նաև նորավարտ երիտասարդ կադրերի աշխատանքային փորձառության ձեռքբերումը և շեշտել են, որ այս առումով ցածր են շրջանավարտների հնարավորությունները, բացի այդ գործող արվեստանոցներն էլ նորաբաց լինելու պառճատով չեն կարող հարուստ փորձ փոխանցել երիտասարդներին:

“Մեզ մնացել են քիչ թվով արհեստավարժ կադրեր, որոնք մնացել են խորհրդային տարիներից, ովքեր շատ լավ կրթություն են ստացել և արհեստավարժ են, բայց նրանց թիվը տարիների ընթացքում պակասում է, մարդիկ գնում են թոշակի, մահանում են և այլն, իսկ հաջորդ եկող սերունդ գրեթե չկա: Դժվարության տարիներին, ճգնաժամի տարիներին շատ-շատերը փոխեցին իրենց մասնագիտությունը, նրանք սկսեցին բիզնեսով, կոմերցիայով զբաղվել, մի մասը արտագաղթեց, իսկ լրիվ երիտասարդ սերունդը, նրանք արդեն լավ պահանջներ ունեն, ոմանք էլ կրթություն են ստանում արտասահմանում, նրանք պահանջում են տնտեսական դաշտ, որպեսզի կարողանան կիրառել: Մենք ունենք լուրջ խնդիր կապված սերնդափոխության հետ, այդ հաջորդականությունը խախտվել է”:

(իզ. սեռ, 51տ. և բարձր, նախագծող ճարտարապետ, քաղաքաշինարար, վերականգնող ճարտարապետ, դասախոս)


“Միանշանակ կա արհեստավարժ կադրերի պակաս, որը պայմանավորված երկու կարևոր հանգամանքով՝ 1. ընդհանրապես աշխարհում շատ արագ փոխվում է քաղաքաշինական կրթության տեսակը, իսկ մեզ մոտ մնացել է բավականին կարծր, հին կրթություն, լավագույն դեպքում 60-ական 70-ական թվականների քաղաքաշինական կրթություն ենք սրանում: Կան մասնագետներ, որոնք վերապատրաստվում են, բայց քանի որ չկա դաշտ պրակտիկ աշխատանքների, այդ վերապատրաստված մասնագետները չեն կարողանում պրակտիկ կիրառել իրենց գիտելիքները: Փաստորեն կրթությունը մի կողմից, երկրորդ ասպեկտը այս մասնագետների կոնկրետ փորձառություն ձեռք բերելու հնարավորության պակասն է”:

(ար. սեռ, 31-50տ., նախագծող ճարտարապետ, քաղաքաշինարար)


“Մենք ունենք կադրեր, որոնք սակայն հոսեցին դեպի դուրս, այնպեղ աշխատելու համար, իսկ հիմա մենք փորձված կադրերի սուր պահանջարկ ունենք: Փորձված կադրերի, քանի որ կադրը կա, նոր ավարտած է, սակայն դեռ մի հինգ տարի պետք է որևիցե արվեստանոցում սովորի, պետք է փորձ ձեռք բերի, սակայն ումից, եթե ավելի փորձառու մասնագետները դրսում են: Մեզ մոտ որևիցե բան չի արվում դրա համար: Էլի նյութական խիստ պակասությունից է, կամ եղած արվեստանոցներում են աշխատում, որտեղ իրենք՝ արվեստանոցները, դեռ հասունացած չեն, սաղմնային վիճակում են մեծ մասը: Ինչ-որ մաս կա, որ հին վարպետ մարդիկ են գլխավորում, բայց մնացածը նոր բացված, դեռ իրենց գործին չտիրապետող մարդիկ են”:

(ար. սեռ, 51տ. և բարձր, նախագծող ճարտարապետ)

Գրաֆիկ 2.5-ում ներկայացված է արհեստավարժ կադրերի պակասի հիմնախնդրի և կադրերի պատրաստման և վերապատրաստման արդյունավետության ցուցանիշների համադրությունը: Ինչպես տեսնում ենք, մասնագետների ճնշող մեծամասնության կարծիքով վերապատրաստումը կարող է մեղմել քաղաքաշինության ոլորտում առկա իրավիճակը (ընդհանուր առմամբ՝ 94%):



Բացի կադրերի պատրաստումից և վերապատրաստումից մասնագետները նաև կարևորել են մասնագիտական հանրության դերի բարձրացումը, որը միջին արդյունքներով համարվել է երկրորդ առավել արդյունավետ գործողությունը: Ինչպես երևում է Գրաֆիկ 2.6-ից մասնագետների 71%-ը համարում է, որ այս ոլորտում բարեփոխումները լիովին կարող են մեղմել քաղաքաշինության ոլորտում առկա իրավիճակը:



Ինչպես պարզ է դառնում որակական հարցազրույցներից, մասնագետները կարևորել են նաև մասնագիտական հանրության դերը, քանի որ միայն վերջինս խորացած լինելով ոլորտային հիմնախնդիրների և առանձնահատկությունների մեջ, կարող է ապահովել դեպի հանրություն ճիշտ տեղեկատվության հոսքը, ի տարբերություն լրագրողների, ովքեր կարող են տրամադրել միայն մակերեսային և հաճախ ոչ ճիշտ տեղեկատվություն: Մասնագիտական հանրության դերի կարևորումը նաև պետք է ուղղված լինի առկա օրենսդրական դաշտի անկատարության մեղմանը, քանի որ մասնագիտական հանրությամբ պետք է բարձրաձայնի օրենքի խախտումների և սխալ որոշումների մասին:

“Մասնագիտական հանրությամբ պետք է միավորված լինի անպայման: Հանրությունը պետք է տեղեկացված լինի, այս այդ հարցում պետք է մեծ լինի մասնագիտական հանրության դերը: Ես չեմ ցանկանում լրագրողներին վատ բան ասել, բայց նրանք ուղղորդված չեն, նրանք շատ հաճախ ոլորտից բան չհասկանալով, կամ շատ քիչ հասկանալով, ընկնելով սենսացիաների հեյթից ապակողմորոշում են մարդկանց: Այդ մասնագիտական հանրությամբ, պետք է միավորված մշակի կարծիք, որը պետք է մատուցվի մնացածին: Եվ կոռեկտ, մասնագիտական տեղեկատվության առաջին պատասխանատվությունը ոչ թե մեկ երկու երեք ճարտարապետին է, այլ մասնագիտական հանրությանն է, որը պետք է ձևավորեն վերաբերմունք այդ խնդրի շուրջ և պետք է մատուցեն բնակչությանը: Հանրությամբ հենց պետք է հենց այդ կոռեկտ տեղեկատվությունը տրամադրի: Մասնագիտական հանրությամբ կարևոր են ճիշտ ճաշակ, մտքերի փոխանակման համար, և դրանց դերը արդեն պակասել է: Հիմա սկսել են դրան անդրադառնան, բայց բավականին երկար ժամանակ բաց են թողել այդ կետը”:

(Իգ. սեռ, 51ր. և բարձր, նախագծող ճարտարապետ, քաղաքաշինարար, վերականգնող ճարտարապետ, դասախոս)

“Մասնագիտական հանրության կարևորությունը բոլորս գիտենք, բայց հարցն այն է, որ օրենքները չեն կիրառվում, տրամադրողներն հակառակ բաներ են արվում, շատ հաճախ արվում են օրինախախտումներ, որը պետության կողմից մատչելի արանքով է նայվում, դա շատ վրանգավոր բան է, և այսպես կարևորվում է մասնագիտական հանրության դերը: Հենց պետությունը պետք է կարևորի այդ հանրության դերը, լսի այդ

հանրային ծայնը և կանխի այն նեգատիվ երևույթները, որ հանրային բարձրաձայնում է: Դրանով հենց կկարևորի և իրեն, և այն հանրային, որի կարծիքը կարևորվում է”:

(ար. սեռ, 51ր. և բարձր, նախագծող ճարտարապետ)

Որպես հիմնախնդիր նշանակալի է գնահատվել նաև **հանրային տեղեկացվածության ցածր աստիճանը**: Որակական հարցազրույց տված գրեթե բոլոր մասնագետները նշել են, որ քաղաքաշինության ոլորտի վերաբերյալ հանրության տեղեկացվածության ցածր մակարդակը հայաստանյան իրականությունում առկա կարևորագույն հիմնախնդիրներից մեկն է, ինչը ազդեցություն է ունենում որոշումների կայացման ընթացքում վերջիններիս մասնակցության աստիճանի վրա:

“Հանրությունը տեղյակ չի թե ինչ է տեղի ունենում կոնկրետ ոլորտներում, ինչով են զբաղվում մասնագետները, ինչու են ընդունվում տվյալ որոշումները, ու առհասարակ, ինչն է ճիշտ և ինչն է սխալ: Բացի «սիրունից» և «չսիրունից» ավել գնահատական չեն կարողանում տալ: Ճիշտ եմ համարում, որ հանրությունը ինչ-որ չափով տեղյակ լինի, որպեսզի ինքն էլ կարողանա ինչ-որ չափով գնահատել կոնկրետ իրավիճակները: Պետք է մեղիայով, ինտերնետով տեղյակ պահել: Պետք է ոլորտը բաց և թափանցիկ պահել”:


(իգ. սեռ, 31-50 տարեկան, նախագծող ճարտարապետ)

Մասնագետների մի մասը հանրային տեղեկացվածության ցածր մակարդակը պայմանավորել է լրագրողական դաշտում առկա մասնագիտական որակների ցածր մակարդակով և այն հանգամանքով, որ շատ է տարածվում ապատեղեկատվություն:

“Հանրության ցածր տեղեկացվածությունը նաև պայմանավորված է նրանով, որ լրագրողների մեջ մասնագետներ քիչ կան, կոնկրետ քաղաքաշինության, ճարտարապետության ոլորտում: Գրում են, սակայն ցանկալի կլինի, որ ավելի բարձր մասնագիտական ունակություններ ունենան: Շատ հաճախ սխալ տեղեկատվություն է տարածվում: Առանց այդ էլ մարդիկ չգիտեն ինչը ինչոց է, հիմա էլ դեզինֆորմացիան: Հսկողությունը շատ կարևոր է: Պետք է անպատիժ չմնան օրենքը խախտողները: Իսկ մեզ մոտ մի հոգի է և թույլվություն տվողը, և խախտողը”:

(ար. սեռ, 51-ից բարձր, քաղաքաշինարար)

Գրաֆիկ 2.7-ում ներկայացված է հանրային տեղեկացվածության ցածր մակարդակի հիմնախնդրի և տեղեկացվածության բարձրացման արդյունավետության գնահատման համադրությունը: Ինչպես տեսնում ենք, մասնագետների մեծամասնությունը տեղեկացվածության ցածր մակարդակը համարում է առկա նշանակալի հիմնախնդիր և արդյունավետ է համարում տեղեկացվածության բարձրացումը:




Մասնագետների մի մասը, սակայն, այդքան էլ չի կարևորում հանրային տեղեկացվածությունը՝ համարելով, որ շատ ավելի կարևոր է ոլորտում որակյալ մասնագետների առկայությունը, ում կարող են դիմել քաղաքացիները խնդիրների դեպքում:

“Հանրային տեղեկացվածության աստիճանի բարձրացումը այդքան էլ կարևոր չի, քանի որ քաղաքաշինության ոլորտը շատ լայն ոլորտ է, մարդիկ պարտավոր չեն տեղյակ լինել քաղաքաշինության վերաբերյալ օրենքներից կամ մասնագիտական թեմաներից: Պետք է լինի ոլորտում ճիշտ մասնագետ, գրասենյակ, որ կարողանա իր աշխատանքը անել, հանրայինին բացատրել, ցանկալի է, որ օրենքներին տեղյակ լինեն, բայց դա պարտադիր չի, առաջնակարգ խնդիր չի”:

(իգ. սեռ 31-50 տ., նախագծող ճարտարապետ)

Մասնագետներից մեկը նշել է օրենսդրական դաշտում խախտումների կանխման համար հանրային տեղեկացվածության աստիճանի կարևորությունը, ինչպես դա տեղի ունեցավ Թուրքիայում “Գեզիի” այգու, Ուկրաինայում, կամ Հայաստանում “Մաշտոցի” պուրակի դեպքում: Ըստ մասնագետի, հանրության տեղեկացվածության շնորհիվ հնարավոր եղավ կանխել օրենքի այդ կոպիտ խախտումները: Այս դեպքում, ըստ մասնագետի գնահատման, հանրային էներգիան կարող էր ավելի արդյունավետ օգտագործվել, եթե առհասարակ չլինեին օրենքների այդ խախտումները:

Ոլորտում առանձնացված մյուս կարևոր հիմնախնդիրը **կոռուպցիան** է (նշանակալիությունը գնահատվել է 3.76 առավելագույն 4-ից): Հարցվողների 79%-ի կողմից այս հիմնախնդիրը գնահատվել է որպես լիովին նշանակալի (Գրաֆիկ 2.8):




“Կոռուպցիան այսօր հայաստանյան իրականության և այս ոլորտի կարևորագույն հիմնախնդիրներից մեկն է, և դա պայմանավորված է օրենսդրական ակտերի կիրառման ցածր մակարդակից”:

(ար. սեռ., 51-ից բարձր, նախագծող ճարտարապետ)

“Կոռուպցիան շատ լուրջ խնդիր է, որը վերաբերում է բոլոր կետերին, նույնիսկ գլխավոր հատկապես է փոխվում կոռուպցիայի դեպքում: Եթե լինի պատշաճ օրենսդրական դաշտ, եթե չլինի կոռուպցիա, և եթե լինի ճիշտ մասնագետ, որ թղթի վրա նախագիծը գրաֆիկական մասով քննարկվի, ինձ թվում է, դա միանշանակ իր արդյունքը կունենա: Ճիշտ օրենք՝ ճիշտ մարդ”:

(իգ. սեռ, 31-50 տ., նախագծող ճարտարապետ)

Որպես առկա հիմնախնդիր քաղաքաշինության ոլորտում **նյութական ռեսուրսների սահմանափակությունը** մասնագետների կողմից գնահատվել է ոչ այդքան նշանակալի՝ ի տարբերություն մյուս հիմնախնդիրների: Գրաֆիկ 2.9-ում ներկայացված է նշանակալիության գնահատման արդյունքները, ըստ որի հարցված մասնագետների 27%-ը համարում է հիմնախնդիրը



քիչ թե շատ ոչ նշանակալի:

Ինչպես ցույց են տալիս խորին հարցումների արդյունքները, պատճառն այն է, որ մասնագետները առավել շատ կարևորում են նյութական ռեսուրսների անարդյունավետ կառավարման և ոչ թե առկայության հիմնախնդիրը: Մասնագետները նշում են, որ որոտում առկա է ֆինանսական միջոցների անարդյունավետ կառավարում, ինչը շատ հաճախ տանում է այդ միջոցների փոշիացման:

“Սահմանափակ նյութական միջոցները, իհարկե, ազդեցություն ունեն, սակայն ամեն ինչ կախված է մարդկային ռեսուրսից: Մարդու ինչ և ով լինելը մեծ ազդեցություն է թողնում նրա աշխատելու մեջ և անմիջապես ազդում է ֆինանսական միջոցների տնօրինման և կառավարման վրա: Սահմանափակ նյութական ռեսուրսները ինչ-որ ազդեցություն ունեն, սակայն ոչ շատ մեծ”:

(ար. սեռ., 51 տ. և բարձր, նախագծող ճարտարապետ)

“Ճարտարապետությունը, իհարկե, թանկ հաճույք է: Քաղաքաշինությունը ունի մեծ ծավալ, առանձնային սոցիալական հիմնախնդիրներ է լուծում, այդ պատճառով էլ ցանկալի կլինի, որ լինեն ի գործ ֆինանսավորել: Շատ հաճախ հայտարարվում են մրցույթներ, սակայն ամեն ինչ դրանով էլ սահմանափակվում են, քանի որ ի վիճակի չեն լինում ֆինանսավորել նախագիծը: Ճարտարապետության վրա արված խնայողությունները ի վերջո թանկ է նստում”:

(ար սեռ, 51-ից բարձր, քաղաքաշինարար)


“Առանց ֆինանսական միջոցների հնարավոր չէ առաջ շարժվել, իսկ մեր մոտ քացի նրանից, որ ֆինանսական միջոցները սահմանափակ են, նաև գործ ունենք ֆինանսական միջոցների փոշիացման հետ”:

(ար. սեռ, 51 տ. և բարձր, նախագծող ճարտարապետ)

“Սահմանափակ նյութական միջոցները նշել եմ ոչ որպես այդքան կարևոր հիմնախնդիր, քանի որ համաշխարհային պրակտիկայում այսպիսի փորձ կա, որ անկախ նյութական միջոցներից, նույնիսկ փոքր նյութական հնարավորություններով կարելի է ստեղծել այնպիսի մեխանիզմներ, որոնք աշխարհն են փոխում: Եվ հակառակ դեպքն էլ կա, ունենալով շատ մեծ նյութական հնարավորություններ, եթե դու դրանք սխալ ես քաշում, սխալ ես օգտագործում, միևնույն է դու արդյունքի չես հասնում: Այսինքն, կարևոր է նյութական միջոցները, տնտեսական իրավիճակը, սակայն դա այդպիսի կարևորություն չունի, փոքրով էլ հնարավոր է մշակել մեխանիզմներ, որոնք կաշխատեն փվյալ իրավիճակում”:

(իգ. սեռ, 51 տ. և բարձր, նախագծող ճարտարապետ, քաղաքաշինարար, վերականգնող ճարտարապետ, դասախոս)

Որպես քաղաքաշինության ոլորտում առկա հիմնախնդիրների լուծում բարձր է գնահատվել նաև քաղաքաշինական գործող մեխանիզմների ստեղծումը: Մասնագետների 62%-ի կարծիքով (Գրաֆիկ 2.10) այն լիովին կարող է մեղմել առկա իրավիճակը:



Քաղաքաշինական մեխանիզմը պետք է իրոք մշակված լինի: Դա կապված է երկու կողմից հետ էլ, թե վերևում նստած կառավարողի, թե ներքևում նստած նախագծողի, որ պետք է մեխանիզմը կարողանա ճիշտ կիրառել:

(իգ. սեռ, 31-50 տ., նախագծող ճարտարապետ)

Քաղաքաշինության գործող մեխանիզմները օրենքներն են, օրենսդրական ակտերն են, նորմատիվ ակտերն են: Ցավոք սրտի մենք մեր նորմատիվ ակտերը չունենք մեր երկրի համար: Մենք օգտվում ենք 1985 թվականի խորհրդային տարիներին ընդունված ստանդարտներից, բայց չկա մի ամբողջ համակարգ, հիմա ամբողջ աշխարհը մի համակարգի է գնում, իսկ մենք ուշանում ենք:

(ար. սեռ, 51 տ. -ից բարձր, նախագծող ճարտարապետ)


Որոշ մասնագետներ, սակայն, քաղաքաշինական մեխանիզմների մշակումը համարում ոչ այդքան հրատապ հիմնախնդիր:

Մինչև քաղաքաշինական մեխանիզմների մշակումը մենք շատ անելիքներ ունենք, դրանից առաջ շատ հարցեր են գալիս, մենք պետք է ստեղծենք արհեստավարժ կադրեր, իրենց ճիշտ տեղերում դնենք, ադապտացնենք օրենսդրական դաշտը: Հեղու նոր գալիս է մեխանիզմների մշակման խնդիրը: Դեռևս դա հրապարակ չի:

(իգ. սեռ, 51 տ. և բարձր, նախագծող ճարտարապետ, քաղաքաշինարար, վերականգնող ճարտարապետ, դասախոս)


ՈԼՈՐՏԻ ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ

Որպես քաղաքաշինական զարգացման և վերահսկողության իրականացման առավել կարևոր ուղենիշ հարցվողները առավել հաճախ նշել են գոտևորման նախագիծը և գլխավոր հատակագիծը (Գրաֆիկ 3.1): Այսպես, հարցվողների 26%-ը կարծում է, որ որպես առավել կարևոր ուղենիշ է հանդիսանում գլխավոր հատակագիծը, իսկ 21%-ը՝ գոտևորման նախագիծը: Սակայն հարցվողների 15%-ը նաև նշել են, որ բոլոր այս փաստաթղթերն էլ ունեն իրենց կարևորությունը նախագծային տարբեր մակարդակներում, ընդ որում այս կարծիքն են արտահայտել նաև այլ հարցվողներ, ովքեր այնուամենայնիվ ընտրել են որևէ կոնկրետ պատասխան:




Քաղաքային միջավայրում քաղաքաշինական գործունեության համար պատասխանատվությունը հարցվողների 38%-ի կարծիքով կրում է քաղաքապետը, իսկ 24%-ի


կարծիքով՝ քաղաքաշինության նախարարությունը: Հարցվողների 9%-ի կողմից նաև առանձնացվել են քաղաքաշինության վարչության պետը և քաղաքի գլխավոր ճարտարապետը (Գրաֆիկ 3.2):



Այն հարցին, թե քաղաքաշինական փաստաթղթերի մշակման որ փուլերում է անհրաժեշտ ապահովել հանրության մասնակցությունը հարցվողներն առավել հաճախ տվել են “քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման գաղափարի հղացման ընթացքում” պատասխանը (հարցվողների 35%), որին հետևում է “հիմնական դրույթների հաստատման ընթացքում” (հարցվողների 24%) և “առաջադրանքի կազմման ընթացքում” (հարցվողների 21%) պատասխանները (Գրաֆիկ 3.3):



Հաստատված գոտիավորման նախագծերի և տեքսային մասերը, և գրաֆիկական մասերը ըստ հարցվողների ճնող մեծամասնության կարծիքի պետք է առցանց տեղադրված լինեն բոլորի համար (Գրաֆիկ 3.4): Ընդ որում, որոշ մասնագետներ այստեղ շեշտել են, որ կարևոր է հասանելիություն լինի բոլորին, իսկ առանց տեղադրված լինելը դեռևս չի նշանակում, որ բոլորին հասանելի է, քանի որ այն ենթադրում է, որ բոլորն ունեն ինտերնետ հասանելիություն:



ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, հիմք ընդունելով և ընդհանրացնելով հետազոտության որակական և քանակական տվյալները, կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Նշված բոլոր հիմնախնդիրները ոլորտային մասնագետների կողմից գնահատվել են նշանակալի, ընդ որում բոլոր հիմնախնդիրների նշանակալիության միջին գնահատականները մեծ են եղել միջինից, ինչը նշանակում է, որ հիմնախնդիրները ըստ մասնագետների այս կամ այն չափով առկա են ոլորտում:
2. Որպես առավել նշանակալի հիմնախնդիրներ առանձնացվել են՝ օրենսդրական կարգերի կիրառման ցածր մակարդակը, կոռուպցիան և անարդյունավետ կառավարումը:
3. Որպես քաղաքաշինության ոլորտում առկա հիմնախնդիրների մեղմացմանն ուղղված գործողություններ մասնագետները առավել արդյունավետ են համարել օրենսդրական կարգերի կիրառման աստիճանի բարձրացումը, կառավարման ոլորտում բարեփոխումների իրականացումը և մասնագիտական հանրույթի դերի կարևորումը:
4. Խորին հարցազրույցների արդյունքում մասնագետները հատկապես շեշտել են արհեստավարժ կադրերի պատրաստման և վերապատրաստման, ինչպես նաև հանրային տեղեկացվածության բարձրացման անհրաժեշտությունը:
5. Որպես հիմնախնդիր առավել ոչ նշանակալի է գնահատվել ոլորտում նյութական ռեսուրսների սահմանափակությունը:
6. Որպես քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրների հաղթահարմանն ուղղված գործողություն՝ մասնագետները համեմատաբար առավել անարդյունավետ են գնահատել պետական ու տեղական մակարդակներում լիազորությունների վերաբաշխումը:
7. Որպես քաղաքաշինական զարգացման և վերահսկողության իրականացման առավել կարևոր ուղենիշ՝ հարցվողներն առավել հաճախ նշել են գլխավոր հատակագիծը, այնուհետև՝ գոտևորման նախագիծը:
8. Քաղաքային միջավայրում քաղաքաշինական գործունեության համար պատասխանատվությունը հարցվողների մեծ մասի կարծիքով կրում է քաղաքապետը, այնուհետև՝ քաղաքաշինության նախարարությունը:
9. Հանրության մասնակցությունը քաղաքաշինական փաստաթղթերի մշակման փուլում ըստ հարցվողների պետք է ապահովել քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման գաղափարի հղացման ընթացքում, որին ըստ արդյունքների հետևում է “հիմնական դրույթների հաստատման ընթացքում” տեսակետը:
10. Հաստատված գոտիավորման նախագծերի և տեքսային մասերը, և գրաֆիկական մասերը ըստ հարցվողների ճնող մեծամասնության կարծիքի պետք է առցանց տեղադրված լինեն բոլորի համար:

Հավելված 1

Հարցաթերթ N _____
Ամիս/ամսաթիվ __/07/2013

Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի համակարգը Հայաստանում

Հարգելի գործընկեր,

«Ուրբանլաբ Երևան» քաղաքաշինության ժողովրդավարացման ինստիտուտը «Քաունթերփարթ ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության ֆինանսավորմամբ իրականացնում է «Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի համակարգի վերլուծության և զարգացման ծրագիրը»:

Ծրագրի ուսումնասիրական աշխատանքների շրջանակում խնդրում ենք պատասխանել ներքոնշյալ հարցերին, որոնք կօգնեն մեզ կողմնորոշվել ոլորտում առկա խնդիրների բացահայտման գործում: Հարցումն անանուն է և Ձեր կողմից տրված պատասխանները կներկայացվեն միայն ընդհանրացված տեսքով:

Ձ.1 Որքանո՞վ եք ծանոթ ոլորտին վերաբերող ներքոնշյալ օրենսդրական ակտերին: Գնահատեք 1-ից 4 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է ընդհանրապես տեղյակ չեք, 2-ը՝ ավելի շուտ տեղյակ չեք, 3-ը՝ ավելի շուտ տեղյակ եք, 4-ը՝ լիովին տեղյակ եք:

N	Օրենսդրական ակտ	Պատասխան			
1	Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիա	1	2	3	4
2	ՀՀ հողային օրենսգիրք	1	2	3	4
3	Քաղաքաշինության մասին ՀՀ օրենք	1	2	3	4
4	Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք	1	2	3	4
5	Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք	1	2	3	4
6	Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրերի պահպանության մասին ՀՀ օրենք	1	2	3	4
7	ՀՀ համայնքների (քնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում	1	2	3	4
8	Քնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում	1	2	3	4
9	Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում	1	2	3	4

Ձ.2 Ձեր կարծիքով որքանո՞վ են նշանակալի Հայաստանում քաղաքաշինական գործունեության հետ կապված հետևյալ հիմնախնդիրները: Գնահատեք 1-ից 4 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է ընդհանրապես նշանակալի չեն, 2-ը՝ ավելի շուտ նշանակալի չեն, 3-ը՝ ավելի շուտ նշանակալի են, 4-ը՝ լիովին նշանակալի են:

N	Հիմնախնդիրներ	Պատասխան			
1	Օրենսդրական դաշտի անկատարություն	1	2	3	4
2	Օրենսդրական կարգերի կիրառման ցածր մակարդակ	1	2	3	4
3	Անարդյունավետ կառավարում	1	2	3	4
4	Պարտականությունների սխալ բաշխում	1	2	3	4
5	Սահմանափակ նյութական միջոցներ	1	2	3	4
6	Արհեսավարժ կադրերի պակաս	1	2	3	4
7	Հանրային տեղեկացվածության ցածր մակարդակ	1	2	3	4
8	Կոռուպցիա	1	2	3	4
9	Այլ (նշել) _____	1	2	3	4

Q.3 Նախագծային գործընթացներում երբևիցե առնչվել էք հետևյալ սահմանափակումների հետ՝

N	Սահմանափակում	Այո, առնչվել եմ	Ոչ, չեմ առնչվել
1.	Ջրանցիկ և անջրանցիկ մակերևույթների հարաբերություն		
2.	Հուշարձանի պահպանման գոտի		
3.	Կառուցապատման կարգավորման գոտի		
4.	Լանդշաֆտի պահպանության գոտի		
5.	Սերվիտուտ		
6.	Հողամասի տարածքում կառուցապատման տոկոս		
7.	Կառուցապատման խտություն		
8.	Կարմիր գծից հեռավորություն		
9.	Հեռավորություն հարևան հողամասից		

Q.4 Ձեր կարծիքով ներքոնշյալ գործողությունները որքանո՞վ կարող են մեղմել քաղաքաշինական գործունեության հետ կապված իրավիճակը: Գնահատե՞ք 1-ից 4 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է ընդհանրապես չեն կարող, 2-ը՝ ավելի շուտ չեն կարող, 3-ը՝ ավելի շուտ կարող են, 4-ը՝ լիովին կարող են:

N	Գործողություն	Պատասխան			
1	Օրենսդրական և ենթօրենսդրական առաջարկությունների մշակում	1	2	3	4
2	Արհեսավարժ կադրերի պատրաստում և վերապատրաստում	1	2	3	4
3	Պետական ու տեղական մակարդակներում լիազորությունների վերաբաշխում	1	2	3	4
4	Քաղաքաշինական գործող մեխանիզմների մշակում	1	2	3	4
5	Կառավարման համակարգի բարեփոխում	1	2	3	4
6	Հանրային տեղեկացվածության բարձրացում	1	2	3	4
7	Մասնագիտական հանրույթի դերի կարևորում	1	2	3	4
8	Այլ _____	1	2	3	4

Q.5 Ձեր կարծիքով ներքոնշյալ որ փաստաթուղթը պետք է ուղենիշ հանդիսանա քաղաքաշինական զարգացման և վերահսկողության իրականացման համար (ընտրել 1 պատասխան)

1. Տարաբնակեցման նախագիծ
2. Տարածական պլանավորման նախագիծ
3. Գլխավոր հատակագիծ
4. Գոտնորման նախագիծ
5. Կառուցապատման ուրվագիծ
6. Քաղաքաշինական կանոնադրություն
7. Բնակավայրի քաղաքաշինական կանոնադրություն

Q.6 Ձեր կարծիքով քաղաքային միջավայրերում որ մարմինը պետք է կրի պատասխանատվություն քաղաքաշինական գործունեության համար (ընտրել միայն մեկ պատասխան)

1. Քաղաքաշինության նախարարություն
2. Տարածքային կառավարման նախարարություն
3. Քաղաքապետ
4. Ավագանի
5. Քաղաքի գլխավոր ճարտարապետ
6. Քաղաքաշինության (և հողօգտագործման) վարչության պետ
7. Այլ (նշել) _____

Q.7 Ձեր կարծիքով քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման որ փուլերում է անհրաժեշտ ապահովել հանրության մասնակցությունը (ընտրել միայն մեկ պատասխան):

1. Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման գաղափարի հղացման ընթացքում
2. Առաջադրանքի կազմման ընթացքում
3. Հիմնական դրույթների հաստատման ընթացքում
4. Հիմնական դրույթների հաստատումից հետո
5. Մինչև նախագծի ավարտված տարբերակի ընդունումը
6. Նախագծի ավարտված տարբերակի ընդունումից հետո
7. Փորձաքննության ընթացքում
8. Մինչև հաստատումը
9. Հաստատումից հետո

Q.8 Ձեր կարծիքով հաստատված գոտիավորման նախագծերը ինչպիսի հասանելիության աստիճան պետք է ունենան:

N	Հասանելիություն	Գրաֆիկական մասեր	Տեքստային մասեր
1.	Պետք է հասանելի լինեն համայնքապետարաններում համայնքային ծառայողների համար միայն		
2.	Պետք է հասանելի լինեն համայնքապետարաններում մասնագետների համար միայն		
3.	Պետք է առցանց տեղադրված լինեն բոլորի համար		

D.1 Ձեր տարիքը.

1. Մինչև 20 տարեկան
2. 21-30 տարեկան
3. 31-50 տարեկան
4. 51-ից բարձր

D.2 Զբաղմունքը և մասնագիտացումը (կարող եք ընտրել մի քանի պատասխան).

1. Ուսանող
2. Նախագծող ճարտարապետ
3. Քաղաքաշինարար
4. Վերականգնող ճարտարապետ
5. Պետական ծառայող կամ այլ վարչական ծառայող
6. Դասախոս
7. Այլ/նշել/ _____

D.3 Բնակության վայր

1. ք. Երևան
2. Հայաստանի մարզեր և Ղարաբաղ
3. Նախկին ԽՍՀՄ-ի երկրներ
4. Եվրոպա և ԱՄՆ
5. Այլ/նշել/ _____

Հողերի հիման վրա դասակարգման ստանդարտներ (ՀԴՍ)

Հողօգտագործման տեղեկությունների դասակարգման հինգ բնութագրիչները

Օգտագործումը (գործունեություն / activity) վերաբերում է հողի փաստացի օգտագործմանը՝ հիմնված տեսանելի բնութագրիչների վրա: Այն նկարագրում է թե՛ ի՞նչ է տեղի ունենում ֆիզիկական կամ տեսանելի պայմաններում (գյուղատնտեսություն, առևտուր, արտադրություն, տրանսպորտային շարժում և այլն): Օրինակի համար գրասենյակային օգտագործման տեսակը (գործունեությունը) վերաբերում է գույքի միայն ֆիզիկական շահագործմանը, որը կարող է հավասարապես վերաբերվել իրավաբանական ընկերությանը, շահույթ չհետապնդող կազմակերպությանը, դատարանին, կորպորատիվ գրասենյակին կամ մեկ այլ գրասենյակի պահանջներին: Նույն կերպ, բնակելի նշանակություն ունեցող առանձնատունը, բազմաբնակարան կառուցվածքները, արհեսագործական տները կամ ցանկացած տիպի շինությունները կարող են դասակարգվել իբրև բնակելի օգտագործման:

Գործառնական նշանակությունը (գործառույթ / function) վերաբերում է տնտեսական գործառնական նշանակությանը կամ հողի վրա տեղի ունեցող ձեռներեցության տեսակին: Հողօգտագործման ցանկացած տեսակ կարող է բնութագրվել այն ձեռնարկության տեսակով, որին ծառայում է: Հողօգտագործման պայմանները, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, առևտուրն ու արդյունաբերությունը կապված են ձեռներեցության տեսակի հետ: Տնտեսական գործառնական նշանակությունը տեսակը, որին ծառայեցվում է հողը դասակարգվում է այս չափման մեջ՝ անկախ տարածքի փաստացի օգտագործման տեսակից: Ձեռնակությունները կարող են ունենալ տարբեր գործունեության տեսակներ (օգտագործման տեսակ) իրենց տարածքում, միաժամանակ ունենալով մեկ գործառնական նշանակություն: Օրինակ, երկու հողակտորներ դասվում են նույն գործառնական նշանակության, եթե պատկանում են նույն ձեռնարկությանը, նույնիսկ եթե առաջինը ծառայում է որպես գրասենյակային շենք, երկրորդը՝ գործարան:

Կառուցապատման տեսակը (կառուցվածքային բնութագրիչ / structural character) վերաբերում է հողատարածքում առկա կառուցվածքների կամ շինությունների տիպերին: Հողօգտագործման պայմանները ներառում են կառուցապատման տեսակները, որոնք առաջադրում են տարածության (շինության մեջ) կամ հողի (երբ այն կառուցապատված չէ) շահագործումը: Հողօգտագործման տեսակները, ինչպիսիք են առանձնատունը, գրասենյակային շենքը, պահեստը, հիվանդանոցային շենքը կամ ավտոմայրուղին, նույնպես տարբերակվում են կառուցապատման տեսակներով: Չնայած շատ օգտագործման ձևեր և գործառնական նշանակություններ սերտորեն

կապված են որոշակի կառուցապատման տեսակների հետ, սակայն կան բացառություններ: Բազմաթիվ շինություններ հաճախ հարմարեցված են մեկ այլ օգտագործման, փոխելով իրենց նախնական օգտագործման ձևը: Օրինակի առանձնատունը կարող է շահագործվել որպես գրասենյակ:

Տարածքի իրացվածությունը (կառուցապատվածության բնութագրիչ / site development character) վերաբերում է հողատարածքի ընդհանուր ֆիզիկական իրացվածության բնույթին: Այն ընդհանուր ֆիզիկական նկարագրությամբ արտահայտում է թե “ինչ կա տարածքում”: Հաճախ հանդիպող հողատարածքների օգտագործման դեպքերում, այն արտահայտում է տարածքը կառուցապատված է, թե՞ ոչ: Սակայն ոչ բոլոր դեպքերում է որ անտեսանելի իրացվածություն դեպքում տարածքը կարելի է դիտարկել իբրև չկառուցապատված: Հողօգտագործման տեսակները, ինչպիսիք են այգիներն ու ազատ տարածքները, ունեն համալիր խառը օգտագործման ձևեր, գործառնական նշանակություն, կառուցապատման տեսակներ և կարիք ունեն մեկ այլ, մյուսներից անկախ, չափորոշիչներով դասակարգման: Այս չափորոշիչները դասակարգում են այնպես որ տարածքը նկարագրվում է ընդհանուր իրացվածության (կառուցապատվածության) բնութագրիչներով:

Սեփականությունը (ownership) վերաբերում է հողի օգտագործման և դրանում առկա իրավունքներին: Քանի որ ելնելով գործառնական նշանակությունից հողերը մեծամասամբ կա՛մ հանրային, կա՛մ մասնավոր են, և ոչ երկուսը միաժամանակ, սեփականության տարբերակման բնութագրիչները ակնառու են: Ցանկացած դեպքում, հիմնվելով միայն գործառնական բնութագրիչների վրա կարելի է ետին պլան մղել այնպիսի օգտագործման ձևեր, ինչպիսիք են մասնավոր այգիները, հանրային թատրոնները, մասնավոր մարզադաշտերը, մասնավոր բանտերն ու խառը հանրային և մասնավոր սեփականության ձևերը: Ավելին, սերվիտուտները և նման իրավական գործիքները սահմանափակում կամ պարտադրում են հողօգտագործման օգտագործումներն ու գործառնական նշանակությունները: Այս չափումը թույլ է տալիս դասակարգել հողի նկատմամբ սեփականությունը ավելի հստակ:

Օգտագործում

1000: Բնակելի

2000: Առևտուր, բիզնես կամ առևտրային գործունեություն

3000: Արդյունաբերական, արտադրական կամ թափոններին առնչվող գործունեություն

4000: Սոցիալական, վարչական կամ ենթակառուցվածքներին առնչվող գործունեություն

5000: Ճամփորդական կամ շարժման գործունեություն

6000: Մարդկանց մասսայական հավաքատեղի

7000: Հանգստի կազմակերպում

Հողերի հիման վրա դասակարգման ստանդարտներ (ՀԴՍ) / ոչ պաշտոնական թարգմանություն

© Original version: American Planning Association; Translation: urbanlab Yerevan

8000: Բնական ռեսուրսներին առնչվող
9000: Մարդու կողմից չօգտագործվող կամ չդասակարգված

Գործառնական նշանակություն

1000: Բնակելի կամ կեցության ապահովում
2000: Ընդհանուր վաճառք կամ ծառայություններ
3000: Արտադրություն կամ մեծածախ առևտուր
4000: Տրանսպորտի, կապի, տեղեկատվական կամ այլ կոմունալ գործառույթներ
5000: Արվեստ, ժամանց կամ հանգիստ
6000: Կրթություն, հանրային կառավարում, առողջության պահպանում կամ այլ վարչական
7000: Շինարարությանն առնչվող գործառույթներ
8000: Հանքարդյունաբերություն կամ ընդերքի օգտագործման հիմնարկներ
9000: Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն կամ որսորդություն

Կառուցապատման տեսակները

1000: Բնակելի շենքեր
2000: Առևտրային կամ այլ մասնագիտացված կառույցներ
3000: Հանրային հավաքների կառույցներ
4000: Վարչական կամ համայնքային հարմարություններ
5000: Տրանսպորտին առնչվող ենթակառուցվածքներ
6000: Կոմունալ և այլ արտաշենքային կառուցվածքներ
7000: Հատուկ ռազմական նշանակության կառուցվածքներ
8000: Ծածկեր, ֆերմաներ, կամ գյուղատնտեսական կառուցվածքներ
9000: Չկառուցապատված

Տարածքի իրացվածությունը

1000: Բնության գրկում տարածք
2000: Իրացվող տարածք
3000: Իրացված տարածքներ՝ արտեր, արոտավայրեր, անտառներ և այլն
4000: Իրացված տարածքներ՝ առանց կառույցների ու կառուցվածքների
5000: Իրացված տարածքներ՝ ոչ շենքային կառույցներ
6000: Իրացված տարածքներ՝ կառուցապատված
7000: Իրացված տարածքներ՝ այգիներով
8000: Այս բնույթին չհամապատասխան
9000: Չդասակարգված տարածքի իրացվածություն

Սեփականություն

1000: Առանց սահմանափակումների՝ մասնավոր սեփականություն

2000: Որոշ սահմանափակումներով՝ սերվիտուտ կամ այս օգտագործման սահմանափակումներ

3000: Որոշակի սահմանափակումներ՝ վարձակալված կամ այլ հատկացումների

սահմանափակումներ

4000: Հանրային սահմանափակումներ՝ համայնքային, նահանգային և պետական (ֆեդերալ) սեփականության

5000: Այլ հանրային օգտագործման սահմանափակումներ՝ տարածաշրջանային, հատուկ շրջանների և այլն

6000: Շահույթ չհետապնդող սեփականության ձևի սահմանափակումներ

7000: Համատեղ սեփականության ձևեր՝ հանրային կազմակերպություններ

8000: Համատեղ սեփականության ձևեր՝ հանրային, մասնավոր և շահույթ չհետապնդող և այլն

9000: Այս բնույթագրիչին չհամապատասխանող

Հողերի հիման վրա դասակարգման ստանդարտներ (ՀԴՍ)

**1965 թվականի Հողօգտագործման ստանդարտացման կանոնների ձեռնարկի
հողօգտագործման նկարագրության, դասակարգման և փորձի փոխանակման (կիսման)
փոփոխություն**

ՀԴՍ-ը ապահովում է հողօգտագործման դասակարգման բնութագրիչների հիման վրա կենսունակ մոդել: Մոդելը ընդլայնում է հողօգտագործման դասակարգման հասկացությունը վերափոխելով ավանդական դասակարգումը բազմաշերտ չափորոշիչների, ինչպիսիք են գործունեության, գործառնական նշանակություն (գործառնություն), շինությունների տեսակները, տարածքների կառուցապատման բնույթն սեփականության սահմանափակումներ: Յուրաքանչյուր չափորոշիչ ունի իր հատուկ դասերն ու ենթադասերը: Այս բազմաշերտ չափորոշիչները թույլ են տալիս օգտատերերին ունենալ հստակ վերահսկողություն հողօգտագործման դասակարգման նկատմամբ:

Հողօգտագործման դասակարգումը այս բազմաշերտ չափորոշիչներով, բազային հասկացությամբ, նշանակում է ավելացնել նոր դաշտեր հողօգտագործման ընդհանուր տեղեկատվական բազայում: Տեղեկատվական բազայում հողօգտագործման դաշտերի ընդհանուր թիվը պետք է հավասար լինի չափորոշիչների թվին, որով յուրաքանչյուր գրառում բազայում դասակարգվում է ոչ միայն մեկ օգտագործման դաշտում, այլև մի քանի պարտադիր չափորոշիչներում: Չափորոշիչների քանակը, իր հերթին, պետք է կախված լինի տվյալների օգտագործման բնույթից: Երբ բազայի օգտագործման բնույթը փոխվում է, չափորոշիչները կարող են ավելացվել կամ պակասեցվել ըստ անհրաժեշտության: Տեղական նախագծային պահանջների համար, ՀԴՍ-ը -ը դասակարգում է հողօգտագործումը չափորոշիչներով՝ օգտագործում, գործառնական նշանակություն, կառուցապատման տեսակ, տարածքի իրացվածություն և սեփականության իրավունք:

ՀԴՍ-ի համակարգի հիմնարար սկզբունքը ճկունությունն է: Ճկունությունը արտահայտվում է մոդելի հարմարվողականությունը տարատեսակ նախագծային կիրառություններին, տեղեկատվության հավաքագրմանը, փոխանակմանն ու ինտեգրմանը, գունային կոդավորմանը ու քարտեզագրմանը: Ճկունությունը նաև հնարավորություն է տալիս սահմանել նոր հողօգտագործման տեսակներ, կիրառելու համար վերլուծական նոր մեթոդներն ու տեխնոլոգիաները և ունենալ հնարավորություն հարմարեցնել մոդելը տեղական կարիքների համար առանց կորցնելու տեղեկատվությունը տարածելու հնարավորությունը: ՀԴՍ-ի այս բոլոր բաղադրիչներից յուրաքանչյուրը վկայում է հողօգտագործման դասակարգման հետևողական լինելու անհրաժեշտությունից ելնելով տարատեսակ ստանդարտների կամ կոնվենցիաների ընդունման համար:

Սանջայ Զիիր, Սերտիֆիկացված քաղաքաշինարարների ամերիկյան ինստիտի անդամ (AICP),
Ավագ հետազոտող, ՀԴՍ (LBCS) ծրագիր

////

Հեղինակային իրավունքները պատկանում են ԱՄՆ քաղաքաշինարարների ասոցիացիային
(American Planning Association): Էլ. փոստ՝ lbc@planning.org կամ հեռախոս՝ 312-431-9100 և հարցրեք
LBCS-ի մասին, կայք՝ www.planning.org/LBCS

Land-Based Classification Standards

Five Dimensions for Classifying Land-Use Data

Activity

- 1000: Residential activities
- 2000: Shopping, business, or trade activities
- 3000: Industrial, manufacturing, and waste-related activities
- 4000: Social, institutional, or infrastructure-related activities
- 5000: Travel or movement activities
- 6000: Mass assembly of people
- 7000: Leisure activities
- 8000: Natural resources-related activities
- 9000: No human activity or unclassifiable activity

Function

- 1000: Residence or accommodation functions
- 2000: General sales or services
- 3000: Manufacturing and wholesale trade
- 4000: Transportation, communication, information, and utilities
- 5000: Arts, entertainment, and recreation
- 6000: Education, public admin., health care, and other inst.
- 7000: Construction-related businesses
- 8000: Mining and extraction establishments
- 9000: Agriculture, forestry, fishing and hunting

Structural Character

- 1000: Residential buildings
- 2000: Commercial buildings and other specialized structures
- 3000: Public assembly structures
- 4000: Institutional or community facilities
- 5000: Transportation-related facilities
- 6000: Utility and other non-building structures
- 7000: Specialized military structures
- 8000: Sheds, farm buildings, or agricultural facilities
- 9000: No structure

Site Development Character

- 1000: Site in natural state
- 2000: Developing site
- 3000: Developed site -- crops, grazing, forestry, etc.
- 4000: Developed site -- no buildings and no structures
- 5000: Developed site -- non-building structures
- 6000: Developed site -- with buildings
- 7000: Developed site -- with parks
- 8000: Not applicable to this dimension
- 9000: Unclassifiable site development character

Ownership

- 1000: No constraints--private ownership
- 2000: Some constraints--easements or other use restrictions
- 3000: Limited restrictions--leased and other tenancy restrictions
- 4000: Public restrictions--local, state, and federal ownership
- 5000: Other public use restrictions--regional, special districts, etc
- 6000: Nonprofit ownership restrictions
- 7000: Joint ownership character--public entities
- 8000: Joint ownership character--public, private, nonprofit, etc.
- 9000: Not applicable to this dimension

Activity refers to the actual use of land based on its observable characteristics. It describes what actually takes place in physical or observable terms (e.g., farming, shopping, manufacturing, vehicular movement, etc.). An office activity, for example, refers only to the physical activity on the premises, which could apply equally to a law firm, a nonprofit institution, a court house, a corporate office, or any other office use. Similarly, residential uses in single-family dwellings, multi-family structures, manufactured houses, or any other type of building, would all be classified as residential activity.

Function refers to the economic function or type of enterprise using the land. Every land use can be characterized by the type of enterprise it serves. Land-use terms, such as agricultural, commercial, industrial, relate to enterprises. The type of economic function served by the land use gets classified in this dimension; it is independent of actual activity on the land. Enterprises can have a variety of activities on their premises, yet serve a single function. For example, two parcels are said to be in the same functional category if they belong to the same enterprise, even if one is an office building and the other is a factory.

Structural character refers to the type of structure or building on the land. Land-use terms embody a structural or building characteristic, which suggests the utility of the space (in a building) or land (when there is no building). Land-use terms, such as single-family house, office building, warehouse, hospital building, or highway, also describe structural characteristic. Although many activities and functions are closely associated with certain structures, it is not always so. Many buildings are often adapted for uses other than its original use. For instance, a single-family residential structure may be used as an office.


Site development character refers to the overall physical development character of the land. It describes "what is on the land" in general physical terms. For most land uses, it is simply expressed in terms of whether the site is developed or not. But not all sites without observable development can be treated as undeveloped. Land uses, such as parks and open spaces, which often have a complex mix of activities, functions, and structures on them, need categories independent of other dimensions. This dimension uses categories that describe the overall site development characteristics.

Ownership refers to the relationship between the use and its land rights. Since the function of most land uses is either public or private and not both, distinguishing ownership characteristics seems obvious. However, relying solely on the functional character may obscure such uses as private parks, public theaters, private stadiums, private prisons, and mixed public and private ownership. Moreover, easements and similar legal devices also limit or constrain land-use activities and functions. This dimension allows classifying such ownership characteristics more accurately.

Land-Based Classification Standards

An update of the 1965 Standard Land Use Coding Manual
for
Describing, Classifying, and Sharing Data about Land Uses

LBCS provides a consistent model for classifying land uses based on their characteristics. The model extends the notion of classifying land uses by refining traditional categories into multiple dimensions, such as activities, functions, building types, site development character, and ownership constraints. Each dimension has its own set of categories and subcategories. These multiple dimensions allow users to have precise control over land-use classifications.



Classifying land uses across multiple dimensions, in database terms, means adding new fields to the land-use database. The total number of land-use fields in the database should equal the number of dimensions, that is, every record in the database is classified in not just one land-use field, but several—one for each dimension. The number of dimensions, in turn, will depend on the purpose of the data. When the purpose of the data changes, dimensions may be added or dropped as needed. For local planning purposes, LBCS calls for classifying land uses in the following dimensions: Activity, Function, Structure Type, Site Development Character, and Ownership.

The underlying principle of the LBCS model is its flexibility. It addresses flexibility in adapting the model to a variety of planning applications, data collection methods, data-sharing and data-integrating methods, and color coding and mapping. The flexibility also makes it possible to assign new categories for new land uses, to accommodate new methods and technologies for analysis, and to customize the model for local needs without losing the ability to share data. Each of these aspects of LBCS calls for applying a variety of standards or conventions to maintain consistency in land-use classifications.

Sanjay Jeer, AICP
Principal Investigator, LBCS Project

Եվրամիության տարածքային օրակարգ 2020 Դեպի շրջանների բազմազանությամբ, ընդգրկուն, խելացի և կայուն Եվրոպա համաձայնեցված է տարածական հատկագծման և տարածքային զարգացման հարցերով նախարարների ոչ պաշտոնական հանդիպմանը 2011 թվականի մայիսի 19-ին Գոդոլո, Հունգարիա	Territorial Agenda of the European Union 2020 Towards an Inclusive, Smart and Sustainable Europe of Diverse Regions agreed at the Informal Ministerial Meeting of Ministers responsible for Spatial Planning and Territorial Development on 19th May 2011 Gödöllő, Hungary
--	--

Եվրամիության տարածքային օրակարգ 2020	TERRITORIAL AGENDA OF THE EUROPEAN UNION 2020
I. Տարածքային կապակցվածությունը համընդհանուր նպատակ է ավելի ներդաշնակ և հավասարակշռված Եվրոպայի համար	I. Territorial cohesion is a common goal for a more harmonious and balanced state of Europe
(1) Մենք՝ տարածական հատակագծման և տարածքային զարգացման հարցերով նախարարներս, համագործակցելով Եվրոպական հանձնաժողովի հետ և Տարածաշրջանների հանձնաժողովի հավանությամբ, վերանայել ենք 2007 թվականին մեկնարկած տարածքային օրակարգը և համաձայնեցրել Եվրամիության 2020 թվականի նոր տարածքային օրակարգը (SO 2020):	(1) We, the Ministers responsible for spatial planning and territorial development, in cooperation with the European Commission and with the endorsement of the Committee of the Regions, have reviewed the Territorial Agenda launched in 2007 and agree upon the new Territorial Agenda of the European Union 2020 (TA2020).
(2) SO 2020-ը հաշվի է առնում վերջին զարգացումները, որոնք նկարագրված են թարմացված “Եվրամիության տարածքային վիճակը և հեռանկարները”-ի վրա հիմնված՝ Հանձնաժողովի տնտեսական, սոցիալական և տարածքային կապակցվածության հինգերորդ զեկույցի և Եվրոպայի 2020 թվականի ռազմավարության մեջ:	(2) TA2020 takes into consideration the recent developments described in the updated Territorial State and Perspectives of the European Union, on the Commission's Fifth Report on Economic, Social and Territorial cohesion and on the Europe 2020 Strategy.
(3) Մենք հայտարարում ենք, որ SO 2020-ը մեր՝ գործողությունների միտված քաղաքականության շրջանակն է, որն ուղղված է Եվրոպայի տարածքային կապակցվածությանն աջակցելուն, որպես Լիսաբոնի համաձայնագրով (հոդված 3) առաջ քաշված՝ Եվրամիության (ԵՄ) նոր նպատակ: Այն ուրվագծում է նպատակներ՝ մինչև 2020 թվականն ընկած հիմնական քաղաքական փաստաթղթերի ժամանակացույցերին համապատասխան:	(3) We state that the TA2020 is our action oriented policy framework to support territorial cohesion in Europe as a new goal of the European Union (EU) introduced by the Treaty of Lisbon (Art 3.TEU). It outlines objectives in accordance with the time horizon of major policy documents until 2020.
(4) SO 2020-ի նպատակն է սահմանել տարածքային զարգացման ռազմավարական ուղղություններ՝ խթանելով տարածքային ծավալի ինտեգրումը կառավարման բոլոր	(4) The objective of the TA2020 is to provide strategic orientations for territorial development, fostering integration of territorial dimension within different policies at all governance levels and to

Եվրամիության տարածքային օրակարգ 2020 / ոչ պաշտոնական թարգմանություն

© ուրբանլաբ Երևան

մակարդակներում՝ տարբեր քաղաքականությունների շրջանակներում և երաշխավորել Եվրոպայի 2020 թվականի Ռազմավարության իրականացումը տարածքային կապակցվածության սկզբունքներին համապատասխան:	ensure implementation of the Europe 2020 Strategy according to territorial cohesion principles.
(5) Մենք հավատում ենք, որ խելացի, կայուն և ընդգրկուն աճի Եվրոպայի 2020 թվականի ռազմավարությամբ սահմանված ԵՄ նպատակներին կարելի է հասնել միայն, եթե հաշվի առնվի ռազմավարության տարածքային կողմը, քանի որ տարբեր շրջանների զարգացման հնարավորությունները կարող են տարբեր լինել:	(5) We believe that the objectives of the EU defined in the Europe 2020 Strategy for smart, sustainable and inclusive growth can only be achieved if the territorial dimension of the strategy is taken into account, as the development opportunities of the different regions vary.
(6) Մենք ողջունում ենք Տնտեսական, սոցիալական և տարածքային կապակցվածության հինգերորդ զեկույցի մեջ արտահայտված Եվրոպական հանձնաժողովի առաջարկը՝ առավել լավ ինտեգրել տարածքային կապակցվածությունը Կապակցվածության քաղաքականության մեջ: Կապակցվածության քաղաքականությունը առանցքային ուղղությունն է, որի միջոցով ԵՄ-ն կարող է անդրադառնալ տարածքային զարգացման մարտահրավերներին, և որն օգնում է վերհանել և արդյունավետ կերպով օգտագործել տարածքային ներուժը տեղական, տարածաշրջանային, ազգային և վերազգային մակարդակներում: ՏՕ 2020-ը չի կանխարգելում հետագա համաձայնագրերը, ինչպիսիք են, օրինակ, Կառուցվածքային հիմնադրամների համար հաջորդ իրավական փաթեթը և ֆինանսական հեռանկարը, սակայն շեշտում է տարածքային ասպեկտը հաշվի առնելու կարևորությունը:	(6) We welcome the proposal of the European Commission expressed in the Fifth Report on Economic, Social and Territorial Cohesion to better integrate territorial cohesion into Cohesion Policy. Cohesion Policy is a key framework through which the EU can address territorial development challenges and helps unleash territorial potential at local, regional, national and transnational levels. The TA2020 does not pre-empt future agreements such as the next financial perspective and the next legislative package for Structural Funds, but emphasises the importance of considering the territorial dimension.
(7) Եվրոպական միության գործունեության համաձայնագրի (հոդվածներ 174 և 175) համաձայն՝ Միության բոլոր	(7) In line with the Treaty on the Functioning of the European Union (Art. 174 and 175), all policies and actions of the Union should contribute to economic,

Եվրամիության տարածքային օրակարգ 2020 / ոչ պաշտոնական թարգմանություն

© ուրբանլաբ Երևան

քաղաքականությունները և գործողությունները պետք է նպաստեն Միության տնտեսական, սոցիալական և տարածքային կապակցվածությանը: Հետևաբար՝ ոլորտային քաղաքականությունների նախագծման և իրականացման համար պատասխանատուների կողմից պետք է հաշվի առնվեն Տարածքային օրակարգի սկզբունքները և նպատակները: ԵՄ-ի և ազգային քաղաքականությունների կապակցվածությունը անչափ կարևորում է տարածքային համախմբվածության համար: Քաղաքականությունների մեծամասնությունն զգալի տարածքային ազդեցություն ունի, որը տարբեր ձևերով է ազդում շրջանների զարգացման հնարավորությունների վրա: Տարածքային ներգործություններն օպտիմալացնելու և կապակցվածությունն առավելագույնի հասցնելու նպատակով տարբեր ճյուղային քաղաքականությունների համակարգումը կարող է զգալիորեն բարձրացնել դրանց հաջողությունը և օգնել խուսափել տարբեր տարածքային մակարդակներում հակասական քաղաքականությունների բացասական հետևանքներից: Կայունության, մրցունակության և սոցիալական կապակցվածության լավագույն հավասարակշռությանը կարելի է հասնել ինտեգրված տարածքային զարգացման միջոցով:	social and territorial cohesion. Therefore those responsible for design and implementation of sectoral policies should take the principles and objectives of the Territorial Agenda into consideration. The coherence of EU and national policies is of utmost importance for territorial cohesion. Most policies have significant territorial impacts, influencing the development opportunities of territories in different ways. The co-ordination of different sectoral policies, to optimise territorial impact and maximise coherence can significantly increase their success, and help avoid, at all territorial levels, negative effects from conflicting policies. The optimal balance of sustainability, competitiveness, and social cohesion can be realised through integrated territorial development.
(8) Մենք կարծում ենք, որ տարածքային կապակցվածությունը սկզբունքների համախումբ է, որն ուղղված է ներդաշնակ, հավասարակշռված, արդյունավետ և կայուն տարածքային զարգացմանը: Այն քաղաքացիների և ձեռնարկությունների համար ստեղծում է հավասար հնարավորություններ առավելագույնս օգտագործելու իրենց տարածքային ներուժը՝ անկախ իրանց գտնվելու վայրից: Տարածքային կապակցվածությունն ամրապնդում է համերաշխության սկզբունքը՝	(8) We believe that territorial cohesion is a set of principles for harmonious, balanced, efficient, sustainable territorial development. It enables equal opportunities for citizens and enterprises, wherever they are located, to make the most of their territorial potentials. Territorial cohesion reinforces the principle of solidarity to promote convergence between the economies of better-off territories and those whose development is lagging behind.

նպաստելով ապահովված և զարգացման ավելի ցածր մակարդակում գտնվող տարածքների տնտեսությունների միջև միասնականությանը:	
(9) Տարածքային կապակցվածությունը լրացնում է համերաշխության մեխանիզմները որակական մոտեցմամբ և ապահովում, որ զարգացման հնարավորությունները լավագույնս հարմարեցվեն տարածքի առանձնահատկություններին: Տարբեր տարածաշրջաններ կայուն զարգացման իրենց սեփական ուղիները գտնելու համար կարող են արտաքին աջակցության անհրաժեշտություն ունենալ՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն շրջաններին, որոնք դանդաղ են զարգանում: Տարածաշրջանային փոխկապվածության կարևորությունն աճում է, ինչն առաջացնում է կապերի հաստատումը, համագործակցությունը և ԵՄ-ի տարբեր շրջանների միջև բոլոր համապատասխան տարածքային մակարդակներում ինտեգրումը շարունակելու անհրաժեշտություն:	(9) Territorial cohesion complements solidarity mechanisms with a qualitative approach and clarifies that development opportunities are best tailored to the specificities of an area. Regions might need external support to find their own paths of sustainable development, with particular attention paid to those regions lagging behind. Regional interdependencies are increasingly important, which calls for continued networking, cooperation and integration between various regions of the EU at all relevant territorial levels.
(10) Մենք կոչ ենք անում պետություններին, շրջաններին, քաղաքներին (ներառյալ փոքր և միջին քաղաքները), այլ տարածքներին և բոլոր համապատասխան մակարդակներում ոլորտային քաղաքականություններին նպաստել Եվրոպայի ընդհանուր տարածքային գերակայություններին: Մենք պետք է աջակցենք Եվրոպայի առջև կանգնած առանցքային մարտահրավերներին ավելի արդյունավետ արձագանքելու նրանց կարողությանը՝ ավելի սերտ համագործակցության միջոցով: Մենք հավատում ենք, որ նման համագործակցությունը առանցքային կարևորություն ունի խելացի, ընդգրկուն և կայուն աճ և ԵՄ-ում տարածքային համախմբվածություն խթանելու հարցում:	(10) We call states, regions, cities (incl. small and medium sized towns), other territories and sectoral policies at all relevant levels to contribute to common European territorial priorities. We shall facilitate their ability to respond more effectively to the key challenges Europe faces through closer cooperation. We believe that such cooperation is key to fostering smart, inclusive and sustainable growth and territorial cohesion in the EU.
(11) Մենք համարում ենք, որ քաղաքականության նկատմամբ “տարածքի վրա հիմնվող”	(11) We consider that the place-based approach to policy making contributes to territorial cohesion.

մոտեցումը նպաստում է տարածքային կապակցվածությանը: Հիմնվելով հորիզոնական համագործակցության, ապացույցների վրա հիմնված և տեղեկացված քաղաքականության իրականացման և ինտեգրված գործառնական տարածքային զարգացման սկզբունքների վրա՝ այն կիրառում է սուբսիդիարության սկզբունքը՝ բազմաստիճան կառավարման մոտեցման միջոցով: Այն նպատակ ունի վերհանել և արդյունավետ կերպով օգտագործել տարածքային պոտենցիալը՝ տեղական և տարածաշրջանային կարիքների իմացության վրա հիմնված զարգացման ռազմավարությունների միջոցով, և զարգացման հիմքում դնում է այն առավելությունները և գործոնները, որոնք նպաստում են տարածքների մրցունակությանը: Տարածքները կարող են օգտագործել իրենց տարածքային կապիտալը երկարաժամկետ զարգացման լավագույն լուծումներն իրականացնելու համար և այս կերպ նպաստել Եվրոպայի 2020 թվականի Ռազմավարության նպատակներին հասնելուն:	Based on the principles of horizontal coordination, evidence-informed policy making and integrated functional area development, it implements the subsidiarity principle through a multilevel governance approach. It aims to unleash territorial potential through development strategies based on local and regional knowledge of needs, and building on the specific assets and factors which contribute to the competitiveness of places. Places can utilize their territorial capital to realise optimal solutions for long-term development, and contribute in this way to the achievement of the Europe 2020 Strategy objectives.
(12) Մենք հավատում ենք, որ տարածքների բազմազանությունը զարգացման ներուժ է, և որ այս առումով տեղական և տարածաշրջանային համայնքների առանձին ինքնություններն առանցքային կարևորություն ունեն: Ընդհանուր ներուժ և մարտահրավերներ ունեցող տարածքները կարող են համագործակցել համընդհանուր լուծումներ գտնելու համար և օգտագործել իրենց տարածքային ներուժը փորձի փոխանակման միջոցով: Հավելյալ հնարավորություններ ունեցող տարածքները, որոնք հաճախ գտնվում են միմյանց հարևանությամբ, կարող են միավորել ուժերը և բացահայտել իրենց համեմատական առավելությունները միասին՝ ստեղծելով զարգացման լրացուցիչ ներուժ:	(12) We believe that diversity of territories is a potential for development, and that the distinctive identities of local and regional communities are of key relevance in this regard. Territories with common potentials or challenges can collaborate in finding common solutions and utilise their territorial potential by sharing experience. Territories with complementary potentials, often neighbouring, can join forces and explore their comparative advantages together creating additional development potential.
(13) Մենք համոզված ենք, որ Եվրոպայի	(13) We are convinced that inclusive, sustainable

տարածքի և ռեսուրսների ընդգրկում, կայուն և արդյունավետ օգտագործումը կապակցվածության կարևոր տարր է: Տարածքների ավելի լավ օգտագործումը կարող է նպաստել տնտեսությունների զարգացմանը, ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ծառայություններին հասանելիությանը, հանրային ապրանքներին և ենթակառուցվածքներին, և բնական և մշակութային արժեքների խելամիտ կառավարմանը:	and efficient use of Europe's territory and resources is a key element of cohesion. The better use of territory can contribute positively to the development of economies; fair access to services of general interest; infrastructure and public goods; and wise management of natural and cultural assets.
II. Տարածքային զարգացման մարտահրավերները և հնարավորությունները	II. Challenges and potentials for territorial development
Շարժիչ ուժերը և դրանց տարածքային հայեցակետերը	Driving forces and their territorial aspects
(14) Հիմնվելով թարմացված “Եվրամիության տարածքային վիճակը և հեռանկարների” հիմնական եզրակացությունների վրա՝ մենք ուշադրություն ենք հրավիրում տարածքային հիմնական մարտահրավերներին: Մենք համոզված ենք, որ դրանք կայուն և ներդաշնակ տարածքային զարգացման ներուժի փոխակերպելու համար անհրաժեշտ է համաձայնեցված մոտեցում:	(14) Based on the main conclusions of the updated Territorial State and Perspective of the European Union we draw attention to the main territorial challenges. We are convinced that a coordinated approach is needed to transform these into potentials for sustainable and harmonious territorial development.
Գլոբալիզացիայի աճող ազդեցությունը. կառուցվածքային փոփոխությունները համաշխարհային տնտեսական ճգնաժամից հետո	Increased exposure to globalisation: structural changes after the global economic crisis
(15) Տեղական և տարածաշրջանային համայնքներն զգացել են արագացող գլոբալիզացիա և աճող խոցելիություն արտաքին ցնցումների նկատմամբ: Որոշ դեպքերում նույնիսկ վտանգվել է քաղաքների և տարածաշրջանների բարեկեցությունը, կայունությունը և հաստատունությունը: Հետևանքներն ավելի տեսանելի դարձան	(15) Accelerating globalisation and growing vulnerability to external shocks have been experienced by local and regional communities. In some cases even the prosperity, sustainability and stability of cities and regions have been threatened. The effects have been even more visible during the recent financial and economic crisis. As the long-term effects of the crisis on development

վերջին ֆինանսական և տնտեսական ճգնաժամի ընթացքում: Քանի որ զարգացման հնարավորությունների վրա ճգնաժամի երկարաժամկետ ազդեցությունը տարբեր տարածքներում տարբեր է, վերականգնման ժամկետները և քաղաքականության տեսքով հնարավոր արձագանքների շրջանակը տարբերվում են՝ ըստ տարածաշրջանի: Այդուհանդերձ, համապատասխան գործողություններ ձեռնարկվելու դեպքում ճգնաժամը հնարավորություն է տալիս անցում կատարել ավելի կայուն և ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ տնտեսական կառուցվածքների:	opportunities vary territorially, the timing of recovery and the range of possible policy responses differ across regions. The crisis, however, provides an opportunity for a transition towards more sustainable and resource efficient economic structures if appropriate actions are taken
(16) Գլոբալիզացիան կարող է բերել լուրջ տարածքային հետևանքների ԵՄ-ի, ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում: Ազլումերացիոն և այլ քաղաքային շրջանները, միջազգային և համաշխարհային դարպասները առավելություններ են Եվրոպայի ողջ տարածքի զարգացման համար՝ պայմանով, որ մյուս շրջանները շահեն դրանց շարժից և կապված լինեն ցանցերի միջոցով: Արտաքին ցնցումները հաղթահարելու և դրանցից վերականգնվելու տեսանկյունից տարածաշրջանների համար աճող կարևորություն ունեն տեղական ներդրումները և տարածքային առանձնահատկությունները:	(16) Globalization can bring about important territorial consequences at EU, national, regional and local levels. Metropolitan and other urban regions, international and global gateways are assets for the development of the whole European territory, provided that other regions benefit from their dynamism and are connected through networks. Local endowments and territorial characteristics have growing importance for regions in order to cope with and recover from external shocks.
ԵՄ ինտեգրացիայի մարտահրավերները և տարածաշրջանների աճող փոխկապվածությունը	Challenges of EU integration and the growing interdependences of regions
(17) ԵՄ ինտեգրման խորացումը և ընդլայնումը վիճարկվում են այնպիսի ներքին գործոններով, ինչպիսիք են վարչական սահմաններով բաժանված շրջանները և տարբերությունները Անդամ Պետությունների հարկային կարգավորումների և պարտավորությունների միջև: Տարածաշրջանների աճող	(17) Deepening and widening of EU integration is challenged by internal factors such as regions divided by administrative borders, and differences in fiscal discipline and commitment between Member States. Changes in one part of Europe can have effects in other parts of the continent due to the growing interdependences of regions. The

Եվրամիության տարածքային օրակարգ 2020 / ոչ պաշտոնական թարգմանություն

© ուրբանլաբ Երևան

փոխկապվածության հետևանքով Եվրոպայի մի մասում տեղի ունեցող փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ մայրցամաքի մյուս մասերի վրա: Կենտրոն-ծայրամաս բաժանման մարտահրավերը դեռ առկա է, նույնիսկ ազգային մասշտաբով: Արտաքին սահմաններում կապակցվածությունը շատ կարևոր է, քանի որ իրավական, սոցիալական և քաղաքական համակարգերում անհամապատասխանությունները և տարբերությունները լուրջ հետևանքներ ունեն, հատկապես, միգրացիայի և առևտրի տեսակետից: Տարածաշրջանների աճող փոխկապվածությունը համաշխարհային, եվրոպական և ազգային մակարդակներով ավելի ուժեղ կապերի պահանջարկ է առաջացնում: Տեղական և տարածաշրջանային մակարդակներում ինտեգրման խոչընդոտները կարող են հանգեցնել սահմանամերձ շրջաններում մարդկային, մշակութային, տնտեսական և էկոլոգիական ռեսուրսների թերօգտագործմանն ու խորացնել նրանց ծայրամասային դիրքը և սոցիալական բացառումը:	challenge of the core-periphery division is still present, even on the national scale. Cohesion at the external borders is crucial, as disparities and differences in legal, social and political systems have important consequences especially in terms of migration and trade. The growing interdependence of regions generates demand for better connectivity at global, European and national level. Integration barriers at local and regional level can result in the underutilization of human, cultural, economic and ecological resources of the border regions and increase their peripheral position and social exclusion.
Տարածքային բազմազան ժողովրդագրական և սոցիալական մարտահրավերները, խոցելի խմբերի առանձնացումը	Territorially diverse demographic and social challenges, segregation of vulnerable groups
(18) Եվրոպայի առջև ծառացել են աճող և տարածքային առումով տարբերվող ժողովրդագրական մարտահրավերներ: Ծերացումը և բնակչության թվի նվազումը շատ շրջաններում կրեթի փոփոխությունների, այդ թվում՝ գյուղական և սահմանային տարածքներում, և ծանր հարված կհասցնի սոցիալական և տարածքային կապակցվածությանը, հանրային ծառայությունների մատուցմանը, աշխատաշուկային և բնակարանային ֆոնդին:	(18) Europe faces increasing and territorially differentiated demographic challenges. Ageing and depopulation will bring about changes in many regions, including rural and peripheral regions and lead to severe impacts for social and territorial cohesion, public service provision, labour market and housing. Other regions have growing populations and face other pressures. Significant intra-European migration after the EU enlargement and immigration mainly from less developed non-EU countries constitute specific challenges and

Եվրամիության տարածքային օրակարգ 2020 / ոչ պաշտոնական թարգմանություն

© ուրբանլաբ Երևան

Այլ շրջաններն ունեն աճող բնակչություն, և նրանց առջև ծառացած են այլ ճնշումներ: ԵՄ-ի ընդլայնումից հետո ներեվրոպական զգալի միգրացիան և հիմնականում ԵՄ անդամ չհանդիսացող քիչ զարգացած երկրներից ներգաղթը ստեղծել են յուրահատուկ մարտահրավերներ և հնարավորություններ, հատկապես քաղաքային տարածքներում:	opportunities especially in urban areas.
(19) Սոցիալ-տնտեսական շրջանից դուրսմղումն ունի որոշակիորեն արտահայտված տարածքային բնույթ: Դուրսմղման վտանգն ավելի մեծ է այն վայրերում, որոնք ունեն ցածր հասանելիություն, ցածր տնտեսական ցուցանիշներ, սոցիալական հնարավորությունների պակաս կամ այլ որոշակիորեն տարածքային հանգամանքներ: Խոցելի խմբերը և ազգային փոքրամասնությունները հաճախ կենտրոնանում են որոշակի քաղաքային և գյուղական տարածքներում, և որպես հետևանք նրանց ինտեգրումը խոչընդոտվում է: Երբ այդ տարածքները կազմում են մեծ վարչական միավորների մի մասը, խնդիրը կարող է թաքնված լինել պաշտոնական վիճակագրության ներքո:	(19) Exclusion from the socio-economic circuit definitely has a strong territorial character. The risk of exclusion is higher in areas with low accessibility, weak economic performance, lack of social opportunities or other particular territorial circumstances. Vulnerable groups and ethnic minorities often end up concentrated in certain urban and rural areas and their integration is hindered as a result. Where these territories are part of larger administrative units the problem can be hidden within official statistics.
Կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի ռիսկերը. աշխարհագրական տարատեսակ ազդեցություններ	Climate change and environmental risks: geographically diverse impacts
(20) Կլիմայի փոփոխության հետևանքները զգալիորեն տարբերվում են Եվրոպայի՝ տարբեր տեսակի ազդեցություններով և տարբեր աստիճանի խոցելիությամբ աշխարհագրական շրջաններում: Ծովի մակարդակի բարձրացման, երաշտի, անապատացման, ջրհեղեղների և այլ բնական աղետների աճող ռիսկը պահանջում է տարածքային տարբեր պատասխաններ: Տարածաշրջաններն ունեն տարբեր հնարավորություններ իրենց	(20) The impacts of climate change vary considerably across Europe in terms of geographical regions with different types of impacts and different degrees of vulnerability. The increased risk of sea level rise, drought, desertification, floods and other natural hazards calls for territorially different responses. Regions have different opportunities to embed adaptation and mitigation into their strategies, decreasing greenhouse gas emissions and adjusting their

Եվրամիության տարածքային օրակարգ 2020 / ոչ պաշտոնական թարգմանություն

© ուրբանլաբ Երևան

ռազմավարություններում ընդգրկելու հարմարեցման և մեղմացման միջոցներ, նվազեցնելու ջերմոցային գազերի արտանետումները և հարմարեցնելու իրենց սոցիալ-տնտեսական համակարգերը ցածր ածխածնային տնտեսությանը: Կլիմայի փոփոխությունը կարող է նաև հանգեցնել զարգացման նոր հնարավորությունների, այդ թվում՝ գյուղատնտեսության, կանաչ տնտեսության և վերականգնվող էներգիայի արտադրության մեջ: Կլիմայի փոփոխության խնդիրները ուշադրություն են հրավիրում քաղաքականությունների տարածքային համակարգման վրա՝ մասնավորապես, կլիմայի, էներգետիկայի, ջրային ռեսուրսների կառավարման, գյուղատնտեսության, բնակարանաշինության, զբոսաշրջության և տրանսպորտի:	socioeconomic systems to a low carbon economy. Climate change may also lead to new development opportunities, such as within agriculture, green economy and renewable energy production. The challenges of climate change draw attention to the territorial coordination of policies, especially climate, energy, water management, agriculture, housing, tourism and transport.
(21) Եվրոպայի տարածքում օդի, հողի և ջրի որակը շրջակա միջավայրում տարբեր է, և օդի աղտոտվածությունը և աղմուկը առաջացնում են առողջական լուրջ խնդիրներ: Որոշ դեպքերում դա կապված է սոցիալական անհավասարության հետ: Մաքուր օդից, ջրից և հողից օգտվելու անհավասարություններն առկա են ոչ միայն երկրների և տարածաշրջանների միջև, այլ նաև քաղաքային և գյուղական տարածքների միջև, ինչպես նաև քաղաքներում:	(21) The environmental quality of air, soil and water is diverse across Europe and air pollution and noise cause serious health problems. In certain cases it correlates with social inequality. Disparities in the access to clean air, water and soil do not only appear between countries and regions but also between urban and rural areas as well as inside cities.
Առաջ են գալիս էներգետիկ մարտահրավերներ և սպառնում տարածաշրջանային մրցունակությանը	Energy challenges come to the fore and threaten regional competitiveness
(22) Որոշ եվրոպական շրջաններ կանգնած են էներգամատակարարման անվտանգության խնդիրների առջև, քանի որ մեծապես կախված են հանածո վառելանյութի ներմուծումից կամ մասնագիտացված են ինտենսիվ էներգետիկ գործունեության մեջ: Տնտեսական կամ քաղաքական անկայունության առումով խոցելի	(22) Certain European regions face challenges of security in energy supply, as they are heavily dependent on fossil fuel imports or specialized in energy intensive activities. Significant imports from third countries vulnerable to economic or political instability increase problems for energy security. Rising energy prices and emissions draw attention

երրորդ երկրներից նշանակալից ներմուծումը խորացնում է էներգետիկ անվտանգության խնդիրները: Էներգիայի բարձրացող գները և արտանետումները ուշադրություն են հրավիրում կայուն էներգետիկ լուծումների անհրաժեշտության վրա, ինչպիսիք են վերականգնվող էներգետիկ ռեսուրսների ներուժի գիտակցումը և անցումն ավելի կանաչ, ցածր ածխածնային տնտեսական գործունեությանը: Ոչ բավարար էներգետիկ ենթակառուցվածքը և առկա ցանցերի կողմից ստեղծված կախվածություններն առաջացնում են էներգիայի արտադրության և մատակարարման դիվերսիֆիկացիայի, ինչպես նաև էներգիայի շուկայի զարգացման և ինտեգրման անհրաժեշտություն: Որոշ տարածքներ, ինչպիսիք են կղզիները և հեռավոր և նոսր բնակեցված տարածքները, կարող են էներգիայի պակասի և բարձրացող գների պատճառով տուժել, իսկ քաղաքային տարածումը նպաստում է բարձր, ոչ կայուն էներգիայի սպառման ծավալներին:	to the need for sustainable energy solutions such as realising the potential of renewable energy resources and shifting towards greener, low carbon economic activities. Insufficient energy infrastructure and dependencies created by existing networks call for diversification of energy production and supply, as well as development of energy market and integration. Some territories such as islands and remote and sparsely populated areas can be more susceptible to energy shortages and rising prices, while urban sprawl contributes to high, unsustainable energy consumption rates.
Կենսաբազմազանության կորուստ, խոցելի բնական, լանդշաֆտային և մշակութային ժառանգություն	Loss of biodiversity, vulnerable natural, landscape and cultural heritage
(23) Բնական և մշակութային ժառանգությունը տարածքային կապիտալի և ինքնության մասն է: Էկոլոգիական արժեքները, շրջակա միջավայրի որակը և մշակութային արժեքները չափազանց կարևոր են բարեկեցության և տնտեսական հեռանկարների համար և զարգացման հազվադեպ հնարավորություններ են տալիս: Աճող պահանջարկը բավարարելու համար այդ ռեսուրսների անխնա օգտագործումը, ինչպես նաև արդյունաբերական վտանգները կարող են լուրջ վնաս հասցնել և սպառնալ տարածքային զարգացմանը: Ուրբանիզացիան, գյուղատնտեսության և ձկնաբուծության, տրանսպորտի և այլ տեսակի	(23) Natural and cultural heritage are parts of territorial capital and identity. Ecological values, environmental quality and cultural assets are crucial to well-being and to economic prospects and offer unique development opportunities. Overexploitation of these resources to provide for increasing demand, as well as industrial hazards can cause serious damage and may threaten territorial development. Urbanisation, intensification of agriculture and fisheries, transport and other types of infrastructure development, particularly where they take place in a territorially uncoordinated manner, can cause severe environmental problems. Increased and

Եվրամիության տարածքային օրակարգ 2020 / ոչ պաշտոնական թարգմանություն

© ուրբանլաբ Երևան

ենթակառուցվածքների զարգացման ինտեսիվացումը, հատկապես, երբ դրանք տեղի են ունենում տարածականորեն չհամաձայնեցված կարգով, կարող են առաջացնել շրջակա միջավայրի ծանր խնդիրներ: Ծովային տարածքի և ծովային ռեսուրսների բարձր և չհամակարգված շահագործումը կարող է հետևանքներ թողնել կայուն տարածքային զարգացման վրա: Ծովի և ցամաքի օգտագործման փոփոխությունները, ուրբանիզացիան և զանգվածային զբոսաշրջությունը սպառնում են մշակութային արժեքներին ու լանդշաֆտներին և կարող են հանգեցնել բնական միջավայրի և էկոլոգիական միջանցքների մասնատումների: Պատմական և մշակութային միջավայրում, ինչպես նաև նոր զարգացման կամ շինարարության տարածքներում տեղի բնույթին ուշադրություն դարձնելը կարող է բարելավել կառուցված միջավայրի կապակցվածությունը և որակը:	uncoordinated exploitation of maritime space and marine resources may have consequences for sustainable territorial development. Changes in land- and sea use, urbanisation and mass tourism threaten cultural assets and landscapes and may lead to fragmentation of natural habitats and ecological corridors. In historic and cultural environments, as well as in areas for new development or constructions, attention paid to the character of the place can improve the coherence and quality of the built environment.
III. Եվրոպական միության զարգացման տարածքային գերակայությունները	III. Territorial Priorities for the Development of the European Union
(24) Մենք կարծում ենք, որ տարածքային զարգացման մարտահրավերները ընդհանուր ուշադրության և դրանք կարգավորվելուն և տարածքային հնարավորություններն օգտագործելուն ուղղված համատեղ ջանքերի կարիք ունեն: Մենք, հետևաբար, սահմանել ենք Եվրամիության վեց տարածքային գերակայությունները, որոնք կարող են նպաստել Եվրոպայի 2020 Ռազմավարության հաջող իրականացմանը:	(24) We believe that the challenges for territorial development need common attention and where appropriate joint efforts to handle them and utilise territorial potentials. We therefore define six territorial priorities for the EU which can contribute to the successful implementation of the Europe 2020 Strategy.
1. Խթանել բազմակենտրոն և հավասարակշռված տարածքային զարգացմանը	1. Promote polycentric and balanced territorial development
(25) Մենք պնդում ենք, որ ԵՄ-ի բազմակենտրոն և հավասարակշռված տարածքային	(25) We stress that polycentric and balanced territorial development of the EU is key element of

զարգացումը տարածքային կապակցվածության հասնելու համար առանցքային տարր է: Այնտեղ, որտեղ Եվրոպայի ամենազարգացած քաղաքները և շրջանները համագործակցում են, որպես բազմակենտրոն մոդելի մասեր, դրանք ավելացված արժեք են ներկայացնում և հանդես գալիս որպես իրենց ավելի լայն տարածաշրջանների զարգացմանը նպաստող կենտրոններ: Այդ հարցում քաղաքային զարգացման քաղաքականությունները ևս ունեն նշանակալի դեր: Բազմակենտրոն տարածքային զարգացման քաղաքականությունը պետք է խթանի ԵՄ տարածքի տարածքային մրցունակությանը նաև հիմնական “Պենտագոնի տարածքից” դուրս: Մենք խրախուսում ենք քաղաքներին նորարարական ձևով ցանցեր ձևավորելը, որը նրանց կարող է թույլ տալ բարելավել իրենց ցուցանիշները Եվրոպական և համաշխարհային մրցակցության դաշտում և խթանել տնտեսական բարգավաճումը կայուն զարգացման ուղղությամբ:	achieving territorial cohesion. Where the most developed cities and regions within Europe cooperate as parts of a polycentric pattern they add value and act as centres contributing to the development of their wider regions. Urban development policies also have a significant role in this regard. Polycentric territorial development policy should foster the territorial competitiveness of the EU territory also outside the core “Pentagon area”. We encourage cities to form networks in an innovative manner, which may allow them to improve their performance in European and global competition and promote economic prosperity towards sustainable development.
(26) Միևնույն ժամանակ մենք մակրո-տարածաշրջանային, միջսահմանային, ինչպես նաև համապատասխան դեպքերում ազգային և տարածաշրջանային մակարդակներում բազմակենտրոն զարգացման նպատակ ենք դրել: Հնարավորության դեպքում կարևոր է խուսափել բևեռացումից մայրաքաղաքների, ագլոմերացիոն տարածքների և ազգային մասշտաբով միջին քաղաքների միջև: Փոքր և միջին քաղաքները կարող են կարևոր դեր խաղալ տարածաշրջանային մակարդակով: Քաղաքականության ջանքերը պետք է նպաստեն տնտեսական ցուցանիշների ուժեղ տարածքային բևեռացման նվազեցմանը՝ խուսափելով Եվրոպայի տարածքում մեծ տարածաշրջանային անհամաչափություններից՝ Եվրոպայի 2020 ռազմավարությանը համապատասխան անդրադառնալով աճը սահմանափակող գործոններին:	(26) At the same time we aim at polycentric development at the macro-regional, cross-border and also on national and regional level in relevant cases. Where possible, it is important to avoid polarization between capitals, metropolitan areas and medium sized towns on the national scale. Small and medium- sized towns can play a crucial role at regional level. Policy efforts should contribute to reducing the strong territorial polarisation of economic performance, avoiding large regional disparities in the European territory by addressing bottlenecks to growth in line with Europe 2020 Strategy.

2. Ինտեգրված զարգացման խրախուսումը քաղաքներում, գյուղական և հատուկ տարածքներում	2. Encouraging integrated development in cities, rural and specific regions
(27) Մենք հայտարարում ենք, որ Կայուն եվրոպական քաղաքների մասին Լայպցիգի Խարտիայում և Քաղաքային զարգացման մասին Մարսելի ու Տոլեդոյի հռչակագրերում քաղաքային զարգացման համար պատասխանատու նախարարների կողմից առանձնացված խնդիրները և մտահոգությունները պետք է բոլոր մակարդակներում հաշվի առնվեն տարածքային քաղաքականության մշակման ժամանակ: Մենք աջակցում ենք այն բոլոր ջանքերին, որոնք օգնում են քաղաքները դարձնել խելացի, կայուն և ընդգրկուն զարգացման շարժիչներ և գրավիչ վայրեր ապրելու, աշխատելու, այցելելու և ներդրումներ կատարելու համար: Համապատասխանաբար՝ մենք խորհուրդ ենք տալիս կիրառել միասնական և բազմաշերտ մոտեցում քաղաքային զարգացման և վերակենդանացման քաղաքականության մեջ: Քաղաքների համագործակցությունը և ցանցավորումը կարող է երկարատև կտրվածքով նպաստել տարբեր մասշտաբներով քաղաքային շրջանների խելամիտ զարգացմանը: Քաղաքները պետք է անհրաժեշտության դեպքում նայեն իրենց վարչական սահմաններից այն կողմ և կենտրոնանան գործառույթային շրջանների վրա, այդ թվում՝ իրանց արվարձանային տարածքների:	(27) We declare that the objectives and concerns identified by Ministers responsible for urban development in the Leipzig Charter on Sustainable European Cities, and the Marseille and the Toledo Declarations on Urban Development should be taken into account in territorial policy making at all levels. We support all the efforts, which help to make cities motors of smart, sustainable and inclusive development and attractive places to live, work, visit and invest in. Accordingly, we recommend applying an integrated and multilevel approach in urban development and regeneration policies. The cooperation and networking of cities could contribute to smart development of city regions at varying scales in the long run. Cities should, where appropriate look beyond their administrative borders and focus on functional regions, including their peri-urban neighbourhoods.
(28) Գյուղական տարածքների լայն բազմազանության զարգացումը պետք է հաշվի առնի դրանց ինքնատիպ բնութագրերը: Գյուղական, սահմանային և նոսր բնակեցված տարածքները պետք է բարձրացնեն իրենց հասանելիությունը, խթանեն ձեռնարկատիրությունը և կառուցեն ամուր	(28) The development of the wide variety of rural areas should take account of their unique characteristics. Rural, peripheral and sparsely populated territories may need to enhance their accessibility, foster entrepreneurship and build strong local capacities. Some rural areas tend to be vulnerable territories rich in cultural and natural

տեղական կարողություններ: Որոշ գյուղական տարածքներ հակված են լինել խոցելի և հարուստ են իրենց մշակութային և բնական արժեքներով: Մենք աջակցում ենք այդ տարածքային կապիտալի, դրա առաջարկած էկոլոգիական գործառույթների և ծառայությունների պաշտպանությանը և կայուն օգտագործմանը: Հնարավոր է անհրաժեշտ լինի հատուկ ուշադրություն դարձնել տնտեսապես թույլ զարգացած սահմանային, գյուղական և նոսր բնակեցված տարածքներին, որտեղ հաճախ մեկուսացվում են սոցիալապես անապահով խմբեր: Բնակչության թվի ծայրահեղ նվազում ունեցող տարածքները պետք է ունենան երկարաժամկետ լուծումներ՝ պահպանելու իրենց տնտեսական գործունեությունը՝ ստեղծելով աշխատատեղեր, գրավիչ կենսապայմաններ և հանրային ծառայություններ բնակիչների և ձեռնարկությունների համար: Գյուղական տարածքներում, որտեղ գյուղատնտեսությունը և անտառային տնտեսությունը դեռևս հողօգտագործման կարևոր ձևեր են, կարևոր է հիմնական ոլորտի արդիականացումը՝ նոր և այլընտրանքային ոլորտներում ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը միտված ներդրումների և բարձր որակի վարելահողերի և էկոլոգիական գործառույթների պահպանման միջոցով:	values. We support the safeguarding and sustainable utilization of this territorial capital, the ecological functions and services it provides. Special attention may need to be paid to underdeveloped peripheral rural and sparsely populated areas where disadvantaged social groups often suffer from segregation. Territories facing severe depopulation should have long-term solutions to maintain their economic activity by enhancing job creation, attractive living conditions and public services for inhabitants and businesses. In rural areas where agriculture and forestry are still important forms of land use, modernisation of the primary sector through resource-efficient investments in new and alternative sectors and preservation of high quality arable land and ecological functions are essential.
(29) Մենք ընդունում ենք, որ քաղաքային և գյուղական տարածքները ամբողջ Եվրոպայում կարող են ունենալ բազմազան կապեր միմյանց հետ՝ սկսած արվարձանայինից մինչև սահմանային գյուղական տարածքներ: Քաղաքային-գյուղական փոխադարձ կապը պետք է ճանաչվի լայն համագործակցության վրա հիմնված ինտեգրված կառավարման և պլանավորման միջոցով: Մենք ողջունում ենք “տարածքի վրա հիմնվող” ռազմավարությունները, որոնք մշակվում ենք	(29) We acknowledge the diverse links that urban and rural territories throughout Europe can have with each other, ranging from peri-urban to peripheral rural regions. Urban-rural interdependence should be recognised through integrated governance and planning based on broad partnership. We welcome place- based strategies developed locally to address local conditions. In rural areas small and medium-sized towns play a crucial role; therefore it is important to improve the accessibility of urban centres from

տեղական մակարդակով՝ հաշվի առնելով տեղական պայմանները: Գյուղական տարածքներում փոքր և միջին քաղաքները կարևոր դեր են խաղում, ուստի՝ կարևոր է ապահովել հարակից գյուղական տարածքներից քաղաքային կենտրոններին հասանելիությունը՝ ապահովելու անհրաժեշտ աշխատանքի հնարավորությունների ու ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ծառայությունների առկայությունը: Ազլոմերացիոն շրջանները պետք է գիտակցեն, որ իրենք պատասխանատվություն են կրում իրենց շրջակայքի զարգացման համար:	related rural territories to ensure the necessary availability of job opportunities and services of general interest. Metropolitan regions should also be aware that they have responsibility for the development of their wider surroundings.
(30) Մենք հիշում ենք, որ աշխարհագրական դիրքը էական ազդեցություն ունի բազմաթիվ մարզերի և Անդամ Պետությունների զարգացման հնարավորությունների վրա: Սա ճանաչվում է նաև Եվրոպական միության գործունեության մասին համաձայնագրով (հոդված 174): Ափամերձ գոտիները, կղզիները, այդ թվում՝ կղզի-պետությունները, լեռնային շրջանները, տափաստանները, գետերի հովիտները և լճի ավազանները և այլ տիպի տարածքներն ունեն հատուկ, հաճախ միջսահմանյան, հատկանիշներ, կամ ունեն ծանր և մշտական բնույթի բնական կամ ժողովրդագրական խնդիրներ, ինչպիսին է բնակչության ցածր խտությունը, որը ազդում է նրանց զարգացման հնարավորությունների վրա: Ամենահեռու տարածաշրջանները (հոդված 349) ունեն հատուկ և մշտական սահմանափակումներ, մասնավորապես՝ մայրցամաքից հեռու լինելու և որոշակի միջազգային համատեքստի պատճառով: Այս ներուժը կարելի է վերհանել և արդյունավետ կերպով օգտագործել և խնդիրները լուծել տարբեր պետությունների կամ տարածաշրջանների գործիչների հետ համատեղ՝ միասնական ձևով:	(30) We recall that specific geographical endowments have significant influence on the development opportunities of many regions and Member States. This is also recognised by the Treaty on the Functioning of the European Union (Art. 174). Coastal zones, islands, including island states, mountainous areas, plains, river valleys and lake basins and other types of territories have special – often cross border– features, or suffer from severe and permanent natural or demographic handicaps such as low population density, which influence their development potentials. Outermost regions (Art. 349) have specific and permanent constraints, notably due to the distance from the mainland, and a specific international context. These specific potentials can be unleashed and problems tackled jointly by actors from different states or regions in an integrated way.

3. Տարածքային ինտեգրումը անդրսահմանային և վերազգային գործառնական շրջաններում	3. Territorial integration in cross-border and transnational functional regions
(31) Մենք կարծում ենք, որ տարածաշրջանային համագործակցության միջոցով տարածքների ինտեգրումը կարող է կարևոր գործոն հանդիսանալ գլոբալ մրցունակությունը խթանելու համար: Այս կերպ, արժեքները, ինչպիսիք են արժեքավոր բնական, լանդշաֆտային և մշակութային ժառանգությունն ու սահմաններով բաժանված քաղաքային ցանցերը և աշխատանքային շուկաները կարող են ավելի լավ օգտագործվել: Այս առումով ԵՄ-ի արտաքին սահմանների երկայնքով փոխված տարածքներին պետք է ուշադրություն դարձվի: Տարածքային ինտեգրումը և համագործակցությունը կարող են ստեղծել կրիտիկական զանգված զարգացման համար՝ նվազեցնելով տնտեսական, սոցիալական և բնապահպանական մասնատումը, կառուցելով փոխադարձ վստահություն և սոցիալական կապիտալ: Անդրսահմանային և վերազգային գործառնական շրջանները կարող են պահանջել տարբեր երկրների միջև քաղաքականության պատշաճ համակարգում:	(31) We consider that the integration of territories through territorial cooperation can be an important factor in fostering global competitiveness. In this way, potentials such as valuable natural, landscape and cultural heritage, city networks and labour markets divided by borders can be better utilized. Attention shall be paid to areas along external borders of the EU in this regard. Territorial integration and co- operation can create a critical mass for development, diminishing economic, social and ecological fragmentation, building mutual trust and social capital. Cross border and transnational functional regions may require proper policy coordination between different countries.
(32) Մենք սատարում ենք տարածքների վերազգային և անդրսահմանային ինտեգրումը՝ անցնելով համագործակցության նախագծերից այն կողմ և կենտրոնանալով իրապես վերազգային և անդրսահմանային նշանակության զարգացումների և արդյունքների վրա: Եվրոպական տարածքային համագործակցությունը պետք է ավելի լավ ներդրված լինի ազգային, տարածաշրջանային և տեղական զարգացման ռազմավարությունների մեջ:	(32) We support transnational and cross border integration of regions going beyond cooperation projects and focusing on developments and results of real cross-border or transnational relevance. European Territorial Cooperation should be better embedded within national, regional and local development strategies.
4. Տարածաշրջանների գլոբալ մրցունակության ապահովումը՝ հիմնված	4. Ensuring global competitiveness of the regions based on strong local economies

ուժեղ տեղական տնտեսությունների վրա	
(33) Մենք հիշում ենք, որ տնտեսական մրցունակությունը կարող է մեծացվել գլոբալ ինտեգրված տնտեսական ոլորտների և ուժեղ տեղական տնտեսությունների զարգացմամբ: Սոցիալական կապիտալի, տարածքային ակտիվների օգտագործումը և “տարածքի վրա հիմնվող” մոտեցմամբ նորարարությունների ու խելացի մասնագիտական ռազմավարությունների զարգացումը կարող են առանցքային դեր խաղալ: Համաշխարհային և տեղական տարրերը փոխադարձ ամրապնդող և փոխկապված են և, հետևաբար, պետք է զարգանան զուգահեռաբար: Հետազոտությունների, մարդկային կապիտալի ամրապնդումը, նորարարության հնարավորությունները և գաղափարների բերումը շուկա էական նշանակություն ունեն:	(33) We recall that economic competitiveness can be enhanced by the development of globally integrated economic sectors and strong local economies. The use of social capital, territorial assets, and the development of innovation and smart specialisation strategies in a place-based approach can play a key role. The global and local strands are mutually reinforcing and interlinked, and should therefore be developed in parallel to each other. Strengthening research, human capital, the capacity for innovation and bringing ideas to the market are essential.
(34) Ավելին, տեղական կարողությունների, բնութագրերի և ավանդույթների ինտեգրումը գլոբալ տնտեսության մեջ կարևոր է տեղական արձագանքների ամրապնդման և արտաքին ուժերի նկատմամբ խոցելիության նվազեցման համար: Տեղական տնտեսության բարելավումը՝ տեղական արտադրանքի և շուկաների, գործարար միջավայրի զարգացման միջոցով, տեղային ուղղվածությամբ վերապատրաստման ապահովումը, մասնակի ինքնաբավությունը և կապակցված և հզոր տեղական համայնքների կառուցումը կարող են լինել արդյունավետ գործիքներ: Կարևոր է բոլոր տարածաշրջաններում պահպանել և բարելավել նորարարական կարողությունները: Տեղական տնտեսության դիվերսիֆիկացումը կարող է նվազեցնել խոցելիությունը:	(34) Furthermore, integration of local endowments, characteristics and traditions into the global economy is important in strengthening local responses and reducing vulnerability to external forces. Improving local economies through development of local products and markets, business environments, locally-oriented training provision, partial self-sufficiency and building up cohesive and strong local communities can be effective tools. It is important to preserve and improve the innovation capacity of all regions. Diversification of the local economy can decrease vulnerability.
5. Տարածքային կապվածության բարելավումը անհատների, համայնքների և	5. Improving territorial connectivity for individuals, communities and enterprises

ձեռնարկությունների համար	
(35) Մենք համոզված ենք, որ արդար և մատչելի հասանելիությունը ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ծառայություններին, տեղեկատվությանը, գիտելիքին և շարժունությանը խիստ կարևոր են տարածքային կապակցվածության համար: Ծառայությունների ապահովումը և ենթակառուցվածքային խոչընդոտները նվազագույնի հասցնելը կարող են բարելավել մրցունակությունը և Եվրամիության կայուն և ներդաշնակ տարածքային զարգացումը: Մի շարք այլ հարմարություններից բացի, կարևոր է ապահովել հասանելիություն՝ ավտոմոբիլային, երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտին և այլ ենթակառուցվածքների, ինչպիսիք են լայնաշերտ և վերեվրոպական էներգետիկ ցանցերը: Մենք խրախուսում ենք ապակենտրոնացված, արդյունավետ, անվտանգ և էկոլոգիապես մաքուր արտադրանքը և վերականգնվող ու ցածր ածխածնային էներգիայի օգտագործումը:	(35) We believe that fair and affordable accessibility to services of general interest, information, knowledge and mobility are essential for territorial cohesion. Providing services and minimising infrastructure barriers can improve competitiveness, and the sustainable and harmonious territorial development of the European Union. Among others it is important to secure access to road, rail, water- based and air transport, and to other infrastructure facilities such as broadband and trans-European energy networks. We support decentralized, efficient, secure and environmentally-friendly production and use of renewable and low carbon energy.
(36) Մենք աջակցում ենք արդյունավետ համակցված տրանսպորտային լուծումներին, հատկապես՝ քաղաք-շրջաններում, ծով-ցամաք կապերին և օդանավակայան-երկաթուղի արդյունավետ հարաբերություններին: Գլոբալ կապերի աճող կարևորությունը ստեղծում է հավասարակշռված միջմայրցամաքային երթևեկության անհրաժեշտություն, ներառյալ՝ Ասիայի հետ ցամաքային կապերի ավելի լայն օգտագործումը: Հիմնական եվրոպական կենտրոնները, ինչպիսիք են մայրաքաղաքները, ագլոմերացիոն շրջանները և ՏԵՑ հանգույցները, կապող Տրանսեվրոպական ցանցերի (ՏԵՑ-S) հետագա զարգացումը, առաջնային և երկրորդական համակարգերի միջև կապերի բարելավումը պետք է լինեն ինտեգրված ցանցի կարևոր բաղադրիչ:	(36) We support effective inter-modal transport solutions especially within city-regions; sea-overland connections and efficient airport-railway relationships. The increasing importance of global linkages creates the need for balanced intercontinental traffic including greater use of overland connections with Asia. Further development of Trans-European networks (TEN-T) linking the main European centres, such as capitals, metropolitan regions and TEN-nodes and improving linkages between primary and secondary systems should be an essential component of the integrated network. Development of secondary networks is important, especially at regional and local level. We encourage the accessibility of urban centres in peripheries where a combination of social and economic disadvantages can result in the

Երկրորդական ցանցերի զարգացումը շատ կարևոր է, հատկապես տարածաշրջանային և տեղական մակարդակներում: Մենք խրախուսում ենք քաղաքային կենտրոնների մատչելիությունը սահմանային շրջաններում, որտեղ սոցիալական և տնտեսական թերությունների համադրությունը կարող է հանգեցնել խոցելի խմբերի առանձնացմանը: Անհրաժեշտության դեպքում պետք է կառուցվեն տարածքային արգելքներ ընդունելի կերպով, ինչպիսիք անհրաժեշտ են կղզիների և ծովային տարածքների համար:	segregation of vulnerable groups. Transport connections across territorial barriers such as those to islands and overseas territories should be developed where appropriate.
6. Տարածաշրջանների էկոլոգիական, լանդշաֆտային և մշակութային արժեքների կառավարումը և կապումը	6. Managing and connecting ecological, landscape and cultural values of regions
(37) Մենք ընդգծում են, որ լավ գործող էկոլոգիական համակարգերը և մշակութային և բնական ժառանգության պաշտպանությունն ու հարստացումը կարևոր պայմաններ են երկարաժամկետ կայուն զարգացման համար: Մենք բոլորս պատասխանատու ենք դրանց լավ գործառնության, պաշտպանվածության և ընդլայնման համար: Հաշվի առնելով տարբեր աշխարհագրական առանձնահատկությունները՝ համատեղ ռիսկերի կառավարումը հատկապես կարևոր է: Մենք աջակցում ենք էկոլոգիական համակարգերի և իրենց բնական արժեքների համար պաշտպանվող տարածքների ինտեգրմանը կանաչ ենթակառուցվածքային ցանցերի մեջ՝ բոլոր մակարդակներում:	(37) We underline that well-functioning ecological systems and the protection and enhancement of cultural and natural heritage are important conditions for long-term sustainable development. We are all responsible for ensuring they are well functioning, protected and enhanced. Joint risk management is particularly important, taking into consideration different geographical specificities. We support the integration of ecological systems and areas protected for their natural values into green infrastructure networks at all levels.
(38) Եվրոպական քաղաքային և գյուղական լանդշաֆտի բարձր արժեքը պետք է պաշտպանվի և բարելավվի որակական առումով: Հարուստ բնական և մշակութային լանդշաֆտներով տարածքներին անհրաժեշտ է հատուկ ուշադրություն, որպեսզի այդ ակտիվները օգտագործվեն առավելագույնս արդյունավետ կերպով: Էկոլոգիապես մաքուր	(38) The high value of European urban and rural landscapes should be protected and developed in qualitative terms. Areas rich in natural and cultural landscapes may need special attention in order to make best use of these assets. Environmentally friendly job creation and strengthened recreational functions can complement conservation. The local, regional and trans-regional management of cultural

աշխատատեղերի ստեղծումը և ուժեղացված առողջապահական-վերականգնողական գործառույթները կարող են համալրել բնության պահպանությունը: Մշակութային և բնական ժառանգության տեղական, տարածաշրջանային և անդրտարածաշրջանային կառավարումն ունի առանցքային նշանակություն: Մենք աջակցում ենք ժառանգության պահպանությանը, վերականգնմանը և օգտագործմանը՝ “տարածքի վրա հիմնված” մոտեցման միջոցով: Տարածաշրջանային և տեղական ինքնության կատարելագործումը՝ իրենց միջավայրի, լանդշաֆտի, մշակույթի և այլ առանձնահատուկ արժեքների նկատմամբ տեղական և տարածաշրջանային համայնքների տեղեկացվածությունն ու պատասխանատվությունը բարձրացնելու միջոցով, նույնպես կարևոր է:	and natural heritage is of key importance. We support the protection, rehabilitation and utilization of heritage through a place-based approach. Improving regional and local identity by strengthening awareness and responsibility of local and regional communities towards their environments, landscapes, cultures and other unique values is also important.
IV. ԵՄ տարածքային կապակցվածությունն իրականություն դարձնելը	IV. Making EU territorial cohesion a reality
Կառավարման և ներդրման մեխանիզմները	The governance and implementation mechanisms
(39) Մենք համարում ենք, որ Լիսաբոնի համաձայնագիրը Եվրոպայում տարածքային զարգացման քաղաքականության ապագայի վրա ունի կարևոր ազդեցություն: Անդամ Պետությունները և ԵՄ ինստիտուտները կիսում են տարածքային կապակցվածությանը նպաստելու կարողություններ, հետևաբար՝ կիսում են նաև ընդհանուր դեր SO (Տարածքային օրակարգ) 2020 ներդրման մեջ:	(39) We consider that the Lisbon Treaty has important implications for the future of territorial development policy in Europe. Member States and EU institutions have shared competence in contributing to territorial cohesion and therefore a shared role in the implementation of the TA 2020.
(40) Մենք տեղյակ ենք, որ տարածքային կապակցվածության ընդլայնումը պահանջում է տարբեր քաղաքականությունների, գործիչների և պլանավորման մեխանիզմների արդյունավետ համակարգում և տարածքային գիտելիքների ստեղծում ու փոխանակում: Ներդրման գործիքները և իրավասությունները ԵՄ	(40) We are aware that enhancing territorial cohesion calls for effective coordination of different policies, actors and planning mechanisms, and the creation and sharing of territorial knowledge. Implementation instruments and competences are in the hands of EU institutions, Member States, regional and local authorities and private actors.

Եվրամիության տարածքային օրակարգ 2020 / ոչ պաշտոնական թարգմանություն

© ուրբանլաբ Երևան

կառույցների, Անդամ Պետությունների, տարածաշրջանային իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների և մասնավոր գործիչների ձեռքբերում են: Անհրաժեշտ են բազմաստիճան կառավարման ձևաչափեր տարբեր գործառնական տարածքներ կառավարելու և սուբսիդիարության սկզբունքին համապատասխան տեղական, տարածաշրջանային, ազգային և Եվրոպական գործիչների հավասարակշռված և համակարգված ներդրումն ապահովելու համար: Սա պահանջում է ուղղահայաց և հորիզոնական համակարգում տարբեր մակարդակներում որոշումներ ընդունող մարմինների միջև և ճյուղային քաղաքականություններ՝ ապահովելու կապակցվածություն և կայունություն:	Multi-level governance formats are required to manage different functional territories and to ensure balanced and coordinated contribution of local, regional, national and European actors in compliance with the principle of subsidiarity. This needs vertical and horizontal coordination between decision-making bodies at different levels and sector-related policies to secure consistency and synergy.
Քաղաքականության տարածքային համակարգումը	Territorial coordination of policies
(41) Մենք համոզված ենք, որ տարածքային ասպեկտի ճանաչումը, ինչպես նաև ԵՄ-ի և ազգային ճյուղային քաղաքականությունների համակարգում տարածքային կապակցվածությանը նպաստող կարևոր սկզբունքներ են: Յուրաքանչյուր տարածքային մակարդակում քաղաքականությունների մեծամասնությունը կարող է զգալիորեն ավելի արդյունավետ դառնալ ու հասնել արդյունավետ փոխկապվածության այլ քաղաքականությունների հետ, եթե դրանք հաշվի առնեն տարածքային կողմերն ու տարածքային ազդեցությունները:	(41) We are convinced that recognizing the territorial dimension and the coordination of EU and national sectoral policies are important principles in fostering territorial cohesion. Most policies at each territorial level can be made significantly more efficient and can achieve synergies with other policies if they take the territorial dimension and territorial impacts into account.
(42) Քաղաքականության մշակման ընթացքում տարածքային գործոնները հաշվի առնելը կարող է օգնել խուսափել իրագործման ընթացքում խոչընդոտներ ստեղծելուց և քաղաքականության այլ ոլորտներում և տարածքների վրա չնախատեսված կողմնակի ազդեցություններից: Քաղաքականության մեջ պետք է հաշվի առնվեն	(42) Taking territorial impacts into account during policy development can help to avoid creating barriers to implementation and unintended side-effects on other policy areas and on the territories. Policies should take territorial differences into account, with interventions tailored to the specific type of territory and the use of

տարածքային տարբերությունները՝ կոնկրետ տեսակի տարածքին հարմարեցված միջամտությունների և հատակագծման մեջ տարածքային մոտեցումներ օգտագործելու միջոցով: Սա կբարելավի տարածքային կապիտալի օգտագործումը:	territorial approaches in planning. This will improve the utilisation of territorial capital.
(43) Ճյուղային քաղաքականության արդյունավետ փոխազդեցությունը կարող է յուրաքանչյուր տարածքային մակարդակում աջակցություն ստանալ համակարգման միջոցով: Տարածքային համակարգմանը պետք է աջակցեն այնպիսի գործիքներ, ինչպիսիք են տարածքային գործոնների գնահատումը, պլանավորման մեխանիզմների համակարգումն ու տարածքային մշտադիտարկումը: Մենք շեշտում ենք, որ ԵՄ քաղաքականությունը կարող է նպաստել ԵՄ-ի տարածքային գերակայությունների ներդրմանը տարբեր չափերով և տարբեր եղանակներով, ինչը օրինակներով ներկայացված է թարմացված “Եվրամիության տարածքային վիճակը և հեռանկարներում”:	(43) Efficient interplay of sectoral policies can be supported by their coordination at each territorial level. Territorial coordination should be supported by instruments such as assessment of territorial impacts, coordinating planning mechanisms and territorially sensitive monitoring. We emphasize that EU policies can contribute to the implementation of the territorial priorities of the EU to different extents and in different ways as demonstrated with examples in the updated Territorial State and Perspectives.
Տարածքային կապակցվածության ներդրման մեխանիզմները	Territorial cohesion implementation mechanisms
(44) Կոչ ենք անում տարածքային կապակցվածությունը բարձրացնելու համար որդեգրել ավելի ռազմավարական մոտեցում: Ինտեգրված տեղական և տարածաշրջանային զարգացման նախագծումը և իրականացումը կարևոր խնդիր է: Տարածքային ծավալները կարող են ավելի լավ արտացոլված լինել, և տարբեր մեկնարկային դիրքերը, ազգային, տարածաշրջանային և տեղական առանձնահատկությունները պետք է ճանաչվեն Եվրոպայի 2020 ռազմավարության ներդրման և մշտադիտարկման գործընթացում:	(44) We call for a more strategic approach to enhance territorial cohesion. Designing and implementing integrated local, regional development is an important issue. The territorial dimension could be better reflected and the different starting positions, national, regional and local specificities should be recognised in the implementation and monitoring process of the Europe 2020 Strategy.
(45) Մենք կարծում ենք, որ Կապակցվածության	(45) We believe that Cohesion Policy and also Rural

քաղաքականությունը, ինչպես նաև Գյուղական զարգացման քաղաքականությունը, իրենց ինտեգրող էությամբ ու որոշակիորեն միջնորդային բնույթով Եվրոպական միության հավասարակշռված տարածքային զարգացման խրախուսման կարևոր գործիքներ են:	Development Policy with their integrating character and certain cross-sector nature are key instruments for encouraging the balanced territorial development of the European Union.
(46) Մենք աջակցում ենք անհրաժեշտության դեպքում Կապակցվածության քաղաքականության տարածքային ծավալների մեծացմանը՝ ամրապնդելով այն մեխանիզմները, որոնք կարող են ապահովել դրա միջամտությունների տարածքային համակարգումը, ռազմավարական ծրագրավորման բոլոր քայլերի տարածքային ծավալի բարելավումը, գործունեության գնահատումը և մոնիթորինգը, տարածքային ինտեգրված ծրագրերի և նախագծերի շրջանակի ապահովումը և տարածաշրջանային ռազմավարության մեջ տարբեր միջոցների ինտեգրումը:	(46) We support deepening the territorial dimension of Cohesion Policy where appropriate: strengthening mechanisms which can ensure the territorial coordination of its interventions; improving the territorial dimension of all steps of strategic programming, evaluation and monitoring activities; ensuring scope for integrated place-based programmes and projects, and integrating different funds in regional strategies.
(47) Մենք խրախուսում ենք ռազմավարությունների և ծրագրերի հարմարեցումները, որպեսզի դրանք ավելի համարժեք արտացոլեն տարբեր տարածքների առանձնահատկությունները: Հետագա ռազմավարական քաղաքականության փաստաթղթերը և ծրագրերը պետք է ինտեգրեն տարածքային խնդիրները՝ հաշվի առնելով SO2020-ի գերակայությունները: Մենք աջակցում ենք փորձարարական մոտեցումների մշակմանը՝ կապված տարածքային տարբեր համատեքստերում ինտեգրված տեղական զարգացման հետ: Անհրաժեշտության դեպքում տարածքային և տեղական գործիչները պետք է ներգրավված լինեն ծրագրավորման գործընթացում:	(47) We encourage the adjustment of strategies and programmes to adequately reflect the specificities of the diverse territories. Future strategic policy documents and programmes should integrate territorial considerations taking into account the priorities of the TA2020. We support the development of experimental approaches to integrated local development in diverse territorial contexts. Where appropriate regional and local actors should be involved in the programming process.
1. Տարածքային կապակցվածության ամրապնդումը ԵՄ մակարդակով	1. Strengthening territorial cohesion at EU level

Եվրամիության տարածքային օրակարգ 2020 / ոչ պաշտոնական թարգմանություն

© ուրբանլաբ Երևան

(48) Մենք խնդրում ենք ԵՄ կառույցներին, երբ նրանք մասնակցում են ԵՄ քաղաքականությունների նախագծմանը և ներդրմանը, հաշվի առնել SO2020 սկզբունքները և կիսել դրանք իրենց շահառուների և ցանցերի հետ:	(48) We ask the EU institutions, when they participate in the design and implementation of EU policies, to take into account the principles of the TA2020 and to share them with their stakeholders and networks.
(49) Մենք շեշտում ենք, որ ԵՄ մակարդակով տարածքային զարգացման բարելավված մոնիթորինգը և գնահատումը, ինչպես նաև տարածքային կապակցվածության ուղղությամբ ջանքերի գործադրումը պետք է զարգացվեն՝ ապահովելով, որ Անդամ Պետությունների վարչական բեռը չաճի: ԵՄ գոյություն ունեցող գնահատման և մոնիթորինգի պրակտիկաններն ու պահանջները, այդ թվում՝ Կառուցվածքային և կապակցվածության հիմնադրամների, ինչպես նաև Եվրոպայի 2020 ռազմավարության ներդրման պրակտիկաները և պահանջները, պետք է ներառեն համապատասխան տարածքային առանձնահատկությունները:	(49) We stress that improved monitoring and evaluation at EU level of territorial development and the performance of territorial cohesion efforts should be developed while ensuring that the administrative burden on Member States should not increase. The existing assessment, monitoring and evaluation practices and requirements of the EU, including those for Structural and Cohesion Funds and implementation of the Europe 2020 Strategy, should incorporate relevant territorial considerations.
(50) ԵՄ-ի բոլոր նշանակալից քաղաքականությունների և ծրագրերի համար պետք է շարունակվի մշակվել ազդեցության ինտեգրացված գնահատում՝ շահառուների դիտարկումների և առաջարկների հիման վրա: Եվրոպական հանձնաժողովի կողմից ցանկացած օրենսդրական նախաձեռնությունից առաջ իրականացվող ազդեցության գնահատման տարածքային ասպեկտի ամրապնդման նպատակով, կոչ ենք անում, որ Եվրոպական հանձնաժողովն ազդեցության գնահատման ժամանակ հաշվի առնի տարածքային հարցերը, և խնդրում ենք Տարածաշրջանների հանձնաժողովին՝ ապահովել տարածաշրջանային և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից դիտարկումներ:	(50) Integrated impact assessments for all significant EU policies and programmes should continue to be developed based on stakeholder inputs. In order to strengthen the territorial dimension of impact assessment carried out by the European Commission prior to any legislative initiative, we call upon the European Commission to take territorial matters into account in these impact assessments, and we ask the Committee of the Regions to provide input from regional and local authorities.

(51) Մենք պնդում ենք, որ ուժեղ մեթոդական աջակցություն և համապարփակ տարածքային գիտելիքների հենք է պահանջվում ԵՄ մակարդակով քաղաքականության մշակման գործընթացում տեղեկացվածությունն ապահովելու համար: Այս առումով մի շարք մարմիններ կարող են ունենալ արժեքավոր ներդրումներ: Մենք առաջարկում ենք, որ “ESPON” ծրագիրն իր հետազոտական գործունեության մեջ հաշվի առնի SO2020-ի գերակայությունները և մարտահրավերները: Բացի այդ, տարածքային կապակցվածության վրա ավելի մեծ ուշադրությունը և ցանկությունը նպաստել Եվրոպայի 2020 ռազմավարությանը կապահանջեն խորացված գիտելիքներ և մեթոդական աջակցություն շահառուներից: “ESPON” ծրագրի ներկայիս կարգավիճակը, դերն ու արդյունքները պետք է հարմարեցվեն ապագային՝ համաձայնեցնելով Եվրոպական հանձնաժողովի հետ, այն տարածքային զարգացման և համախմբվածության հետ կապված Եվրոպական քաղաքականության մշակմանն ավելի լավ ծառայեցնելու համար:	(51) We stress that a strong methodological support and a comprehensive territorial knowledge base are required to inform EU level policy-making process. A range of bodies can deliver valuable contributions in this respect. We suggest that the ESPON programme should take into account the priorities and challenges of TA2020 in its research activity. In addition, the stronger focus on territorial cohesion and the wish to contribute to the Europe 2020 Strategy will require further knowledge and methodological support to stakeholders. The current status, role and outputs of the ESPON Programme should be adapted to the future period in agreement with the European Commission to better serve European policy-making related to territorial development and cohesion.
2. Անդրսահմանային, վերազգային և միջտարածաշրջանային մակարդակում տարածքային կապակցվածությանը նպաստելը	2. Contributing to territorial cohesion at cross-border, transnational, and inter-regional level
(52) Մենք ընդունում ենք, որ անդրսահմանային, վերազգային և միջտարածաշրջանային մակարդակով գործողություններն ունեն առանցքային դեր SO2020 տարածքային գերակայությունների իրականացման գործում: Եվրոպական տարածաշրջանային համագործակցությունը բացահայտել է ներգրավված քաղաքների և շրջանների ներուժի էական մոբիլիզացիա: Այնուամենայնիվ, կատարելության հասնելու համար կան բացեր, հատկապես, ապահովելու, որ գործողությունները նպաստեն իրական	(52) We recognise that actions at the cross-border, transnational and inter-regional level have a pivotal role to play in the implementation of territorial priorities of the TA2020. European territorial cooperation has revealed a considerable mobilisation of potential of those cities and regions involved. Nevertheless, there remains room for improvement, especially to ensure that operations contribute to genuine territorial integration by promoting the sustainable enlargement of markets for workers, consumers and SMEs, and more efficient access to private and public services. In

տարածքային ինտեգրմանը՝ խթանելով աշխատողների, սպառողների և ՓՄՁ-ների համար շուկաների կայուն ընդլայնմանը, և մասնավոր և հանրային ծառայություններին ավելի արդյունավետ հասանելիությանը: Այս առումով մենք ընդգծում են ճկուն տարածքային ծրագրավորման կարևորությունը, որը թույլ է տալիս տարբեր տարածքային խնդիրների շուրջ համագործակցությանը բավարար ճկուն լինել տարածաշրջանային առանձնահատկությունների և անդրադառնալու համար:	this regard we emphasize the importance of flexible territorial programming, which allows co-operation activities with different territorial scope to be flexible enough to address regional specificities.
(53) Մենք խորհուրդ ենք տալիս, որ տարածաշրջանային համագործակցության նախաձեռնությունները ուղղված լինեն տարածքային կապակցվածության երկարաժամկետ նպատակներին՝ հիմնվելով “INTERREG” համայնքային նախաձեռնության նախկին “B” ճյուղի փորձի և ընթացիկ վերազգային ծրագրերի վրա: Այս առումով կարող է նպաստավոր լինել նաև ինտեգրված մակրոտարածաշրջանային ռազմավարությունը, որը ներկայումս առաջին անգամ փորձարկվում է Բալթիկ ծովի և Դանուբի շրջաններում: Այսպիսով, մենք խորհուրդ ենք տալիս, որ այս մոտեցումն ավելի խրախուսվի՝ հիմնվելով իրականացման փուլում գտնվող եվրոպական մակրոտարածաշրջանային ռազմավարությունների արդյունքների գնահատման վրա:	(53) We recommend that territorial cooperation initiatives should be geared towards the long term objectives of territorial cohesion building on the experience of former B strand of INTERREG Community Initiative and current transnational programmes. Integrated macro-regional strategies – as currently pioneered in the Baltic Sea and the Danube regions – could also contribute in this respect. Thus we recommend that this approach is further encouraged on the basis of evaluations of the results achieved by the European macro-regional strategies under implementation.
(54) Մենք աջակցում ենք այն եվրոպական գործիքներին և ընդգծում դրանց ավելացված արժեքը, որոնք խթանում են լավագույն փորձի փոխանակումը, ինչպես նաև նորարարական նախագծերը և գիտելիքների փոխանակումը մասնակից կազմակերպությունների միջև, ինչպիսիք են ցանցավորման և միջտարածաշրջանային ծրագրերը (INTERREG IVC, INTERACT, URBACT):	(54) We underline the specific added value of and support the European instruments promoting exchange of good practices as well as innovative projects and the transfer of knowledge between participating organisations, such as the networking and interregional programmes (INTERREG IVC, INTERACT, URBACT).

(55) Ծովային գործունեությունը կարևոր է Եվրոպայում տարածքային կապակցվածության համար: Տնտեսական գործունեությունները, ինչպիսիք են էներգիայի արտադրությունը և տրանսպորտը, Եվրոպայի ծովային միջավայրում արագորեն զարգանում են: Անհրաժեշտ է, լուծել սպառողների կոնֆլիկտները և հավասարակշռել տարբեր շահերը՝ ծովային տարածական հատակագծման մեջ համագործակցության միջոցով: Ծովային ռազմավարության շրջանակային դիրեկտիվը և ԵՄ ինտեգրված ծովային քաղաքականությունը Անդամ Պետություններին ծովային տարածական հատակագծման շուրջ համակարգված գործողությունների կոչ են անում: Այդպիսի հատակագծման գործընթացը պետք է ինտեգրվի առկա հատակագծման համակարգերում՝ տալով ցամաք-ծով միջավայրի ներդաշնակ ու կայուն զարգացման հնարավորություն:	(55) Maritime activities are essential for territorial cohesion in Europe. Economic activities such as energy production and transport are increasing rapidly in European marine environments. There is a need to solve user conflicts and balance various interests by cooperation in maritime spatial planning. The Marine Strategy Framework Directive and EU Integrated Maritime Policy calls for coordinated actions from Member States on maritime spatial planning. Such planning should be integrated into the existing planning systems to enable harmonious and sustainable development of a land-sea continuum.
(56) Հիմնվելով վերջին փորձի վրա, անհրաժեշտության դեպքում առավելագույնս պետք է օգտագործվեն Տարածաշրջանային համագործակցության Եվրոպական խմբավորման (ԵԽՏՀ) իրավական գործիքների կողմից առաջարկվող նոր հնարավորությունները: Ավելին՝ ԵԽՏՀ շրջանակներում սահմանների երկայնքով հատակագծման գործունեության կամավոր համակարգումը պետք է ուսումնասիրվի այն դեպքում, երբ այն ընկալվում է որպես ավելացված արժեք:	(56) Building on recent experiences, where appropriate full advantage should be taken of the new opportunities offered by the legal instrument of European Grouping for Territorial Cooperation (EGTC). Furthermore, voluntary coordination of planning activities along borders within the framework of an EGTC should be explored where it is perceived as an added value.
(57) Մենք ողջունում ենք տարբեր մակարդակներում պետական մարմինների բոլոր նախաձեռնությունները, որոնք նպաստում են սահմաններից այն կողմ երկարաժամկետ տարածքային ռազմավարությունների մշակմանը, և խնդրում ենք Եվրոպական հանձնաժողովին անհրաժեշտության դեպքում տրամադրել իր աջակցությունը:	(57) We welcome all initiatives coming from public authorities at diverse levels, contributing to develop long term territorial strategies across borders, and ask European Commission to provide its support where necessary.

3. Տարածքային կապակցվածությանն Անդամ Պետությունների աջակցության հզորացումը	3. Strengthening Member States' contribution to territorial cohesion
(58) Մենք հիշում ենք, որ ազգային համատեքստում ազգային, տարածաշրջանային և տեղական ինքնակառավարման մարմինների գլխավոր խնդիրն է հարմարեցված հասկացությունների, նպատակների և գործիքների սահմանում՝ ԵՄ մակարդակով մոտեցմանը և գործունեությանը համահունչ սուբսիդիարության սկզբունքի և “տարածքի վրա հիմնվող” մոտեցման վրա հենված տարածքային զարգացման հզորացման նպատակով: Անդամ Պետությունների իշխանություններին է վերապահված որոշել իրենց ռազմավարությունները և համապատասխան միջոցառումները, որոնք նրանք մտադիր են կիրառել, ինչը կախված կլինի իրենց աշխարհագրական առանձնահատկություններից, քաղաքական մշակույթից, իրավական և վարչական համակարգերից:	(58) We recall that in the national context the main task of national, regional and local authorities is to define the tailored concepts, goals and tools for enhancing territorial development based on the subsidiarity principle and the place-based approach in line with the EU level approach and actions. It is up to the authorities in Member States to determine their own strategies and the relevant measures they intend to apply, which will depend on their own geographical specificities, political culture, legal and administrative system.
(59) Մենք խրախուսում ենք Անդամ Պետություններին ինտեգրել տարածքային կապակցվածության սկզբունքներն իրենց ազգային ճյուղային և ինտեգրված զարգացման քաղաքականությունների և տարածական հատակագծման մեխանիզմների մեջ: Ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում տարածքային զարգացման քաղաքականության համար պատասխանատու իշխանություններն, ըստ անհրաժեշտության, իրենց գործողությունների ծրագրերով պետք է նպաստեն տարածքային կապակցվածության ամրապնդմանը:	(59) We encourage Member States to integrate the principles of territorial cohesion into their own national sectoral and integrated development policies and spatial planning mechanisms. Authorities responsible for territorial development policy at national, regional and local levels should contribute through their own action plans to strengthening territorial cohesion as appropriate.
(60) Տարածքային ազդեցությունները հաշվի առնելը և քաղաքականությունների տարածքային համակարգումը մասնավորապես	(60) Consideration of territorial impacts and the territorial coordination of policies are particularly important at national and regional levels. This

կարևոր են ազգային և տարածաշրջանային մակարդակներում: Այս համակարգմանը պետք է աջակցել տարածքային գնահատման և մոնիթորինգի գործունեության միջոցով՝ մեծացնելով տարածքային վերլուծությունների օգտակարությունը ազդեցության գնահատման համար: Այդ տարածքային դրսևորումները կարող են ինտեգրվել Կապակցվածության քաղաքականության և Եվրոպայի 2020 ռազմավարության հետ կապված ազգային և եվրոպական պարբերական հաշվետվություններում և գնահատականներում՝ խուսափելով անհարկի բյուրոկրատիայից:	coordination should be supported by territorially sensitive evaluation and monitoring practices, further strengthening the contribution of territorial analysis to impact assessments. These territorial aspects could be integrated into regular national and European reports and evaluations related to Cohesion Policy and Europe 2020 Strategy, avoiding unnecessary bureaucracy.
(61) Մենք խրախուսում ենք տարածաշրջաններին և քաղաքներին մշակել և ընդունել անհրաժեշտ ինտեգրված ռազմավարություններ և տարածքային ծրագրեր տվյալ տարածքում բոլոր միջամտությունների արդյունավետությունը բարձրացնելու համար: Համակարգման և հատակագծման մեխանիզմներից բացի, իրազեկման բարձրացումը և տարածքային իրազեկումն ու մեթոդական աջակցությունն այս առումով ևս շատ կարևոր են: Մենք ողջունում ենք Կայուն քաղաքների եվրոպական տեղեկատվական ծրագրի մշակումը, որպես բաց և ճկուն գործիք՝ օգնելու քաղաքներին ձևավորել ավելի կայուն և ընդգրկուն զարգացում:	(61) We encourage regions and cities to develop and adopt integrated strategies and spatial plans as appropriate to increase the efficiency of all interventions in the given territory. Besides coordination and planning mechanisms, awareness raising and provision of territorial information and methodological support is essential in this respect. We welcome the elaboration of the European Reference Framework for Sustainable Cities as an open and flexible tool to help the cities to set up a more sustainable and inclusive development.
(62) Մենք խրախուսում ենք Անդամ Պետություններին հզորացնել տարածքային զարգացման և կապակցվածության համար անհրաժեշտ տարածաշրջանային և քաղաքային տվյալների տրամադրումը, որը կարող է հանձնվել Եվրոպական հանձնաժողովին և մշակվել և ներառվել եվրոպական բազաների մեջ՝ մեթոդաբանորեն հիմնավոր և համադրվող տեղեկատվության հետ: Մենք խրախուսում ենք Եվրոպական հանձնաժողովին ուժեղացնել տարածքային զարգացման և	(62) We encourage Member States to strengthen the provision of regional and urban data relevant for territorial development and cohesion that can be delivered to the European Commission and be processed into European datasets with methodologically sound and comparable information. We encourage the European Commission to strengthen the production of European regional and urban data of relevance for territorial development and cohesion. This would improve the work of national and European

կապակցվածության համար կարևոր եվրոպական տարածաշրջանային և քաղաքային տվյալների ստեղծումը: Սա կբարելավի ազգային և եվրոպական կառույցների աշխատանքը:	Institutions.
Հետագա գործողությունների ուղեցույց	Guidelines for future actions
(63) Մենք կարևոր ենք համարում հետևյալ գործողությունները և խնդրում ենք դրանք իրականացնել մոտ ապագայում՝ ԵՄ և Անդամ Պետությունների մակարդակով քաղաքական քննարկումների և որոշումների կայացման գործընթացների մեջ SO2020-ի տարածքային գերակայությունների ներդրման նպատակով:	(63) We consider the following actions to be important and request them to be implemented in the near future in order to incorporate territorial priorities of the TA2020 in political debates and decision making processes at the EU level and in Member States.
(64) Մենք խնդրում ենք, առաջիկա նախագահություններին և ԵՄ հաստատություններին աջակցել SO2020-ի իրականացմանը համապատասխան գործիքների և գործողությունների միջոցով: Այս նպատակով այդ հաստատությունների ներկայացուցիչների հետ պետք է կազմակերպվեն պարբերական հանդիպումներ:	(64) We ask the coming presidencies and the EU Institutions to support the implementation of the TA2020 with adequate tools and actions. For this purpose, regular meetings should be organised with representatives of these institutions.
(65) Մենք խնդրում ենք, ապագա ԵՄ նախագահություններին շարունակել Տարածքային կապակցվածության կոնտակտային կետերի ցանցի (ՏԿԿՑ) համակարգումը, որը կարևոր դեր է խաղում տարածքային կապակցվածության ոլորտում Անդամ Պետությունների համագործակցության ամրապնդման գործում: Այն պետք է նաև խորացնի համագործակցությունը եվրոպական կառույցների, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի հետ՝ ներառյալ միջկառավարական կազմակերպություններին:	(65) We ask future EU Presidencies to continue the coordination of the Network of Territorial Cohesion Contact Points (NTCCP) which plays an important role in strengthening cooperation among Member States in the field of territorial cohesion. It should also increase cooperation with European institutions as well as with other stakeholders including intergovernmental organisations.
(66) Մենք հավատում ենք, որ SO2020-ի արդյունավետ իրականացման համար մեզ անհրաժեշտ է հստակ գործողությունների և ակնկալվող շոշափելի արդյունքների շրջանակ:	(66) We believe that for the effective implementation of the TA2020 we need a framework for concrete actions and expected tangible results. We request upcoming presidencies

Եվրամիության տարածքային օրակարգ 2020 / ոչ պաշտոնական թարգմանություն

© ուրբանլաբ Երևան

Մենք դիմում ենք Եվրոպական հանձնաժողովի հետ սերտորեն համագործակցող առաջիկա նախագահություններին՝ առանձնացնել SO2020-ի ներդրման համար անհրաժեշտ եղանակը և գործողությունները՝ հիմք ընդունելով Շվեդիայի Նախագահության գնահատականը:	in close cooperation with the European Commission to identify the method and actions needed to implement the TA2020, building on the assessment from the Swedish Presidency.
(67) Մենք պարտավորվում ենք տարածել և խթանել SO2020-ը մեր պետություններում՝ համապատասխան շահառուների շրջանում: Մենք խնդրում ենք, որ լեհական Նախագահությունը և Եվրոպական հանձնաժողովը աջակցեն փաստաթղթի տարածմանը Եվրոպայի մակարդակով: Առաջիկա նախագահությունները պետք է մշակեն և համակարգեն SO2020-ի հաջող ներդրման համար անհրաժեշտ հաղորդակցման ռազմավարություն:	(67) We commit ourselves to disseminate and promote the TA2020 in our states amongst the relevant stakeholders. We ask the Polish Presidency and European Commission to support European-level communication of the document. The coming presidencies should elaborate and coordinate a communication strategy for the successful implementation of the TA2020.
(68) Մենք աջակցում ենք տարածքային կապակցվածությունը խթանելու նպատակով լավագույն փորձի փոխանակմանը և ընդհանուր մեթոդաբանության մշակմանը: Մենք ողջունում ենք, Բելգիայի Նախագահության նախաձեռնած՝ Տարածքային օրակարգի տարեկան համաժողովները, և խնդրում ենք առաջիկա նախագահություններին համաժողովը կանոնավոր կերպով կազմակերպել:	(68) We support sharing best practices and developing common methodologies to foster territorial cohesion. We welcome the Territorial Agenda Annual Conferences, initiated by the Belgian Presidency, and ask the coming Presidencies to organise the conference regularly.
(69) Մենք խնդրում ենք, Եվրոպական հանձնաժողովին ներկայացնել ակնարկ առկա և բացակա տարածքային ցուցանիշների վերաբերյալ և բարելավումների համար ձևակերպել առաջարկներ, մասնավորապես, հաշվի առնելով տարածքային կապակցվածության հետ կապված հարցերը:	(69) We ask the European Commission to present an overview of the available and missing territorial indicators and formulate recommendations for improvements, particular in light of the issues related to territorial cohesion.
(70) Մենք համաձայն ենք բարելավել տարածքային միտումների մոնիթորինգը և խնդրում ենք Եվրոպական հանձնաժողովին և “ESPON” ծրագրին, Անդամ Պետություններին և	(70) We agree to improve the monitoring of territorial trends, and ask the European Commission and the ESPON Programme, Member States and other institutions such as the European

այլ հաստատություններին, ինչպիսիք են բնապահպանական ասպեկտների գծով Եվրոպական շրջակա միջավայրի գործակալությունը, նպաստել այս նպատակին:	Environment Agency on the environmental aspects to contribute to this aim.
(71) Մենք խնդրում ենք, Լատվիայի (2015) և Լյուքսեմբուրգի (2015) նախագահություններին գնահատել և դիտարկել, թե արդյո՞ք SO2020-ը պետք է վերանայվի, հաշվի առնելով, թե ինչպես է այն աշխատում գործնականում: Մենք խնդրում ենք, որ Հոլանդիայի (2016) և Սլովակիայի (2016) նախագահությունները ղեկավարեն ցանկացած անհրաժեշտ վերանայում:	(71) We ask the Latvian (2015) and Luxembourgish (2015) Presidencies to evaluate and consider whether the TA2020 should be reviewed, taking account of how it works in practice. We ask that the Dutch (2016) and Slovak (2016) Presidencies lead any review as necessary.

Հավելված 4

Այս թարգմանությունը հրապարակվել է
Եվրոպայի խորհրդի համաձայնությամբ և
հանդիսանում է թարգմանչի (ուրբանլաբ
Երևանի) պատասխանատվության
առարկան:

*This translation is published by
arrangement with the Council of Europe
and is the sole responsibility of the
translator (urbanlab Yerevan).*

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

Տարածական զարգացման բառարան	Spatial development glossary
Տարածական/Տարածքային պլանավորման հարցերով նախարարների եվրոպական խորհրդաժողով (CEMAT)	European Conference of Ministers responsible for Spatial/Regional Planning (CEMAT)
Տարածք և լանդշաֆտ, No 2	Territory and landscape, No. 2
Եվրոպայի խորհրդի հրատարակություն	Council of Europe Publishing

Եվրոպայում տարածական զարգացման քաղաքականության մեջ օգտագործվող՝ Եվրոպայի Խորհրդի CEMAT հիմնական արտահայտությունների բառարանը ավագ պաշտոնյաների կոմիտեի Աշխատանքային ծրագրի մասն էր և ներկայացվել է 2006 թվականի հոկտեմբերի 26-27-ը Լիսաբոնում (Պորտուգալիա) “Եվրոպական մայրցամաքի կայուն տարածական զարգացման ցանցեր. կամուրջներ Եվրոպայով” թեմայով տարածական/տարածքային պլանավորման հարցերով նախարարների եվրոպական խորհրդաժողովի 14-րդ նստաշրջանին: Այն ուղղված է տարածքային զարգացման քաղաքականության և դրա հետ կապված գործունեության մեջ ներգրավված պաշտոնյաներին, մասնագետներին և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին: Բառարանը ստեղծվել է CEMAT-ի ավագ պաշտոնյաների կոմիտեի կողմից, Եվրոպայի Խորհրդի փորձագետ պարոն Ժակ Ռոբերի աջակցությամբ՝ Մշակույթի և մշակութային ու բնական ժառանգության վարչության Տարածական հատակագծման և լանդշաֆտի բաժնի աշխատանքների շրջանակում:	The Council of Europe CEMAT glossary of key expressions used in spatial development policies in Europe was part of the Working Programme of the Committee of Senior Officials and presented at the 14th Session of the European Conference of Ministers responsible for Spatial/Regional Planning, Lisbon (Portugal), 26-27 October 2006 on “Networks for sustainable spatial development of the European continent: Bridges over Europe”. It is addressed to officials, professionals and representatives of the civil society involved in territorial development policies and related activities. The glossary was established by the Committee of Senior Officials of the CEMAT, with the assistance of Mr Jacques Robert, Expert of the Council of Europe, in the framework of the work carried out by the Spatial Planning and Landscape Division, Directorate of Culture and Cultural and Natural Heritage.
Բոլոր իրավունքները պաշտպանված են: Սույն հրատարակության որևէ մաս չի կարող թարգմանվել, վերարտադրվել կամ փոխանցվել որևէ ձևով կամ միջոցով՝ էլեկտրոնային (խտասկավառակ, համացանց և այլն) կամ մեխանիկական, ներառյալ լուսապատճենումը, ձայնագրումը կամ որևէ տեղեկատվական կրիչ կամ որոնման համակարգ, առանց Հաղորդակցության վարչության Տեղեկատվության հրապարակման և հրատարակումների բաժնի նախնական գրավոր թույլտվության (F-67075 Ստրասբուրգ Սեդեքս կամ publishing@coe.int):	All rights reserved. No part of this publication may be translated, reproduced or transmitted, in any form or by any means, electronic (CD-Rom, Internet, etc.) or mechanical, including photocopying, recording or any information storage or retrieval system, without prior permission in writing from the Publishing Information and Publications Division, Directorate of Communication (F-67075 Strasbourg Cedex or publishing@coe.int).

Նշում՝ ֆրանսերեն տարբերակը սկսվում է 37-րդ էջից:	NB: THE FRENCH VERSION BEGINS ON PAGE 37.
Կազմի ձևավորում՝ Գրաֆիկական ձևավորման աշխատանքային խումբ, Եվրոպայի Խորհուրդ Կազմի լուսանկար՝ Մ. Դեժան-Պոն	Cover design: Graphic Design Workshop, Council of Europe Cover photo: M. Déjeant-Pons
Եվրոպայի Խորհրդի հրատարակչություն F-67075 Ստրասբուրգ Սեդեքս http://book.coe.int	Council of Europe Publishing F-67075 Strasbourg Cedex http://book.coe.int
ISBN 978-92-871-6286-1 Եվրոպայի Խորհուրդ, Սեպտեմբեր 2007 Տպագրված է Եվրոպայի Խորհրդում	ISBN 978-92-871-6286-1 © Council of Europe, September 2007 Printed at the Council of Europe

Նախաբան	Preface
“Եվրոպական մայրցամաքի կայուն տարածական զարգացման ցանցեր. կամուրջներ Եվրոպայով” ընդհանուր թեմայով CEMAT-ի 14-րդ նստաշրջանի նախապատրաստման շրջանակներում Ավագ պաշտոնյաների կոմիտեի 2004-2007 թվականների Աշխատանքային ծրագիրը ինտեգրեց “Տեղեկատվության փոխանակում, նոու-հաու և փորձ” թեման, որի ընդհանուր նպատակը Եվրոպայի սահմաններում և հարևան պետությունների հետ կոլեկտիվ ուսուցման փորձի, հաղորդակցման մշակույթի և վերազգային համագործակցության փորձի խրախուսումն էր, ինչպես նաև CEMAT-ի “Եվրոպական մայրցամաքի կայուն տարածական զարգացման ուղենիշային սկզբունքների” տարբեր թեմատիկ բնագավառների կիրարկման կարողության բարձրացումը:	Within the framework of the preparation of the 14th session of CEMAT, on the general theme “<i>Networks for sustainable spatial development of the European Continent: Bridges over Europe</i>”, the Work Programme 2004-2007 of the Committee of Senior Officials integrated the theme “Exchange of information, know-how and experience” having the general purpose of encouraging collective learning experiences, a culture of communication and the practice of transnational co-operation within Europe and with neighbouring States as well as to increase ability to implement the various thematic aspects of the CEMAT “Guiding Principles For Sustainable Spatial Development of the European Continent”.
Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհրաժեշտություն կար հստակեցնել որոշակի արտահայտություններ և հասկացություններ, որոնք հաճախ օգտագործվում են Եվրոպական պետությունների մեծ մասում տարածական զարգացման քաղաքականության համատեքստում, CEMAT-ի ավագ պաշտոնյաների կոմիտեն որոշեց, որ, որպես Աշխատանքային ծրագրի մի մաս, տարածական զարգացման բնագավառին առնչվող հասկացությունների, կատեգորիաների և եզրույթների վերաբերյալ Բառարանի ստեղծումը և՛ կնպաստի տվյալ հասկացությունների ու եզրույթների հստակեցմանը, և՛ կօգնի անդամ պետությունների մասնագետների միջև փոխըմբռնման և հաղորդակցության “կամուրջների կառուցմանը”:	Considering that there was a need to clarify a number of specific expressions and concepts frequently used in most European States in the context of spatial development policies, the Committee of Senior Officials of CEMAT decided that, as part of the Work Programme, the preparation of a Glossary of concepts, categories and terms used in areas related to spatial development would both answer an existing need for clarification of those concepts and terms and be a good contribution to help “build bridges” of understanding and communication between the professionals of the member States.

Բառարանի նպատակը մասնագիտական, լեզվաքաղաքական և մշակութային ներկա բազմազանությունը անդամ Պետություններում ներդաշնակեցնելն է՝ իրավիճակների և արդյունքների համադրելիության և հաղորդակցության անհրաժեշտությունից ելնելով՝ հաշվի առնելով որոշ հատուկ արտահայտություններ և հասկացություններ, որոնք հաճախ օգտագործվում են Եվրոպական Պետությունների մեծ մասում տարածական զարգացման քաղաքականության համատեքստում:	The goal of the Glossary is to match current professional and policy linguistic and cultural diversity in the member States with the need for communication and comparability of situations and results, considering a number of specific expressions and concepts frequently used in most European States, in the context of spatial development policies.
<i>Եվրոպայում տարածական զարգացման քաղաքականության մեջ օգտագործվող Եվրոպայի Խորհրդի CEMAT հիմնական արտահայտությունների բառարանը</i> ստեղծվել է ավագ պաշտոնյաների կոմիտեի կողմից, Եվրոպայի Խորհրդի փորձագետ պարոն Ժակ Ռոբերի օժանդակությամբ: Նրանց ջանքերը հատուկ գովասանքի են արժանի:	The “<i>CEMAT Glossary of key expressions used in spatial development policies in Europe</i>” was prepared by the Committee of Senior Officials with the assistance of Mr Jacques Robert, Expert of the Council of Europe. A special word of praise is due to their effort.
Ներկայումս ներառելով 68 հասկացություններ և արտահայտություններ սկսած “Հասանելիությունից մինչև բնակեցման կառուցվածք” բառարանը տալիս է Եվրոպական պետություններում հաճախ օգտագործվող արտահայտությունների և հասկացությունների սահմանումը, ինչպես նաև դրանց օգտագործման և վերջին ժամանակներում զարգացման բացատրությունը, քանի որ որոշ արտահայտություններ ավանդական մասնագիտական արտահայտություններ են, իսկ մյուսները վերջերս են ներմուծվել մասնագիտական բառապաշար, հատկապես CEMAT-ի ուղենիշային սկզբունքների կամ ԵՄ Եվրոպական տարածական զարգացման հեռանկարի (ԵՏԶՀ) ստեղծման և	Currently including 68 concepts and expressions ranging from “Accessibility to Urban structure / Settlement structure”, the Glossary provides a definition of expressions and concepts frequently used in most European States as well as explanations about their use and recent evolution, as some of the expressions are traditional professional expressions, while others were recently introduced into the professional vocabulary, especially through the elaboration and publication of the CEMAT Guiding Principles or the EU European Spatial Development Perspective (ESDP).

հրապարակման միջոցով:	
Ավագ պաշտոնյաների կոմիտեն ցանկանում է, որպեսզի սույն CEMAT բառարանը դառնա անընդհատ թարմացվող բաց և դինամիկ ծրագրի առաջին փուլը՝ ընդրկելով նոր արտահայտություններ կամ նոր հասկացություններ:	The Committee of Senior Officials wishes this CEMAT Glossary to be considered as the first phase of an open and dynamic project to be permanently up-dated, by adding either more expressions or new concepts.
Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն իր անդամների ներդրումների արդյունք է, որոնք համաձայնեցրել են դրա բովանդակությունը, Կոմիտեն կարծում է, որ այն պետք է թարգմանվի Եվրոպայի Խորհրդի 47 անդամ Պետությունների ազգային լեզուներով և հարմարեցվի դրանց, այդպիսով ընդլայնելով իր օգտակարությունը՝ որպես տարածական զարգացման բնագավառում փոխըմբռնման և համագործակցության ընդհանուր հիմք: <i>Մարիա Խոսե Ֆեստաս</i> Ավագ պաշտոնյաների կոմիտեի նախագահ Եվրոպայի Խորհրդի տարածական/տարածքային պլանավորման հարցերով նախարարների եվրոպական խորհրդաժողովի 14-րդ նստաշրջան	As well, because it resulted from the contributions of its members that also agreed on its content, the Committee feels it should be translated and adapted to the diverse national languages of the 47 member States of the Council of Europe, thus enlarging its usefulness as a common basis of understanding and cooperation in spatial development. <i>Maria Jose Festas</i> Chair of the Committee of Senior Officials of the 14th Session of the European Conference of Ministers responsible for Spatial/Regional Planning of the Council of Europe (CEMAT/CoE)

Ընդհանուր	Presentation
Տարածական զարգացման քաղաքականության համատեքստում որոշակի արտահայտություններ և հասկացություններ հաճախ են օգտագործվում Եվրոպական պետությունների մեծ մասում: Որոշ արտահայտություններ ավանդական մասնագիտական արտահայտություններ են, իսկ մյուսները վերջերս են ներմուծվել մասնագիտական բառապաշար, հատկապես, Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի Եվրոպական մայրցամաքի կայուն տարածական զարգացման ուղենիշային սկզբունքների Հանձնարարականի (2002) 1-ի կամ Եվրոպական տարածական զարգացման հեռանկարի (ԵՏՀՀ)¹ ստեղծման և հրապարակման միջոցով: Սույն բառարանի նպատակը այդպիսի արտահայտությունների սահմանումը, ինչպես նաև դրանց օգտագործման և վերջին ժամանակներում զարգացման վերաբերյալ բացատրությունը տալն է:	In the context of spatial development policies, a number of specific expressions and concepts are frequently used in most European States. Some of them are traditional professional expressions, while others were recently introduced into the professional vocabulary, especially through the elaboration and publication of the Recommendation Rec. (2002) 1 of the Committee of Ministers of the Council of Europe on the Guiding Principles for Sustainable Spatial Development of the European Continent (GPSSDEC-CEMAT) or the European Spatial Development Perspective (ESDP). The objective of the present Glossary is to provide a definition of such expressions, as well as some explanations about their use and recent evolution.
Բառարանն ուղղված է տարբեր մակարդակներում տարածքային զարգացման քաղաքականության և դրա հետ կապված գործունեության մեջ ներգրավված պաշտոնյաների, մասնագետների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների լայն շրջանակներին: Այն նպատակ ունի հստակեցնել տվյալ ոլորտում լայնորեն կիրառվող հասկացությունների և արտահայտությունների բովանդակությունը, ինչպես նաև դրանց տարբերությունները:	The Glossary is addressed to a wide range of officials, professionals and representatives of the civil society involved in territorial development policies and related activities at the various levels. It is aimed at clarifying the content of widely used concepts and expressions in this field as well as the distinctions between them.
Իր ներկայիս տեսքով Բառարանը չի կարող հանդիսանալ “վերջնական”: Ապագայում այլ	It its present form, the Glossary cannot be considered as a “final” product. Further

¹ Ընդունվել է 1999 թվականին / Adopted in 1999

հասկացություններ և արտահայտություններ կարող են ավելացվել՝ հաշվի առնելով հատուկ պահանջներն ու տարածական զարգացման գործունեության զարգացումը:	concepts and expressions can be added in future, according to specific demands and to the evolution of spatial development activities.
Բառարանում ներկայացված յուրաքանչյուր հասկացություն կամ արտահայտություն պարունակում է սահմանում, որին, որպես կանոն, հետևում են շեղատառով մեկնաբանություններ, որոնք լրացուցիչ տեղեկություն են տրամադրում տվյալ հասկացության ծագման, համատեքստի, զարգացման կամ կիրառման վերաբերյալ: Մեծ թվով հասկացություններ և արտահայտություններ կապված են այլ հասկացությունների և արտահայտությունների հետ կա՛մ իրենց նշանակության նմանությամբ, կա՛մ էլ քաղաքականության տեսանկյունից: Այդպիսի փոխկապակցվածությունը նույնպես նշված է:	Each concept or expression presented in the Glossary contains a definition, generally followed by comments in italic providing further information on the origin, the context, the evolution or the policy implications of the concept. A large number of concepts or expressions are related to other concepts and expressions, either by a similarity of meaning or by policy considerations. Such links of affinity are also indicated.
Մի շարք փաստաթղթեր ² , որոնք չեն կարող ամբողջությամբ թվարկվել, օգտագործվել են Բառարանի ստեղծման համար՝ տալով արտահայտությունների սահմանումներ կամ տեղեկություն տրամադրելով դրանց նշանակության վերաբերյալ: Որոշ դեպքերում տարբեր արտահայտություններ շատ մոտ են իրենց նշանակությամբ: Դրանք միավորվել են մեկ դասի մեջ, և տեքստը պարզաբանում է դրանց միջև գոյություն ունեցող աննշան տարբերությունները:	A large number of documents ² , which cannot all be mentioned, were consulted for the elaboration of the Glossary providing either definitions or information about the meaning of the expressions concerned. In a number of cases, various expressions are very close to each other as far as their signification is concerned. They have been grouped into a single category and the text illustrates the slight differences existing between them.
Ընտրված արտահայտությունները	The expressions selected are presented in

² Դրանց շարքում են CEMAT/Եվրոպայի Խորհրդի տարբեր փաստաթղթեր՝ ներառյալ Ուղենիշային սկզբունքները (Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի Կայուն տարածական զարգացման ուղենիշային սկզբունքների վերաբերյալ Հանձնարարական (2002) 1), “Կայուն զարգացման տարածքային չափի վերաբերյալ” Լյուքսեմբուրգի Հռչակագիրը (13-րդ CEMAT/Եվրոպայի Խորհուրդ, 2003), “Եվրոպական մայրցամաքի կայուն տարածական զարգացման համար ցանցեր. կամուրջներ Եվրոպայով” Լիսաբոնի Հռչակագիրը (14-րդ CEMAT/Եվրոպայի Խորհուրդ, 2006) (<http://www.coe.int/CEMAT>), ինչպես նաև Եվրոպական տարածական զարգացման հեռանկարը: Վիքիպեդիա ազատ հանրագիտարանը նույնպես կարևոր դեր է խաղացել մի շարք հասկացությունների և արտահայտությունների սահմանման և բացատրության համար: / Among them various CEMAT/Council of Europe documents, including the Guiding Principles (Recommendation Rec. (2002) 1 of the Committee of Ministers of the Council of Europe on the Guiding Principles for Sustainable Spatial Development), the Ljubljana Declaration on “The territorial dimension of sustainable development” (13th CEMAT/CoE, 2003) and the Lisbon Declaration on “Networks for sustainable spatial development of the European.

բառարանում ներկայացված են այբբենական կարգով:	the Glossary in alphabetical order
---	------------------------------------

Բառարանում պարունակվող հասկացությունների և արտահայտությունների ցանկ	List of concepts and expressions contained in the Glossary
Հասանելիություն	Accessibility
Վարչական մակարդակ	Administrative level
Լքված հողեր	Brownfield land
Բիզնես կենտրոն	Business park
Համալիր տարածական զարգացման մոտեցում	Comprehensive spatial development approach
Կապվածություն	Connectivity
Փոխկապակցված ուրբանիզացիա	Conurbation
Անդրսահմանային, վերազգային, միջտարածաշրջանային համագործակցություն	Cross-border, transnational, interregional cooperation
Մշակութային ուղիներ	Cultural routes
Դեգրադացված տարածքներ	Derelict area
Հետամնաց տարածաշրջաններ	Disadvantaged regions
Ներքին զարգացում	Endogenous development
Միջավայրակայուն պլանավորում	Environmental planning
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում	Environmental impact assessment
Համաեվրոպական միջանցք	Eurocorridor
Քաղաքային գործառնական տարածք	Functional urban area
Քաղաք-դարպասներ	Gateway cities
Կառավարական մակարդակ	Governmental level
Ինտեգրված առափնյա կառավարում	Integrated coastal management
Ինտեգրված պլանավորում	Integrated planning
Հողային ֆոնդի կառավարում	Land management
Լանդշաֆտ	Landscape
Լանդշաֆտի պլանավորում	Landscape planning
Լանդշաֆտային քաղաքականություն	Landscape policies
Հողօգտագործման հատակագծում, գոտևորում	Land-use planning, zoning
Ագլոմերացիոն շրջան / Ագլոմերացիոն տարածք	Metropolitan region / Metropolitan area
Բնական վտանգ / Բնական վնաս / Բնական աղետ	Natural risk / Natural hazard / Natural disaster
Մասնակցային նախագծում (պլանավորում)	Participatory planning
Համագործակցություն	Partnership /cooperation
Սահմանային տարածաշրջաններ	Peripheral regions

Արվարձանային տարածքներ	Peri-urban areas
Ֆիզիկական պլանավորում	Physical planning
Բազմակենտրոն տարածական համակարգ / Բազմակենտրոն տարածական զարգացում	Polycentric spatial structure / Polycentric spatial development
Հանրային-մասնավոր համագործակցություն	Public-private partnership
Հանրային ծառայություններ	Public services
Տարածաշրջան	Region
Տարածաշրջանային զարգացում / Տարածաշրջանային պլանավորում	Regional development / Regional planning
Գետի ավազանի կառավարում	River basin management
Գյուղական / ոչ քաղաքային տարածքներ	Rural area / Countryside
Գյուղական զարգացում	Rural development
Գյուղական զարգացման առանցք	Rural development pole
Տարածական զարգացում, Տարածական զարգացման քաղաքականություն	Spatial development, Spatial development policy
Տարածակա զարգացման նախագծեր	Spatial development projects
Տարածական պլանավորում	Spatial planning
Շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատում	Strategic environmental impact assessment
Երկրորդային ուրբանիզացիա	Suburbanisation
Կայուն տարածական զարգացում	Sustainable spatial development
Կայունության գնահատում	Sustainability assessment
Տեխնոլոգիական վտանգ / Տեխնիկական վնաս	Technological risk / Technological hazard
Տեխնոլոգիական բևեռ / Տեխնոլոգիական կենտրոն / Տեխնոպարկ / Գիտական պարկ	Technopole / Technology centre / Technology park / Science park
Տարածքային ամրակայում	Territorial cohesion
Տարածքային համագործակցություն	Territorial cooperation
Տարածքային զարգացում	Territorial development
Տարածքային կառավարում	Territorial governance
Տարածքային ներուժ	Territorial potential
Տարածքային ազդեցության գնահատական	Territorial impact assessment
Քաղաքների պլանավորում	Town and country planning
Քաղաքային տարածքներ	Urban areas
Ուրբանիզացիա	Urbanisation
Քաղաք զարգացում	Urban development
Քաղաքային միջավայրի նախագծում	Urban design
Քաղաքային էկոհամակարգ	Urban ecosystem
Քաղաքային տնտեսության կառավարում	Urban management
Քաղաքաշինություն	Urban planning
Քաղաք արդիականացում / Քաղաք	Urban renewal / Urban regeneration /

վերակենդանացում / Քաղաքային միջավայրի վերակառուցում	Urban revitalisation / Urban rehabilitation / Urban restoration
Քաղաք-գյուղի համագործակցություն	Urban-rural partnerships
Քաղաքային տարածում	Urban sprawl
Բնակեցման կառուցվածք	Urban structure / Settlement structure

Բառարան	Glossary
Հասանելիություն	Accessibility
Հասանելիությունը նպատակակետին հասնելու դյուրինությունն է ³ : Բացի տրանսպորտի ենթակառուցվածքի միջոցով ֆիզիկական հասանելիությունից, առաջատար հեռահաղորդակցության համակարգերի միջոցով կապը նպաստում է տարածքների վիրտուալ հասանելիության բարելավմանը:	Accessibility refers to the ease of reaching destinations ³ . In addition to physical accessibility through transport infrastructure, connectivity through advanced telecommunication systems contributes to improving the intangible accessibility of areas.
Հասանելիությունը կախված է տրանսպորտի ենթակառուցվածքի և ծառայությունների ընդլայնումից և որակից: Այն մարդիկ, որոնք ապրում են ավելի հասանելի վայրերում, կարող են արագորեն հասնել բազմաթիվ վայրեր, մինչդեռ անհասանելի վայրերում ապրող մարդիկ միևնույն ժամանակահատվածում կարող են ավելի քիչ վայրեր հասնել: Հեռահաղորդակցության համակարգերի առաջընթացը ոչ նյութական հասանելիության նոր տեսակ է ձևավորել, որը կարևոր դեր է խաղում տարածքային զարգացման հնարավորությունների հարցում: Հասանելիության մակարդակը շատ կարևոր գործոն է տարածքային զարգացման համար, հատկապես ներկայիս գլոբալիզացիայի համատեքստում: Տե՛ս նաև “Կապվածություն”	<i>Accessibility depends upon the extension and quality of transport infrastructure and services. People living in places that are highly accessible can reach many destinations quickly, while people in inaccessible places can reach fewer places in the same amount of time. The progress of telecommunication systems has created a new form of intangible accessibility which plays a significant part in territorial development potentialities. The level of accessibility is a very important factor for territorial development, especially in the present context of globalisation. See also “Connectivity”</i>
Վարչական մակարդակ	Administrative level
Վարչական մակարդակները համապատասխանում են տարածքային/վարչական միավորներին, որտեղ հանրային վարչական մարմինները գոյություն ունեն, անկախ համապատասխան մակարդակներում ընտրովի մարմինների առկայությունից կամ բացակայությունից:	Administrative levels correspond to the territorial/administrative units where public administrations are established, independently from the existence or not of elected bodies at the corresponding levels.
Մի շարք եվրոպական պետություններում սովորաբար գոյություն ունեն երեք կամ չորս	<i>In the various European States, three or four administrative levels generally exist.</i>

³ Տե՛ս նաև Վիքիպեդիա ազատ հանրագիտարան / Cf. Free Encyclopedia Wikipedia.

վարչական մակարդակներ: Բավականին հաճախ պետական և ապակենտրոնացված (տարածաշրջանային, տեղական ինքնակառավարման) վարչական մարմինները որոշակի մակարդակներում համապետ են գործում: Այնպես, որպեսզի տարբեր վարչական մակարդակներ կախված են միակ կառավարական մակարդակից (ընտրովի մարմին), դրանք սովորաբար դասակարգվում են հիերարխիկ ձևով: Տե՛ս նաև “Կառավարական մակարդակ”	Rather frequently, state and decentralised (regional, municipal) administrations co-exist at certain levels. There, where various administrative levels depend upon a single governmental level (elected body), they are generally organised in a hierarchical way. See also “Governmental level”
Լքված հողեր	Brownfield land
Լքված հողերը նախկինում արդյունաբերական կամ որոշ առևտրային նպատակներով օգտագործված հողերն են , որոնք կարող են պարունակել ցածր խտությամբ վնասակար թափոններ կամ աղտոտված լինել, սակայն մաքրման դեպքում կարող են վերաօգտագործվել⁴: Երբեմն լքված հողերի հասկացությունն օգտագործվում է նաև մատնանշելու այն տարածքները , որոնք նախկինում զարգացած են եղել և այնուհետև դարձել են լքված, սակայն անպայման չէ նրանց աղտոտված լինելը:	Brownfield land is land previously used for industrial purposes or certain commercial uses and that may be contaminated by low concentrations of hazardous waste or pollution and has the potential to be re-used once it is cleaned up⁴. Sometimes, the concept of brownfield land is also used for designating areas which were previously developed and have become obsolete, but are non necessarily contaminated.
Սովորաբար, լքված հողամասեր գոյություն ունեն քաղաքների արդյունաբերական հատվածում, այնպիսի հողերի վրա, որպեսզի կան ամայի գործարաններ կամ առևտրային շենքեր, կամ որպեսզի նախկինում իրականացվել է այլ աղտոտող գործունեություն: Փոքր լքված հողամասեր կարող են հանդիպել բազմաթիվ հին բնակելի տարածքներում, որպեսզի կան չորմաքրման հաստատություններ, գազալցակայաններ և այլն: Չնայած այն հանգամանքին, որ բազմաթիվ թունավորված լքված տարածքներ տասնյակ տարիներ ի վեր չեն օգտագործվել, սակայն վերջին ժամանակներս դրանց մաքրման և այլ	Generally, brownfields sites exist in a town’s industrial section, on land containing abandoned factories or commercial buildings, or other previously polluting operations. Small brownfields may also be found in many older residential neighbourhoods with dry cleaning establishments, gas stations, etc. While many contaminated brownfields were unused for decades, emphasis has recently been put on their de-contamination and rehabilitation for other uses as demand for developable land is permanently growing. See also “Derelict area”.

⁴ Տե՛ս նույն տեղում / Ibid.

նպատակներով օգտագործման համար վերակառուցման վրա մեծ շեշտ է դրվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ զարգացման ենթակա տարածքների պահանջը մշտապես մեծանում է: Տե՛ս նաև “Դեգրադացված տարածքներ”:	
Բիզնես կենտրոն Բիզնես կենտրոնը կամ բիզնես տարածքը այն հողատարածքն է, որի վրա են գտնվում բազմաթիվ գրասենյակներ և առևտրային շենքեր⁵: Բիզնես կենտրոնները ծառայություններ մատուցող ձեռնարկությունների խմբավորումներ են և տարբերվում են արդյունաբերական կենտրոններից (արտադրական գործունեություն) կամ տեխնոպարկերից (հետազոտություններ և տեխնոլոգիական զարգացման գործունեություն):	Business park A business park or business estate is an area of land in which many office and commercial buildings are grouped together⁵. Business parks are groupings of tertiary activities and differ from industrial parks (manufacturing activities) or technology parks (research and technological development activities).
<i>Բիզնես կենտրոնները հիմնականում գտնվում են քաղաքամերձ տարածքներում՝ մայրաքաղաքային ճանապարհային ցանցի ամենահասանելի կետերում:</i>	<i>Business parks are generally located in suburban areas at the most accessible points of the metropolitan road network.</i>
Համալիր տարածական զարգացման մոտեցում	Comprehensive spatial development approach
Համալիր տարածական զարգացման մոտեցումը տարածական զարգացման քաղաքականության մոտեցում է, որը հաշվի է առնում այն բոլոր գործոնները, որոնք կարող են ազդել կոնկրետ տարածքի տարածական զարգացման վրա՝ անկախ դրանց բնույթից (այնպիսի բնական գործոններ, ինչպիսիք են կլիմայի փոփոխությունը կամ բնական աղետները, մարդու գործունեությունը, ինչպիսին է մասնավոր ներդրումների հետ կապված գործունեությունը, կամ սոցիալական/մշակութային վարքագծերը, տարբեր բնագավառներում հանրային	A comprehensive spatial development approach is an approach of spatial development policy which considers all factors likely to influence the spatial development of a specific territory whatever their nature may be (natural factors such as climate change or natural hazards, human activities such as those related to private investments or social/cultural behaviours, public policies in various fields, etc.). It pays particular attention to the coherence of public (sectoral) policies which have clear impacts on the territory so as to ensure a

⁵ Տե՛ս նույն տեղում / Ibid.

քաղաքականությունը և այլն): Այն հատուկ նշանակություն է տալիս տարածքի վրա հստակ ազդեցություն ունեցող հանրային (ճյուղային) քաղաքականությունների կապակցվածությանը՝ նպատակ ունենալով ապահովել տարածքային կապակցվածության բարձր մակարդակ և խուսափել ցանկալի տարածական զարգացմանը խոչընդոտող այնպիսի թերություններից, ինչպիսիք են անբավարար համագործակցությունը, ռեսուրսների բաշխման ցածր արդյունավետությամբ արդյունքները և տարածքային ազդեցության արտադրանքը: <i>Տե՛ս նաև “Տարածական զարգացում”, “Կայուն տարածական զարգացում”:</i>	high degree of territorial cohesion and to avoid shortcomings such as insufficient synergies, sub-optimal effects of resource allocation and the production of territorial impacts counteracting the desired spatial evolution. <i>See also “Spatial development”, “Sustainable spatial development”.</i>
Կապվածություն	Connectivity
Կոնկրետ քաղաքային բնակավայրի կապվածությունը համապատասխանում է այլ քաղաքային բնակավայրերի և հիմնական ցանցերի հետ տրանսպորտի և հաղորդակցության/հեռահաղորդակցության կապերի թվին, բնույթին և հնարավորությանը:	The connectivity of a specific urban settlement or location corresponds to the number, nature and capacity of transport and communication/telecom-munication links with other urban settlements and with the major networks.
<i>Կապվածության մակարդակը կախված է ոչ միայն հիմնական տրանսպորտի և հաղորդակցության ցանցերի մերձավորությունից, այլ առաջին հերթին տվյալ ցանցերին հասանելիության կետերի մերձավորությունից (երկաթուղու կայարաններ, ավտոճանապարհների մուտք): Կապվածության հասկացությունը վերաբերում է և՛ տրանսպորտի, և՛ հեռահաղորդակցության ցանցերին:</i> <i>Տե՛ս նաև “Համաեվրոպական միջանցք”, “Հասանելիություն”:</i>	<i>The level of connectivity does not depend only upon the proximity of major transport and communication networks, but also and primarily upon the proximity to the points of access to these networks (railway stations, entrance to motorways). The concept of connectivity applies to both transport and telecommunication networks.</i> <i>See also “Eurocorridor”, “Accessibility”.</i>
Փոխկապակցված ուրբանիզացիա	Conurbation
Փոխկապակցված ուրբանիզացիան քաղաքային բնակավայրերի միավորումներն են կամ շարունակական ցանցերը, որոնք	A conurbation is an aggregation or continuous network of urban communities which have physically merged through

ֆիզիկապես միաձուլվել են բնակչության աճի և տարածանքի ընդլայնման միջոցով: Այն ագլոմերացիայի բազմակենտրոն ձևն է⁶:	population growth and expansion. It is a polycentric form of agglomeration⁶.
<i>Կառուցապատված վայրերի ֆիզիկական մերձավորությունը և շարունակականությունը փոխկապակցված ուրբանիզացիայի սահմանման կարևոր նախադրյալ է, որը չի բացառում, որ միջակա բաց տարածքներ նույնպես կարող են գոյություն ունենալ: Փոխկապակցված ուրբանիզացիա հիմնականում առաջացել է արդյունաբերական հեղափոխության ժամանակ, երբ բնակավայրեր են կառուցվել այնպիսի վայրերում, որոնք մեծ քանակությամբ հումք (հիմնականում հանքեր) էին պարունակում կամ գտնվում էին ափամերձ հատվածներում (ափի և հեռավոր լեռների միջև):</i>	<i>Physical proximity and continuity of built-up areas are a prerequisite for the definition of a conurbation, which does not exclude that interstitial open spaces may also exist. Conurbations generally developed during the industrial revolution when settlements were built up in areas with significant raw materials (especially mines) or along coastal strips (between the shore line and the mountains in the hinterland).</i>
Անդրսահմանային, վերազգային, միջտարածաշրջանային համագործակցություն	Cross-border, transnational, interregional co-operation
- Անդրսահմանային համագործակցություն, որը տեղի է ունենում ազգային սահմանների երկու կողմերի միջև ընկած տարածքներում՝ համեմատաբար կարճ հեռավորության վրա: Անդրսահմանային համագործակցությունն ընդգրկում է տեղական և տարածաշրջանային համայնքների նորմալ գործունեությանը վերաբերող բոլոր գործունեության տեսակները, ինչպիսիք են տնտեսական զարգացումը, տարածական պլանավորումը, զբոսաշրջությունը և հանգիստը, ուսուցումը, տրանսպորտը, շրջակա միջավայրի պաշտպանությունը և այլն: Անդրսահմանային համագործակցությունը վերաբերում է նաև այնպիսի վայրերին, ինչպիսիք են Եվրոտարածաշրջանները և որոշ դեպքերում այն վայրերին, որտեղ երկուսից ավելի	- Cross-border co-operation which takes place on relatively short distances between areas on both sides of national borders. Cross-border cooperation encompasses all types of activities belonging to normal activities of local and regional communities, such as economic development, spatial planning, tourism and recreation, training, transport, environmental protection, etc. Cross-border cooperation concerns also areas such as the Euroregions and, in a number of cases, areas where more than two States are converging (Saar-Lor-Lux region, Upper Rhine Triangle for instance).

⁶ Տե՛ս նույն տեղում / Ibid

Պետություններ միավորվում են (օրինակ Սար-Լոր-Լյուքսի տարածաշրջանը, Վերին Ռեյնի եռանկյունին):	
- Վերազգային համագործակցությունը տարածքային համագործակցության ավելի նոր տեսակ է, որը ձգվում է լայն տարածքներով՝ ազգային սահմանների վրայով (Ատլանտյան կոր, Բալթիկ ծովի տարածաշրջան, արևմտյան միջերկրածովյան տարածաշրջաններ և այլն): Համագործակցությունն ավելի կենտրոնացված է հատուկ ռազմավարական հարցերի վրա, ինչպիսիք են քաղաքային տարածքների ցանցերը, առափնյա շրջանների ծովային տնտեսության զարգացումը, հասանելիության ընդհանուր բարելավումը, բնական և մշակութային ժառանգության բարելավման հետ կապված լայնամասշտաբ միջոցառումներ և այլն:	– Transnational co-operation is a more recent type of territorial cooperation stretching across national borders over large areas (Atlantic Arc, Baltic Sea Region, Western Mediterranean Regions, etc.). Cooperation is more focussed on specific strategic issues, such as networks of metropolitan areas, promotion of the maritime economy of coastal regions, general improvement of accessibility, large-scale measures related to the enhancement of the natural and cultural heritage, etc.
- Միջտարածաշրջանային համագործակցությունն ունի թեմատիկ բնույթ և տեղի է ունենում երբեմն իրարից հեռու գտնվող, հիմնականում առանց տարածքային սահմանների տարբեր պետությունների շրջանների միջև: Միջտարածաշրջանային համագործակցությունը կարող է ներառել նոու-հաուի և փորձի փոխանցում, տարածաշրջանների կամ ձեռնարկությունների զարգացմանը նպաստող մեթոդների և հմտությունների համատեղ բարելավում, հեռագնաց զբոսաշրջության խրախուսում և այլն: Միջտարածաշրջանային համագործակցությունը կարող է տեղի ունենալ նաև միևնույն Պետության տարբեր շրջանների միջև, որոնք ունեն կամ չունեն տարածքային սահմաններ:	– Interregional co-operation is of thematic nature and takes place between regions of different States, sometimes far away from each other, generally without territorial continuity. Interregional cooperation may comprise transfers of know-how and experience, the joint improvement of techniques and methodologies contributing to the development of regions or enterprises, the promotion of long-distance tourism, etc. Interregional cooperation may also take place between regions of the same State, with or without territorial continuity.

Մշակութային ուղիներ	Cultural routes
Մշակութային ուղիներն այն ճանապարհներն են, որոնք միավորում են ժառանգության և ավանդույթների կարևոր տարրերը՝ հաստատելով և լուսաբանելով եվրոպական պատմության որոշակի ժամանակաշրջանները և իրադարձությունները: Մշակութային ուղիները ներառում են նաև ոչ նյութական և տարածական ներուժը կամ դինամիկան, ինչը չունի մշակութային լանդշաֆտը, որն ավելի ստատիկ է և սահմանափակ: <i>Եվրոպայի Խորհրդի մշակութային ուղիների ծրագիրը գործիք է, որը հնարավորություն է տալիս ճանաչել եվրոպական արժեքները, որոնք առաջացել են Եվրոպայում առկա մշակույթների և հասարակությունների բազմազանությունից: Այն հիմնված է եվրոպական արժեքները ներկայացնող թեմաների վրա, որոնք ընդհանուր են Եվրոպայի մի շարք երկրներում: Այդ թեմաները մշակվում են մի շարք Անդամ Պետություններում հիմնված բազմադիսպլինար ցանցերի կողմից: Դրանք հայտնվում են բազմակողմանի համագործակցության բազմաթիվ ծրագրերում: Մշակութային ուղիների օրինակներ են՝ Ուխտագնացության ուղիները, Վանական ազդեցության ճանապարհները, Կելտական ճանապարհները, Հանգեական վայրերը, ճանապարհներն ու հուշարձանները, Եվրոպայում ռազմական ճարտարապետությունը և այլն: Մշակութային ուղիները կարևոր դեր են խաղում մշակութային զբոսաշրջության զարգացման գործում⁷:</i>	Cultural routes are itineraries which gather significant elements of heritage and traditions witnessing and illustrating specific periods and events of European history. Cultural routes involve also intangible and spatial dynamics not possessed by a cultural landscape, which is more static and restricted in nature. <i>The cultural routes programme of the Council of Europe is an instrument for reading the European values that emerge from the complexity of the cultures and societies constituting Europe. It is based on themes representative for European values, which, moreover, are common to several countries of Europe. These themes are handled by multidisciplinary networks established in several Member States. They appear in a whole series of projects of multilateral co-operation. Examples of cultural routes are: the Pilgrim Pathways, the Monastic Influence Routes, the Celts Routes, Hanseatic sites, routes and monuments, fortified military architectures in Europe, etc. Cultural routes are important for the development of cultural tourism⁷.</i>
Դեգրադացված տարածքներ	Derelict area
Դեգրադացված տարածքները (սովորաբար	Derelict areas are (generally urban) areas

⁷ Եվրոպայի Խորհրդի Մշակութային ուղիների ծրագիր / Cf. Cultural Routes Programme of the Council of Europe.

քաղաքային) այն տարածքներն են, որոնք էական անկում են ապրել, ունեն վերացող կամ լքված արդյունաբերություն, փակված ձեռնարկություններ և տներ, դատարկ ցուցափեղկեր, աղտոտված շրջակա միջավայր և գիշերային ժամերին, ըստ էության, դատարկ փողոցներ: Որոշ դեգրադացված տարածքներ թունավորված են և կարող են համարվել լքված հողեր : Դեգրադացված տարածքները քաղաքային շրջաններում շրջակա միջավայրի վատթարացման հիմնական պատճառներից են: <i>Տե՛ս նաև “Լքված հողեր”:</i>	which have suffered a significant downturn, with declining or abandoned industries, closed businesses and houses, vacant storefronts, a degraded environment and virtually empty streets at night. Some derelict areas are also contaminated and can be considered as brownfields sites. Derelict areas are a major cause of environmental stress in urban areas. <i>See also “Brownfield land”.</i>
Հետամնաց շրջաններ	Disadvantaged regions
Հետամնաց շրջանները տնտեսական զարգացվածության համեմատաբար ցածր մակարդակ ունեցող տարածաշրջաններն են, որի պատճառը կարող է լինել դրանց աշխարհագրական դիրքը, հատկապես հեռավոր և արվարձանային շրջաններում, բնական և կլիմայական պայմանները (բևեռային կամ երաշտի հակում ունեցող, ինչպես նաև լեռնային շրջաններ), բնակչության առանձնահատկությունները (նոսր բնակեցված շրջաններ բնակչության չափազանց ցածր խտությամբ, արտագաղթի հակված շրջաններ), հասանելիության սահմանափակումները (մեկուսացված շրջաններ, արդյունավետ տրանսպորտային ենթակառուցվածքներով կենտրոնական շրջանների հետ վատ կապված շրջաններ): Լքված տնտեսական ենթակառուցվածքներով շրջանները (տնտեսական վերափոխման ենթակա՝ նախկին արդյունաբերական շրջաններ) նույնպես հաճախ համարվում են հետամնաց շրջաններ :	Disadvantaged (or disfavoured) regions are regions with a relatively low level of economic development which may result from their geographical location, especially from remote and peripheral situations, from natural and climate conditions (regions in polar areas or regions subject to drought, mountainous regions), from the characteristics of their population (sparsely populated regions with extremely low population density, regions subject to out-migration), from accessibility constraints (insular regions, regions badly connected to centres through efficient transport infrastructures). Regions characterised by obsolete economic structures (old industrial regions subject to economic reconversion) are also often considered disadvantaged regions.
<i>Տարածաշրջանային զարգացման քաղաքականությունը որպես առաջնահերթություն ուղղվում է հետամնաց</i>	<i>Regional development policies address in priority disadvantaged regions and support them through measures of</i>

շրջաններին և դրանց օգնում է ենթակառուցվածքների, տեխնոլոգիական զարգացման, ուսուցման և մասնագիտական որակավորման, տնտեսական գործունեության զարգացման միջոցով:	<i>infrastructure development, techno-logical development, training and professional qualification and promotion of economic activities.</i>
Ներքին զարգացում	Endogenous development
Ներքին(էնդոգենիկ) զարգացումը տնտեսական զարգացման հատուկ տեսակ է, որն առաջին հերթին հիմնված է կոնկրետ տարածքի ներքին ռեսուրսների վրա: Դրանք ներառում են՝ բնական պաշարներ և հումք, հմտություններ, նոու-հաու և նորարարության կարողություն, տեղական հատուկ արտադրանք (գյուղատնտեսություն, անտառաբուծություն, արհեստ, տեղական արտադրություն), զբոսաշրջության և տեղական տնտեսության գրավչության գործոններ (կլիմայական պայմաններ, բնական և մշակութային ժառանգություն, գրավիչ լանդշաֆտ և այլ հարմարություններ):	Endogenous development is a specific form of economic development which relies primarily on the internal resources of a specific territory. These comprise natural resources and raw materials, skills, know-how and innovation capacity, specific local productions (agriculture, forestry, handi-craft, local manufacturing), factors of attractiveness for the residential and tourist economy (climate conditions, natural and cultural heritage, attractive landscapes and other amenities).
Ներքին զարգացումը հակադրվում է (կամ լրացնում է) արտաքին(էքզոգենիկ) զարգացմանը, որը հիմնվում է օտարերկրյա կազմակերպությունների (այլ պետությունից կամ շրջանից) կողմից կատարված ներդրումների վրա:	<i>Endogenous development is opposed to (or complements) exogenous development which is based on investments made by foreign enterprises (from another State or region).</i>
Միջավայրակայուն պլանավորում	Environmental planning
Միջավայրակայուն պլանավորումը համեմատաբար նոր ճյուղ է, որը նպատակ ունի միավորել քաղաքաշինական/տարածքային հատակագծման փորձը շրջակա միջավայրի խնդիրների հետ ⁸ : Միջավայրակայուն պլանավորումը վերաբերում է և՛ քաղաքային/մայրաքաղաքային, և՛ գյուղական/բնական շրջաններին: Միջավայրակայուն պլանավորումը հաշվի է առնում մի շարք բնապահպանական	Environmental planning is a relatively new discipline aiming at merging the practice of urban/regional planning with the concerns of environmentalism ⁸ . Environmental planning concerns both urban/metropolitan and rural/natural areas. Environmental planning considers a full range of environmental regulations from the European to the local level.

⁸ Տե՛ս նաև Վիքիպեդիա ազատ հանրագիտարան / Cf. Free Encyclopedia Wikipedia.

կարգավորումներ՝ եվրոպականից մինչև տեղական մակարդակ:	
Միջավայրակայուն ծրագրավորման ամենատարածված ձևը հողօգտագործման, տնտեսական զարգացման, տրանսպորտի, բնակարանային ֆոնդի զարգացման, օդի, աղմուկի, ջրի, ճահճուտների, անհետացող տեսակների և բնական միջավայրի, էկոհամակարգի, ջրհեղեղի գոտիների, առափնյա գոտիների, վիզուալ կողմերի և այլնի հետ կապված ծրագրերի և նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության մանրակրկիտ գնահատման իրականացումն է:	<i>The most common expression of environmental planning is the realisation of rigorous environmental impact assessments of projects and programmes concerning land-use, economic development, transportation, housing development, air, noise, water, wetlands, endangered species and habitats, ecosystems, flood zones, coastal zones, visual aspects, etc.</i>
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում	Environmental impact assessment
Շրջակա միջավայրի գնահատումը այն հավանական ազդեցության վերլուծությունն է, որ ծրագիրը կարող է ունենալ էկոհամակարգի, մարդկանց առողջության և բնության ծառայությունների փոփոխության վրա: Վերլուծության ենթարկվող հիմնական ազդեցությունը հետևյալն է՝ հողի թունավորում, օդի աղտոտում, լսողության վրա ազդեցություն, էկոլոգիա՝ ներառյալ անհետացող տեսակների, երկրաբանական վտանգի գնահատում և ջրի աղտոտում:	An environmental assessment is an analysis of the likely impacts that a project may have on ecosystems, human health and on changes to nature's services. The main impacts to be analysed are: soil contamination impacts, air pollution impacts, noise health effects, ecology impacts including endangered species assessment, geological hazards assessment and water pollution impacts.
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) վերաբերյալ եվրամիության դիրեկտիվն ընդունվել է 1985 թվականին և փոփոխվել է 1997 և 2003 թվականներին: Ըստ դիրեկտիվի ընթացակարգի՝ ծրագրերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը որոշվում և գնահատվում է մինչև թույլատրություն տալը: Հասարակությունը կարող է հայտնել իր կարծիքը, և արդյունքները հաշվի են առնվում ծրագրի թույլատրման ընթացակարգի ժամանակ: Հասարակությունը հետազայում իրազեկվում է որոշման վերաբերյալ: Տե՛ս նաև “Շրջակա միջավայրի վրա	<i>The EU Directive on environmental Impact Assessment (EIA) was introduced in 1985 and amended in 1997 and 2003. The EIA procedure ensures that environmental consequences of projects are identified and assessed before authorisation is given. The public can give its opinion and all results are taken into account in the authorisation procedure of the project. The public is informed of the decision afterwards. See also “Strategic Environmental Assessment”.</i>

ազդեցության ռազմավարական գնահատում”:	
Համաեվրոպական միջանցք	Eurocorridor (or Pan-European corridor)
Համաեվրոպական միջանցքը գծային բնույթ ունեցող՝ լայն ագլոմերացիաներ միավորող տարածք է, որն անցնում է տարբեր ազգային սահմանների վրայով: Դրանք արագ և լայնամասշտաբ տարածական դինամիկայի շրջաններ են Եվրոպայում, որտեղ վերանում են ազգային սահմանները: Համաեվրոպական միջանցքում կարող են առանձնացվել չորս փոխկապակցված դասեր՝ ենթակառուցվածք և տրանսպորտ (հիմնականում Տրանսեվրոպական ցանցեր), ուրբանիզացիա, տնտեսական զարգացում և շրջակա միջավայրի կայունություն:	A Eurocorridor is a category of space of linear nature connecting large agglomerations over various national borders. They are areas of rapid and large-scale spatial dynamics within a Europe of vanishing national borders. Four interrelated dimensions can be distinguished in Eurocorridors: infrastructure and transport (mainly the Trans-European Networks), urbanisation, economic development and environmental sustainability.
Համաեվրոպական միջանցքի գոտիների արագ դինամիզմը ավելի ու ավելի է բարդանում տարածական և քաղաքական առումներով: Օրինակ, կարող են առաջանալ քաղաքական կոնֆլիկտներ մի կողմից նոր ֆիզիկական ենթակառուցվածքի և բիզնես տարածքների արագ կառուցման, մյուս կողմից, ի սկզբանե առկա բնության, լանդշաֆտի և գյուղական բնապատկերների միջև լարվածության արդյունքում: Դա վկայում է խորացված տարածական հատկագծման և Համաեվրոպական միջանցքի զարգացման քաղաքականության մշակման անհրաժեշտության մասին:	<i>The rapid dynamism of Eurocorridor zones is increasingly complex in both spatial and political sense. For example, political conflicts may arise from tensions between the rapid construction of new physical infrastructure and business sites on the one hand and initially present nature, landscape and rural scenery on the other. This illustrates the need for advanced spatial planning and policy-making of Eurocorridor development.</i>
Քաղաքային գործառնական տարածք	Functional urban area
Քաղաքային գործառնական տարածքը քաղաքի ազդեցության տարածքն է: Այն սովորաբար ուրվագծվում է վիճակագրական տվյալների հիման վրա (օրինակ քաղաքային հոսքերը):	A functional urban area characterises the area of influence of a city. It is generally delineated on the basis of statistics (for instance commuter flows).
Եվրոպական պետությունների մեծամասնությունն ունի քաղաքային գործառնական տարածքի սահմանումը կամ	<i>Most European States have definitions of Functional Urban Areas or similar concepts, such as travel to -work-areas,</i>

դրան նման հասկացություն, ինչպիսիք են օրինակ աշխատանքի գնալու տարածքները, տեղափոխման, տեղաշարժման կենտրոնացման տարածքներ, տրանսպորտը փոխելու գոտիներ կամ քաղաքային գործառնական շրջաններ: ESPON I ծրագրի շրջանակներում փորձ է արվել եվրոպական մակարդակով տալ քաղաքային գործառնական տարածքի հասկացությունն ու ուրվագիծը՝ օգտագործելով ներդաշնակեցված վիճակագրական սահմանում⁹:	<i>commuting catchment areas, commuting zones or functional urban regions. In the context of the ESPON I Programme, an attempt has been made to produce an identification and delineation of functional urban areas (FUA) at European level, using a harmonised statistical definition⁹.</i>
Դարպաս քաղաքներ	Gateway cities
Դարպաս քաղաքները Եվրոպա մուտք գործելու հիմնական կետերն են, որոնք որպես կանոն տեղակայված են գլխավոր նավահանգիստներում և/կամ օդանավակայաններում, ինչպես նաև առևտրային տոնավաճառներ և ցուցահանդեսային քաղաքներ և մշակութային կենտրոններ, որոնք հավանական է, որ հանդիսանան միջազգային զբոսաշրջիկների առաջին նպատակակետերը:	Gateway cities are key entry points to Europe, typically based on major ports and/or airports, but also trade fair and exhibition cities and cultural centres likely to be the first point of call of international tourists.
Ազգային սահմանների վերացումը Եվրամիությունում և ԵՄ ընդլայնումն սպեղծել են նոր հնարավորություններ: Քաղաքներն ու մայրաքաղաքային շրջանները, որոնք նախկինում գտնվում էին ազգային ծայրամասերում կամ հիմնականում կապված էին Եվրամիության անդամ չհանդիսացող երկրների հետ, այժմ բազմակենտրոն ցանցերում կարող են ստանձնել նոր դեր՝ որպես դարպասային քաղաքներ: Դրան հասնելու համար նրանք պետք է կապված լինեն Տրանսեվրոպական ցանցերին: Դարպասները քաղաքային մեծ կոնգլոմերացիաներ են, որոնք հաճախ սփռված են մեկից ավելի քաղաքներով, և	<i>The removal of national boundaries within the European Union and the EU enlargements have created new possibilities. Cities and metropolitan regions that were once on national peripheries or mainly connected to non-EU countries can grow a new role as gateway cities in polycentric networks. To achieve this potential they must be connected to Trans-European Networks. Global gateways are major urban conglomerations, often split across more than a single city, that have the potential to offer goods and services at an international scale. They rely on the</i>

⁹ ESPON կետ 1.1.1 “քաղաքային տարածքների դերը, հատուկ վիճակը և ներուժը՝ որպես բազմակենտրոն զարգացման հանգույցներ”, կոորդինացված Նորդրեգիոյի կողմից. Վերջնական զեկույց, 2004 / Cf. ESPON Study 1.1.1. “The role, specific situation and potentials of urban areas as nodes in a polycentric development” coordinated by Nordregio. Final report. 2004.

որոնք միջազգային մակարդակով ծառայություններ և ապրանքներ առաջարկելու ներուժ ունեցող: Դրանք հիմնվում են մասշտաբի, գերազանց հաղորդակցության (կենտրոնացված միջազգային օդային և երկաթուղային տերմինալների փոխկապակցման կետի շուրջ), “գիտելիքներով հարուստ” միջավայր ստեղծող բարձրորակ տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների, առաջատար հետազոտությունների և բարձրակարգ որակավորում ունեցող աշխատուժի ձևավորման հնարավորության ստեղծմանը նպաստող հետազոտության և զարգացման բարձրորակ հաստատությունների (որպես կանոն համալսարանների և հետազոտական կենտրոնների ձևով) համադրության վրա: Տվյալ առավելությունների շնորհիվ դարպասային քաղաքները գրավիչ են դառնում միջազգային ներդրումների ներհոսքի և ապրանքների և ծառայությունների մեծածավալ միջազգային արտահանման համար:	<i>combination of scale, excellent communications (focused around the conjunction of international air and rail terminals), high-quality ICT networks that create the context for a ‘knowledge -rich’ environment, and high quality R&D facilities (usually in the form of universities and research centres) which help to create the potential for cutting-edge research and the production of a highly skilled labour force. Given such assets, global gateways provide the means of attracting international inward investment and significant international export of goods and services.</i>
Կառավարական մակարդակ	Governmental level
Կառավարական մակարդակը համապատասխանում է տարածքային/վարչական միավորներին, որոնք ունեն ընտրված խորհուրդ՝ իր վարչական մարմնի հետ միասին:	Governmental levels correspond to territorial/administrative units where an elected assembly, together with its own administration, is established.
Ապակենտրոնացված երկրներում սովորաբար գոյություն ունեն երեք կամ չորս կառավարական մակարդակներ, մինչդեռ ավելի կենտրոնացված երկրներում գործում է ոչ ավելի քան երկու կառավարական մակարդակ (ազգային և տեղական ինքնակառավարման): Տե՛ս նաև “Վարչական մակարդակ”, “Տարածքային կառավարում”:	<i>In decentralised countries, three or four governmental levels generally exist, while in more centralised countries, no more than two levels (national and local) can be found. See also “Administrative level”, “Territorial governance”.</i>
Ինտեգրված առափնյա կառավարում	Integrated coastal management

Անհրաժեշտ է ինտեգրված, մասնակցային տարածքային մոտեցում ցուցաբերել, որպեսզի Եվրոպայի առափնյա գոտիների կառավարումը կայուն լինի շրջակա միջավայրի և տնտեսության բնագավառներում, ինչպես նաև լինի սոցիալապես արդար և կապակցված: Այն նպատակ ունի լուծել ապրանքների և ծառայությունների նկատմամբ հասարակության հակասական պահանջները՝ հաշվի առնելով ներկա և ապագա պահանջմունքները: Ինտեգրված առափնյա կառավարման հիմնական խնդիրներն են՝ - ուժեղացնել ճյուղային կառավարումը ուսուցման, օրենսդրության և անձնակազմի բարելավման միջոցով, - պահպանել առափնյա էկոհամակարգերի կենսաբազմազանությունը՝ կանխելով բնական միջավայրի ոչնչացումը, աղտոտումը և գերշահագործումը, և - նպաստել առափնյա ռեսուրսների ռացիոնալ զարգացմանն ու կայուն օգտագործմանը:	An integrated, participative territorial approach is required to ensure that the management of Europe's coastal zones is environmentally and economically sustainable, as well as socially equitable and cohesive. It aims at resolving the conflicting demands of society for products and services, taking into account both current and future interests. Major objectives are to: – strengthen sectoral management by improving training, legislation and staffing; – preserve the biological diversity of coastal ecosystems by preventing habitat destruction, pollution and over-exploitation; and – promote the rational development and sustainable use of coastal resources.
Առափնյա գոտիներն ունեն ռազմավարական նշանակություն: Դրանք Եվրոպայի բազմաթիվ քաղաքացիների համար բնակավայրեր, սննդի և հումքի հիմնական աղբյուր, տրանսպորտի և առևտրի կենսական օղակ, որոշ ամենաարժեքավոր բնական միջավայրերի և հանգստի սիրված վայրեր են: Այնուամենայնիվ, առափնյա գոտիները բախվում են այնպիսի լուրջ խնդիրների, ինչպիսիք են բնական միջավայրի ոչնչացումը, ջրի թունավորումը, առափնյա էրոզիան և ռեսուրսների սպառումը: Առափնյա գոտիների սահմանափակ ռեսուրսների սպառումը (այդ թվում նաև սահմանափակ ֆիզիկական տարածությունը) բերում է օգտագործման տեսակների միջև հաճախակի առաջացող	<i>Coastal zones are of strategic importance. They are home to a large percentage of European citizens, a major source of food and raw materials, a vital link for transport and trade, the location of some of the most valuable habitats, and the favoured destination for leisure time. Yet coastal zones are facing serious problems of habitat destruction, water contamination, coastal erosion and resource depletion. This depletion of the limited resources of the coastal zone (including the limited physical space) is leading to increasingly frequent conflict between uses, such as between aquaculture and tourism. Coastal zones also suffer from serious socio-economic</i>

կոնֆլիկտների, օրինակ ջրային կենդանիների բուծման և զբոսաշրջության միջև: Առափնյա գոտիներն ունեն նաև լուրջ սոցիալ-տնտեսական և մշակութային խնդիրներ, ինչպիսիք են, օրինակ, սոցիալական կառուցվածքի թուլացումը, մարգինալացումը, գործազրկությունը և էրոզիայի հետևանքով գույքի քայքայումը: Եվրամիության մակարդակով ներկայումս իրագործվում է Ինտեգրված առափնյա կառավարման ծրագիրը: Տե՛ս նաև “Ինտեգրված պլանավորում”	and cultural problems, such as weakening of the social fabric, marginalization, unemployment and destruction of property by erosion. At EU level, a programme of Integrated Coastal Zone Management (ICZM) is being implemented. See also “Integrated planning”.
Ինտեգրված պլանավորում Ինտեգրված պլանավորումը (որը հակադրվում է ճյուղային ծրագրավորմանը) տարբեր մակարդակներում ծրագրավորման և ճյուղային ծրագրավորման ջանքերի միավորումը ներառող գործընթաց է, ինչը հնարավորություն է տալիս կայացնել ռազմավարական որոշումներ և ռեսուրսների և պարտավորությունների վերաբերյալ տալիս է ընդհանուր պատկերացում: Ինտեգրված պլանավորումը կենտրոնական դեր ունի ինստիտուցիոնալ նախաձեռնությունների և ռեսուրսների բաշխման համար: Ինտեգրված (կամ բազմակողմանի) ծրագրավորման համատեքստում տնտեսական, սոցիալական, բնապահպանական և մշակութային գործոնները միասնաբան օգտագործվում են հողի և միջոցների օգտագործման հետ կապված որոշումներն ուղղորդելու կայուն տարածքային զարգացման ուղղությամբ:	Integrated planning Integrated planning (as opposed to sectoral planning) is a process involving the drawing together of level and sector specific planning efforts which permits strategic decision-making and provides a synoptic view of resources and commitments. Integrated planning acts as a focal point for institutional initiatives and resource allocation. In the context of integrated (or comprehensive) planning, economic, social, ecological and cultural factors are jointly used and combined to guide land- and facility-use decisions towards sustainable territorial development.
Հողերի կառավարում Հողերի կառավարումը հողային պաշարների օգտագործումը և զարգացումը կայուն ձևով կառավարելու գործընթացն է¹⁰:	Land management Land management can be defined as the process of managing the use and development of land resources in a sustainable way¹⁰.
Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողային պաշարներն օգտագործվում են	As land resources are used for a variety of purposes which interact and may compete

¹⁰ Տե՛ս նաև Վիքիպեդիա ազատ հանրագիտարան / Cf. Free Encyclopedia Wikipedia.

տարբեր նպատակներով, որոնք կարող են փոխազդել և մրցակցել, հողօգտագործումը պետք է ծրագրավորվի և կառավարվի ինտեգրված ձևով: Հողերի կառավարումը սերտորեն կապված է հողօգտագործման պլանավորման և ֆիզիկական պլանավորման հետ: Հողային ֆոնդի կառավարումը կարող է ներառել նաև հողային ֆոնդի հավաքման գործողություններ (հանրային իշխանությունների կողմից հողի գնում դրա հետագա օգտագործումը հեշտացնելու նպատակով, օրինակ, բնական միջավայրի պաշտպանության, կամ հատուկ նպատակներով զարգացման ծրագրերում հողերի ընդգրկումը, ինչպիսիք են, օրինակ, բնակավայրերի կամ ենթակառուցվածքների կառուցումը):	<i>with one another, all land uses should be planned and managed in an integrated manner. Land management is closely related to land-use planning and physical planning. Land management may also comprise the activity of land assembly (purchase of land by public authorities to facilitate future land uses such as the protection of natural areas or the development of land for specific purposes, such as housing or infrastructure).</i>
Լանդշաֆտ	Landscape
Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի համաձայն՝ լանդշաֆտը մարդու կողմից ընկալվող տարածք է, որի հատկությունները՝ բնական և/կամ մարդկային գործոնների ազդեցության կամ փոխազդեցության արդյունք են¹¹:	According to the European Landscape convention, “landscape means an area, as perceived by people, whose character is the result of the action and interaction of natural and/or human factors”¹¹.
Ուղենիշային սկզբունքների¹² համաձայն՝ “Եվրոպան բաղկացած է բազմաթիվ լանդշաֆտներից: Դրանք Եվրոպական ժառանգության կարևոր մասն են կազմում և վկայում են իրեն շրջապատող բնական և մարդածին միջավայրերի հետ մարդու անցյալ և ներկա հարաբերությունների մասին: Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և արդյունաբերության մեջ արտադրության տեխնոլոգիաների զարգացումը, ինչպես նաև քաղաքաշինության, տրանսպորտի, այլ ենթակառուցվածքների բնագավառներում,	<i>The Guiding Principles¹² indicate that “Europe is composed of a plurality of landscapes. They are a significant part of European heritage and a witness of the past and present relationships between man and his natural and built environments. Developments in production techniques in agriculture, forestry and industry and changes in town planning, transport, other types of infrastructure, tourism and leisure time behaviour are accelerating the transformation of European landscapes</i>

¹¹ Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիան ուժի մեջ է մտել 2004 թվականին, Եվրոպայի Խորհուրդ / Cf. the European Landscape Convention has entered into force in 2004. Council of Europe.

¹² Եվրոպական մայրցամաքի կայուն տարածական զարգացման ուղենիշային սկզբունքներ, CEMAT 2000 / Guiding Principles for the Sustainable Spatial Development of the European continent. CEMAT. 2000

գրոսաշրջության և ժամանցի վարքագծերի փոփոխությունները արագացնում են եվրոպական լանդշաֆտների փոխակերպումը և կարող են բացասական ազդեցություն ունենալ դրանց որակի և օգտագործման վրա: Սա վերաբերում է ոչ միայն արժեքավոր բնական լանդշաֆտներին, այլ նաև մշակութային լանդշաֆտների բոլոր տեսակներին, հատկապես նրանց, որոնք քաղաքային միջավայրի կարևոր բաղկացուցիչ մասն են”:	<i>and can also have a negative impact on their quality and use. This not only concerns valuable natural landscapes, but also applies generally to all types of cultural landscapes, especially those that are an essential component of the urban environment.”</i>
Լանդշաֆտի պլանավորում	Landscape planning
Լանդշաֆտի պլանավորումը հանրային և մասնավոր մասնագետներին ներգրավող գործունեություն է, որի նպատակը տարբեր մասշտաբներով լանդշաֆտների ստեղծումը, պահպանումը, բարելավումը և վերականգնումն է՝ սկսած կանաչ տարածքներից և հանրային այգիներից մինչև լայն տարածքներ, ինչպիսիք են անտառները, մեծ վայրի տարածքները, ինչպես նաև դեգրադացված լանդշաֆտների՝ հանքերի կամ աղբանոցների վերափոխումն է:	Landscape planning is an activity involving both public and private professionals, aiming at the creation, conservation, enhancement and restoration of landscapes at various scales, from greenways and public parks to large areas, such as forests, large wilderness areas and reclamation of degraded landscapes such as mines or landfills.
Լանդշաֆտի պլանավորումը ներառում է մի շարք հմտություններ, ինչպիսիք են օրինակ լանդշաֆտի ճարտարապետություն և ձևավորում, բնության պահպանություն, բույսերի իմացություն, էկոհամակարգեր, հողագիտություն, ջրագիտություն, մշակութային լանդշաֆտներ և այլն: Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի դրույթները կարևոր ուղեցույցեր են լանդշաֆտի ծրագրավորման բովանդակության և ընթացակարգի համար: Տե՛ս նաև “Լանդշաֆտ”, “Լանդշաֆտային քաղաքականություն”:	<i>Landscape planning encompasses a variety of skills, such as landscape architecture and design, nature conservation, knowledge of plants, ecosystems, soil science, hydrology, cultural landscapes, etc. The provisions of the European Landscape Convention are important guidelines for the content and procedures of landscape planning. See also “Landscape”, “Landscape policies”.</i>
Լանդշաֆտային քաղաքականություն	Landscape policies
Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի համաձայն՝ “լանդշաֆտային	According to the European Landscape Convention, “landscape policy means an

քաղաքականությունը իրավասու իշխանությունների կողմից առաջարկվող ընդհանուր սկզբունքների, ռազմավարությունների և գերակա ուղղությունների մի ամբողջություն է լանդշաֆտի պահպանությանը, կառավարմանն ու պլանավորմանը նպատակաուղղված որոշակի միջոցառումների իրականացման նպատակով”:	expression by the competent public authorities of general principles, strategies and guidelines that permit the taking of specific measures aims at the protection, management and planning of landscapes”.
<i>Տվյալ ընդհանուր բնորոշման ներքո կարելի է առանձնացնել լանդշաֆտային քաղաքականության տարբեր տեսակներ.</i> - <i>Ըստ Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի՝</i> - <i>“Լանդշաֆտի պահպանությունը դրա էական կամ առանձնահատուկ հատկանիշների պահպանությանն ուղղված գործունեություն է՝ պայմանավորված բնական և/կամ մարդկային գործունեության արդյունք հանդիսացող ժառանգության արժեքավորմամբ,</i> - <i>լանդշաֆտի կառավարումը կայուն զարգացման հեռանկարներն ապահովող և սոցիալական, տնտեսական և այլ միջավայրային գործընթացներով պայմանավորված լանդշաֆտի վրա ազդող փոփոխությունների ներդաշնակեցմանն ու կարգավորմանն ուղղված հետևողական գործունեություն,</i> - <i>լանդշաֆտի պլանավորումը լանդշաֆտի զարգացման, վերականգնման կամ կազմավորման (ստեղծման) հեռանկարները կանխորոշող գործունեություն է”:</i> - <i>Ուղենիշային սկզբունքների համաձայն՝ “Տարածական զարգացման քաղաքականությունը համապատասխան միջոցների ընդունմամբ կարող է նպաստել լանդշաֆտների պահպանությանը, կառավարմանն ու զարգացմանը,</i>	<i>Under this general heading, various types of landscape policies can be identified:</i> - <i>the European Landscape convention indicates that:</i> - <i>“Landscape protection means actions to conserve and maintain the significant or characteristic features of a landscape, justified by its heritage value derived from its natural configuration and/or from human activity;</i> - <i>landscape management means action, from a perspective of sustainable development, to ensure the regular upkeep of a landscape, so as to guide and harmonise changes which are brought about by social, economic and environmental processes;</i> - <i>landscape planning means strong forward-looking action to enhance, restore or create landscapes.”</i> - <i>the Guiding Principles indicate that “Spatial development policy can contribute to protecting, managing and enhancing landscapes by adopting appropriate measures, in particular by organising better interactions between various sectoral policies with regard to their territorial impacts”. Various types of measures are likely to contribute to this aim, such as: the integration of landscape</i>

մասնավորապես, իրենց տարածքային ազդեցության սահմաններում տարբեր ճյուղային քաղաքականությունների միջև փոխհարաբերությունների կատարելագործման միջոցով¹³։ Տարբեր միջոցներ կարող են նպաստել տվյալ նպատակի իրականացմանը, ինչպիսիք են, օրինակ, լանդշաֆտի զարգացման ինտեգրումը տարածական ծրագրավորման, ինչպես նաև ճյուղային քաղաքականության մեջ, լանդշաֆտների հետազոտություն և ընդհանուր գնահատում, ինտեգրված քաղաքականության իրականացում, միջազգային ծրագրերում, արտասահմանյան և վերազգային համագործակցության բնագավառում լանդշաֆտի զարգացման և պաշտպանություն հարցի քննարկում, լանդշաֆտների արժեքի մասին մարդկանց, մասնավոր կազմակերպությունների և տարածքային իշխանությունների իրազեկվածության բարձրացում, լանդշաֆտի զարգացման ինտեգրում ուսուցման ծրագրերում։	<i>development into spatial planning as well as into sectoral policies, the examination and general assessment of landscapes, the implementation of integrated policies, the consideration of landscape development and protection in international programmes, in cross-border and transnational cooperation, the strengthening of awareness of people, private organisations and territorial authorities of the value of landscapes, the stronger integration of landscape development into training programmes.</i>
Հողաշինություն (հողօգտագործման հատակագծում), գոտևորում	Land-use planning, zoning
Հողաշինությունը (հողօգտագործման պլանավորման) տարբեր բնագավառներ ընդգրկող հանրային քաղաքականության ճյուղ է, որոնք նպատակ ունեն արդյունավետ եղանակով կանոնակարգել և կարգավորել հողօգտագործումը¹³։ Դա նշանակում է հողի, ռեսուրսների, միջոցների և ծառայությունների գիտական, գեղագիտական և կարգավորված դասավորություն՝ քաղաքային և գյուղական համայնքների ֆիզիկական, տնտեսական, սոցիալական և էկոլոգիական արդյունավետությունը, առողջությունը և բարեկեցությունը ապահովելու նպատակով։	Land-use planning is a branch of public policy which encompasses various disciplines seeking to order and regulate the use of land in an efficient way¹³. It means the scientific, aesthetic and orderly disposition of land, resources, facilities and services with a view to securing the physical, economic, social and environmental efficiency, health and well-being of urban and rural communities.

¹³ Եվրոպական մայրցամաքի կայուն տարածական զարգացման ուղենիշային սկզբունքներ, CEMAT 2000 / Guiding Principles for the Sustainable Spatial Development of the European continent. CEMAT. 2000

Գոյություն ունի հողաշինության (հողօգտագործման պլանավորման) կարևոր բաղկացուցիչ մասն է: Այն սովորաբար կարգավորում է այն գործողությունները, որոնք ընդունելի են կոնկրետ տեղամասերում (օրինակ՝ բաց տարածքներ, բնակելի, գյուղատնտեսական, առևտրային կամ արդյունաբերական), տվյալ գործողությունների իրագործման ինտենսիվությունը, կառույցների կողմից զբաղեցվող տարածքների մեծությունը և այլն:	<i>Zoning is an important component of land-use planning. It commonly includes regulation of the kinds of activities which will be acceptable on particular lots (such as open spaces, residential, agricultural, commercial or industrial), the densities at which those activities can be performed, the amount of space structures may occupy, etc.</i>
Ագլոմերացիոն շրջան / Ագլոմերացիոն տարածք	Metropolitan region / Metropolitan area
Ագլոմերացիոն տարածքը բնակավայրերի համակարգ է, որը բաղկացած է ընդարձակ քաղաքից (իր արվարձաններով հանդերձ) և դրա ազդեցության հարակից գոտիներից, որը կարող է ներառել տարբեր չափերի բազմաթիվ քաղաքային կենտրոններ¹⁴: Հարակից գոտիները սովորաբար կոչվում են քաղաքամերձ կամ տեղափոխման գոտի: Միջակա բաց տարածքները նույնպես կազմում են ագլոմերացիոն տարածքի մի մասը:	A metropolitan area is a settlement system consisting of a large city (together with its suburbs) and its adjacent zones of influence, which may comprise various urban centres of different sizes¹⁴. These adjacent zones are generally the so-called commuter belt. Interstitial open spaces also form part of the metropolitan area.
Ագլոմերացիոն շրջանը այն շրջանն է (վարչական կամ աշխարհագրական իմաստով), որին գերիշխում է մեծ ագլոմերացիոն տարածք: Լայն իմաստով ագլոմերացիոն շրջանն ավելի ընդարձակ է, քան ագլոմերացիոն տարածքը, սակայն, ըստ որոշ մեկնաբանությունների, ագլոմերացիոն շրջանը և ագլոմերացիոն տարածքն ունեն նմանատիպ նշանակություն:	A metropolitan region is generally considered as a region (in the administrative or geographical sense) dominated by an important metropolitan area. In spatial terms, its extension is therefore wider than that of the metropolitan area, but in some interpretations the two concepts of metropolitan area and metropolitan region have similar meanings.
Բնական վտանգ / բնական վնաս / բնական աղետ	Natural risk / Natural hazard / Natural disaster
Մի շարք բնական երևույթներ կյանքի, կառուցված և բնական միջավայրերի համար ռիսկ են ներկայացնում, քանի որ դրանք վտանգում են մարդկային և կենդանական	Numerous natural events represent a risk for the living, built and natural environment as they threaten human and animal life and may cause serious

¹⁴ Տե՛ս նույն տեղում / Ibid

կյանքը և կարող են էական վնասներ պատճառել բնակավայրերին: Այդ պատճառով, մարդկային բնակավայրերը կանխարգելիչ միջոցների շնորհիվ պետք է որքան հնարավոր է պաշտպանված լինեն բնական ռիսկերից:	damages to settlements. For that reason, human settlements have to be protected, as far as possible, against natural risks through adapted prevention measures.
Ըստ իրենց ուժգնության, ազդեցության և վնասների՝ այս բնական երևույթները (կամ վնասները) կարող են համարվել բնական աղետներ: Ահա թե ինչու բնական աղետը բնական վնասի և մարդկային գործողությունների միացության հետևանքն է ¹⁵ :	According to their intensity, impacts and damages, these natural events (or hazards) may be considered as natural disasters. A natural disaster is therefore the consequence of the combination of a natural hazard and human activities ¹⁵ .
Հիմնական բնական վնասներն են ձնակույտը, երաշտը, երկրաշարժը, ջրհեղեղը, սողանքները, հրաբխային ժայթքումները, ցունամիները, պտտահողմերը, ցիկլոնները, հրդեհները և այլն:	Main natural hazards are: avalanches, drought, earthquakes, floods, land slides, volcanic eruptions, tsunamis, tornados, cyclones, wildfires, etc.
Վերջին տասնամյակներում գրանցվել է բնական աղետների դեպքերի, ուժգնության և ինտենսիվության էական աճ: Հնարավոր է ռիսկի զգալի կրճատում՝ աղետի կանխման և մեղմացման ջանքերի կիրառման շնորհիվ, որոնք հիմնված են, օրինակ, կանխատեսման ժամանակակից տեխնոլոգիաների՝ վաղ նախազգուշացման համակարգերի զարգացման, ինչպես նաև հողօգտագործման և բնակավայրերի նախագծման և ավելի ապահով շինարարական փորձի բարելավման վրա:	Recent decades witnessed a significant increase in the occurrence, severity and intensity of natural disasters. There is considerable scope for the reduction of risk through the application of disaster prevention and mitigation efforts based, for instance, on modern forecasting technology in terms of the development of early warning systems as well as improved land-use and settlement planning and safer building practices.
Մասնակցային պլանավորում	Participatory planning
Մասնակցային պլանավորումը ը գործունեության հատուկ տեսակ է, որն իրականացվում է հանրային իշխանությունների կողմից հիմնականում տեղական մակարդակով և քաղաքացիներին հնարավորություն է տալիս մասնակցություն ունենալ պլանավորման գործընթացին:	Participatory planning is a specific form of planning activities practiced by public authorities mainly at local level which makes possible for the citizens to play a part in the planning process.
<i>Մասնակցային պլանավորման</i>	<i>The most common form of participatory</i>

¹⁵ Տե՛ս նույն տեղում / Ibid

ամենատարածված տեսակը ծրագրերի վերաբերյալ հանրային լուսմներն են՝ մինչև դրանց պաշտոնական հաստատումը: Գոյություն ունեն նաև մասնակցային պլանավորման ավելի իրական և սրեղծագործական ձևեր, ինչպիսիք են սեմինարները, հանրային քննարկումները և այլն: Համացանցը գնալով ավելի կարևոր դեր է խաղում մասնակցային պլանավորման գործում՝ ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածման կամ ինտերակտիվ հաղորդակցության համակարգերի տեսանկյունից:	<i>planning is consultation of the population on projects before their formal approval. More substantial and creative forms of public participation are also in use, such as workshops, public debates, etc. Internet plays an ever growing part in participatory planning, either for the dissemination of information on planning projects or in the context of interactive communication systems.</i>
Համագործակցություն	Partnership / co-operation
Տարածքային զարգացման քաղաքականության կառավարումը վերջին տասնամյակներում զգալիորեն փոփոխվել է, որպեսզի ավելի արդյունավետ կերպով դիմակայի նոր մարտահրավերներին:	The governance of territorial development policies has significantly changed over the past decades in order to face more efficiently the new challenges.
Անցյալում տարածքային կառավարումը մեծամասամբ հիերարխիկ բնույթի էր, հաճախ վերևից ներքև հարաբերությունների համատեքստում, սակայն մի շարք գործոններ հանգեցրել են ավելի ճկուն մոտեցումների, որոնցում համագործակցությունն ու գործընկերությունն ավելի կարևոր դեր են խաղում, մասնավորապես, հետևյալ ոլորտներում. - տարածքային նախագծման և տարածքային ազդեցությամբ ճյուղային քաղաքականության համար պատասխանատու հանրային կառավարման ուղղահայաց և հորիզոնական հարաբերություններ, որոնք մասնակիորեն փոխարինել են ավտորիտար հարաբերություններին և հնարավոր են դարձրել հանրային քաղաքականությունների կապակցումը՝ նպատակ ունենալով առավելագույնս ամրացնել տարածքային ամբողջականությունն ու կայուն	While, in the past, territorial governance was mainly of hierarchical nature, often in the context of top-down relations, a number of factors have led to the adoption of more flexible approaches in which cooperation and partnerships play a more important part, especially in the following fields: – vertical and horizontal relationships in public administrations responsible for both territorial planning and sectoral policies with territorial impacts, partly substituted to authoritarian relationships and enabling the progressive coherence of public policies with the aim of producing added value for territorial cohesion and sustainability; – relationships between public administrations and bodies representing the civil society with the aim to strengthen the adhesion of civil society to spatial planning objectives, to harmonise public

զարգացումը, - հանրային կառավարման մարմինների և քաղաքացիական հասարակությունը ներկայացնող մարմինների միջև հարաբերություններ, որի նպատակն է ուժեղացնել քաղաքացիական հասարակության միավորումը տարածական հատակագծման նպատակների հետ, համապատասխանեցնել պետական քաղաքականությունը մասնավոր որոշումների հետ՝ մասնավորապես ներդրումների ոլորտում, և հարթել շահերի հնարավոր բախումները, - գյուղական և քաղաքային շրջանների միջև հարաբերություններ, որի նպատակն է քաղաքային միավորների կողմից մատուցվող ծառայությունների միջոցով ուժեղացնել գյուղական շրջանների զարգացումը, մեղմել ագլոմերացիոն տարածքների կողմից ճնշումը շրջապատող գյուղական տարածքների վրա և գյուղ-քաղաք հարաբերությունների տարբեր գործառույթների կայուն զարգացման ապահովումը, - անդրսահմանային և վերազգային հարաբերություններ, որոնց նպատակն է ազգային սահմաններից այն կողմ տարածքային զարգացման քաղաքականության ներդաշնակեցումը:	policies with private decisions, in particular in the field of investments, and to smooth potential conflicts of interest; – relationships between urban and rural areas with the aim to strengthen the development of rural areas through the services provided by urban entities, to alleviate the pressure that metropolitan areas exert on surrounding rural areas and to provide the various functions of urban-rural relations with a sustainable character; – cross-border and transnational relationships aiming at harmonising territorial development policies across national borders.
Սահմանային տարածքներ	Peripheral regions
Սահմանային տարածքները որևէ պետությունում կամ Եվրոպական մայրցամաքում քաղաքային գլխավոր և տնտեսական կենտրոններից հեռու գտնվող տարածքներ են: Սահմանային տարածքները սովորաբար ցածր տնտեսական ներուժ և հասանելիություն ունեն, քան առավել կենտրոնական տարածքները: Տարածքային զարգացման քաղաքականությունը հատուկ	Peripheral regions are areas located far away from the main urban and economic centres, either within a State or on the European continent. Peripheral regions generally have lower economic potential and accessibility than the more central ones. Regional development policies pay a specific attention to peripheral regions.

ուշադրություն է դարձնում սահմանային տարածքներին:	
Արվարձանային տարածքներ	Peri-urban areas
Արվարձանային տարածքներն այնպիսի տարածքներ են, որոնք գտնվում են խիստ գյուղականից քաղաքային փոխակերպման գործընթացում: Այս տարածքները հաճախ ներառում են գյուղական-քաղաքային տարրեր և կարող են ի վերջո զարգանալ և վերափոխվել ամբողջապես քաղաքայինի: Արվարձանային տարածքներում բնակչությունը կարևոր դերակատարում ունի. դրանք բնակեցված միջավայրեր են:	Peri- urban areas are areas that are in some form of transition from strictly rural to urban. These areas often form the immediate urban-rural interface and may eventually evolve into being fully urban. Peri- urban areas are places where people are key components: they are lived-in environments.
Արվարձանային տարածքների մեծամասնությունը գտնվում է իրական (հաստատված) քաղաքային տարածքների եզրին, բայց դրանք կարող են լինել նաև գյուղական լանդշաֆտներում ձևավորված բնակավայրերի խմբեր: Արվարձանային տարածքները որպես կանոն հանդիսանում են երկրորդային ուրբանիզացիայի կամ քաղաքային տարածման գործընթացի արդյունք: <i>Տե՛ս նաև “Երկրորդային ուրբանիզացիա”</i>	<i>The majority of peri-urban areas are on the fringe of established urban areas, but they may also be clusters of residential development within rurallandscapes. Peri-urban areas are most frequently an output of the process of suburbanisation or urban sprawl. See also “Suburbanisation”.</i>
Ֆիզիկական պլանավորում	Physical planning
Ֆիզիկական պլանավորումը անմիջականորեն վերաբերում է հողօգտագործման պլանավորմանը , քաղաքային միջավայրի ձևավորմանը, տրանսպորտի պլանավորմանը , լանդշաֆտների պլանավորմանը , շինարարական ծրագրերին և այլն: Այն վերաբերում է գործողությունների, որոնք անմիջականորեն ազդում են քաղաքների և բնակավայրերի ֆիզիկական կառուցվածքի և շրջակա միջավայրի վրա և պլանավորում դրանք (ի տարբերություն տնտեսական կամ սոցիալական պլանավորման գործողությունների):	Physical planning is strongly related to land-use planning, urban design, transport planning, landscape planning, building plans, etc. It addresses activities which immediately affect and programme the physical structure and environment of cities and neighbourhoods (as opposed to economic planning or social planning activities).

Բազմակենտրոն տարածական համակարգ/բազմակենտրոն տարածական զարգացում	Polycentric spatial structure / Polycentric spatial development
Բազմակենտրոն տարածական համակարգը վերաբերում է բնակեցման համակարգի ձևաբանությանը: Այն ենթադրում է բազմաթիվ նույնանման չափերի քաղաքային ագլոմերացիաներ, որոնք գոյություն ունեն քաղաքային հիերարխիայի տարբեր մակարդակներում, ի տարբերություն այն դեպքերի, երբ յուրաքանչյուր մակարդակում գերիշխում է մեկ մեծ քաղաքային կենտրոն և նույնիսկ բացառում է միջանկյալ մակարդակների առկայությունը: Բազմակենտրոն տարածական համակարգի և զարգացման հիմնական սկզբունքը կարող է կիրառվել տարբեր աշխարհագրական մասշտաբներով՝ եվրոպականից մինչև տարածաշրջանային:	A polycentric spatial structure refers to the morphology of the settlement system. It assumes that a plurality of urban agglomerations of similar size exist at the various levels of the urban hierarchy, as opposed to situations where a single large urban centre dominates each level and even eliminates the presence of intermediary levels. The principle of polycentric spatial structure and development can be applied at the various geographical scales, from the European to the regional one.
<i>Բազմակենտրոն տարածական զարգացման հասկացությունը եվրոպայում տարածական զարգացման քաղաքականության վերաբերյալ քննարկման առարկա դարձավ եվրոպական տարածական զարգացման հեռանկարների (ԵՏՀ) կողմից և ներառվեց Ուղենիշային սկզբունքներում: Բնակեցման համակարգերի բազմակենտրոնությունը նպաստում է կայուն տարածքային զարգացմանը, ինչպես նաև տարածքային անհավասարակշռության կրճատմանը:</i>	<i>The concept of polycentric spatial development was first introduced into the European debate on spatial development policies by the European Spatial Development Perspective (ESDP) and was taken over into the Guiding Principles. Polycentricity of settlement systems is considered to favour sustainable territorial development as well as the reduction of territorial imbalances.</i>
<i>Բազմակենտրոնության կարևոր հատկանիշ է այն, որ այն կիրառելի է տարբեր մասշտաբներում.</i> <i>- կիրառվելով եվրոպական մասշտաբով, այն պետք է հնարավոր դարձնի գլոբալ տնտեսական ինտեգրացիայի այլընտրանքային գոտիների ի հայտ գալը, որոնք կարող են հակազդի Լոնդոն-Փարիզ-Միլան-Մյունխեն-Համբուրգ, այսպես կոչված, հնգանկյան բևեռացնող ազդեցությանը,</i>	<i>An important aspect of polycentricity is that it is valid at different scales:</i> <i>– applied at European scale, it should enable the emergence of alternative global economic integration zones likely to counteract the polarisation effects of the so-called pentagon London-Paris-Milan-Munich-Hamburg;</i> <i>– at intermediate scale (for instance at national scale or in transnational areas), polycentricity should lead to a balanced</i>

- միջանկյալ մասշտաբում (օրինակ ազգային մասշտաբով կամ վերազգային շրջաններում), բազմակենտրոնությունը պետք է հանգեցնի հավասարակշռված բնակեցման համակարգի, որտեղ զարգացումը օգտակար կլինի տարբեր չափերի ագլոմերացիոն տարածքների և ոչ միայն պետությունների մայրաքաղաքների համար, - տարածաշրջանային մակարդակում բազմակենտրոնությունը պետք է ապահովի, որ աճն ու զարգացումը օգտակար լինեն նաև միջին և փոքր քաղաքներին՝ տարածաշրջանի առավել գյուղական մասերի կենսունակությունը պահպանելու և բարձրացնելու համար:	<i>settlement system with growth benefiting to several metropolitan areas of various size and not only to the national capital cities;</i> <i>– at regional level, polycentricity has to ensure that growth and development benefits also to medium-sized and smaller towns to maintain and increase vitality in the more rural parts of the region.</i>
CEMAT Բանաձև N 1-ը (2006) “Բազմակենտրոն զարգացում. մրցակցության խրախուսում, կապակցվածության բարելավում” սահմանում է, որ բազմակենտրոնությունը իրենից ներկայացնում է մեկ հովանոցային թեմա, որն իր մեջ ներառում է տարբեր հայեցակարգային բանավեճեր: Բազմակենտրոն զարգացմանը նպաստելու համար, տարածական զարգացման քաղաքականությունը պետք է. - Նպաստի կառավարական մակարդակների միջև ֆունկցիոնալ փոխլրացմանը, - Հաշվի առնի մասամբ համընկնող բազմակենտրոն ցանցերի առկայությունը, - Նպաստի տարբեր մակարդակներում միջնորդային ինտեգրող քաղաքականությանը, - Ուժեղացնի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը, - Հաշվի առնի մեխանիզմների առկայությունը, որոնք կարող են ներառել առկա	CEMAT Resolution N°1 (2006) on “Polycentric development: promoting competitiveness, enhancing cohesion” indicates that polycentricity is an umbrella theme that encompass different conceptual debates. In order to favour polycentric development, spatial development policies should: - Promote functional complementarity between government levels; - Take into consideration the existence of overlapping polycentric networks; - Favour an integrative cross-sectorial multi-scale policy; - Strengthen the institutional capacity-building; - Take into consideration the existence of soft instruments that may comprise more effective use of available infrastructural organisational and human resources; - Target growth potentials, understanding cities as economic

ենթակառուցվածքային, կազմակերպչական և մարդկային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման ձևեր - Թիրախավորի զարգացման ներուժը, քաղաքները դիտել որպես տնտեսական հանգույցներ, որոնք կարևոր են էնդոգեն տարածքային զարգացման համար, - Լինի հարմարեցված վարչական և կազմակերպական կառուցվածքներին կարողություններով, որպեսզի խրախուսվեն տարբեր տարածաշրջանային ռեսուրսների արդար բաշխումը և վերաբաշխումը, ինչպես նաև վերացնի տարածական որոշումների բացասական ազդեցությունը և բեռը, որոնք հաճախ անցնում են տեղական վարչական սահմանները:	drivers, essential to endogenous regional development; - Promote adapted administrative and organisational structures with competence to support equitable sharing and redistribution of diverse regional resources as well as to absorb the burdens and negative impacts of spatial decisions that often traverse local administrative borders.
Հանրային և մասնավոր համագործակցություն	Public-private partnership
Հանրային և մասնավոր համագործակցությունը ֆորմալ համաձայնագիր է (հիմնականում պայմանագրի տեսքով), որով պետական մարմինը (կառավարական, տարածաշրջանային կամ տեղական իշխանության) և մեկ կամ ավելի մասնավոր անձը(ինք) որոշում են համագործակցել ակտիվների շինարարության կամ ծառայությունների մատուցման համար:	A public-private partnership is a formal agreement (generally a contract) by which a public body (government, regional or local authority) and one or more private entity (ies) decide to cooperate for building assets or delivering services.
Մասնավոր անձանց ընտրությունը սովորաբար իրականացվում է մրցույթի միջոցով: Հանրային մարմնի դերն այն է, որ գործունեության ընթացքում պաշտպանվի հանրային շահը: Այդ նպատակով պայմանագիրը մատուցվող ծառայությունների, ներդրվող կապիտալի, անվտանգության կանոնների պահպանման	The choice of private entities is generally made on the basis of competition. The role of the public entity is to ensure that the public interests are respected in the operation. For this purpose, the contract stipulates precisely the tasks to be fulfilled by the private entities, in terms of services to be delivered, of capital to be invested,

և այլնի առումով հստակ պահանջներ է դնում մասնավոր անձանց առջև: Մասնավոր անձինք հիմնականում մասնակցում են սեփական միջոցների ներգրավմամբ և/կամ ծառայությունների մատուցմամբ: Առկա են հանրային և մասնավոր համագործակցության տարբեր տեսակներ (օրինակ կոնցեսիա, BOT՝ կառուցել-շահագործել-օտարել և այլն): Վերջին տասնամյակներում գերակշռող ներդրերալ տնտեսական համակարգերի համալրեքստում Եվրոպայում բազմաթիվ հանրային և մասնավոր գործընկերություններ են ստեղծվել:	<i>of security norms to be respected, etc. Private entities generally participate in bringing equity and / or in operating services. There are many different forms of public-private partnerships (for instance concessions, BOT, etc.). In the context of the neo-liberal economic systems which prevailed during the past decades, numerous public-private partnerships were created throughout Europe.</i>
Հանրային ծառայություններ	Public services
Հանրային ծառայությունները ընդհանուր հասկացություն է, որը բնորոշում է ծառայություններ, որոնք (ուղղակիորեն կամ անուղղակիորեն) մատուցվում են քաղաքացիներին պետական մարմինների կողմից: Հանրային ծառայությունները մատուցվում են տարբեր ոլորտներում, ինչպիսիք են հանրային տրանսպորտը, փոստի հավաքումն ու առաքումը, առողջապահությունը, կրթությունը, հեռահաղորդակցությունը և այլն¹⁶:	“Public services” is a generic term to designate services provided (directly or indirectly) by public authorities to citizens. Public services are delivered in a variety of fields, such as public transport, mail distribution and collection, health care, education, telecommunications, etc.¹⁶
Հանրային ծառայությունները հիմնվում են հավասարության (բոլորի համար հավասար մատչելիություն) և հասանելիության ապահովման ողջամիտ պայմանների (հանրային ծառայությունների մեծամասնությունը սուբսիդավորվում են, քանի որ շահութաբեր չեն): Վերջին տասնամյակներում Եվրոպայում զարգացում ապրած ներդրերալ համալրեքստում, բազմաթիվ հանրային ծառայություններ մասնավորեցվել են և մասամբ կամ ամբողջությամբ վերափոխվել մասնավոր ծառայությունների, որը ուղեկցվել է գների բարձրացմամբ և նույն տարածքում	<i>The principles upon which public services are based are those of equality (equal access to everybody) and reasonable conditions of access (most public services are subsidized because they are not profitable). In the context of the neo-liberal which has developed throughout Europe over the past decades, numerous public services were privatised and have been partly or totally transformed into private services, with increasing prices and less equal conditions of access on the territory. A sustained debate has resulted from this evolution. In the EU</i>

¹⁶ Տե՛ս նույն տեղում / Ibid

մաքչելիության պայմանների անհավասարությանը: Այս զարգացումը առաջացրել է շարունակական բանավեճ: ԵՄ տերմինաբանության մեջ հանրային ծառայությունները կոչվում են հանրային նշանակության ծառայություններ:	<i>terminology, public services are called services of general interest.</i>
Տարածաշրջան	Region
Տարածաշրջանի հասկացությունը բազմակողմ է, որը կարող է նշանակել. - աշխարհագրական տարածք, որն ունի ուժեղ բնական ինքնություն և ընդգծված միատարրություն (օրինակ՝ լեռնային կամ ափամերձ տարածաշրջան), - տարածք՝ էական տնտեսական ինքնությամբ կամ միատարրությամբ (տարածք, որը կենտրոնացված է ագլոմերացիոն տարածքի շուրջ, տարածք, որը բնորոշվում է առանձնահատուկ գործունեությամբ, ինչպիսին արտադրական արդյունաբերությունն է), - քաղաքական-վարչական միավոր, որը կառավարվում է ընտրված տարածաշրջանային խորհրդի կողմից կամ ղեկավարվում է ազգային իշխանության ներկայացուցիչների կողմից, - տարածք, որն ունի յուրահատուկ մշակութային ինքնություն և պատմություն (տարածաշրջանային լեզու և մշակույթ, և այլն):	The concept of region is a multi- dimensional one which may refer to: – a geographical area which has a strong natural identity and homogeneity (for instance mountain or coastal region); – a territory with a significant economic identity or homogeneity (for instance a space which is polarised around a metropolitan area, an area characterises by specific activities such as manufacturing industries); – a political-administrative unit governed by an elected regional assembly or administered by representatives of the national administration; – a territory with a particular cultural identity and history (regional language and culture, etc.).
Տարածաշրջանային կամ շրջանային զարգացում/Տարած պլանավորում	Regional development / Regional planning
Տարածքային զարգացում է համարվում որևէ տարածաշրջանում բարեկեցության մակարդակի բարձրացումը և գործունեությունը, որն ուղղված է այդ բարձրացմանը: Տարածքային զարգացումը խիստ տնտեսական կողմնորոշում ունի, չնայած որ այն երբեմն կարող է ներառել սոցիալական և մշակութային տարրեր:	Regional development is considered as both the increase of wealth in a region and the activities leading to that increase. Regional development has a strong economic orientation, although it may also include social and cultural considerations.
Տարածաշրջանային պլանավորումը կամ	Regional planning is a branch of land-use

Շրջանային հատակագծումը հողօգտագործման ծրագրավորման ճյուղ է, որը վերաբերում է ենթակառուցվածքների կազմակերպմանը, բնակեցման աճին և տարածաշրջանի մասշտաբով չկառուցապատված շրջաններին¹⁷։ Տարածքային հատակագծումը հիմնականում նպաստում է տարածքային զարգացմանը, բայց կարող է ունենալ այլ լրացուցիչ նպատակներ, ինչպիսին է, օրինակ, շրջակա միջավայրի կայուն զարգացումը։ Շրջանային հատակագծումը կամ պլանավորումը հիմնականում հասկացվում է որպես տարածաշրջանային մասշտաբով տարածական պլանավորման գործունեություն։	planning dealing with the organisation of infrastructure, settlement growth and non-built areas at the scale of a region¹⁷. Regional planning generally contributes to regional development, but may also fulfil additional objectives, such as sustainability in the environmental sense. Regional planning is generally understood as the spatial planning activities at regional scale.
Գետի ավազանի կառավարում	River basin management
Գետի ավազանի կառավարումը վերաբերում է գետի ավազանի ջրային ռեսուրսների կառավարմանը, ներառյալ գլխավոր գետը, դրա բոլոր վտակները, ինչպես նաև ստորգետնյա ջրերը։ Ջրի կառավարումը ներառում է հեղեղների կանխարգելում, այնպիսի գործունեության վերահսկում, որն ազդում է ջրային ռեսուրսների մակարդակի և որակի վրա (ջրի արդյունահանում, կետային և ցրված աղտոտում) և բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են ավազանի հիդրոլոգիական համակարգի էկոլոգիական հավասարակշռությունը պահպանելու համար։	River basin management refers to the management of the water resources in a river basin, comprising the main river, all its tributaries as well as ground water. Water management activities include the prevention of flooding, the control of activities which influence the level and quality of water resources (water extraction, punctual and diffuse pollution) and all measures necessary to maintain the ecological balance related to the hydrologic system of the basin.
Գյուղական / ոչ քաղաքային տարածքներ	Rural area / Countryside
Գյուղական տարածքները նոսր բնակեցված տարածքներ են, որոնք չունեն մեծ քաղաքներ կամ բնակավայրեր։ Գյուղական տարածքները վերաբերում են որոշակի տեսակի լանդշաֆտների և հողօգտագործման, որտեղ գյուղատնտեսությունը և բնական միջավայրը	Rural areas are sparsely settled areas without significant large city or town. The countryside refers to certain forms of landscapes and land uses where agriculture and natural areas play an important part.

¹⁷ Տե՛ս նույն տեղում / Ibid

կարևոր տեղ են զբաղեցնում: Գյուղական տարածքների տնտեսական հիմքը ավելի ու ավելի բազմազան է: Չնայած գյուղատնտեսությունը դեռևս բազմաթիվ գյուղական տարածքներում կարևոր տեղ է զբաղեցնում, այնուամենայնիվ զարգացել են եկամտի այլ աղբյուրներ, ինչպիսիք են գյուղական տուրիզմը, փոքր ծավալների արդյունաբերությունը, բնակելի տնտեսությունները (թոշակառուների համար), վերականգնվող էներգիայի արտադրությունը և այլն: Բազմաթիվ գյուղական տարածքներ բազմաֆունկցիոնալ են, և դրանց մի մասը գտնվում է ագլոմերացիոն տարածքների և մեծ քաղաքների ազդեցության տակ՝ որպես տրանսպորտի և հեռահաղորդակցման բարելավման արդյունք: Տե՛ս նաև “գյուղական զարգացում” և “գյուղական զարգացման առանցք”	<i>Rural areas are more and more diverse, as far as their economic base is concerned. While agriculture still plays an important part in numerous rural areas, other sources of income have developed such as rural tourism, small-scale manufacturing activities, residential economy (location of retirees), production of renewable energy, etc. Many rural areas are multifunctional and a number of them are under the influence of metropolitan areas and large cities as a result of ever improved transport and communication facilities. See also “rural development” and “rural development pole”.</i>
Գյուղական զարգացում Գյուղական զարգացումը տարածքային զարգացման հատուկ տեսակ է: Այն ծագել է այն փաստից, որ արդյունաբերական և քաղաքային հասարակությունը, որը գերիշխում է Եվրոպայում ավելի քան մեկ դար, աճի և զարգացման տենդենցից դուրս է թողել բազմաթիվ գյուղական տարածքներ, մասնավորապես՝ առավել հեռավոր և արվարձանային շրջանները: Այդ պատճառով գյուղական զարգացումը Եվրոպական Պետությունների մեծամասնության համար տարածական զարգացման քաղաքականության առաջնահերթություն է դարձել:	Rural development Rural development is a specific aspect of territorial development. It originates in the fact that the industrial and urban society which has been prevailing in Europe for more than one century has left out from growth and development trends numerous rural areas, in particular the most remote and peripheral ones. Rural development has therefore become a priority of spatial development policies in most European States.
Վերջին տարիներին, սակայն, Եվրոպայում տեղի ունեցավ գյուղական տարածքների խիստ բազմազանեցում. նրանցից որոշներն սկսեցին օգտվել մեծ ագլոմերացիաներին մոտ գտնվելու հանգամանքից, մյուսները զբոսաշրջությունից և/կամ թոշակառուների	<i>In more recent years, a strong diversification of rural areas has however taken place in Europe, with some rural regions benefiting largely from the proximity of large agglomerations, others from tourism and/or from the settlement</i>

բնակեցումից, մինչդեռ որոշ գյուղական տարածքներ դեռևս բախվում են մեկուսացման և մարգինալացման խոչընդոտներին, որոնք հանգեցնում են բնակչության արտագաղթի: Արդյունքում, գյուղական զարգացման խնդիրները առավել բազմազան են դարձել և մեծամասամբ կախված են համապատասխան գյուղական շրջանի համալսարանից և դրանում առկա իրավիճակից: Դրանք ներառում են միջոցներ, ինչպիսիք են հասանելիության, բնակության պայմանների և շրջակա միջավայրի բարելավումը, մշակութային լանդշաֆտների, մշակութային և բնական ժառանգության պահպանումը, թեթև զբոսաշրջության խթանումը, փոքր և միջին քաղաքների, ինչպես նաև մեծ գյուղերի խրախուսումը՝ գործելու որպես իրենց շրջապատող գյուղերի համար ծառայությունների մատակարար, բարձր որակի տարածաշրջանային գյուղատնտեսական, անտառաբուծական և արհեստագործական արտադրանքի խթանումը՝ շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված արտադրության պրակտիկայի կիրառմամբ:	<i>of retirees, while a number of other rural areas are still facing constraints of remoteness and marginalisation leading to out-migration of the population. It results from this that the tasks related to rural development are rather diversified and largely depend upon the context and situation of the rural areas considered. They comprise measures such as the improvement of accessibility, of living conditions, of the environment, the conservation of cultural landscapes and of the cultural and natural heritage, the promotion of soft tourism, the encouragement of small and medium-sized towns as well as large villages to act as service suppliers for their rural hinterlands, the promotion of high-quality regional agricultural, forestry and craft products while adopting environmentally-friendly production practices.</i>
Գյուղական զարգացման առանցք	Rural development pole
Գյուղական զարգացման առանցքը բնակեցված, խիստ արտահայտված գյուղական շրջան է, որտեղ սոցիալական, տնտեսական և տարածքային զարգացումները տեղի են ունենում ինտեգրված և հեռանկարային զարգացման նախագծի շրջանակներում: Գյուղական առանցքն ագլոմերացիա չէ, այլ հանդիսանում է գյուղական տարածք, որն իր մեջ կարող է ընդգրկել մեկ կամ ավելի փոքր ավաններ:	A rural development pole is an inhabited, significantly rural area where the social, economic and territorial evolutions are led within the framework of an integrated and prospective development plan. A rural pole is not an agglomeration, but a rural territory as a whole, which may include one or more small towns.
Տարածքային զարգացման նախագիծը որոշում է արդյունքների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ	The territorial development plan determines the objectives of results in short, medium and long terms. It specifies

նպատակները: Այն մատնանշում է զարգացման ուղեցույցերը, թիրախային արդյունքներին հասնելու մարդկային և նյութական միջոցները: Քաղաքացիական հասարակությունը, հանրային և մասնավոր գործիչները պետք է մասնակից լինեն դրա զարգացմանը և գնահատմանը ¹⁸ :	the guidelines for development, the human and material means to achieve the results targeted. The civil society, public and private actors must be partner for its development and its assessment ¹⁸ .
Տարածական զարգացում, Տարածական զարգացման քաղաքականություն	Spatial development, Spatial development policy
Տարածական զարգացումը վերաբերում է տարածքների զարգացմանն իրենց բոլոր ծավալներով (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և ֆիզիկական):	Spatial development refers to the evolution of territories in all their dimensions (economic, social, environmental, physical).
<i>Տարածական զարգացման դիտարկումը (օրինակ՝ ESPON ծրագրի համալսարանում), տարածական զարգացման ուղղությունների և տարածական զարգացման կանխատեսման ուսումնասիրությունների վերլուծության իրականացումը գործունեության տեսակներ են, որոնք անհրաժեշտ են տարածական զարգացման քաղաքականության մշակման համար:</i>	<i>The observation of spatial development (for instance in the context of the ESPON programme), the realisation of analyses of spatial development trends and of foresight studies on spatial development are activities necessary for the preparation of spatial development policies.</i>
Տարածական զարգացման քաղաքականությունը համեմատաբար նոր հասկացություն է, որը առաջ է քաշվել 1990-ական թվականներից (երբ ընդունվեցին ԵՏՀՀ և Ուղենիշային սկզբունքները), որը նշանակում է քաղաքականություն, որը խթանում է տարածքի զարգացումը ընդհանուր սկզբունքներին համապատասխան: Հանրային տարբեր քաղաքականությունները (ճյուղային և ոչ ճյուղային) պետք է զուգամիտվեն Ուղենիշային սկզբունքներում և ԵՏՀՀ-ում նկարագրված գլխավոր սկզբունքներին հասնելու համար: <i>Տե՛ս նաև “տարածքային զարգացում” և</i>	“Spatial development policy” is a rather recent concept originating from the 1990s (when the ESDP and the Guiding Principles were adopted) which means a policy promoting the development of space in accordance with general principles. Various public policies (sectoral and non-sectoral) should converge for the achievement of these general principles described in the Guiding Principles and in the ESDP. <i>See also: “Territorial development”, “Sustainable spatial development”.</i>

¹⁸ Սահմանումն առաջարկվել է Գյուղականություն-շրջակա միջավայր-զարգացում (RED) միջազգային ասոցիացիայի կողմից / Definition proposed by the international association Rurality-Environment-Development (RED).

“կայուն տարածական զարգացում”	
Տարածական զարգացման նախագծեր Տարածական զարգացման նախագծերը մշակվում և վերահսկվում են պետական մարմինների կողմից որոնք մեծապես նպաստում են տարածքային զարգացման խթանմանը տարբեր մակարդակներում: Տարածական զարգացման նախագծերը կարող են ներառել ենթակառուցվածքային աշխատանքներ, որոշակի ոլորտի տնտեսական խթանում և զարգացում, քաղաքային միջավայրի վերակառուցման միջոցներ, վնասված էկոհամակարգի վերականգնում և այլն:	Spatial development projects Spatial development projects are projects generated or controlled by public bodies which contribute positively to territorial development at different scales. Spatial development projects may comprise infrastructure works, the economic promotion and development of specific areas, urban rehabilitation measures, the restoration of damaged ecosystems, etc.
<i>Ընդհանրապես, տարածական զարգացման նախագծերը հանդիսանում են առավել համապարփակ տարածական զարգացման ռազմավարությունների տարրեր: Չնայած տարածական զարգացման որոշ նախագծեր վերևից ներքև բնույթ ունեն և ներգրավում են գլխավորապես պետական մարմինների, մյուսները ներքևից վերև բնույթի են և կարող են լայնորեն ներգրավել քաղաքացիական հասարակությանը, ինչպես նաև մասնավոր շահեր (ինչպիսիք են հանրային-մասնավոր համագործակցությունը):</i>	<i>Generally, spatial development projects are elements of more comprehensive spatial development strategies. While some spatial development projects are of top-down nature and involve mainly public authorities, others are of more bottom-up nature and may largely involve the civil society as well as private interests (such as public-private partnerships).</i>
Տարածական պլանավորում	Spatial planning
Տարածական հատակագծումը վերաբերում է հանրային սեկտորի կողմից օգտագործվող մեթոդներին, որոնք նպատակ ունեն ազդել անձանց և գոծունեության տեսակների բաշխման վրա տարբեր մասշտաբի տարածքներում¹⁹, ինչպես նաև տարբեր ենթակառուցվածքների, հանգստի և բնական տարածքների տեղակայման վրա:	Spatial planning refers to the methods used by the public sector to influence the distribution of people and activities in spaces at various scales¹⁹ as well as the location of the various infrastructures, recreation and nature areas.
<i>Տարածական հատակագծման գործունեությունը իրականացվում է վարչական և կառավարական տարրեր մակարդակներում (տեղական</i>	<i>Spatial planning activities are carried out at different administrative or governmental levels (local, regional, national), while activities of co-operation</i>

¹⁹ Տե՛ս նաև Վիքիպեդիա ազատ հանրագիտարան / Cf. Free Encyclopedia Wikipedia

ինքնակառավարման, տարածաշրջանային, ազգային), իսկ այս ոլորտում համագործակցությունը իրականացվում է անդրսահմանային, վերազգային և եվրոպական համատեքստում:	<i>in this field are also implemented in cross-border, transnational and European contexts.</i>
Շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատում	Strategic environmental impact assessment
Ազդեցության ռազմավարական գնահատումը չի վերաբերում առանձին նախագծերի հավանական ազդեցությանը (ինչպես ՇՄԱԳ-ի դեպքում), այլ որոշակի նախագծերի և ծրագրերի հնարավոր ազդեցությանը:	The Strategic Impact Assessment does not refer to the likely impacts of individual projects (as in the case of the EIA), but to the likely environmental impacts of certain plans and programmes.
SEA (Շրջակա միջավայրի ռազմավարական գնահատում) դիրեկտիվը (ԵՄ օրենսդրություն) որն ընդունվել է 2001 թվականին, ապահովում է, որ որոշակի ծրագրերի և նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա ունեցած հետևանքները հայտնաբերվեն և գնահատվեն դրանց նախապատրաստման ընթացքում և մինչև դրանց ընդունումը: Հանրությունը և շրջակա միջավայրի համար պատասխանատու մարմինները կարող են հայտնել իրենց կարծիքը և բոլոր հետևանքները հավաքագրվում և հաշվի են առնվում նախագծման գործընթացում: Նախագծի կամ ծրագրի ընդունումից հետո հանրությունը տեղեկացվում է որոշման և այն ընդունելու գործընթացի մասին: Հնարավոր անդրսահմանային զգալի ազդեցության դեպքում ազդակիր Անդամ Պետությունը և իր հանրությունը տեղեկացվում են և հնարավորություն են ստանում դիտարկումներ անելու, որոնք ևս ներառվում են որոշման կայացման ազգային գործընթացում: SEA նպատակ ունի հանրության ներգրավման և բնապահպանական հարցերի ինտեգրման միջոցով նպաստել առավել թափանցիկ հատկապես ծրագրման, ինչը թույլ կտա հասնել	<i>The SEA Directive (EU legislation), adopted in 2001, ensures that environmental consequences of certain plans and programmes are identified and assessed during their preparation and before their adoption. The public and environmental authorities can give their opinion and all results are integrated and taken into account in the course of the planning procedure. After the adoption of the plan or programme, the public is informed about the decision and the way in which it was made. In the case of likely transboundary significant effects, the affected Member State and its public are informed and have the possibility to make comments which are also integrated into the national decision making process. SEA aims at contributing to more transparent planning by involving the public and by integrating environmental considerations and therefore to achieving the goal of sustainable development.</i>

կայուն զարգացման նպատակին:	
Երկրորդային կամ ենթաուրբանիզացիա	Suburbanisation
Երկրորդային ուրբանիզացիան գործընթաց է, որի ժամանակ տեղի է ունենում մեծ քաղաքների և ագլոմերացիոն տարածքների արվարձանների զարգացում: Երկրորդային ուրբանիզացիայի գործընթացն առաջանում է քաղաքների ժողովրդագրական աճի (ընդհանուր բնակչության աճ), ինչպես նաև քաղաքների ներքին վերակազմավորման հետևանքով:	Suburbanisation is a process related to the development of suburbs around large cities and metropolitan areas. The process of suburbanisation is generated by the growth (increase of total population) as well as by internal re-structuring of cities.
Մեծ քաղաքների բազմաթիվ բնակիչներ այլևս չեն բնակվում և աշխատում նույն քաղաքային տարածքում՝ նախընտրելով բնակվել արվարձաններում և աշխատել այլ շրջաններում: Արվարձանները բնակեցված թաղամասեր են, որոնք տեղակայված են քաղաքի արտաքին եզրագծին կամ գտնվում են դրա պաշտոնական սահմաններից դուրս կամ, նույնիսկ, հանդիսանում են փոխկապակցված ուրբանիզացիայի արտաքին տարր: Երկրորդային ուրբանիզացիայի գործընթացը հաճախ նմանեցվում է քաղաքային տարածմանը, հատկապես երբ խոսքը վերաբերում է երթևեկության վատթարացման խնդրին և բնական լանդշաֆտների և ռեսուրսների վերացմանը ²⁰ : Տե՛ս նաև “քաղաքային տարածում”	<i>Many residents of larger cities no longer live and work in the same urban area, choosing instead to live in suburbs and commute to work in other areas. Suburbs are inhabited districts located either on the outer rim of a city or outside the official limits of a city or even the outer elements of a conurbation. The suburbanisation process is often assimilated to that of urban sprawl, especially when it comes to blame the growing traffic problems and the destruction of natural landscapes and resources²⁰. See also “Urban sprawl”.</i>
Կայուն տարածական զարգացում	Sustainable spatial development
Կայուն տարածական զարգացման հասկացությունը հանդիսանում է Ուղնիշային սկզբունքների գլխավոր նպատակը: Կայունությունը վերաբերում է երկարաժամկետ մոտեցումներին. տարածական զարգացման քաղաքականության տված առավելությունները պետք է երկարատև ընույթ ունենան և չպետք է վտանգվեն	The concept of sustainable spatial development is the main objective of the Guiding Principles. Sustainability is related to long-term approaches: the benefits provided by spatial development policies should have long-lasting character and should not be jeopardised by the overlooking of important interferences between public policies or sectors of

²⁰ Տե՛ս նույն տեղում / Ibid

հանրային քաղաքականության կամ գործունեության ոլորտների միջև խոչընդոտներն աչքաթող անելու պատճառով: Ուղենիշային սկզբունքներով սահմանվել են կայուն զարգացման չորս ուղղություններ՝ տնտեսական, սոցիալական, բնապահպանական և մշակութային կայունություն:	activity. Four dimensions of territorial sustainability have been identified in the Guiding Principles: economic, social, environmental and cultural sustainability.
Չնայած բազմաթիվ գործընթացներ մարտահրավերներ են ներում եվրոպայի ընդհանուր ապագայի կայունությանը, կայուն տարածական զարգացմանն ուղղված քաղաքականությունը պետք է հասնի տարբեր խնդիրների իրագործմանը, ինչպիսիք են անհամապատասխանության կրճատումը, հավասարակշռված բազմակենտրոն զարգացման խթանումը, դատարկվող բնակավայրերի վերաբնակեցման համար անհրաժեշտ միջոցների նախատեսումը, տրանսպորտի և էներգիայի ցանցերի արդյունավետության բարձրացումը, բնական վտանգների հնարավոր վնասների կանխատեսումն ու կրճատումը, բնական և կառուցված միջավայրի պաշտպանությունն ու բարելավումը, գյուղատնտեսության և անտառաբուծության ոլորտում շրջակա միջավայրի պահպանմանը միաված պրակտիկայի խթանումը, գոյություն ունեցող մշակութային ժառանգության պահպանության, նոր ներդրումների ներգրավման և քաղաքային և գյուղական շրջաններում գոյություն ունեցող բնակվող և աշխատող համայնքներին աջակցության միջև հավասարակշռության ապահովումը, ինչպես նաև տարածական զարգացման մոտեցումներում հանրության մասնակցության ավելացումը²¹: Տե՛ս նաև “Տարածական զարգացում”,	<i>While numerous processes are challenging the sustainability of our common European future, policies aiming at sustainable spatial development have to achieve a variety of tasks such as reducing disparities, supporting balanced polycentric development, providing measures for the revitalisation of declining settlements, increasing the efficiency of transport and energy networks, preventing and reducing the potential damages of natural hazards, protecting and improving the natural and the built environment, promoting environmentally-friendly practices in agriculture and forestry, achieving a balance between preserving the existing cultural heritage, attracting new investments and supporting existing living and working communities in urban and rural areas and increasing public participation in spatial development approaches²¹.</i> <i>See also: “Spatial development”, “Comprehensive spatial development approach”.</i>

²¹ Կայուն զարգացման տարածքային չափի վերաբերյալ Լյուբլյանայի Հռչակագիր, CEMAT, 2003 / Ljubljana Declaration on the Territorial Dimension of Sustainable Development, CEMAT, 2003.

“Համալիր տարածական զարգացման մոտեցում”	
Կայունության գնահատում	Sustainability assessment
Արտադրանքի և գործընթացների արժեքի և բնապահպանական բեռի զգալի մասը որոշվում է ձևավորման վաղ փուլերում՝ հաճախ թողնելով 20 կամ ավելի տարի տևողությամբ ազդեցություն: Կայունության գնահատումը մեթոդ է, որը մշակվել է աջակցելու ձեռնարկություններին արտադրանքը և ծառայություններն ավելի կայուն դարձնելու համար:	A high percentage of the costs and environmental burden of products and processes are determined in early stages of design, often causing impacts for 20 years or more. Sustainability assessment is a method which has been developed to support enterprises in order to make products and services more sustainable.
Արտադրանքի կյանքի ցիկլի գնահատումը նպատակ ունի ավելի լավ հասկանալու դրանց սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի վրա ազդեցությունները: Կայունության վրա ազդեցության գնահատումները (ԿԱԳ) իրականացվում են նաև լայն հեռանկարներով: Օրինակ Եվրոպական միությունը, իրականացնում է ԿԱԳ իր խոշոր բազմակողմանի և երկկողմանի համաձայնագրերի բանակցությունների համար ²² : Տարբեր հանրային քաղաքականություններ, ինչպես նաև հանրային և մասնավոր համագործակցություններ կարող են նույնպես ենթարկվել նման ընթացակարգի, որպեսզի հստակեցվի դրանց երկարաժամկետ տնտեսական, սոցիալական և շրջակա միջավայրի վրա ազդեցությունները:	<i>The life cycle assessment of products aims at reaching a better understanding of their social, economic and environmental impacts. Sustainability Impact Assessments are also being carried out in a wider perspective. The European Union, for instance, carries out SIAs for the negotiations of its major multilateral and bilateral trade agreements²². Various public policies, as well as Public-Private Partnerships, can also be subject to similar procedures likely to identify their long-term economic, social and environmental impacts.</i>
Տեխնոլոգիական վտանգներ/տեխնոլոգիական վնասներ	Technological risk / Technological hazard
Տեխնոլոգիական վտանգներն անպայմանորեն կապված են արդյունաբերության և էներգիայի արտադրության, տրանսպորտի,	A technological risk is necessarily related to human activities in the fields of manufacturing and energy production, transport, buildings, public works, etc.

²² Տե՛ս նաև Կայունության վրա ազդեցության գնահատման մասին Եվրոպական հանձնաժողովի հաղորդագրություն, 2002 / Cf. Communication of the European Commission on sustainability Impact Assessment. 2002.

շինարարության, հանրային աշխատանքների և այլ ոլորտներում մարդու գործունեության հետ: Արտադրական, միջուկային, հանքարդյունաբերական և ստորգետնյա գործունեության և վտանգավոր նյութերի տեղափոխման (հողի, գետի կամ ծովի վրայով) հետ կապված ռիսկերը կամ ամբարտակների քանդման սպառնալիքը հանդիսանում են խոշոր տեխնոլոգիական վտանգներ:	Risks due to industrial, nuclear, mining and subterranean activities or risks due to the transport of hazardous substances (by land, river or sea) or the threat of a dam rupture are all considered major technological risks.
<i>Տեխնոլոգիական վրանգների կանխարգելումը, որը նպատակ ունի սահմանափակել տեխնոլոգիական վնասները, ինչպես նաև դրանց հնարավոր ազդեցությունները, սահմանվում է համապատասխան ազգային օրենսդրություններում: Այն կարող է ներառել միջոցներ, որոնք կապված են տարածական զարգացման քաղաքականության հետ, հատկապես հողօգտագործման քաղաքականության մասով:</i>	<i>Prevention against technological risks, aiming at limiting the occurrence of technological hazards as well as their potential impacts, is prescribed in the respective national legislations. It may comprise measures pertaining to spatial development policies, especially in terms of land-use policy.</i>
Տեխնոլոգիական բևեռ/տեխնոլոգիական կենտրոն /տեխնոպարկ/գիտական պարկ	Technopole / Technology centre / Technology park / Science park
Տեխնոլոգիական բևեռը (որը նաև կոչվում է տեխնոլոգիական կենտրոն, տեխնոպարկ կամ գիտական պարկ) այն տարածքն է, որտեղ կենտրոնացված են բազմաթիվ հանրային և մասնավոր գործունեության տեսակներ՝ կապված հետազոտության և զարգացման, տեխնոլոգիական զարգացման, տեխնոլոգիայի փոխանցման, բարձր մակարդակի գիտական ուսուցման, բարձր տեխնոլոգիաների արտադրության և ծառայությունների և այլնի հետ: Բազմաթիվ դեպքերում տեխնոլոգիական բևեռները ընդգրկում են մեկ կամ մի քանի բարձր տեխնոլոգիաների ձեռնարկությունների մասնագիտացված խմբեր, սկսնակների համար ինկուբատորներ, բիզնես և նորարարական կենտրոն, խորհրդատվական	A technopole (also called technology centre, technology park or science park) refers to an areas where numerous private and public activities pertaining to research and development, technological development, technology transfer, high-level scientific education, high-tech manufacturing activities and services, etc. are concentrated. In numerous cases, techno-poles encompass one or several specialised cluster(s) of high-tech enterprises, incubators for startups, a business and innovation centre, consultancy clusters.

խմբեր: <i>Տեխնոլոգիական բնեռները ղեկավարող սկզբունքները հետևյալն են՝ տվյալ վայրում ներկա տարբեր շահագրգիռ կողմերի միջև փոխկապակցվածության զարգացման (ձեռնարկություններ, հետազոտությունների և զարգացման գործունեություն, սկսնակ ձեռնարկություններ, ծառայություններ և այլն), տվյալ տարածքում տեղակայվող գործունեության տեսակների ընտրություն (օրինակ՝ պահեստների կամ աղտոտող արդյունաբերական գործունեության վերացում), պետական մարմինների կողմից խթանում և աջակցում (հողի ձեռքբերման և զարգացման հեշտացումը, հետազոտական և կրթական գործունեության աջակցում և այլն) և, վերջապես, ակնառու աշխատանքային միջավայրի ապահովում, որը կարևոր է տվյալ տարածքում առկա ձեռնարկությունների և կազմակերպությունների վարկանիշի համար:</i>	<i>The principles governing technopoles are the development of synergies between the various stakeholders present on the site (enterprises, R&D activities, startups, services, etc.), the selection of activities to be located on the site (eliminating for instance warehouses or polluting industrial activities), the promotion and support by public authorities (facilitation of land acquisition and development, support to research and educational activities, etc.) and finally the availability of an outstanding working environment which is important for the image of enterprises and organisations present on the site.</i>
Տարածական ամրակայում Տարածական ամրակայման հասկացությունը տարածքային զարգացման առաջնային նպատակներից է, որն ամրագրված է Ուղենիշային սկզբունքներում և ԵՏԶՀ-ում: Չնայած այն բարձր մակարդակով ներառված է պաշտոնական փաստաթղթերում, տարածական ամրակայման հասկացությունը դեռևս պաշտոնական սահմանում չունի: Այն սովորաբար հասկացվում է որպես տնտեսական և սոցիալական ամրակայման նպատակները լրացնող տարր և նպատակ ունի նպաստել ողջ տարածքի ներդաշնակ և միատարր զարգացմանը: Լայնորեն ընդունված է, որ տարածական ամրակայումը բազմակողմ հասկացություն է՝ երեք հիմնական բաղադրիչներով²³:	Territorial cohesion The concept of territorial cohesion is an overarching objective of territorial development of the Guiding Principles and of the ESDP. Although it is included at highest level in official documents, the concept of territorial cohesion has so far not been the object of an official definition. It is generally considered as complementary to the objectives of economic and social cohesion and aims at promoting a harmonious and homogeneous development of the entire territory. A wide agreement prevails on the fact that territorial cohesion is a multi-dimensional concept with at least three main components²³:

²³ Տարածական ամրակայման հիմնավորումը և տարածքային զարգացման քաղաքականության վայրը հասարակության՝ Եվրոպական մոդելում, Ռոբերտո Կամանի, «Տարածական ամրակայում և հասարակության՝ Եվրոպական մոդելը» թեմայով սեմինարի ժամանակ ներկայացված աշխատություն, Վիեննա, հուլիս 2005 / Roberto Camagni: The rationale for territorial cohesion and the place of territorial

- տարածքի որակ. աշխատանքի և բնակության միջավայրի որակ, տարբեր տարածքում համեմատելի կենսամակարդակ, հանրային նշանակության ծառայություններին և գիտելիքին նույնանման մատչելիություն, - տարածքային արդյունավետություն. ռեսուրսների արդյունավետություն՝ էներգիայի, հողի և բնական ռեսուրսների մասով, տնտեսական կառուցվածքների մրցունակություն և տարածքի գրավչություն, ներքին և արտաքին մատչելիություն, գոլբալիզացիայի գործընթացի հետ կապված քայքայիչ ուժերին դիմակայելու կարողություն, տարածաշրջանների միջև տարածքային ինտեգրացիա և համագործակցություն, - տարածքային ինքնություն. “սոցիալական կապիտալի” առկայություն, ապագայի վերաբերյալ ընդհանուր տեսլականի զարգացման ունակություն, տեղական նոու-հաու և առանձնահատկություններ, արդյունավետ “մասնագիտություններ” և յուրաքանչյուր տարածքի մրցակցային առավելություններ:	– territorial quality: the quality of the living and working environment; comparable living standards across territories; similar access to services of general interest and to knowledge; – territorial efficiency: resource-efficiency with respect to energy, land and natural resources; competitiveness of the economic fabric and attractiveness of the territory; internal and external accessibility; capacity of resistance against de-structuring forces related to the globalisation process; territorial integration and cooperation between regions; – territorial identity: presence of “social capital”, capability of developing shared visions of the future; local know-how and specificities; productive “vocations” and competitive advantage of each territory.
Տարածքային համագործակցություն	Territorial co-operation
Տարածքային համագործակցությունը տարածքային զարգացման քաղաքականության հետ կապված տարբեր վարչական ենթակայություն ունեցող շրջաններում համատեղ գործունեության զարգացումն է: Տարածքային համագործակցությունը հատկապես կարևոր է ազգային սահմանների երկայնքով, սակայն դրա իրականացումն անհրաժեշտ է նաև	Territorial co-operation is understood as the development of joint activities related to territorial development policies for areas belonging to various administrative jurisdictions. Territorial cooperation is particularly important along national borders, but it is also relevant between administrative units of the same State. The aim of territorial cooperation is to

development policies in the European model of society. Paper presented at the Vienna Seminar on Territorial cohesion and the European model of society. July 2005

նույն պետության տարբեր վարչական միավորների միջև: Տարածքային համագործակցության նպատակը տարածքային ինտեգրացիայի հեշտացումն է և տարածքային զարգացման առավել մրցունակ և կայուն ձևերի խթանումը, քան նրանք, որոնք կհանդիսանային առանձին, հատվածական տարածքային զարգացման քաղաքականության արդյունք և կիրականացվեին առանց համագործակցության: Տարածքային համագործակցությունն իրականացվում է տարբեր մակարդակների պետական մարմինների կողմից, սակայն այն կարող է միավորել նաև այլ շահագրգիռ կողմերի (հասարակական կազմակերպություններ, մասնավոր ոլորտ, քաղաքացիական հասարակություն): <i>Տե՛ս նաև “Անդրսահմանային, վերազգային, միջփարածաշրջանային համագործակցություն”</i>	facilitate territorial integration and to promote more competitive and sustainable forms of territorial development than would result from individual, segmented territorial development policies without cooperation. Territorial cooperation is driven by public authorities of the various levels, but it may associate other types of stakeholders (NGOs, private sector, civil society). <i>See also: “Cross-border, transnational, interregional cooperation”.</i>
Տարածքային զարգացում	Territorial development
Տարածքային զարգացումը գործընթաց է, որի ընթացքում մարդկային հասարակությունների կողմից բնակեցված աշխարհագրական տարածքներն աստիճանաբար փոխակերպվում են: Այն ներառում է ֆիզիկական բաղադրիչներ (ենթակառուցվածք, գյուղական և քաղաքային լանդշաֆտներ և այլն), ինչպես նաև տարածքային կառուցվածք կամ բնակեցման մոդել, այսինքն, բնակչության և մարդկային գործունեության աշխարհագրական բաշխում, մասնավորապես՝ քաղաքների չափերը և դրանց միջև հարաբերությունները:	Territorial development is understood as the process through which the geography of territories inhabited by human societies is progressively transformed. It involves physical components (infrastructure, landscapes and townscapes, etc.), but also the territorial structure or settlement pattern, i.e. the geographic distribution of population and human activities, in particular the size of and relationships between cities.
Տարածքային զարգացումը համապարփակ հասկացություն է, որն օգտագործվում է նաև որպես հանրային քաղաքականության նպատակ (տարածքային զարգացման քաղաքականություն): Այս	Territorial development is a comprehensive concept also used as an objective of public policies (“territorial development policy”). This comprehensive character results from the fact

համապարփակության հատկանիշը արդյունք է այն բանի, որ այն ոչ միայն ձգտում է խնդրո առարկա տարածաշրջանում տնտեսական աճի ապահովման, այլև կայունության ապահովման վերջինիս տնտեսական, սոցիալական, բնապահպանական և մշակութային ոլորտներում: Հետևաբար տարածքային զարգացումն ունի բարձր որակական ծավալ, որը պահանջում է զգալի կապակցվածություն պետական/հանրային քաղաքականության հայեցակարգում և դրա իրագործման մեջ:	that it does not only aim at economic growth in the respective regions, but also at sustainability in its economic, social, environmental and cultural aspects. Territorial development has therefore a highly qualitative dimension requiring substantial amounts of coherence in the conception and implementation of public policies.
<i>Այն արտացոլված է Եվրոպայի ներկայիս համալսարանը, որը բնորոշվում է ցածր աճի մակարդակով և ուժեղ տարածաշրջանային անհավասարակշռությամբ:</i> <i>Հետպատերազմյան տասնամյակների ուժեղ աճի ժամանակաշրջանում տարածքի նկատմամբ իրականացվող պետական քաղաքականության հիմնական խնդիրը աճի գործընթացն ուղղորդելն էր հողօգտագործման կանոնակարգմամբ, ենթակառուցվածքների զարգացմամբ և ներդրումների ներգրավման խրախուսմամբ (քաղաքականության հարակից հասկացություններն էին՝ “տարածքային համակարգում”, “aménagement du territoire”, “Raumordnung”, “Ordenacion del territorio” և այլն), իսկ այժմ տարածքային զարգացումը դարձել է ընդհանրացված առաջնահերթություն աշխատանքի և ծառայությունների մատուցման և տարածքային անհավասարակշռության կրճատման համար:</i>	<i>It strongly reflects the present context of Europe characterised by low growth rates and strong regional imbalances. While in the period of strong growth of the post-war decades the main tasks of public policies regarding the territory were to guide the growth process through land-use regulation, provision of infrastructure and attribution of incentives to attract investments (the related policy concepts were “territorial planning”, “aménagement du territoire”, “Raumordnung”, “Ordenacion del territorio”, etc.), developing the territory has become a generalised priority in order to provide employment and services and to reduce the territorial imbalances.</i>
Տարածքային կառավարում	Territorial governance
Տարածքային կառավարումը հասկացություն է, որը բնորոշում է, թե ինչպես են տարածական քաղաքականությունները միասին կիրառվում: Տարածքային կառավարումը գնահատվում է՝ հաշվի առնելով այն, թե որքանով է այն նպաստում	Territorial governance is a global concept which characterises the way how spatially-relevant policies, considered together, are applied. Territorial governance is assessed against its contribution to the achievement of the objectives of spatial development

տարածական զարգացման քաղաքականության նպատակների իրագործմանը: Այն հանդիսանում է պետական քաղաքականության ոլորտում բազմամակարդակ և միջկյուղային հարաբերությունների որակի արդյունք: Այն վերաբերում է այդ քաղաքականության ձևավորման և իրագործման նպատակով հորիզոնական և ուղղահայաց համագործակցությանը: Այս առումով հատկապես կարևոր են Ուղենիշային սկզբունքներում ներառված սուբսիդիարության և փոխադարձության սկզբունքները:	policies. It is the result of the quality of multi-level and cross-sectoral relationships in the field of public policies. It refers to horizontal and vertical cooperation in the shaping and implementation of these policies. In this respect, the principles of subsidiarity and reciprocity advocated in the Guiding Principles, are of particular relevance.
“Կառավարումը կարող է բնորոշվել որպես սոցիալ-տարածական առաջընթացի ծրագրավորման և կառավարման նորարարական ընդհանուր ձևերի առաջացում և կիրառում: Իր առավել պարզ մակարդակում տարածքային կառավարումը կարող է նշանակել կառավարման հիմնական սկզբունքների մշակութային արտահայտում և դրանց կիրառումը տարածական զարգացման քաղաքականության նկատմամբ: Խելամիտ տարածքային կառավարումը նպատակ ունի կառավարել տարածքային առաջընթացը պետական և մասնավոր ոլորտի անձանց կողմից մշակված տարբեր քաղաքականությունների տարածական հետևանքները մատնանշելու միջոցով: Նպատակը համաձայնեցված միասնական նպատակների և ընդհանուր պարտավորությունների շրջանակի սահմանումն է՝ տարածական զարգացման ռազմավարությունների և քաղաքականությունների օգտագործմամբ”²⁴:	“Governance can be understood as the emergence and the implementation of innovative shared forms of planning and managing of socio-spatial dynamics. At its simplest level, territorial governance can therefore be understood as the cultural embeddedness and practical application of the general principles of governance to spatial development policies... sound territorial governance aims at managing territorial dynamics through indicating the spatial consequences of various policies planned by public and private sector actors. The aim is to negotiate a set of commonly agreed objectives as well as a framework of shared responsibilities by the use of spatial development strategies and policies”²⁴.
<i>Տարածքային կառավարման որակի բարելավումը հաճախ պահանջում է տարածաշրջանային իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների</i>	<i>Improving the quality of territorial governance often requires the strengthening of the role of regional and local authorities which ensure the coherence</i>

²⁴ CEMAT բանաձև 2 (2006) “Տարածքային կառավարման մասին. հզորացում խորացված համակարգման շնորհիվ” / CEMAT Resolution N° 2 (2005) on territorial governance: empowerment through enhanced coordination

դերի բարձրացում, որոնք ապահովում են տարածքում կիրառվող պետական քաղաքականությունների կապակցվածությունը և բարձրացնում արդյունավետությունը:	and increase of efficiency of public policies applied on the territory.
Տարածքային ներուժ	Territorial potential
Ընդունված փաստ է, որ յուրաքանչյուր շրջան ունի որոշակի ներուժ (կամ կապիտալ), որը տարբեր է այլ շրջանների ներուժից, և որը բնորոշվում է այնպիսի գործոններով, ինչպիսիք են, օրինակ, շրջանի աշխարհագրական դիրքը, չափը, արտադրական ներուժը և ենթակառուցվածքները, կլիման, բնական ռեսուրսները, կենսամակարդակը և շրջակա միջավայրի վիճակը, այնտեղ առկա քաղաքների ագլոմերացիոն տնտեսությունների որակը, ձեռնարկությունների ինկուբատորները, արդյունաբերական շրջանները կամ տնտեսական այլ ցանցերը, որոնք կրճատում են գործարքների արժեքները: Մյուս քաղաքիչներն առավել մշակութային և սոցիալական բնույթի են և ներառում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են ավանդույթները, ընկալումները և ոչ պաշտոնական կանոնները, որոնք տնտեսվարող սուբյեկտներին թույլ են տալիս միասին աշխատել անվստահության, համերաշխության, փոխօգնության պայմաններում: Տարածքային ներուժի հասկացությունը ունի նաև առավել ոչ նյութական ծավալ, որը կապված է հետևյալների փոխկապակցման արդյունքի հետ՝ հաստատություններ, կանոններ, փորձ և սուբյեկտներ՝ արտադրողներ, հետազոտողներ և քաղաքականություն մշակողներ, ովքեր հնարավոր են դարձնում նորարարությունը և ստեղծագործումը ²⁵ :	It has been recognised that each area has a specific potential (or capital) which is distinct from that of other areas and which is determined by a series of factors which may include the area's geographical location, size, endowment with factors of production and infrastructures, climate, natural resources, quality of life and of the environment or the agglomeration economies provided by its cities, the business incubators, industrial districts or other business network which reduce transaction cost. Other components are of more social and cultural nature, comprising factors such as traditions, understandings, informal rules that enable economic actors to work together under conditions of uncertainty, solidarity, mutual assistance. The concept of territorial potential comprises also a more intangible dimension related to the outcome of a combination of institutions, rules, practices, actors such as producers, researchers and policy makers that make a certain creativity and innovation possible ²⁵ .
<i>Տարածքային ներուժի (կամ կապիտալ)</i>	<i>The concept of territorial potential (or</i>

²⁵ ՏՀՀԿ Տարածքային հեռանկար, 2001, էջ 15 / OECD Territorial Outlook. 2001. p. 15.

հասկացությունն ընկած է էնդոգեն զարգացման տեսությունների և ռազմավարությունների հիմքում, որոնք մշակվել և կիրառվել են սկսած 1970-ականներից՝ փոխադրելու արտաքին գործոնների անկայունությանը և բացասական ազդեցությանը, որոնք առաջ են բերում գործազրկություն, գործարարության վերացում կամ տեղափոխում: Վերջին տարիներին, եվրոպական ինտեգրացիայի և արագացող գլոբալիզացիայի համատեքստում միջազգային և միջարածաշրջանային մրցակցության մեծացման պատճառով տարածքային ներուժի հասկացությունը կրկին կարևորվել է:	capital) is underlying the endogenous growth theories and strategies which have been developed and applied since the 1970s as a reaction against the instability or negative impacts of exogenous factors causing unemployment, closing down or relocation of businesses. In recent years, the concept of territorial potential has become topical again because of increasing international and interregional competition in the context of European integration and accelerating globalisation.
Տարածքային ազդեցության գնահատական	Territorial impact assessment
Տարածքային ազդեցության գնահատականը մեթոդ է, որի նպատակը բոլոր տեսակի տարածական բնույթի պետական քաղաքականությունների, միջոցների և ծրագրերի՝ տարածքի և, հատկապես, տարածքային կայունության և տարածական ամրակայման վրա ունեցող ազդեցությունների որոշումն է: Այս առումով տարածքային ազդեցությունները կարող են լինել տնտեսական, սոցիալական, բնապահպանական և մշակութային բնույթի: Դրանք կարող են կապված լինել հասանելիության, կենսաբազմազանության, աշխարհագրական տեղակայման նախապատվությունների, աշխատանքի տեղական/տարածաշրջանային հնարավորությունների, կենսամակարդակի և այլնի փոփոխությունների հետ:	Territorial impact assessment is a method which aims at identifying the impacts that all types of spatially-relevant public policies, measures and projects may have on the territory, especially on territorial sustainability and cohesion. In this respect, the territorial impacts to be identified may be of economic, social, environmental and cultural nature. They may be related to changes in accessibility, biodiversity, locational preferences, regional/local employment opportunities, quality of life, etc.
Տարածքային ազդեցության գնահատականն անհրաժեշտ է, քանի որ բազմաթիվ ճյուղային քաղաքականություններ/ծրագրեր ազդեցություն են ունենում տարածքի զարգացման վրա՝ ոչ անպայմանորեն	Territorial impact assessments are required because numerous sectoral policies/projects influence the evolution of the territory without necessarily contributing to the implementation of the

նպաստելով տարածական զարգացման քաղաքականության նպատակների իրագործմանը:	<i>objectives of spatial development policies.</i>
Իրական արդյունքների վրա հիմնված տարածքային ազդեցության գնահատականը ցույց է տալիս, թե ինչպես են նախկինում կիրառված քաղաքականությունները ազդել տարածքի զարգացման վրա և ինչպիսի դասեր կարելի է քաղել դրանցից: Դրանք օգտակար են իրազեկման բարձրացման, ինչպես նաև գնահատման մեթոդների բարելավման համար:	<i>Ex-post territorial impact assessments show how policies applied in the past have influenced the evolution of the territory and which lessons can be drawn from this. They are useful for awareness-raising purposes as well as for the improvement of assessment methods.</i>
Կանխատեսումների վրա հիմնված տարածքային ազդեցության գնահատականը անհրաժեշտ է ապագա քաղաքականությունների հնարավոր ազդեցությունները կանխատեսելու և տարբեր հնարավոր տարբերակների միջև ընտրությունը հեշտացնելու համար:	<i>Ex-ante territorial impact assessments are necessary to anticipate the potential impacts of future policies and therefore to facilitate the choice between various possible policy options.</i>
Տարածքային ազդեցության գնահատականի մեթոդը բարդ բնույթ ունի, որի պատճառն այն բազմաթիվ հնարավոր խոչընդոտներն են, որոնք պետք է հաշվի առնվեն: Հետևաբար՝ այն դեռևս մշակման և բարելավման փուլում է:	<i>The method of territorial impact assessment is of complex nature because of the numerous possible interferences to be considered. It is therefore still in a process of elaboration and of improvement.</i>
Քաղաքների պլանավորում	Town and country planning
Քաղաքների պլանավորում արտահայտությունը ծագել է Միացյալ Թագավորությունում (1947 թվականի Քաղաքային հատակագծման ակտ, որն ընդունվել է անմիջապես հետպատերազմյան շրջանում՝ ի պատասխան ինդուստրացման և ուրբանիզացիայի), որը լայնորեն կիրառվում է ողջ եվրոպական մայրցամաքում և հանդիսանում է պետական քաղաքականության մի ոլորտ, որը միավորում է գործունեության տարբեր տեսակներ, ինչպիսիք են հողօգտագործման հատակագծումը, քաղաքային միջավայրի ձևավորումը, լանդշաֆտի պլանավորումը,	Town and country planning is an expression originating from the UK (Town and Country Planning Act of 1947 adopted in the immediate post-war period in response to industrialisation and urbanisation) which has also been largely used on the whole European continent and comprises a sector of public policies encompassing various activities, such as land -use planning, urban design, landscape planning, urban renewal, transport planning, the development of facilities and utilities, etc. The global aim of town and country planning is to

քաղաքների արդիականացումը, տրանսպորտի պլանավորումը, հարմարությունների և հանրային նշանակության ծառայությունների զարգացումը և այլն: Այն ընդհանուր առմամբ ուղղված է ապահովելու հավասարակշռությունը տնտեսական զարգացման, սոցիալական ապահովության և բնապահպանական որակի միջև:	maintain a balance between economic development, social welfare and the environmental quality.
Քաղաքային տարածքներ	Urban area
Քաղաքային տարածքները այն տարածքներն են, որոնք ֆիզիկապես կազմում են ինչ որ քաղաքի մաս և բնորոշվում են կառուցապատված մեծ մակերեսով, բնակչության և աշխատանքի մեծ խտությամբ և տրանսպորտի և այլ ենթակառուցվածքների զգալի քանակությամբ (հակառակ գյուղական տարածքների): Քաղաքային տարածքները կարող են ներառել նաև չկառուցապատված կանաչ շրջաններ, որոնք հիմնականում օգտագործվում են քաղաքի բնակչության կողմից՝ հանգստի համար: <i>Տե՛ս նաև “ուրբանիզացիա”, “քաղաքային զարգացում”, “գյուղական (չկառուցապատված) տարածքներ”</i>	An urban area is an area which physically forms part of a town or city and is characterised by an important share of built-up surfaces, high density of population and employment and significant amounts of transport and other infrastructure (as opposed to rural areas). Urban areas may also comprise non built-up, green areas generally used for recreational purposes by urban dwellers. <i>See also: “Urbanisation”, “Urban development”, “Rural area”.</i>
Ուրբանիզացիա	Urbanisation
Ուրբանիզացիան (քաղաքաշինությունը) երկարատև գործընթաց է, որը բնորոշվում է ինչպես քաղաքում ապրող բնակչության քանակի մեծացմամբ, այնպես էլ քաղաքային տարածքների աճով:	Urbanisation is a long-term process which characterises both the increasing share of population living in towns and cities and the growth of urban areas.
<i>Եվրոպայում քաղաքաշինական գործընթացներն սկսվեցին 18-րդ դարում արդյունաբերական հեղափոխության մեկնարկով և երկու դար շարունակ տարբեր ճանապարհներով տարածվեցին ողջ մայրցամաքում: Դրանք ներառում են տարբեր փուլեր (ուրբանիզացիա, դեուրբանիզացիա</i>	<i>In Europe the urbanisation process started with the beginning of the industrial revolution in the 18th century and has been spreading throughout the continent over two centuries in heterogeneous ways. The process comprises various phases (urbanisation, de-urbanisation or counter-</i>

կամ հակաուրբանիզացիա, վերաուրբանիզացիա), որոնք եվրոպական երկրներ են հասել տարբեր ժամանակներում՝ կախված աշխարհագրական և պատմական իրավիճակներից: Ուրբանիզացիայի մակարդակը երկրի (կամ տարածաշրջանի) ընդհանուր բնակչության՝ քաղաքում բնակվող մասն է: Ուրբանիզացիայի աստիճանը որոշվում է որոշակի ժամանակահատվածում քաղաքի բնակչության թվի աճով²⁶: Որևէ տարածաշրջանում ուրբանիզացիայի գործընթացը խոր ազդեցություն է ունենում դրա տնտեսության և էկոլոգիայի վրա: Կան ուրբանիզացիայի կամ մարդկային գործունեության, բնակավայրերի և սոցիալական ենթակառուցվածքների կենտրոնացման տարբեր ձևեր (միակենտրոն, բազմակենտրոն բնակավայրեր, կոմպակտ քաղաքներ, արվարձաններ և այլն):	urbani-sation, re-urbanisation) which have reached the European countries at different times, according to geographical and historical situations. The level of urbanisation is the share of the total population of a country (or region) living in towns. The urbanisation rate represents the increase in the proportion of the urban population over the period²⁶. The urbanisation process of a region has profound effects on its economy and ecology. There are different forms (or patterns) of urbanisation or concentration of human activities, settlements and social infrastructures (mono-centric, polycentric settlements, compact cities, suburbs, etc.).
Քաղաքային զարգացում	Urban development
Ինչպես տարածական զարգացման դեպքում, քաղաքային զարգացումը կարող է բնորոշվել որպես որոշակի (քաղաքային) տարածքի զարգացում կամ տարբեր գործունեության տեսակներ, որոնք նպաստում են այդ տարածքի զարգացմանը: Նպաստել քաղաքային զարգացմանը նշանակում է գործել քաղաքային տարածքի տնտեսական, սոցիալական, բնապահպանական և մշակութային ներուժի ավելացման ուղղությամբ:	As in the case of spatial development, urban development can be understood as the evolution of a specific (urban) area or as the various activities contributing to develop this area. Promoting urban development means acting towards the enhancement of the various economic, social, environmental and cultural potentials of cities and urban areas.
Սա ներառում է տարաբնույթ պետական քաղաքականություններ, որոնք հիմնված են բազմաբնագավառ գիտելիքների վրա: Մասնակցային գործողությունների և գործընկերության միջոցով քաղաքացիական	This involves a wide range of public policies based on multidisciplinary knowledge. The involvement of the civil society through participatory actions and partnerships is also essential to tackle the

²⁶ Տե՛ս նաև Վիքիպեդիա ազատ հանրագիտարան / Cf. Free Encyclopedia Wikipedia

հասարակության ներգրավումը ևս կարևոր է քաղաքային զարգացման առավել բարդ խնդիրները լուծելու համար: Վերջին տարիներին կայունության և ներգրավվածության և սոցիալական ամրակայման խթանման նպատակները քաղաքային զարգացման ռազմավարություններում դարձել են ակտուալ:	<i>complex issues of urban development. In recent years, the objectives of sustainability and of promotion of inclusiveness and social cohesion have become topical in urban development strategies</i>
Քաղաքային միջավայրի ձևավորում	Urban design
Քաղաքային միջավայրի ձևավորումը քաղաքաշինության ավանդական ճյուղ է, որը հատկապես նորաձև էր, երբ քաղաքաշինությունը հիմնականում արտահայտվում էր կառուցապատման նախագծերով: Քաղաքային միջավայրի ձևավորումը օգտագործվում էր նաև նոր քաղաքների հատակագծման ժամանակ՝ ընդգրկելով ամբողջական քաղաքների նախագծեր: Վերջերս այն կենտրոնացել է հանրային տարածքների նախագծման վրա՝ ներառյալ այն տարածքների ամբողջությունը, որոնք առօրյայում ազատորեն օգտագործվում են հանրության կողմից, մասնավորապես՝ փողոցները և այգիները²⁷:	Urban design is a traditional discipline of urban planning which was particularly in fashion when urban planning was essentially expressed by building plans. Urban design was also particularly used in the planning of new towns, encompassing the layout of entire cities. More recently, its focus is put on the planning of public spaces, including the totality of spaces that are used freely on a day-to-day basis by the general public, especially streets and parks²⁷.
Հանրային տարածքների ձևավորումը, կառուցապատումը և կառավարումը պահանջում է միջդիսցիպլինար ներդրումներ (ճարտարագիտություն, բնապահպանություն, տեղական պատմություն, տրանսպորտի պլանավորում, ճարտարապետություն և այլն), ինչպես նաև տարբեր մակարդակներում և շահագրգիռ կողմերի կարծիքի հարցում և նրանց հետ բանակցությունների վարում:	<i>The design, construction and management of public spaces require interdisciplinarity inputs (engineering, ecology, local history, transport planning, architecture, etc.) as well as consultation and negotiation with a variety of levels and stakeholders.</i>
Քաղաքային բնապահպանական համակարգ	Urban ecosystem
Քաղաքային բնապահպանական համակարգը բույսերի, կենդանիների և	An urban ecosystem is the community of plants, animals and humans that inhabit

²⁷ Տե՛ս նույն տեղում / Ibid

մարդկանց խումբ է, որոնք բնակեցված են քաղաքային միջավայրում: Չնայած վերջինս այնպիսի տարածք է, որտեղ ֆիզիկապես գերակայում են կառույցներ՝ շենքեր, ճանապարհներ, կոյուղիներ, հոսանքի գծեր, այն հարուստ է նաև կանաչ տարածքներով (այգիներ, պարտեզներ, կանաչապատ փողոցներ, կանաչ արահետներ, քաղաքային վտակներ, առևտրային կանաչապատում և չկառուցապատված տարածքներ), որոնք կազմում են քաղաքային բնապահպանական համակարգի զարկերակը:	the urban environment. Although it is an area physically dominated by built structures like buildings, roads, sewers and power lines, it also contains a rich patchwork of green spaces (parks, yards, street planting, greenways, urban streams, commercial landscaping and unbuilt lots) that provide the living heart of the urban ecosystem.
Չնայած երբեմն այս տարրերը թվում են առանձին և հատվածական, դրանք գործում են որպես մեկ միասնական համակարգ: Քաղաքային բնապահպանական համակարգերը հիմնականում մեծ միջամտություն կրած համակարգեր են, որոնք ենթակա են հողային և կանաչ ծածկույթների, ինչպես նաև ջերմաստիճանի և ջրի հասանելիության հաճախակի փոփոխությունների: Քաղաքային բնապահպանական համակարգում բույսերի կյանքը նույնպես տարբերվում է բնական բնապահպանական համակարգում դրանց կյանքից: Նույնիսկ քաղաքի բնական կամ կիսաբնական տարածքներում, ինչպիսիք են օրինակ զբոսայգիները, բուսականությունը հաճախ մեծապես փոփոխված է՝ բազմաթիվ ոչ տեղական և զավթող տեսակներով: Քաղաքային բնապահպանական համակարգերի համար խիստ կարևոր խնդիր է բնական բնապահպանական համակարգերի և քաղաքացիների համար առողջ միջավայր ստեղծելու ունակությունը: Քաղաքային էկոլոգիան, որը համեմատաբար նոր ուղղություն է, ուսումնասիրում և մշտադիտարկում է քաղաքային բնապահպանական համակարգերը (գործոններ, որոնք թույլ են տալիս վայրի բույսերին և կենդանիներին գոյատևել կառուցապատված միջավայրում,	<i>As separate and fragmented as these elements sometimes appear, they work together as a single organism. Urban ecosystems are generally highly disturbed systems, subject to rapid changes in soil and plant cover, as well as temperature and water availability. The plant life in urban ecosystems is different from that in natural ecosystems too. Even in the city's natural or semi-natural areas like parks, the vegetation is often highly altered, with many non-native and invasive species. One extremely important issue for urban ecosystems is their ability to provide healthy environments, both for the natural ecosystem and for the citizens. Urban ecology, a relatively recent discipline, studies and monitors urban ecosystems (factors allowing wild plants and animals to survive in built environments, effects of urban development patterns on ecological conditions) and attempts to shape the conditions of healthier and better managed communities²⁸.</i>

քաղաքային զարգացման տեսակների ազդեցությունը բնապահպանական պայմանների վրա) և փորձում է ձևավորել առողջ և լավ կառավարվող համայնքների պայմանները²⁸:	
Քաղաքային տնտեսության կառավարում	Urban management
Տարածական զարգացման քաղաքականության ընդհանուր համատեքստում քաղաքային տնտեսության կառավարումը ներառում է մի շարք քաղաքականություններ, որոնք մշակվում և կիրառվում են տեղական կամ ագլոմերացիոն մակարդակներում և անդրադառնում են լայնածավալ խնդիրների՝ հողօգտագործման ծրագրավորման, տրանսպորտի, բնակարանային ֆոնդի, քաղաքային արդիականացման և դեգրադացված և լքված տարածքների վերափոխման, շրջակա միջավայրի պահպանության, թափոնների կառավարման, էներգիայի և ջրի մատակարարման, ծառայությունների մատուցման և հարմարությունների ստեղծման, տնտեսական զարգացման, սոցիալական ամրակայման և ինտեգրացիայի, մշակութային ժառանգության պաշտպանության և ավելացման, մշակութային առաջընթացի և զարգացման և այլ ոլորտներում:	In the general context of spatial development policies, urban management comprises a set of public policies developed and applied at local or metropolitan level addressing a wide range of issues in the fields of land-use planning, transportation, housing, urban renewal and reconversion of derelict land and brownfield sites, environmental protection, waste management, energy and water supply, provision of services and facilities, economic development, social cohesion and integration, protection and enhancement of the cultural heritage, cultural promotion and development, etc.
<i>Մեծ մարտահրավերը, որին Եվրոպան պետք է դիմակայի, անընդհապ բարդացող փոխադարձ կապն է աղքատացման, ցածր եկամուտների, գործազրկության, կրթության և հմտությունների ցածր մակարդակի, նորմայից ցածր բնակարանների և ոչ պարզաճ քաղաքային կառուցվածքների և հարմարությունների, քաղաքային տարածման առաջընթացի և այլնի միջև²⁹:</i>	<i>Major urban challenges in Europe are increasingly complex interlinkages between deprivation, low income, unemployment, poor educational and skill levels, sub-standards housing and inadequate urban fabric and facilities, progress of urban sprawl, etc.²⁹ Cities have also to promote their competitiveness and their image in order to develop</i>

²⁸ Տե՛ս նաև Քաղաքային բնապահպանական համակարգերի պրոֆիլ: Երկիրը եզրին: Բիլ Մոյերսի զեկույց / Cf. Urban Ecosystems profile. Earth on Edge. Bill Moyers Report.

²⁹ «Լյուբլյանայի հռչակագրի համար հիմք», CEMAT, 2003, Եվրոպայի խորհրդում, Տարածական/տարածքային հատակագծման հարցերով նախարարների 13-րդ եվրոպական խորհրդաժողով (CEMAT), Լյուբլյանա (Սլովենիա), սեպտեմբերի 16-17, 2003, Վարույթներ, «Եվրոպական տարածական հատակագծում և լանդշաֆտ» Եվրոպական խորհրդի շարք, 2005, N71 և խորհրդաժողովի փաստաթղթեր, «Տարածք և լանդշաֆտ շարք», 2005, N1 / «Basis for the Ljubljana Declaration». CEMAT. 2003, in Council of Europe, 13th

Քաղաքները նաև պետք է բարձրացնեն իրենց մրցունակությունն ու վարկանիշը՝ բարձր տնտեսական արժեք ունեցող գործառնությունների զարգացման և ներդրումների ներգրավման նպատակով: Քաղաքային տնտեսության կառավարման յուրահատուկ խնդիր է հանդիսանում հետընթաց ապրող քաղաքային ներքին տարածքների և խնդրահարույց արվարձանային շրջանների վերակենդանացումը՝ միջամտելով ոչ միայն դրանց աշխարհագրական և բնապահպանական առանձնահատկություններին, այլև տեղաբնակների տնտեսական և սոցիալական ռեսուրսներին, ինչպես նաև նրանց սոցիալ-տնտեսական ինտեգրացիային: Քաղաքային տնտեսության կառավարման քաղաքականության էական բաղադրիչներ են այն մոտեցումները, որոնք բնակարանային ապահովումը և բարելավումը ներառում են առավել ինտեգրված, տարածքային, մասնակցային վերականգնողական ծրագրերում:	<i>functions with high economic added value and to attract investments. A particular task of urban management is the revitalisation of declining inner-city areas and of problematic suburban areas, addressing not only the physical and environmental characteristics, but also the economic and social resources of the residents, as well as their socio-cultural integration. Approaches incorporating housing provision and improvement within more integrated area-based participatory regeneration programmes are essential elements of urban management policies.</i>
Քաղաքաշինություն	Urban planning
Քաղաքաշինությունը ծրագրավորման ճյուղ է, որի առարկան ագլոմերացիոն շրջանների, ինքնավար շրջանների և թաղամասերի ֆիզիկական, սոցիալական, տնտեսական և բնապահպանական զարգացումն է³⁰: Քաղաքաշինության արտահայտությունը հողօգտագործման և շինարարական ծրագրերի, ինչպես նաև տեղական շինարարական և բնապահպանական կարգավորումների մշակումն է:	Urban, city or town planning is the planning discipline dealing with the physical, social, economic and environmental development of metropolitan regions, municipalities and neighbourhoods³⁰. The expression of urban planning consists in elaborating land-use and building plans as well as local building and environmental regulations.
<i>Պատմականորեն (19-րդ դար) քաղաքաշինությունը ենթարկվել է</i>	<i>Historically (nineteenth century) urban planning was influenced by the newly</i>

European Conference of Ministers responsible for Spatial/Regional Planning (CEMAT), Ljubljana (Slovenia), 15-17 September 2003 : *Proceedings*, Council of Europe Series "European Spatial Planning and Landscape", 2005, No 71 and *Documents of the Conference*, "Territory and landscape Series", 2005, No 1.

³⁰ Տե՛ս նաև Վիքիպեդիա ազատ հանրագիտարան / Cf. Free Encyclopedia Wikipedia

ճարտարապետության և քաղաքացիական շինարարության՝ նոր ձևավորված ճյուղերի ազդեցությանը, որոնք սկսեցին համակարգել քաղաքային խնդիրները ֆիզիկական ձևավորման միջոցով լուծելու ուղիով և ոճական մոտեցումները: 20-րդ դարի ընթացքում քաղաքաշինության ոլորտն ընդլայնվեց՝ իր մեջ ներառելով տնտեսական զարգացման, համայնքի սոցիալական և բնապահպանական ծրագրավորումը:	<i>formalised disciplines of architecture and civil engineering which began to codify both rational and stylistic approaches to solving city problems through physical design. During the twentieth century, the domain of urban planning was expanded to include economic development planning, community social planning and environmental planning.</i>
Քաղաքների արդիականացում/քաղաքների վերակենդանացում/քաղաքային միջավայրի վերակառուցում	Urban renewal / Urban regeneration / Urban revitalisation / Urban rehabilitation / Urban restoration
Քաղաքները բախվում են իրենց կառուցվածքի և կառուցապատված տարածքների հնեցմանը, ինչպես նաև իրենց տնտեսական գործառնությունների և բնակչության սոցիալական բնութագրերի փոփոխությանը: Ներդաշնակ կենսական միջավայրի, ակտիվ տնտեսության և հավասարակշռված սոցիալական կառուցվածքի պահպանման համար անհրաժեշտ են որոշ պետական գործունեության տեսակներ (երբեմն պետական-մասնավոր գործունեության տեսակներ): Կարելի է կատարել հետևյալ տարանջատումը. - քաղաքների արդիականացում, որը նպատակ ունի փոխարինել քաղաքի աղքատ թաղամասերը և դեգրադացված տարածքները բնակարանային ապահովման, ծառայությունների, տրանսպորտի համակարգի, հանգստի գոտիների և այլնի վերաբերյալ լայնածավալ ծրագրերի միջոցով: Երբեմն կենսագործող համայնքների համար քաղաքային արդիականացման գինը մեծ է, և նման գործունեությունն այսօր առավել հազվադեպ է իրականացվում, քան տասնամյակներ առաջ:	Cities are confronted to both the ageing of their fabric and built-up areas and to changes in their economic functions and in the social characteristics of their population. In order to maintain a harmonious living environment, a buoyant economy and a balanced social structure, a number of public (and sometimes public-private) activities are necessary. A distinction can be made between: - urban renewal which aims at replacing impoverished urban neighbourhoods and derelict areas by large-scale projects related to housing, services, transport systems, recreation areas, etc. Sometimes, the costs of urban renewal for living communities is high and this type of activity is nowadays less frequently carried out than some decades ago; - urban regeneration and revitalisation which aims at transforming the obsolete socio-economic base of certain urban areas into a more sustainable socio-economic base through the attraction of new activities and companies, modernisation of the urban fabric,

- քաղաքների վերակենդանացում, որը նպատակ ունի վերափոխել քաղաքային որոշ տարածքների հնացած սոցիալ-տնտեսական հիմքն առավել կայուն հիմքով՝ գործունեության նոր տեսակների և կազմակերպությունների ներգրավման, քաղաքային կառուցվածքների արդիականացման, քաղաքային միջավայրի բարելավման և սոցիալական կառուցվածքի բազմազանեցման միջոցով: - քաղաքային միջավայրի վերակառուցում, որը հիմնականում նպատակ ունի վերակառուցել և պահպանել կառուցված ժառանգությունը կամ քաղաքային միջավայրը՝ ներառյալ բնապահպանական համակարգերը: Բացի պատմական շինությունների և քաղաքային բնապատկերների նորոգումից, նման գործունեությունը ներառում է նաև տեխնիկական հնարավորությունների արդիականացում և վերազինում և բնապահպանական և անվտանգության նորմերի պահպանում:	improvement of the urban environment and diversification of the social structure; – urban rehabilitation and restoration which aims mainly at regene-rating and conserving the built heritage or the urban environment, including the ecosystems. In addition to the refurbishment of historical buildings and townscapes, such activities also comprise the modernisation and upgrading of technical facilities and the respect of environmental and security norms and standards.
Քաղաքային-գյուղական համագործակցություն	Urban-rural partnerships
Գյուղ-քաղաք փոխազդեցությունը կարող է դիտվել որպես որոշակի տարածքների միջև կապեր (ինչպիսիք են մարդկանց, ապրանքների, փողի, տեղեկատվության և թափոնների հոսքը) և ճյուղերի միջև կապեր (օրինակ՝ գյուղատնտեսության և ծառայությունների և արդյունաբերության): Տարածական մեկնաբանությամբ դրանք ներառում են նաև “գյուղական” գործունեության տեսակներ, որոնք իրականացվում են քաղաքային կենտրոններում (ինչպիսին է քաղաքային գյուղատնտեսությունը) և գործունեության տեսակներ, որոնք հաճախ դասակարգվում են որպես “քաղաքային” (ինչպիսիք են արդյունաբերությունը և ծառայությունները),	Rural-urban interactions can be defined as linkages across space (such as flows of people, goods, money, information and wastes) and linkages between sectors (for example between agriculture and services and manufacturing). In broad terms, they also include “rural” activities taking place in urban centres (such as urban agriculture) and activities often classi-fied as “urban”, such as manufacturing and services) taking place in rural settlements.

բայց իրականացվում են գյուղական բնակավայրերում:	
Վերջին տասնամյակներում քաղաքային-գյուղական փոխազդեցությունը եվրոպայի տարածքում ուժեղացել է՝ ուղևորների հոսքի, վերականգնողական/հանգստի և ժամանցային միջոցառումների, նախկին քաղաքաբնակների՝ գյուղական տարածքներում բնակեցման, նախկինում քաղաքային գործառույթների և գործունեության տեսակների՝ գյուղական վայրերում տեղակայման և այլն տեսակերից: Այլ կերպ ասած՝ քաղաքային ազդեցությունը գյուղական տարածքների վրա մեծացել է: Քաղաքային-գյուղական կապերը կարևոր են հավասարակշռված տնտեսական զարգացման և ստորադասված գյուղական շրջանների խոցելիությունը կրճատելու համար: Քաղաքային-գյուղական փոխազդեցությունը հաճախ ճգնաժամային ազդեցություն է ունենում բնական ռեսուրսների օգտագործման և կառավարման վրա, հատկապես արվարձանային տարածքներում: Ներդաշնակ տարածքային զարգացմանը նպաստելու համար քաղաքային և գյուղական համայնքների միջև հաստատվում է քաղաքային-գյուղական համագործակցություն (որպես կանոն ի դեմս տեղական ինքնակառավարման մարմինների, սակայն ներգրավվում են նաև հասարակական կազմակերպությունները և քաղաքացիական հասարակությունը)՝ նպատակ ունենալով մատուցել ծառայություններ, պահպանել բնական և բնապահպանական պաշարները, նպաստել քաղաքային և գյուղական համայնքների միջև կանոնավոր կապերին, զարգացնել տնտեսական փոխազդեցությունը և այլն:	<i>In recent decades, urban-rural interactions have intensified throughout Europe, in terms of commuter flows, recreation and leisure activities, settlement of former urban dwellers in rural areas, location of formerly urban functions and activities in rural areas, etc. In other words, the urban influence of cities on rural areas has increased. Rural-urban linkages are important to achieve balanced economic development and to reduce vulnerability of less favoured rural regions. Rural-urban interactions have often critical influences on natural resources use and management, especially in the peri-urban interface. In order to promote harmonious territorial development, urban-rural partnerships are being set up between urban and rural communities (generally represented by local authorities but also involving NGOs and the civil society) aiming at providing services, protecting natural and environmental resources, favouring regular contacts between urban and rural communities, developing economic synergies, etc.</i>
Քաղաքների տարածումը	Urban sprawl
Քաղաքների տարածումը քաղաքների զարգացման չալանավորված, չվերահսկվող	Urban sprawl is the unplanned, uncontrolled spreading of urban

տարածումն է քաղաքին հարող տարածքներում: Այս եզրույթն օգտագործվում է նաև՝ մատնանշելու ագլոմերացիոն շրջանի լայնածավալ, արագ և երբեմն աննպատակահարման աճը լայնարձակ տարածքներում: Քաղաքների տարածումը բնութագրվում է հողօգտագործման մի քանի ձևերով, ինչպիսիք են մեկ նպատակով օգտագործման համար նախատեսված գոտիների ձևավորումը (առևտրային, բնակելի, արդյունաբերական), մեքենաների համար նախատեսված համայնքները, հողօգտագործման ցածր խտությունը, սակայն նախկինում հաստատված շրջանների համեմատ զարգացման առավել լայն մասշտաբները (առավել լայն ճանապարհներ, առավել մեծ կայանատեղերով մեծ խանութներ), և ձևավորման բազմազանության բացակայությունը, ինչն էլ երբեմն ստեղծում է միատեսակ քաղաքային միջավայրի տպավորություն³¹: <i>Տե՛ս նաև “Երկրորդային ուրբանիզացիա”</i>	development into areas adjoining the edge of a city. The term is also used to designate the expansive, rapid and sometimes reckless growth of a greater metropolitan area over a large area. Urban sprawl is characterised by several land-use patterns such as single-use zoning (commercial, residential, industrial), car-dependant communities, low-density land- use but larger scale of development than older established areas (wider roads, larger stores with expansive parking lots) and lack of diversity in design, sometimes creating a sense of uniform urban environment³¹. <i>See also “Suburbanisation”</i>
Բնակեցման կառուցվածք	Urban structure / Settlement structure
Քաղաքների և այլ բնակավայրերի ձևաբանական/գործառնական գնահատումն ու վերլուծությունը հնարավոր են դարձնում որոշել դրանց կառուցվածքը: Բնակեցման կառուցվածքը բնութագրվում է քաղաքային տարածքում գոյություն ունեցող հիմնական տարրերով և գործառույթներով, ինչպիսիք են քաղաքի ձևաբանությունը (հավաք կամ ցրված, միակորիզ կամ բազմակորիզ), քաղաքային տարածքների բաշխումն՝ ըստ հնության (միջնադարյան, հետպատերազմյան և այլն), ըստ հիմնական գործառույթների (առևտրային, բնակարանային, արդյունաբերական, վերականգնողական և այլն), ըստ սոցիալական բաշխման և կազմակերպման	A morphological /functional appraisal and analysis of towns, cities and other settlements makes possible to identify their structure. The urban structure is characterised by the main elements and functions existing inside the urban area, such as the morphology of the city (compact or dispersed, single nucleus or multiple nuclei), the distribution of urban areas according to age (medieval, post-war, etc.), to main functions (commercial, housing, industrial, recreation, etc.), to social distribution and organisation (poor and derelict areas, gentrified areas, middle-class areas, areas with a high proportion of immigrants, etc.), the main

³¹ Տե՛ս նույն տեղում / Ibid

(աղքատ, դեգրադացված տարածքներ, բարեկարգված շրջաններ, միջին խավի շրջաններ, ներգաղթյալների մեծ թվով շրջաններ և այլն), տրանսպորտի և կապի գծերի հիմնական բնութագրիչները (ճանապարհային համակարգ, հանրային տրանսպորտի համակարգ):	characteristics of transport and communication axes (road system, public transportation system).
Բնակեցման կառուցվածքը վերաբերում է առավել լայն մասշտաբով՝ քաղաքների, ավանների, գյուղերի, գյուղակների և այլնի բաշխման առանձնահատկություններին: Այս առումով կարող են տարբերություններ լինել համախմբված տարածաշրջանների (գերակայող ագլոմերացիոն տարածքի շուրջ ձևավորված տարբեր բնակավայրեր), ցրված բնակավայրերի (փոքր և միջին չափի քաղաքային միավորների միատարր բաշխում մեկ շրջանում), բազմակենտրոն բնակեցման համակարգերի (մեկ տարածաշրջանի ձևավորումը մի քանի քաղաքային միավորների շուրջ), քաղաքների ցանցերի (գործառույթների առումով փոխադարձ խիստ կախվածությամբ, սակայն առանց ընդհանուր սահմանների քաղաքային միավորներ), փոխկապակցված ուրբանիզացիայի (միմյանց մոտ տարբեր քաղաքային միավորների խմբավորումներ) միջև:	The settlement structure refers to the characteristics of the distribution of towns, cities, villages, hamlets, etc. at a wider scale. In this respect, differences can be made between: agglomerated regions (various settlements organised around a dominating metropolitan area), dispersed settlements (homogenous distribution of small and medium-sized urban entities over an area), polycentric settlement systems (organisation of a region around several urban entities), networks of cities (strongly interdependent urban entities in terms of functions without physical continuity), conurbations (groupings of various urban entities close to each other).
Տե՛ս նաև՝ http://www.coe.int/CEMAT http://www.coe.int/CEMAT/fr http://www.coe.int/EuropeanLandscapeConvention http://www.coe.int/Conventioneuropéennedupaysage http://www.coe.int/naturopa http://www.coe.int/naturopa/fr	See also: http://www.coe.int/CEMAT http://www.coe.int/CEMAT/fr http://www.coe.int/EuropeanLandscapeConvention http://www.coe.int/Conventioneuropéennedupaysage http://www.coe.int/naturopa http://www.coe.int/naturopa/fr

ուրբանլաբ Երևանը դա քաղաքաշինության ժողովրդավարացմանն միտված ինստիտուտ է: Այն իրենից ներկայացնում է շահույթ չհետապնդող, բազմադիսցիպլին հետազոտահեն նախագծային կազմակերպություն: Այն նպատակ ունի մասնակցային որոշումների ընդունման տրամաբանության հիման վրա բարելավել մարդածին միջավայրի որակը՝ քարոզելով մարդկանց առողջ ու որակյալ միջավայրում ապրելու իրավունքը միջավայրի ձևավորման հիմնական պատասխանատուների՝ ճարտարապետների, քաղաքաշինարարների և այլ հարակից մասնագետների սոցիալական դերակատարության կարևորմամբ:

Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի համակարգի վերլուծության և զարգացման ծրագրի

նպատակն է ուսումնասիրել և վերլուծել Հայաստանի Հանրապետությունում գործող քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի համակարգը և մշակել մի շարք առաջարկություններ դրա զարգացման համար: Դրա արդյունքում նախատեսվում է՝ բացահայտել Համակարգի կիրառության հետ կապված խնդիրները, վերլուծել դրանք՝ համադրելով ծրագրի մասնակիցների փորձառությունը միջազգային ու եվրոպական առկա փորձին հետ, մշակել առաջարկություններ միտված Համակարգի զարգացմանն ու արդյունավետության բարձրացմանը և ապահովել առաջարկությունների տարածումը մասնագիտական հանրույթի և այլ շահառուների շրջանում:

////////////////////////////////////

Ծրագրի ղեկավար՝
Սարհապ Դեպրոսյան

Փորձագետներ՝
Բորիս Քոչարյան, Սարգիս Թովմասյան

Ծրագրի համակարգող՝
Աննա Ակտարյան

Հարցումների անցկացում՝
Պերսոնա Գրաֆա ՍՊԸ, www.personagrata.am

Թարգմանություններ (անգլերեն)՝
Գայանե Մելքոմ Մելքոմյան